


ՄԱՅԻՍ

1995



ԾԲ
ՏԱՐԵ



Էջմիածն



ՊԱՇՏՈՆԱԿԱ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՎՑ
Ա. ԷՋՄԻԱԾՆԻ

Խաչիս


1995




Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

S. S. Գ Ա Ր Ե Գ Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

ՎԵՀԱՓՈԽ ԵԻ ՍՐԻԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



104-95
18250.002



ՀԱՅՈՒԹԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Սիրեկի՝ Բոգեսոր Եղբայրներ
Եւ զաւակներ Հայ Եկեղեցւոյ,
Որդիք Բայկազեամբ

որ ի Հայաստան և ի սիհոս աշխարհի,

Սահատակի շորջ Երկու ամիսներ անցան այն օրէն ասդին, երբ Աստուծոյ Կամքով ո հայ ժողովորդի ընտրութեամբ կոչուցանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի Առիթական և բարձրագոյն ու ծանրագոյն պարտարութեան:

Մեր ընտրութեան և գահակալութեան օրէն (4—9 Մայիս) ասդին զգացինք և տեսանք մեր Առիթապետական Արքունութեամուսնու Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երտսաղէմի Հայոց Պատրիարքութեան և Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, Հայաստանեաց Եկեղեցւոյ բոլոր թեմներու Առաջնորդներուն, ազգային-Եկեղեցական բոլոր իշխանութիւններուն, ծխաւկան Եկեղեցիներուն և Եկեղեցական կազմակերպութիւններուն սէրն ու յարգանքը, աղօթքն ու մալթանքը մեր Ըոր առաքելութեան թելմատաստ պատճառերման համար ի հաճոյ Աստուծոյ, և ի վակելուն հայ հայատացեալ ժողովրդեան:

Այսուեղ, մայր հայունիքին՝ Հայաստանի մէջ և Արցախի տարածքին անձանք վկան Եղանք մեր հայրենի պետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան, Լեռնալին Ղարաբաղի Հանրապետութեան բոլոր պատասխանառութերու և սպասարքներու սիրալիք վերաբերումին և անմիջական ու անվերապահ աշակցութեան բոլոր մակարդակներու վրայ անխափի:

Մեր ժողովուրդի բարեսիրական, մշակութային, կրթական, ընկերային, ազգային-քաղաքական, Երիտասարդական, հայրենակցական և այլ կարգի կազմակերպութիւններ ու միութիւններ, ընկերութիւններ, հաստատութիւններ, անհան ազգայիններ, բարերարներ, մամուլի ներկայացուցիչներ արտայայտեցին իրենց բարեմատութիւններով այցելութիւններով, հնագիտներով, հնուածայնային խօսակցութեամբ, յօդուածներով և հաեւ որոշ Առիթատուութիւններով վասն բարգավաճման Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, վասն պայծառութեան Եկեղեցւոյ Հայաստանեաց և վասն ամրացման և գորացման հայրենեաց մերոց:

Հայստանէն և աշխարհի չորս ծագերէն՝ Ռուսաստանի Դաշնութենէն, Վրաստանէն, Ուկրաինայէն, ԱՊՀ-ի այլ հանրապետութիւններէն, Իրանէն, Թուրքիայէն, Պալեստինա երկիրներէն մինչև Արեւելեան և Արևմտեան Երրորդայի բոլոր երկիրները, Միջին Արեւելքէն մինչև Շաքազդին Արեւելք, Հիսյասային և Հարաւային Ամերիկաներէն մինչև Սփրիկեան երկիրները և այլ ժողովորդի զաւակները առանց խորոշեան իրենց գործունակութիւնը, ուրախութիւնը, բարի ցանկութիւններն ու շնորհաւորութիւնները յայտնելով՝ զգացոցին Մեզի մեր Հայստանաց Եկեղեցու և հայ ազգի ու հայրենիքի անքանութեան միութեան անսասանէի զօրութիւնը և գառեպնեցին Մեզ մեր առաքելութեան մէջ մասնաւուն մեր ժողովորդի և հայրենիքի ու պետութեան այս ամենադժուարին կեանքի պայմաններուն ներքեւ:

Բնականօրէն կարելի չէ անձամբ ու առանձին պատասխանէլ բոլոր շնորհաւորական և բարեմաղթական նամակներուն և նեռագիրներուն: Այսու գործ և հայ մամուլի միջոցաւ Կ'ուգենք յայտնել բոլորին Մեր սիրայիր շնորհակալութիւնները և հայրապետական բարձրագոյն աստիճանի գնահատանքը համանելեցական և համազգային միասնութեան արտայայտման այս սրանցելի ոգիին և քաջակերական երեւոցին համար:

Բոլոր արտայալստորեանց մէջ Մենք խորագոյն ուրախութեամբ ու անսահման հրճուանքով կը տեսնենք ու կը հաստատենք ձեր բոլորի սէրն ու կապուածութիւնը հանդէա Հայստանաց Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան, Հայ Ազգին ու Մայր Հայրենիքին հանդէա:

Միածնաէց այս սրբավայրին մէջ Կ'աղօթենք ստ Բարձրեալն Աստուած, որ ձեր բոլորին անխոտի պարզեն իր երկնաձիր շնորհն ու օրհնութիւնը, զօրացնէ ձեզ բոլորիդ, առաւել ես ամրացնէ ձեր բոլորին մէջ սիրոյ, միութեան, եղագարութեան, միասնականութեան ու զոհութեան ոգին, որ գերագոյն հարաստութիւնը կը կազմէ մեր ազգին ու Եկեղեցու և միանգամայն գաղտնի ոյժը՝ մեր յաղթանակին: Թող Սուրբ Լուսաւորչի կանոնին շոյք սրբութիւն ճառագայթէ և երջանկութիւն ցանէ ձեր բոլորի կեանքերուն մէջ, ոյն ալ ըլլաք, ի՞նչ պայմաններու տակ ալ որ ապրեք:

* * *

Սիրելիք,

Բոլորդ ալ կը գիտակցիք, որ անհինադարձային հշանակութիւն և պատմակերութական կարեւորութիւն ունեցող օրերու մէջ է, որ կոչուեցանք Հայրապետական այս ամենադժուարին պարտաւորութեան: Հայրենիքի անկախացման ու այդ անկախութեան ամրացումի և զօրացումի հրամագիրն տակ կը գտնուինք բոլորս: Հայոց Եկեղեցին այս օրերուն որպէս հոգեւոր անուցման մայր այդ ազգին պէտք ունի ներքնապէս բիւրեղանալու, և ուժեղանալու, որպէսզի կարենայ արտաքինապէս հառագայթէ և Աւետարանի, որիստուեական հաւատքի և մեր սուրբ հայրերու ազգային առողջ առանցութեանց շունչը տարածելու մեր ժողովորդի կեանքին մէջ այդ ժողովորդին բարոյական տժականութիւնը լիցքարդելու համար:

Խորհրդային բռնակալ իշխանութեան եօթամասուն տարիները հոգեւոր ու բարյական աւել զործեցին մեր ժողովորդի ներքին կառուցին, մկարգիրին ու կեանքին մէջ: Քրիստոնեական հատաքրի հշմարտութիւններու

եւ բարոյական արժեքներու ուսուցումը վերականգնումի ամենէն էական եւ ազդու նշանակն է: Խճչպէս Գարեգին Ս. Յովհանինան Կաթողիկոս ըստած է այնքան խոր և ճշմարիտ հայեցողութեամբ. «Ազգերու վերակենդանութեան ճանապարհը կրօնական վերագրաբօնքի ճանապարհն է»:

— Հոգեւորական-եկեղեցական նոր սերունդի պատրաստութիւն արդի աշխարհի կենացքի տուեաներու շրջագիծն մէջ դիտուած:

— Հին եւ վնասեալ նկեղեցիներու վերանորոգում եւ նոր ծխական եկեղեցիներու կառուցում քաղաքներու եւ գիտերու մէջ:

— Կրօնական առողջ դաստիարակութեան կազմակերպում եւ տարածում Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութեան ոգիին կենդանի պահպանումով:

— Ընկերային ծառայութեան, ժողովուրդի կարօւեալ, կարիքաւոր գանգուածներուն օգնելու գործին կազմակերպում, մանաւանդ Լենինականի աղեւէն հարուածեալ շրջանին եւ պատերազմէն վիրաւոր Արցախի շրջաններուն մէջ, գլխաւորարար ոյժ տալով տնաշինական, գործարանային մարզին, ժողովուրդը մղեղով սեփական հրաժ ու արդիւնաբեր գործի:

Ասոնք սուկ ուրուագծային եւ մասնակի հշումներ են այն տարածում եւ երկարաշունչ գործին, որուն կոչուած ենք Մեր սպասը բերելու որպէս նորլսուիր Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Այս բոլոր պարտադրութիւնները հայրենիքի վերաշինութեան եւ պէտութեան ամրացման, Արցախի ապահովութեան հետ առնչուած այլ պարտաւորութիւններու հետ միասին, Կրնան իրականանալ երբ գործնենք որպէս մէկ եկեղեցիի, մէկ ազգի, մէկ հայրենիքի ոգիին, գաղափարին, կամքին ոյժովը, եւ զոհողութեան գերագոյն աստիճանովը:

Ուշի գործ:

Ահա այս տեսիլքով ու այս նշանարանով Մենք կ'ողջունենք ձեզ Մայր Սյոռն Սուրբ Էջմիածնէն և Մեր Հնորհակալութիւնները մեղ մը եւս յայտնելով կը ցանկանք, որ բոլոր լծուինք ներդաշնակ աշխատանքի, որպէսզի մեր եկեղեցին ու ազգը, հայրենիքը ու պետութիւնը ըլլան այն, ինչ որ կը հաստանք, որ Աստուած Կ'ողէ եւ պատմութիւնը կը պահանջէ, որ ըլլան:

Թող Աստուած հարցն մերոց միշտ ըլլայ ձեր կենացքին ու գործին առաջնորդն ու պահողը:


Ողջ լերուր ի Տէր զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգուցն եւ յաէտ օրհնեալ ի Մէնց:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

26 Մայիսի 1995 թ.



ՎԵՀԱՓԱՍԹ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱՆՇ ԵՐԵՎԱՆԻ
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՑՈՒՄ
(Ապրիլի 23 1995 թ.)

Սիրելի սրբազն, հարգածամ ամեամներ Արքարատյան Հայրապետականի թեմի թեմական խորհրդի և նոգեոր եղբարիներ, վարդապետներ, քահանաներ և սիրեցյալ պատվական ժողովորդ Աստուծո,

Սուաշին ներթին իմ սրտի խորքերից աղոթք է բարձրանում այս պահին առ Ամենակալին Սատված, որ ինձ մեկ անգամ ևս չնորի արեց և պատիվ ընծայեց ձեր բոլորի մետ աղոթակից դատապար Սուրբ Մարգիս Մաք եկեղեցի կամարների մերր և իմ հայրապետական առաջին ողջոյնը, սիրո և օրմնության խոսք քերելու բոլորիդ և ձեր բոլորի միջից Այրարատյան թեմի համայն հավատացյալ ժողովորդին ի մայրաբաղբն Երևան և կամ ի շրջակային, այնուեղ, որտեղ Այրարատյան թեմի նոգեոր ծառայությունը ծափակում է; ի բարին հօգուտն և ի շինություն նոգեոր մեր հավատացյալ նաև ժողովորդին: Բարձրորեն գնահատում ենք ձեր նվիրյալ առաջնորդ սրբազնի այն բոլոր ծառայությունները, որոնք օգնել են ժողովրդի նոգեոր բարձրացմանը, ազգային առողջ գիտակցության մշակմանը նաև կրթության զարգացման բնագավառում, որպեսզի բարի որեւ վայելի մեր հավատացյալ ժողովորդը Այրարատյան թեմի սահմաններում:

Սիրելիք, ես սուաշին պարուականություն համարեցի կաթողիկոսական ըմբուռությունից և գամակալությունից հետո և Սուրբ Զատկի Պատարագից անմիջապես եռք լինել մեր ժողովորդի մետ միասին: Ինձ համար կաթողիկոսությունը նովիտյուն է ժողովորդի մեջ, ժողովրդի մետ և ժողովորդի համար Ես չեմ ցանկանում, որ դուք կաթողիկոսին նայեք որպես իր գրաւենակում նատած մարդի, որպես ովատավայրերի, նուշարձանների պահակություն անող մարդի, այլ ուզում եմ,—Սատված իմ խնդրամբ կատարի,— որ դուք այնպէս ըմբռնեք մեր դերը, որ մենք նկել ենք ձե՞զ համար և միա՞յն ձեզ համար Աստուծո փառքի սպասավորության և մեր Եկեղեցու պայծառության ու մեր հայրենիքի շինության նետանկարով:

Մեր Տերը՝ Հիսոս, երկնքից երկիր գալով, եր իր երկնային առաքելությունները ծափակեց երկիր վրա, ամրուց Պաղեստինում, նա միշտ եղավ ժողովորդի մեջ: Նա եղավ ժողովորդի մետ փողոցին մեջ, Բրապարակների

վրա, լեռնալանջերին, բլուրների վրա, նույնիսկ ծովի ալիքների վրայից, նովակի միջից խոսեց ժողովրդին ծովափելք բոլոր շրջաններին մեջ: Այսինքն՝ «ենեւ ոչ թէ սոսկ վասն մարդկան, այլ և ընդ մարդկան», մարդկանց հետ, որպեսզի զԱստված թարգմանի, զԱստված ներկա ամի ժողովրդի կյանքին մեջ: Դրա համար ես այսօր բանկան և արդար մտածում նկատեցի իմ առաջին այցելությունը Մայր Ստոր Սրբազնաւորք Էջմիածնից դուրս, Այրարաւոյան թեմի Մայր եկեղեցուն տալ, որովհետև դուք եք այս մայրաբաղարի հավատացրալ ժողովուրդը և իմ պարտականությունն է առաջին հովապետական այցելությունը կատարելու այս նոգենոր տան, մեր Հայաստան աշխարհի սիրտը եղող բաղարամայր Սրբամում: Գնահատում եմ ձեր բոլորի ընդունելությունը, սրտազեղ այս ընդառաջումը, որով այսքան բարձր մակարդակով և այսպիսի նոգենոր պատրաստակամ ընկալնությամբ դուք ողջունում եք նորընտիր Ամենայն Հայոց Խաթողիկոսին:

* * *

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգուն Մարոյ, ամէն»:

**«Նորդոյ հնորդեանց,
Նորդեա և զիս,
Նորդ զարդարեա...»:**

Բառե՞ր, որոնք երեք հնորդյուն չեն կարող ճանաչել:

Բառե՞ր, որոնք ճնշել են մտքից և սրտից մեր ամեննեն ընտիր այս Հայրապետի՝ Սուրբ Ներսես Շնորհալու, որ Հոռոմկապում գրել է այս բառե՞ր, իր սրտի ապրումը փոխանցել է թղթին, մագաղաթին, որը մագաղաթից հետո տարածվում է մեր ժողովրդի բոլոր զավակների մտքերի, սրտերի և նոգիների մեջ: Ի՞նչ է ուզու ասել աստվածինց բառերի այնքան անկեղծ մեղինակը՝ Սուրբ Ներսես Շնորհալին: Մարդկային կյանքը առանց նորոգության չի կարող ապրել: Այսօր Նոր Կիրակի է Հայաստանյաց Եկեղեցւու տոնական կարգին համաձայն: Կրկնազատիկ ասում ենք: Այսօր նորոգության շրջանի բացումն է մեր նոգենոր և ազգային կյանքին մեջ: Եթե այսօրվան շարականը դուք բանար, այնուղի պիտի կարդար ուրիշ մեկ մեծ դիմքի, մեծ մուավորական և նոգենոր հայացքների տեր մեկ Հայրապետի խոսքը՝ Ներսես Լամբրուացու, որ շարականն է գրել և ասել է: «Առողջեալ կոզիք», եկեղեցին՝ նորոգալ կոզի է: Եվ ամրուց շարականի մեջ ուկի թելի պես անցնում է այս բառը՝ նոր, նորոգեցարուք, նորոգաւ: Եթե նևուիք դուք Հիսուսի բարողությամբ և նաև Պողոս առաքյալի բարողությամբ, պիտի տեսնեք անպայման, որ Հիսուս եկավ, որպեսզի մերկանանք մեզանից մին մարդը և զգենանք նոր՝ մարդ: Ի՞նչ է այս նորության իմաստը: Ի՞նչ են նորոգության հատկանիշները: Ի՞նչ բաներով հատկանշվում է նորոգալ բառը: Սուրբ Զատիկիր, Հարության Ավետիսը, Քրիստոսի մամվան վրա տարած հայրանակի նոր ցեղությունն է թերում մեզ:

Անմահության գալգափարով է զինում, շրդեղում, զապանակում մեր կյանքը: Այն մարդը, որ ապրում է մեռնելու համար, չարժի, որ ապրի: Կյանքը չի եղի՝ մեռնելու համար: Կյանքն Աստված տվել է մեզ, որպեսզի մենք ստեղծագործներ, արժեցնենք Աստծու տված տուրքը, շնորհը, բարիքը: Եվ այս ով գերեզմանի մեջ վերջ է գտնում, նշանակում է, որ առ խոտի կյանքը է

ապրել և ոչինչ ավելին: Նա, որ իր երկրագոր կյանքը անմահական արժեքների գիտակցությամբ է ապրում, այնպիսի գործեր կանի, որոնք մաս չեն ճանշնա: Այսպես է մեր հայրապետների, սրբերի, մարտիրոսների, հերոսների կյանքը: Գնացին, բայց գնացի՞ն, հարց եմ տալիս: Ո՞չ, մենք կա՞նք, երանցո՞վ կանք, երանց ապրած գաղափարների, հավատքի, զգացումների հաղորդակցությամբ է, որ մենք ապրում ենք այսօրվա մեր կյանքը: Գնա՞ց Գրիգոր Լուսավորիչը, գերեզմանն անգամ հայտնի չի. գնա՞ց Սուրբ Մւսարուց Մաշտոցը, Օշականի քա՞րն է նրա ներկայությունը. ո՞չ, իր գիրը, գրի միջից ծնած գրականությո՞ւնը, հոգեկան հոսանքը մեր ապրումների, որ գրի մամիկով հավերժացնում է մեր կյանքը: Գնա՞ց Քաջան Վարդանը: Թող բանասերները վիճեն, թե որուն է Ավարայրը, Տղմուտ գետը, դա ի՞նչ արժեք ունի: Վարդանը, ինչպես բանաստեղծն ասել է, «Բրագման ամեն՝ կմտնել ամեն հայուն հոգվուն մեջ»: Վարդանը հոգի է, «զինու հոգով վառեալ», ինչպես ասել է Ծնորքային:

Սիրելիներ, կյանքը ապրել, ուտել-խմելու, հագնվելու, հանոյանալու փիլիսոփայությամբ, դա Աստծու տված կյանքը չէ, դա կյանքի բնախոսական երևոյթն է միայն, որն ունեն նաև ոչ-մարդ էակները. Կենդանիներն են, բոյսերն էլ ծնվում են, աճում են, մեծանում են, հաճախանում են և... գեռում են: Որուն է մարդու տարբերությունը: Անմահության ձգում է մարդը: Անմահության կայծն ունի իր մեջ: Աստուծու պարզն ունի իր մեջ. Հրիստոս աշխարհ գալով՝ այդ պատկերը մաքրեց, մեր մեղքերի կենտից փրկեց և մեր խկական բնույթունը հայտնաբերեց, որ մենք Աստուծու պատկերն ունեցող էակներն ենք. պեսը է զգանք, որ Աստծուն ենք նմանվում մեր հոգեղեն կազմը-վածքովը և նետեաբար պեսը ունենք այդ հոգին մաքոր պահելու, թշնունեական այդ դրոշմը մեր մեջ ներգրածո՞ն պահելու, որպեսի մեր կյանքը դառնա վկացություն Աստծու և վկացություն անմահական արժեքներին: Այս է նոր կամ նորոգալ մարդի ամենեն կարսոր հատկանիշը:

* * *

Եղբայրներ, բուրեր, զավակներ Հայ Եկեղեցու, եթե ձեզանից մեկը նարց տա ինձ, թե մեկ նախապատվյամբ ինչպե՞ս կարող եմ ասել, թե ի՞նչ է քրիստոնությունը, ևս ձեզի պիտի մեջ բերեմ Մատթեոսի Ավետարանի յոթերորդ գլուխ տասներեկուներորդ համարը, որուն ասում է. «Զանեացի զոր միանգամ կամիշիք թէ արացեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա, զի այս իսկ են օրէնքն և մարգարէք» («Ինչ կամենում եք, որ որիշները անեն ձեզ համար, դուք նույնը արեք որիշի համար»): Ո՞վ ձեզանից ուզում է, որ մեկը չարիք գործի իրեն համար, ո՞վ ձեզանից ուզում է, որ մեկը սուս խոսի իր մասին, ո՞վ ձեզանից ուզում է, որ մեկը գողանա իրենից, ո՞վ ուզում է, որ մեկը բամբախ, չարախոսի իր մասին և խոռոչություն ասեղի իր կյանքում: Եթե չեք ուզում, որ որիշն անի ձեզ այդ դուրը, դուք չպեսը է անեք որիշին: Մատթեոսի Ավետարանի այս համարը ճանաչվել է Քրիստոնեական Աստվածաբանության մեջ որպես «ոսկեղեն կանոն», որն իր մեջ կիսուացնի ամրող Ամլուտարանը. և արդեն համարի վերջում ասել է Հիսոս. «...զի այս իսկ են օրէնքն և մարգարէք»: Այս խոսի մեջ խոացած են բոլոր Հին Կոռակարանի Օրինաց Գրենի և Մարգարեների գրությունների իմաստը:

Այսօր մենք հայրենիքի մեջ նոր կացություն ենք ապրում մեր անկախացյալ հայրենիքի, նոր հայրապետության կարգերի մերը: Պետք ունենք, ովքենք-չոգենք պետք ունենք նորոգվելու: Նրեկ որիշ ձև էր, այսօր՝ որիշ: Երեկ որիշն էր մեր Վրա իշխում, այսօր մենք ենք մեր կյանքը տնօրինում: Եթե որիշն սխալ էր անում, մենք չպետք է նոյն սխալն անենք մենքի և մեր եղբայրների համար: Այս կերպարանափոխությունն ու պայծառակերպությունն է անհրաժեշտ մեր ժողովրդի առողջության, ազգային գորության և մարդկային երշանկության համար:

Այս Զատիկը ինձ համար եղավ առաջին Զատիկը Հայունիքում, քառասուներեք տարիների իմ հոգևորական կյանքի շրջանում: Կերպարանափոխության, նորոգության տարի թող լինի բոլորի համար: Մայթում էմ և աղջոռում Աստծուն, որ առ Չեզ համար լինի անդրադարձումի, ինքնագիտակցումի, ինքնանորդգործյան մի նոր հոսանք հոգեղեն, անցնի ձեր նոդիների միջից: Հիսուս, որ Բաղրեց և նոր մարդը տվեց մեզ մենք զգենո՞ւմք այդ նոր մարդը:

* * *

Մենք այսօր գտնվում ենք շատ նշանակալից մի օրվա առաջ: Վաղն առավոտ, 24 ապրիլին, դուք բոլորդ, (ես ալ ձեր հետ միասին) պիտի ձեր տներից դուրս գաք և բոլորդ պիտի քայլեք ու պիտի գնաք Ծիծեռնակարերդ. ի՞նչ անելու, ցո՞ւց տալու աշխարհին, թե մենք նահատակներ ունենք: Աշխարհը գիտի: Մենք պետք ունենք մենք ինքներս գիտնալու, թե նահատակ ունեցող մի ազգ նահատակության գաղափարով պիտի ապրի իր կյանքը: Մենք վաղը գնալու ենք Ծիծեռնակարերդ, նորոգվելու համար նահատակության գաղափարի գորությամբ: Մենք այնուել գնում ենք ո՞չ թե հուշարձանին ծաղիկ ընծայելու, դա պիտի անենք, բայց այդ չէ մեր բուն պարտականությունը: Այնուել գնում ենք այդ հուշարձանին նայելով հուշարձանի միջից կյանքի աղբյուրը տեսնելու, նրա հոգելոր շորը խմելու. այդ շորին անունն է նահատակության գաղափար: Երկու տեսակ նահատակություն կա: Մեկը արյան նահատակությունն է: Նա, ով կնահատակվի իր արյունը տալով: Կա և Կենդանի նահատակությունը, ապրելու միջից՝ նահատակվելու գաղափարով, զոհողության գաղափարով կյանքը արժեկորելու գիտակցությունը. այս է կենդանի նահատակությունը:

Երեկ ասել եմ, թերևս վաղն էլ ասեմ, այսօր էլ կատեմ, և միշտ պիտի ասեմ, որ այս տարին իմ անձնական կյանքում բացվեց Դեր Զորով: Հունվարի 7-ին ևս թողի Կիլիկյան Սթորի գանը և գնացի Դեր Զոր, անապատի մեջ այս ձեռքերով ավազենքը բրբեցի և նահատակների ուսուրներ վերցրի: Ես ինձ հարց էի տալիս՝ Օրանք ինձ պես մարդիկ չե՞ն, նրանք իրավունք չունեի՞ն ապրելու: Ունեի՞ն: Ինչո՞ւ մեռան: Մեռան, որպեսզի ազգը չմեռնի, մեռան, որպեսզի Եկեղեցին չմեռնի, մեռան, որպեսզի հայ գիրը չմեռնի, հայոց լեզուն չմեռնի: Մենք այսօր նրանց ժառանգություններն ենք, բայց չենք կարող մեր կյանքն ապրել առանց զոհողության: Դա դավաճանություն է նահատակներին: Բնականորեն պիտի ուտենք, բնականորեն պիտի ըմպենք, բնականորեն պիտի զարմանանք: Այդ մարդու իրավունքն է, բայց միայն այնուել կանգ չառնենք: Մեղք ենք, մարդ չենք, նոր մարդ չենք, Քրիստոսով գնված մարդ չենք, եթե միայն, միայն ու միայն այդպես ապրենք:

Հետևաբար այսօր ես այս եկեղեցում արտասանած իմ առաջին խոսքի միջից սրտագին կոչ եմ անում, որ մենք եթե ուզում ենք մեր այսօրվա սպարած շրջանը անու ան' դարաշրջան, ավելի ճիշտը՝ մեր հայրենիքի գորացման և մեր ժողովրդի կամքի ինքնարտահայության, ազատության, անկախության ան' շրջան, արժանի' լինենք այդ կոչումին, արժանի լինենք' այն իմաստով, որ լինենք իմաստես պատվով քաղաքացի, պատվով քաղաքացիությամբ ապրենք մեր կյանքը: Գիտենամք այս հողին արձեքք:

Ես շատ լավ եմ ըմբռնում, մի կարծեք, որ Եջմիածնում հստած, հաղորդ չեմ մեր ժողովրդի ցավերին: Չատ լավ եմ զգում տնտեսական այն դժվարությունները, որոնց միջից անցնում ենք բոլորս, շատ լավ եմ զգում, որ նիվանդներ ունենք, որքեր ունենք, Լենինականի աղետից վնասված եղբայրներ և քույրներ ունենք, Սոյրեշանի քաղաքներից արտաքսված և մեզ մոտ գաղթականի վիճակին վերածված եղբայրներ և քույրներ ունենք, այս բոլորն իմ սրտին շատ մոտիկ են: Ասաված թող ուժ տա ինձ նրանց համար ծառայելու, ես ոչինչ չեմ խնայի, բայց մենք պետք ունենք մեր սեփական ուժերով մեր կյանքը շահեկու, մեր ուժերով մեր կյանքը վերատեղծելու: առաջ ուրիշներից էինք սպասում, հիմա՝ մենք մեզանից: Ես շատ օտար երկրներ տեսակ եմ: Առողջ են այն ազգերը, որոնք իրենք իրենց ձեռքերով կշինեն իրենց կյանքը:

Իմ խոսքը չեմ ուզում երկարել, բայց չեմ կարող այս մեկ կետը անտեսել: Դուք ասեք ինձի, դուք հարց տվեք դուք ձեզի, այն մարմինը Փիզիկական, որ իր ուժերով իր վերքերը կողարմանի, առողջ մարմին չէ: իսկ այն մարմինը, որ դուրսից եկած ճարերով, դեղերով և շիճուկներով, ճերարկումներով կապրի, այդ մարմինը տկար չի՝ մնա: Մենք պետք ունենք առողջության: Ինչպես թույլ տանք մենք մեզի թողնել մեր հողը, երբ այդ հողը դարձել է հայկական, դարձել հայապատկան, ոչ թե ուրիշներին սեփականությունը. մեր հողը մերն է, մեր պապերի ժառանգն է: Այսի, կապվեցիք այդ հողերին, մի' թողներ հայրենիքը, որտե՞ղ եք գնում, ինչո՞ւ համար եք գնում, հացի՞ համար: Մի՞թե հայոց հողը մեզի հաց չի տա՞ր, եթե ձեռներդ խառնեք այդ հողին մեջ, կտա, երբ մեր կյանքը խառնենք նրան: Այս է մեր հրամայականը: Նոր մարդը պետք է լինի ինք իր պատիվը, ինք իր արժանապատվությունը գիտցող մարդ, և Հայրենիք, Եկեղեցին ու Աստված ամեն բանից վեր դաշնող մարդ: Ահավասիկ, եղբայրներ և քույրներ, ինչ մոքերով ես ուզում եմ այսօր իմ պատգամը փակել՝ ձեր հոգիների մեջ բանալու համար այս գիտակցությունը. «Նորոգող հնութեանց, նորոգեան մեզ, նորոգ զարդարեա», նոր մարդ արա վասն Քրիստոսի, վասն Հարության, վասն մարդկության, վասն փառացն Աստուծոն և վասն հավիտեանության հայրենաց մերոց, հավիտյանս հավիտեանից ամեն:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՇԱԳԻՐԸ
ՏԻԱՐ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԱՐ ԺԱԿ ՇԻՐԱԿ,
ՆԱԽԱԳԱՀ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Փարիզ, Քաղաքապետարան 75004

Զերդ Վսեմություն,

Հոգեկան մեծ գոհունակությամբ խմացանք Զեր՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ ընտրվելու ուրախ լուրը:

Մեզ քաջ ծանոթ է Զեր բացառիկ սերը Զեր մեծ հայրենիքի՝ Ֆրանսիայի հանդես, Զեր նվիրումը նասարակական կյանքի բոլոր բնագավատներում Ֆրանսիայի ժողովրդի առաջընթացին, ամբողջ Եվրոպյան և համաշխարհում խաղաղության և կայունության գործում նրա կատարած դերին:

Մեզ հայտնի է նաև Զեր անկեղծ սերը, Զեր համակրանքն ու խոր նարգաճքը հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու նկատմամբ ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ մեր Մայր Հայրենիքում:

Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աղոթում ենք Տիրոջը, որ Զեզ շնորհի տոկուն առողջություն և լիակատար հաջողություններ Զեր պատասխանատու աշխատանքներում ի բարօրություն Ֆրանսիայի ժողովրդի, ի բարգավաճումն Ֆրանսիայի և ի փառ Աստուծուն:


ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ,
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, 10 մայիսի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՂ



ՄԱՅԻՍ 5, ՈՒՐԲԱԹ

«Զերիցուն այսուհետեւ աղաջև, իբրև զերիցակից և վկայ չարչանացն Քրիստոսի, որ և հանդերձնալ փառացն յայտնելոյ հաղորդ.

Արածեցէք, որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ,
Վերակացու լինել մի՛ իբրև ակամայ.

Զի յերեւել Հովուապետին ընդունիշիք զանթառամ փառաց պակեն»:

(Ա. ՊԵՏ. Ե 1—2, 4)

Հոգեգալստյան խորախորհուրդ դեպքից մետո, Տիրոջ արքազան առաքյալները Աստուծոն Հոգու շնորհաբաշին ներգործությամբ կյանքի ճըշմարտության հունդերը ցանեցին ամրող մարդկության մեջ, հաստատելով Տիրոջ վեմահիմն Եկեղեցին՝ Կենդանի Աստուծոն կենդանի և կենդանացնող Ավագանը: Երկնավոր Վարդապետի պատգամները աննվազ կերպով ճառագեցին՝ լուսավորելով խավարի մեջ նեծեծող մարդու շավիները, որի շողարձակման ներք իսկ հստակորեն ընդգծվեց մարդու պատկերը, որի «արար Աստուծ զմարդն ի պատկեր իր, ...եւ եղեւ մարդն հոգի կենդանի» (ԾԱՆԼՈՐ Ա. 27, Բ 7), ընդգծվեց և մարդու կոչումը, որ «Ինչպիսի շնորհ ընդունել է, որիշի հանդեւ թող նոյնը մատակարարի որպես բարի տնտես Աստուծ պեսան շնորհների» (Ա. ՊԵՏ. Դ 10—11):

Աստվածորդու հիմնադրած Հոգեկները Տիեզերական, Առաքելական և Սուրբ Եկեղեցին կենաց ծովի մեջ դարձավ «Նորդգեալ կղզի», որում հանգըրվանելով, Աստվածառաւությունից և Աստվածանոթությունից զրկված պահամորդին կրկին հուսադրվեց ստանալ այն կյանքը, որ Տերը խոստացավ

Եր սիրելիներին ատելով. «Ես եկի, զի զիեանս ունիցին և առաել ես ունիցին» (ՀՈՎՀ. Ժ 10):

Կենաց Խոսքը և Բժշկության Աղբյուրը փխրեցնելով և ձեռքերով հեթանոսական ծայրը, աղբյուրացքներ և ան Արարատի հովանու Աերքո բնակորդական Հայկի սերունձների սրտի կարծրացած նողը, Վերափոխելով մի պարագ Երկրի Հայաստանաց Եկեղեցու Մայրությամբ և Սուրբ Ամենասուրբ Հայությամբ, որտեղ փառավորապես բազմեց Ամենասուրբ Երրորդությունը, որի «ոտղափառ հավատի լույսը երեք չնազեց, ցորենի բարի սերմերին որում չխառնվեց, ավանդությունների հատակ աղբյուրը օտարությունների աղտաղտուկ ջրից չպղտորվեց, ստուգոյան և ճշմարտության կենացների հացի մեջ մեռնելական խմոր և բացախի չարության հերձաված չխառնվեց, անըիծ հավատի ուկու և լուսատեսիլ խոսքի արծաթի մեջ ժամանակու պահնակ և սևաթուր կապար չգտնվեց» (Հովհաննես Երզնկացի):

Հայաստանյաց Եկեղեցին Աստվածածք Կենտրոնով երթեք չեղավ ու չմնաց սուկ որպէս քարաշեն հոգարձան, այլ հոգելիսն և հոգեշեն տաճար, «ասեղուոք երկրից երկինք Վերկութեան»՝ քարը կրելով որպէս զգեստ և վահան իր հավատքի ամրացման և լեռնացման: Իբրև Մայր՝ Սուրբ Հոգու շնորհաց կաթի առնեուն, իբրև Հարս՝ հոգեղեն և հյութեղեն Խորան Առագաստից Երկնավոր Փեսայի մարմնի և արյան հաղորդությամբ Աստվածային ընտանիքին հավիտենական անդամակցության ուղին և անոթ եղավ իրեն զինվորագրված մանկանց համար՝ «սին և հաստատութիւն ճշմարտութեան» (Ա. ՏԻՄ. Գ. 15):

Լուսավորչի արցունքակալ տեսիլքը կերպավորված Աստվածակառուց Մայր տաճարով ու Աթոռով, Սահմակ-Մաշտոցան Երկունքով և Վարդան-Ղևոնյան Աստվածակության վարդագոյն արյամբ հաստատված Սրբազն Եկեղեցին վերածվեց մի նոր Պրորատիկեի ավագանի, որի նոգենուզ ջրերի փոթորկություն ծնվեցին Հայոց Ռսկեդարն ու Արձաթեդարը և դեռ պիտի ծնվի... Պիտի ծնվի Տիրոց հարության ավետիսով, ծիծաղելու մահվան և հուսահատության դեմքին ըստ աստվածային Պողոսի աւելոյ «Ո՞ր է, մահ, քո խայթոց, ո՞ր է, գերեզման, քո հառթաճակը» (Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ 55):

Այս մտածումներով էր, որ 1995 թվականի մայիսի 5-ին, Հայոց Կորընդուի 131-րդ Կառողիկոս Տ. Տ. Գարեգին Ա. Հայուապետը մոտք գործեց Մայր տաճար՝ Խջման Սուրբ Ալեքանի աղոթավայր ու խնկապորյատ քարերի արձագանքով զրահանդրվելու, Ծիրակի թեմի իր աղետոյալ զավակներին հովվագետական անդրանիկի այցելության և հանդիպման գնալիս, որպես Հոգուապետ ճանաչվում և ճանաչվելու՝ ինչպես անը ասելու իր կարիքավոր ուսուրերին և ուստունեին, որ՝

«Սուրբ Հօմիածին սոսկ աշխարհագրական վայր չէ, այլ հոգու մեջ ապրող ուժ ու հավատոք».

«Անհայտ պատճենը կառուցեր և սկսի ապօն»

«Օրինակ սիրաբան եղբայրներ և սիրելի սաներ,

Կիսնորեմ, որ Ձեր աղոթքներու մեջ առաջիկա երեք օրերու ընթացքին հիշեք զիս և ինձի ընկերակցող հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները Մայր Սպառու: Ասիկա բնականորեն առաջին հայրապետական աշ-գելությունն է Հայաստանի մեջ Երևանի Սուրբ Սարգսի եկեղեցուն տված այցելութենես եռքը: Կուգեմ, որ բոլորդ ալ զիտնաք, որ ես հատկապես «ցանկանալով ցանկացա»՝ ինչպես կրու սուրբարական արտահաւոտությու-

Այս, որ իմ այս առաջին այցելությունը ըլլա այն ժողովրդին, որ ամենից շատ տառապող ժողովորդը եղավ այս վերջին տարիներին:

Գյումրիի աղետեն եսքը վերականգնումի շրջան մը կրոյորք Շիրակա թեմի մեր ժողովորդը: Ուզեցի իրենց հետ ըլլա, որ իրենք զգան, թէ Մայր Սթոռը իրենց հետ է. Սուրբ Էջմիածինը աշխարհագրական վայր չէ միայն, այլ հնու ուր այս Սթոռին Գանձկալը կերթա, անոր հետ ամրուշ միարանոթյունը գացած կըլլա և մեր աղոթքները գացած կըլլան ու ժողովորդը, մանավանդ, կզգա, որ Էջմիածինը իր կյանքի մեջ ներկա է: Դոք ալ այսուեղ Տուեր շեն պահեք, կարգավոր մնացեք, Տունին պատիվը մեր բոլորի պատիվն է և Սատված ձեզի ուժ տա, ձեր հոգեկան ապրումները առավել և ընդունելի ընեն և ձեր իմացական կրթական կյանքը ծաղկեցնե:

Մեր սիրելի ժառանգավոր սաներ և սարկավագներ, միաբան եղբարեներ, և պաշտոնելություն, դուք ալ ձեր պարտականությունները գերազուն աստիճանի գիտակցությամբ և բծախնդրությամբ կատարեցեք Սատուն փառքին և Մայր Սթոռին շենության և պայծառության համար: Ամեն»:

Մայր տաճարում աղոթքից և հայրական պատգամից հետո, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ կրոնից գործոց նախագանի պաշտոնակատար Լազար Սուշյանի, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Սատոնիկ եպիսկոպոս Արիստակեանանի, Մայր Արքուն միարաններ Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանի, Գրիգոր վարդապետ Զիթօչյանի և Վազգեն սարկավագ Գալստյանի, ոսկորվեց Շիրակի թեմի իր կարույր և կարիքավոր ժողովորդին միխթագելու, սիոնիկու, ինչպես և ուժավորելու ուսաւարելու հրան Հայոց ապագայի Սատվածադրոշ պայծառ տեսիլքով:

Շիրակի թեմի սահմանագիծ Թալինի շրջանի ներքին Բազմաբերդ գյուղի մոտ հավատացյալների խուներամ բազմությունը, գլխավորությամբ թեմի առաջնորդ Գրիգորի արքեպիսկոպոս Բունիաթյանի, փոխառաջնորդ Սեպոս վարդապետ Չոլջյանի և Շիրակի տարածաշրջանի նահանգապետ Անդրանիկ Քոչարյանի, խանդակառությամբ և անհուն բերկրանորդ դիմավորեց Վեհափառ Հորբ՝ հայկական ավանդական աղ ու հացով և գառան մատաղով, որ Բարձրալայն Սատված Հայրապետի միջոցով Իր օրինությունն ու շնորհները հեղի Հյուսիսային Հայաստանի հոգեավաստակ հողի ու ժողովրդի վրա:

Այնուհետև Գյումրիի բնաճյարանի սաները «Հրաշափառ» և «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարական-աղոթքներով Վեհափառին առաջնորդեցին դեպի գյուղի դեռևս կիսակառուց Սուրբ Աստվածածին Եկեղեցի, որ մոտքի մոտ «Ի մեջ տաճարին» աղոթքից հետո Հայրապետական անդրանիկ պատգամը տվեց Ներքին բազմաբերդցիներին և նրանց միջոցով ամբողջ թեմի հավատացյալներին.

«Միքայելի Առաջնորդ սրբազն, սիրելի հոգեւրական եղբարեներ, հարգարձան ներկայացուցիչներ այս շրջանի պետական իշխանությանց և բանկագին հավատացյալներ՝ հայ ժողովրդի գալականեր,

Դուք չեք կարող պատկերացնել, թէ հոգեկան ինչ խոր ուրախությամբ է լցվում իմ հոգին, եթե ապագես դիմում եմ բոլոր բաց երկնքի ներքի, ընուրյան ծոցում և ձեզանից ոչ մեկին առաձևապետն անհատապես ճա-

հաշելու, չգիտեմ ինչու այնպիս եմ զգում, որ կարծեք մենք արդեն ձեզ համաշել ենք երկար ժամանակից ի վեր:

Չեր դեմքերի միջից ես տեսնում եմ մի դեմք՝ հասարակաց, բոլորին պատկանող մի դեմք՝ Աստուծո կմիքով կերպած հայու պայծառ դեմքը: Որ տեղ է լինենք, Հայրենիքում, թե Սփյուռքում, բոլոր հայերի միջից ես հայորյունն եմ տեսնում, հայորյունն եմ զգում, հայորյունն եմ կարդում:

Ողջունում եմ ձեզ բոլորի որպես իմ հարազարդ եղանակները և բոլորը, իբրև մեր եկեղեցու հարազարդ, հավատարիմ հավատացյալները: Սրբազն Հայրը ասեց իր խոսքում, որ դուք եկեղեցի եք կառուցում և եկեղեցին տակավին անավարտ է: Ես առաջին անգամ իմ կյանքում աղոթք արեցի եւստեղ և այդ աղոթքում, երբ ասեցի «Փ մեջ տաճարին եւ առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ հշանացս և սուրբ տեղույս», ես զգացի, որ ի մեջ տաճարի չէի, բարեկեն շինված շենքի մեջ չէի, այլ ասեցի «Փ մեջ տաճարին եւ առաջի աստուածընկալ և սուրբ հշանացս և սուրբ տեղույս», որպինեան Աստծու տաճարի մեջն ենք բոլորս. բնորդյունը ինքը, երկինքն ու երկիրը, այս հողը ամբողջ Աստծու տաճարն է: Այնուեղ, որ Աստծու եւրկացը գոյում եք, եկեղեցին ձեր հոգու մեջ կապրե, Աստված ձեր միջից կներգործե: Հետևաբար, ես այն որպես օրվան եմ ապաստ, երբ տեսնելու եմ այս եկեղեցին ձեր հավատքի զորութամբ, ձեր ձեռքերի աշխատանքով, ձեր զոհողության կամքով իր ամբարտին հասած և, եթե Աստված ինձ տա մի երկրորդ առիթ այսուեն գալու, այն առեն եկեղեցուց ներս կմտնենք միասին և կանեն դարձյալ և միասին «Փ մեջ տաճարին եւ առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ հշանացս»:

Ես փառ եմ տալիս Աստծուն, որ ինձ շնորհեց այս առիթը, որ լինեմ Ծիրակա թեմի ժողովրդին ենտ, առաջին այս բողեցից լինեմ Բազմաբերդ զյուղի և շրջակա զյուղերի հայորյունն ենտ: Ինձ համար չկա տարբերություն ո՞չ քաղաքացու և ո՞չ զուղացու բոլորս էլ մեկ ենք, մի արյուն ունենք, մի անոն ունենք՝ հայի պայծառ անոն, պատմությամբ կերպած, Եւրկացի վկրստին անկախացած անոն, ապագայում հուսակից նեռանիարներով այս անոնք ծաղկեցնելու պատրաստակամությամբ ապրող հայութուն:

Ես էլ զյուղացի եմ եղել, ես էլ իմ մասնկությունը, պատանությունը անցկացրել եմ զյուղի մեջ, ձեռքերս խառնել եմ հողին և հողից դուրս եմ բերել կամք: Եվ դուք պատվով հայեր եք, որպինեան ձեր քրտինքով եք շահում ձեր հացը՝ հալայ լինի ձեզ բոլորի այդ հացը: Տարբեր է քո աշխատանքով վայելել ապրուատ և տարբեր է որիշից ստանալ քո ապրուատը: Դուք ձեր ձեռքերով եք շահում ձեր կամքը, Աստված զորացեն ձեր բոլորի ձեռքերը, Աստված ձեզ կապի սերտությամբ ապ նվիրական հոսին:

Մերեւապով զայիս, հարց էի տալիս ինձ, երբ մեր հայրերը այս հողի վրա քացում էին, մերեւնա չկար, քացում էին ուրքով՝ հողի ուժն էին զգում իրենց մեջ՝ հողը և հայր իրարից անքածան են եղել և օտար թշնամիներն են միայն մեզ իրարից զատել՝ հողը հայից, հայր հողից: Հայր իր հողից չի կարելի բաժանել կամավորապես, ոչնամին բռնադատությամբ մեզ մեր հողերից պոկեց երբեմն, դուրս տարապ. պայօռ մենք փառք ենք տալու Աստծուն, որ մեզ մեր հողին է վերստին կապել և սցխ մենք մեր կամքով ենք այս հողը պաշտպանում, այս հողը մշակում և այս հողից կամք ենք հանում:

Շնորհավորում եմ ձեզ, որ աշդախի առարինի, հայավայկ զգացունեերով կապկած եք Հայաստանի մեր հողին և դուք այս երկրի մեր անկախացյալ ազատ պետության հավատարիմ, պարկեցու, չարքաշ քաղաքացիներն եք:

Ներքին բազմաթիվ դիմավորում է Վահանան Հայրական



Պատիվ ձեզ և ձեզնով պատիվ ձեր ազգին և նաև փառք Աստծուն և մեր Սուրբ Եկեղեցուն:

Տակավիճ կես յամ առաջ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում ծննդադրեցի Խջման Սեղանին, համբորեցի այդ Սեղանը, որպեսզի իմ խոսքերի միջից դոր զգար Լուսավորչի շունչը, Քրիստոսի ներկայությունը: Զգաք, որ Էջմիածնը քար չէ, աշխարհագրական վայր չէ, այլ Մայր Աթոռը հոգու մեջ ապրող ուժ է, հավատքի խորհրդանիշ է, մարմարուն և Լուսավորչան մեր անխախտ և անխախտելի հավատքին: Այդ քարերի միջից մենք նոյն չենք տեսնում, մենք Աստծո Հոգին ենք կարդում, և այսօր ևս իրան նորթնուիր Հայրապետ Ամենայն Հայոց, 181-րդը Հայրապետների այն շաբթից, որոնք այդ Գանձի վրա նստել են, բայց նատերով տառապել են, աղործել են, ճգնել են, ձեզ բոլորին համար՝ այդ Սուրբ Գանձից բերել եմ ողջուն սիրո, եղբայրության, խաղաղության և աշխատանքի:

Կոչ եմ անում ձեզ բոլորին, որ դուք Մայր Աթոռին կապված մնաք անքակտելիորեն: Սիրելիներ, այս հավատքը, որի թարգմանն է մեր Եկեղեցը: Առաքելական Հայատանշայց Սուրբ Եկեղեցին, այս հավատքը դարերի փորձով, համատակության գնով, մարտիրոսության արյունով նվիրականացած հավատք է: Աման հավատք չէ, դուրին հավատք չէ, մեր հայրերի կուտկովն է մեզ փոխանցվել, մենք պարտավոր ենք այդ Սուրբ կուտկով մեր շալակի վրա բարձր պահել և ոչ թե գետին դնել:

Դուք որպես այս շրջանի բնակիչներ ձեր կանոնում, ձեր տներում, ձեր ընտանեկան բնակարաններում, ձեր դպրոցական հարկերում, ձեր մշակութային դաշտերի մեջ Հայոց շարականը, աղործը միշտ վառ, կենդանի պահեցեք: «Առաւոտ լուսոց»-ն երգեցեք, ձեր շրջերի վրա «Փառք ի բարձունս»-ը բող ծաղկի. մի խոսրով՝ Եկեղեցին դուք եք, ձեր կյանքուն է Եկեղեցին ներկա, իսկ քարեղին շինությունը առիթն է, հիշնուն է հոգու մեջ առկա և հավետ անմաս Եկեղեցու: Իմ խոսքը փակում եմ այն սքանչելի, անզուգական բառերովը, որ մեր ուսկեղենիկ գրիշը՝ Եղիշե պատմիչն է առև մարդանանց նախատամարտը նկարագրելիս. «Վարդանի բանակի ամեն մնել գինելով ինքն իր մեջ մի Եկեղեցի էր»: Եկեղեցին հոգու մեջն էք ապրում, հավատքը նրանց կանանքի մեջ էք ներզործում, հավատքով էին գնացել Հայրենիքի պաշտպանության, Սուրբ Եկեղեցու և հավատի պաշտպանության:

Արևմտյան Հայատանի հահանգների մեջ որքան Եկեղեցիներ հիմա ապերակ են: Դուք էլ այստեղ ունեցար Եկեղեցիներ գրեթե ավերակ վիճակի մեջ, կամ անգործ վիճակի մեջ, կամ որիշ նպատակների հատկացված, բայց անցավ այդ շրջանը, եկավ ազատության շրջանը՝ հիմա Եկեղեցին ազատ է այնու և վաշ մեզի, իթե այդ ազատությունը մենք չհարցենք, չարժեցնենք. այն ատեն որիշը մեղադրելու իրավունք չենք ունենա, մենք կիմենք հանցավորը:

Հիմա Հայատանը անկախ է, մենք դարեր շարունակ այս անկախությունն էինք երազում, երգում: Ահավասիկ եկավ այդ ազատության արևու, հիմա անկախ է մեր Հայրենիքը, մեր ձեռքերում է մեր Հայրենիքը, որիշը չի ասել մեզ և չի ասելու, թե մենք ինչ պիտի անենք՝ մենք է, որ պիտի որոշենք, թե ինչ պիտի անենք, բայց խելացի շարժվենք, միասնական լինենք, մեր սուլդած Պետությունը մենք «Պայշտ» պահենք, ամուր պահենք, անսաւան պահենք և վեր մնանք ամեն տեսակի նեղ, նղճիմ, փոքրոդի հաշիվներից. Հայրենիքի, ընդհանուրի շանը նկատի ունենանք բոլոր գրադարձների, մտածումների և գործերի մեջ: Ահավասիկ իմ առաջին պատգամը:

Ես ցանկանում եմ և ի խորց սրտի աղոթում եմ, որ Աստված եր շնորհի ներգործությամբ այս օրը մեզի համար վերածի խմոր օրի, խմորվեն մեր գալիք օրերը այսօրվան խորհուրդով: Մեր այս հանդիպումը թող լինի ինձ համար, ձեզ համար վերանորոգի ուժ՝ վաղվան կյանքը մի քիչ տարբեր լինի երեկվան կյանքից: Շնորհակալ եմ, որ եկեղեց եք բոլորդ այսքան խուն բազմությամբ, բայց եթե ուզում եք ինձ հարգել, ոչ իմ անձը, այլ այն պաշտոնը, որ Աստծու օրինությամբ ինձ տրվեց, փոխվե՛ք, եղբայրներ և քոյթեր: Բարեկանավե՛ք, ձեր վաղվան կյանքը ավելի պայծառ լինի և ազգային եկեղեցական ձեր նվիրաբերումը լինի ստեղծագործական: Շինարար և միասնական եղբայրության ոգիով մենք աշխարհին առենք, աշխարհի միջից Աստծոն առենք. Աստված, ահավասիկ Դու մեզ հայ ստեղծեցիր, մենք հավատարիմ ենք մնում Հռ ստեղծած հայու կերպարին, որ դարերից եկած նվիրական սուրբ կտուկ է և մենք պահում ենք այդ կտուկը:

Թող Աստված օրինի ձեզ բոլորին և մանավանդ այս դպրոցական երեխաներին, այս երիտասարդներին, այս գալիք սերունդին և դուք, հայրեր, միսիարակցիներ, երիտասարդներ, խանդակառվեցեք ու, չափահասներ, դուք էլ եղեք կամուրջ հին սերունդի և նոր սերունդի միջև Աստծո փառքին, մեր Հայրենիքի շինության և մեր Եկեղեցու պայծառության համար: Ամեն»:

Ներքին Բազմաբերդից մերենաների շարասյունը շարժվեց Շիրակի դաշտավայրի խորքը, որի առաջին հաճովվանը պիտի լիներ Թալին ավանը: Աստունի լեռնաշխարհից դարասկզբին այս փոքրիկ հողակտորին հաստատված ժողովուրդը ժամանակ առ ժամանակ մարտել և ծառացել է բռնադատման և ինքնության ունահարման դեմ: Դեպի այս ներտասական ժողովուրդն էր գնում Հայոց Հայրապետոց ասելու նրանց, որ անցյալի սրբանքները արծնորում և նոր իմաստ են ստանում միայն ներկայի աշխատանքով և տրնանքով՝ հայացք Աստծոն և Հայրենիքին, ընդհանուրի շաբաթի վեր դասելով մասնավոր հարցերից:

Թալին ավանի ժողովուրդը Դավթաշեն գյոյի մոտից դուրս էր Եկեղեցի միմակորեկու իր Հովկապետին, առաջնորդելով և ուղեկցելով նրան ավանի կենտրոնում գտնվող Սուրբ Աստվածածին Եկեղեցի, որտեղ և Վեհափառ Հայրապետը օրինեց և քաջակերեց թալինցիներին, պատզամելով մարտոր, անաղարտ և կենդանի պահել Լուսավորչի աշխախտելի հավատքը՝ առարկացած Սուրբ Էջմիածնի Մայրավանքով, հայրենի հարազար ավանդությունների ծննդյան օրրան հայրենի հողը:

«Հավատացյալ և հավատարիմ ժողովուրդ Աստծոն և քաջահոգի զավակունք հայ ազգի,

Փառք և գորություն եմ վեր առաքում դեպի Աստված, որ ինձի տվեց այս բացառիկ հոգևոր ուրախության և ոգևորության պահը: Ես շատ էի լսել Թալինի մասին՝ ամբողջ շրջանի մասին, բայց որիշ բան է լսելը, որիշ բան է տեսնելը: Հիմա իմ մտքի մեջ դուք պատկերացվում եք որպես ապրող, շնչող, գործող հայության մեջ առնենք առողջ մասնելք: Ես իմ հոգու մեջ, իմ աղոթքների մեջ ձեզ միշտ ներկա պիտի ունենամ և, եթե նիշեմ Շիրակա թեսի այս Թալինյան շրջանը, աղոթքներին մեջ դուք բոլորդ պիտի ունենաք հատուկ տեղ և մասնավոր համակրանք:

Սիրելիներ, ես իմացել եմ, որ ձեզնից ոմանք, ձեր հայրերից և մայրերից շատերը, մեր Հայրենի հողի այս պատառի վրա են Եկեղեցի

հոդի որիշ մեկ պատառից՝ Արևմտյան Հայաստանից, որտեղից ձեր հայրերը հազիվ մազապուրծ եկել են այստեղ մեր թշնամու յարադանից ազատված, բայց միշտ նայել են կյանքին, նայել են ապագային և ոչ թե միայն մահվան և գերեզմանի վերհիշատակին: Դուք մի ժողովրդի զավակներ եք, որ կարողացել եք իր հայրենասիրությունը հայրենապաշտությամբ արտահայտել: Ես կարողացել եմ այն ազատազրական շրջանի հերոսական պայքարի, ոգորումի մասին, ոգորում, որ մեկ են ձեր հայրերը ի պաշտպանություն Հայրենիքի և ի կենացանություն հայ ժողովրդյան: Ես աչքերովս տեսել եմ ձեր հայրերի հերոսներից Մուշեղին, ապրել եմ երեք տարի քեղի Ղազարի հետ վաճրում, լսել եմ նրանից ձեր հայրերի մասին, այն բաշամարտիկ հոգով գինված ժողովրդի, որ երբեք չի խոնարհել իր գլուխը թշնամու յարադանին, բարձրացրել է իր գլուխը՝ հայի ճակատը և ասել ամբողջ աշխարհին. մենք կամ կմեռնենք հերոսաբար և կամ կապրենք հավերժաբար:

Սայդ հոգին պահեցեք կենդանի, առողջ: Սայդ անցալի շրջանն էր և երբեք չի մոռացվի ձեր հիշողության մեջ: Բայց, այսօր մենք ապրում ենք մի նոր դարաշրջան՝ ձեր բոլոր հերոսները, մեր հայության ողջ հերոսների շարքը իրենց կյանքն են տվել ձեր կյանքը չտալու համար՝ դուք նրանց եք պարտական: Եվ այսօր նրանք իրենց գերեզմանների միջից, և նրանք իրենց երկնքի բնակարաններից դիտում են ձեզ, տեսնում են, որ Հայրենիքը ազատագրել է այս մասում՝ Հայրենիքը դարձել է ազատ-անկախ Հայաստան: Սա մեր բոլոր հերոսների արյան գինն է, որ վճարվում է մեր ժողովրդի տոկունության, հավատարմության և հարատևության առաքինություններով:

Բանատեղծն ասել է.

Արարատի ծեր գագաթին դար է եկել վայրկյանի պես ու անցել,
Անմուն թվով կայծակների սուրբ է բեկվել աղամանդին ու անցել,
Հերթը հիմի քոնն է...

Ճերմակ է ահա, դուք հայեցեք Արարատին, բայց մի անցեք, հայեցեք Արարատին և հոդին կապվեցեք: Այս հոդն է Աստուծու տուրքը մեզ:

Եղբայրներ և բոլորներ, 1915-ի ցեղասպանության տարիներին ավելի բան մեկ և կես միլիոն հայեր կորցրինք, նրանք զոհ գնացին մեր թշնամու սրին, յարադանին, Տեր-Զորի արևներին և ավազներին: Ես Հունվար ամսի 8-ին գնացի մի անգամ ևս Տեր-Զոր՝ սրանից ճիշտ հինգ ամիսներ առաջ: Գնացի և նրանց ուկորների առաջ, մասունքների առաջ խոնարհվեցի և այստեղից փառք տվի Աստծոն, որ այնտեղ իրենք մեռան, այստեղ հայությունն ապրեցավ, դուք ապրեցիք և ահավասիկ մեր ազատ, անկախ պետականությունը վերստեղծեցիք: 1918 թվականին մեր հերոսների գոյամարտը պահպեց անկախությամբ, բայց շրջանի դեպքերն այնպէս դասավորվեցին, որ հազիվ երկու տարիան կյանք ունեցավ մեր ամկախ պետականությունը: 70 տարիներ եկան, բայց վերստին անկախության իշլը ծաղկեց, մարմին զգեցավ մեր երազը: Այսօր մենք ունենք ահավասիկ այն, ինչ որ մեր հայրերը երազում էին և ձգում էին ունենալ՝ իրենք չտեսան, մեզ կտակ թողեցին, մենք բախտավոր սերունդի զավակներ պետք է հաշվենք մենք զմեզ: Դուք, մահավանդ, երիտասարդներ, ձեզ եմ խոսք ուղղում այս պահին. ձեր հայրերն արեցին, ինչ որ կարող էին անել, Աստված ձեզ է հայում, պատմությունն այժմ ձեզ է հայում, դուք ի՞նչ պիտի անեք, որպեսզի այս Հայրենիքը տոկուն մնա, առողջ մնա և բարզականի: Ես տեսնում եմ, շատ մո-

տից հետևել եմ ձեր կյանքին. բնականորեն մենք ունեցել ենք և ունենք դժվարին պայմաններ կյանքի՝ տնտեսական նեղություններ, բա ո՞ր ազգը չի ունենա, երբ կա անկախության:

Մենք մեր քրտիմքով պիտի շահներ մեր Հայրենիքի բարգավաճումը: Մեր հայրերը, ձեր հայր հերոսները իրենց արյունով իրենց հավատքն արտահայտեցին: Դուք ուներ մի ուրիշ ձև՝ քրտիմքով, աշխատանքով, հողին կապածությամբ արտահայտեր ձեր սերը: Ազ կթողնի Հայրենի հողը, առ նոր տեսակի դավանան է այս ազգին: Այսրան խիստ եմ ես, այս՝ որովհետև ես գիտեմ, թե ինչ կնշանակի օտարություն: Քո հարազատ տունը որտեղ ես թողեում, բո հարազատ մորը որտեղ ես թողեում մի կտոր հացի համար: Քո հողից չե՞ս կարող այդ հացը հանել. «Մի պատառ հաց առվի ափին, իշխանական ճաշ է ինձի»,—ասել է ժողովրդական երգը:

Սիրելի իր, աշխարհը մեզ դիտում է, դուք այստեղ եք ապրում, աշխարհը չեք տեսնում: Ես պիտել եմ աշխարհով մեկ, աշխարհը սպասում է և կարծեք ողում է տեսնել, թե այս ազգը արժանի՞ է անկախության, թե ոչ: Մենք պիտի փաստենք, միանականությամբ, որ խկապես արժանի ենք: Եթե այսօր ինձնից ձեր կեսօրվան ճաշին պես հոգեոր սնունդ եք սպասում, այդ սնունդի անունը հետևյալն է՝ առեք այս պատգամը, խառնեցեք ձեր արյան, ձեր կյանքին. անեն բանից վեր նկատենք Հայրենիքի, Եկեղեցու, Ազգի և Պետության ընդհանրական շահը՝ մասնավոր, փոքրիկ, ճնշեմ. մանր, փոքրովի հարցերից վեր բարձրանանք, իբրև ազգ մտածենք, իբրև պետորյուն մտածենք:

Անա ինչու եմ եկեղ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Խո առաջին հանդիպումն է ձեզ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Դյուրին գործ չէ, եղբայրներ և քոյլեր, այստեղի ժողովրդի հոգեոր պատամանատում լինել, և համայնքների, որոնք ապրում են Հարավային Ամերիկայում, Շայրագոյն Արեւելքում, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում և աշխարհի չորս ծագերին: Ես իմ կյանքս այնքան տարիներ, որ Աստված թողել է ինձ հանար, այդ ամբողջ կյանքս նվիրում եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մաշից մեր Հայ Եկեղեցուն և հայ ազգին, Հայրենիքին և պետությանը: Եկեղ միանք իրար, թող Էջմիածնին չկնի մի կենարոն, իբրև այն տեսակի մի հաստատություն, որ բարերով խոսե, ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ. Էջմիածնը ձեր մոգու մնջու է: Ես եկել եմ ձեր հոգիները խառնելու և Էջմիածնը այնուղի վերատին կենդանացնելու: Գա մեր Սրբություն Սրբոցն է: Գիտեք ինչ կնշանակի ինձ համար Էջմիածին. Աստծո համբուրքը մեր հոդին:

Այս եկեղեցին հիմք, վեց տարիներ առաջ չեք գործում, բայց չեք մնուի, եկեղեցին ձեր մեջու եք ապրում և պատության պայմանները եկան, եկեղեցին նորոգեցին, վերաշինեցին: Այստեղ եք միրտվում, այստեղ՝ Քրիստոսի խոսքն եք լսում, այստեղ երիտասարդներն ու երիտասարդութիւնները իրենց զլուխներն են կապում, ձեռքերն են սեղմում և ընտանիք են կազմում հայկական պատվարեր ընտանիք, այստեղից էլ նաև հրաժարվում եք այս աշխարհից, տարիների ընոք ձեր ուսերին, երբ աշխարհին հրաժեշտ եք տալիս և զնում եք անհետական աշխարհ: Եկեղեցին պետք է դառնա ապրում, համոզում, կյանք ձեր բոլորի մեջ, ձեր դպրոցական հարիւրի ներքին, ձեր ընտանիւկան բնակարանների մեջ: Երկրորդ, եկեղեցուն կապվելով՝ կապվեցեք անկախական հողին՝ Հայրենիքին, և ձեր աշխատանքով շինեցեք այս երկիրը: Օստար ազգեր չափաի գան և պիտի չշինեն, ոչ էլ արտասահմանի հայերը պիտի գան: Նրանք կօգնեն, բայց դուք պիտի շինեք, հայրենաշխին:

թյունը մեր գործն է: Եվ երրորդ դուք հավատարիմ մնացեք հայկական, հարազատ և մաքոր ավանդություններին, արդի աշխարհի ապահովիչ երեւովովներից մի տարվեք: Սուրբ ավանդ ունենք մեր հայրերից եկած, մեր տոնները եկեղեցական, մեր բարքերը հայկական՝ այս բոլորը չծախսենք՝ օտար ազգերից, օտար մշակույթներից եկող սին և փուշ այն բոլոր ազդեցություններին, որոնց ենթարկվում է մեր երիտասարդությունը:

Օրինաւ և ձեզ բոլորիդ հանուն Մայր Սորո Սուրբ Էջմիածնի, խնդրում եմ Աստծուց, որ իր աշքը ամենատես և իր Սօր ամենազոր պահի ձեր կրա արևի պես պայծառ և երկնքի պես կապույտ ամպերը կդնան, երկնքի կապույտ կմնա: Ձեր միությունը լինի այդ կապույտը, տարակարծությունները գան ու գնան ամպի նման, ոյի նման և հավերժ ըլլա հայությունը երկնքի կապույտին պես և երկիր հողի ամրության պես ու արեգակի պես միշտ հառագայրուն, Աստծու փառքին և Սուրբ Եկեղեցու պայծառության և մեր Հայրենիքի շնորհյան համար, հավիտյան հավիտյանից: Ամեն»:

* * *

Սուրբ Աստվածածին Եկեղեցում ժողովրդին հանրիակելուց հետո, Վեհափառ Հայրապետը Թալինի մշակույթի պալատում տեսակցեց շրջանի ղեկավարության և մտավորականության հետ և շեշտեց այն գաղափարը, որ հարկավոր է ապրել ու աշխատել Ավետարանի բարողած բարոյական սկզբունքը և նշմարտություններով, որոնց բացակայությունը մարդուն դարձնում է կույր գոյություն և նոգելոր արժեքներից գորկ մի զանգված.

«Մենք եղանք Եկեղեցու մեջ, գտնվեցինք Եկեղեցու առաջ, աղոթեցինք միասին, հրապարակավ խոսք ողովություն բանապաշտ ժողովրդին: Եվ այս պահը, որ մեզ համախմբել է մշակույթի այս սրահում՝ Թալինում, մտածման, խորհրդադության, լուրջ անդրադարձումի մի պահի պետք է վերածվի և ոչ թե հոգեկան խանդավառության, զգացական վիճակի: Մեր ժողովուրդն ասում է հաճախ. «Ծոյն հատենք, շիտակ խոսենք»: Այսօր արտից, մտքից ինչ որ մտածում եմ, ոգում եմ ձեզ հետ միասին բաժանել:

Սուաշին. ահավասիկ երեկ միայն վերջացավ մեկ ամիսը իմ Կաթողիկոսական ընտրութենեն ասդին. միամյա Կաթողիկոս եմ դեռ: Եվ Ավետարանում մեր Տիրոց Հիսուսի Քրիստոսի ամենեն գեղեցիկ բարողությունից մեկն այն էր, որ ասում էր. «Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ լիմոցն» (ՀՈՎՀ. Ժ 14): Ես չեմ կարող ժողովրդին ծառացել, եթե այդ ժողովրդին չճանաչեմ: Ժողովուրդը անում չէ ինձ համար, թիվ չէ ինձ համար՝ անձեռ են, ապրոյ, շնչոյ, իրենց տագեապները ունեցող, իրենց երազները ունեցող, իրենց ձգութանքները ունեցող, իրենց նպատակները ունեցող, իրենց հիշողությունները ունեցող: Ամեն մենք մեզանից մի աշխարհ է: Եթե ինձ հարցնեք, թե ես ով եմ մի հեռավոր Սիրիայում ծնվել եմ, որիշ աշխարհ եմ տեսել և որիշ տեղ եմ ուսանել, որիշ երկիր եմ տեսել, և սակայն այստեղ, ձեր մեջ ինձ համարապարացի եմ զգում, որովհետև տրամարանության աշքին և զգացողության դիմաց եմ տեսնում, որ մենք բաժանում ենք նույն անցալը, ունենք նույն հավատը, ունենք նույն լեզուն, ունենք նույն երկիրը և ունենք մեկ ճակատագիր: Հետաքար, ես առաջին հարցումը, որ զնում եմ, այս է. ո՞վ ենք մենք, ճանաչենք մենք զմեզ: Մեծ Փիլիտսիա Սոկրատը ասել է. «Ճանի՞ր զրեզ»: Ամենից մեծ ճշմարտությունը որիշին ճանաչելը չէ, ինքն իրեն ճանաչելն է: Եթե մարդ իրեն չճանաչի, սխալ ձևով կապրի: Մենք իրեն

հայություն, մենք զմեզ ճանաչելու ճիգին մեջ պետք է խոսափենք չափացանց գերզգայականությունից՝ այսինքն, գգացումով շարժվել, զգայարակներով ղեկավարվել:

Աստված մարդուն տվել է մի մեծ ուժ, որիշ Էակներից անջատող մի հիմնական ուժ՝ դա միտքն է: Միտքն է մարդուն ղեկավարը: Եղիշեն ասում է. «Հոգույ և մարմնոյ միտք են կառավար», մարմնի և հոգու կառավարիչը միտքն է՝ բանականությունը, տրամաբանությունը: Երեակայեցեք, իին փիլսոփաները աշխարհում մարդու պատկերացնում էին երեք բաղկացություններից կազմված մի էակ. մարմին նյութ, մին ու ուկոր, հողից եկած, հողին զնալու երկրորդ, հոգի՝ զգալու եղանակ, և երրորդ՝ միտք, բանականություն: Եվ այս երկուրի՝ հոգու և մարմնի պատկերացումը տալիս էին, ասեղով, թե նրանք նմանվում են երկու ձիերի, մեկը սև և մոտաք ճերմակ՝ սպիտակ, և ամեն մեկը հակոտնայ ուղղությամբ է զեռում միտքն է այդ երկու ձիերին կարգի մեջ՝ ուղիղ ճանապարհին պահողը: Մենք իբրև ազգ հաճախ տարվել ենք, սխալվել ենք միայն ու միայն զգացումներից առաջնորդված գործելով: Ես որիշ ազգերի ճանաչել եմ. մենք չափազանց զգացական ենք և միտքը պետք եղած ձեռով չենք զործածում:

Սիրահիմե՞ր, եթե երբեք այսօր մենք ուզենք մենք զմեզ ճանաչել, պետք է նաև խոսափենք մի որիշ թերությունից: Ես չեմ եղել Կարողիկոս, որ ձեզ, որ միայն ու միայն իմ ազգին փառաբանեմ՝ ո՛չ: Հոգեոր մարզուշ դուք ինձ ընտրել եք, որ ես ձեզ առաջնորդեմ: Եթե դուք ասում եք, որ ես ձեր զորավարն եմ, ես անպայման ձեզանից ավելի մեծ անձ չեմ իբրև մարդ, բայց բանի որ դուք ինձ նշանակել եք՝ հետևեք և ոչ թե ամեն մեկս իր ուղածն անի, ուզածն ասի, հապա ինչ է ղեկավարությունը, ինչ է զորավարությունը: Հոգեորականությունը մի հոգեոր զինվորություն է և հետևաբար, ես եկել եմ նշելու նաև մեզ համար իրական ախտաճաշումները մեր գոյության մասին: Ասացի առաջինը զգացականությունն է իր չափազանցյալ վիճակի մեջ, երկրորդ՝ անցյալը գովարանելու մեր չափազանցյալ եղանակը: Չարենցը գրել է.

Նարեկացու, Քոչակի պես լուսապատճակ ճակատ չկա,
Սշխարի անցիր Մրարատի հնան ճերմակ գագաթ չկա...

և բոլոր ասածները ճիշտ են, բայց բանաստեղծություն են: Աշխարհում Մրարատից որիշ բարձր լուս կա, բայց մեզ համար չկա՝ Հիմալայան լոռները: Նարեկացու, Քոչակի պես լուսապատճակ ճակատ չկա ասող և արտասանող մարդիկը շատ հաճախ չեն կարդում ո՛չ Նարեկացի և ո՛չ ել՝ Քոչակի: Խնչ իրավունք ունեն մեր հայրերի անունով հապարտանալու, եթե իրենք այդ հայրերի հոգին իրենց մեջ չեն կրում և իրավունք չունեն մեր հայրերի արածներով միայն հապարտանալու: Դա կնմանի մի դրամազիխի, որ մենք շահագործում ենք: Մենք ի՞նչ պիտի անենք, ա՞յս է հարցը մեզ համար: Ես մի գիրք եմ գրել և այդ գրքից այսօր ձեր դպրոցների համար ըերել եմ 10 օրինակ, կարող եմ ավելին էլ ուղարկել. «Հայաստանեաց նկեղացին իր ծառայական կերպին մեջ»: Ի՞նչ է արել մեր Եկեղեցին մեր ազգին հայության և ի՞նչ է արել մեր Եկեղեցին ամբողջ մարդկության համար: Ես խնդրում եմ ձևանից, որ կարդաք, բայց ոչ թե իմ գիրքը միայն այն ուրիշ գրքեր, մեր ժողովուրդի մեջ ընթերցանությունը մեծ մտածող-

ների, մեծ տաղանդների հետ հաղորդությունը պեսք է որ մշակվի, զարգանա:

Բարեկամներ, անցյալը գովելով, ներկայի մեջ մնալով զգայական, անշարժ՝ դա արդարություն չէ: Ես այս գրքում մնացերել եմ նոր Զուտայի պարագան, այնուև Պարսկաստանում առաջնորդ եմ եղել, ուր 1600 թվականից մնացած եկեղեցիներ կային, Շահ Աբբասի տարած ժողովուրդն էր դրանք կառոցել: Երբ նրանք Պարսկաստան տարվեցին, երկիրը չէին ճանաչում, լեզուն չէին իմանում և Պարսկաստանում այդ հայերը մի երեք կիլոմետր տարածությամբ հողի վրա 28 եկեղեցիներ կառուցեցին, նկարագրություն, ձեռագրեր գրեցին, Ամենափրկչյան վանքը հիմնեցին, մի Հայաստան փոխադրեցին արտասահման և հաղորդ մնացին մեր Հայրենիքին: Բայց երբ որ ևս զնացի երեք դարեր հետո, տեսա նրանց, ասում էին մեր հայրերը ալսակն են արել, մեր հայրերը ալսակն են արել, արել, արել, արել: Դարձա իրենց հետևայլ խորք ասեցի. չպետք է ասել մենք անցյալում քանի ավելի եկեղեցի ենք ունեցել, մեծ-մեծ ուսուցիչներ ենք ունեցել, մեծ-մեծ հոգևորականներ ենք ունեցել, շնորհատուն ենք ունեցել, երգչախմբեր ենք ունեցել:

Դարձա և ասացի. Ի՞նչ ենք ամուս մենք հիմա, Սատծու առջև կանգնել ենք, պատմության դիմաց. ես ասում եմ մեզ համար անցյալը հուշ Է՝ ապագան երազ, իրականը ներկան է: Հինգ րոպե առաջ ինչ որ արեցինք եկեղեցում, անցյալին կպատկանի, ինչ որ անելու ենք Լենինականում կամ Գյումրիում դա ապագան է հիմա ինձ համար, ինչ որ հիմա արժի, հիմական մեր արածն է: Ներկան է կարեռ և այդ ներկան՝ մեր սա անկախացյալ Հայաստանն է: 1988 թվականի դարձադայան շարժումից հետո, 1988 թվականի Գյումրիի շրջանի աղետից՝ երկրաշարժից հետո, 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախ պետականության հոչակտումից հետո, հայր չի կարող լինել նույնը, ինչ որ էր անցյալում: Սա ճշմարտություն է:

Պարզ եմ ասում՝ ես չեմ կարող լինել նույնը, ոչ ել դուք և ոչ ել արտասահմանցի հայր, ոչ ել երևանցին: Դրանից առաջ ուրիշ կարգ էր տիրում աշխարհում, դրանից առաջ Խորհրդային Միություն կար եստեղ: Դուք չէիր կարող որոշել, թե ինչ պիտի անեք: Դրանից առաջ մենք Սփյուռքում Հայրենիք էինք երազում: Մեզ համար Հայրենիքը թուրքերի կողմից գրավված մեր հողերն են և երկրորդ՝ Խորհրդային Միության կողմն տիրապետված այս փոքրիկ Հայաստանն էր այն ատեն: Հիմա Սատված մեր երեսին նայեց, մեր ծովովուրդի կամքի հարատևության պատճառով մենք դիմացանք, տոկացնք և Սփյուռքում, և Հայաստանում, և Աստված վարձատրեց մեզ, անկախ Հայրենիքը, ունեցանք, հիմա Պետություն ունինք՝ մեր ընտրած Պետությունն է, հիմա կառուց ունինք: Գիտե՞ք ինչ պատահեց ինձ Անթիլիաստում՝ Կիլիկիո Կաթողիկոսության կենտրոնում, Լիքանանի մեջ, երբ եկավ այնուղ իմ Հայրենիքի արտաքին գործոց նախարարը, երբ նա վերադառնում էր Նյու Յորքից՝ այդ մեծ քաղաքից, Միացյալ Ազգերի Կենտրոնից և դեպի Հայաստան էր ուղղվում, կանգ առաջ Լիքանանում երկու օրով և այնուղ, երբ եկավ մեր կաթողիկոսարանը՝ հոգևոր կենտրոնը Ս. Թիլիամ, նա պատմեց, թե ինչպես Միացյալ Ազգերի Կենտրոնում հայկական Եռագոյն Պրոցը բարձրացավ:

Ես այդ բարձրություն տարել եմ երեք ու կես տարի, ամեն շաբաթ այդ շենքի առաջից անցնում էի, հարյուրից ավելի ազգերի դրոշներն էի ունենում. բայց չկար իմ ազգի դրոշը: Եղա՛վ, պատահեց, չէինք սպասում թերև,

բայց աշխարհը փոխվող աշխարհ է երեկովան աշխարհը պայօքանը չի և ոչ էլ վաղվա աշխարհը պայօքանը պիտի լինի: Սադ փոփոխությանց մեջ մենք պետք է միշտ արթուն մնանք՝ իրատես ոլլանք, տրամաբանությամբ շարժվենք և մեր Հայրենիքին անկախացալ այս պետականության ամրացումը ապահովենք անեն ձևով:

Ես ճանաչել եմ շատ ազգեր, երբ ուսանող եմ եղել Անգլիայում, 9600 աշակերտների մեջ երեք հայ ենք միայն, և հաճախ հարց եմ տվել ինձ. ինչո՞ւ նրանք ավելի զարգացած լինեն և մենք այնքան զարգացած չլինենք՝ որտե՞ղ է պատճառը: Կարդացել եմ նրանց գրականությունը, ճանաչել եմ նրանց պատմությունը, հաղորդակից եմ եղել նրանց ապրող դեկափարեների մեջ և հոգևորական, և քաղաքական, և պետական: Ես եկել եմ հետևյալ եզրակացության: Նրանք կարգավորյալ ձևով են դասավորում իրենց կյանքը և մեկ փիլիստիվայություն ունեն, դա հետևյալն է ընդհանուրին շահին մեջն է անհատին շահը, ոչ թե անհատականին մեջն է ընդհանուրին շահը: Եթե երբեք ընդհանուր մարմին առողջ չլինի, իմ թեր չի կարող երկար առողջ մնալ: Մարմին է ազգը, այդ մարմինը իր ամբողջության մեջ երեւ առողջ չլինի, ես մի մասնիկ չեմ կարող այդ վատառողջ մարմին մեջ առողջ լինել:

Ճետևարար, ընդհանրական շաբը Թալին քաղաքի, փողոցը, հրապարակը, այն բոլոր հասարակական շենքերը, հաստատությունները, որոնք կան, իմ տնից վեր պետք է դադիւն, որովհետև նա կպատկանի ամբողջին, ոչ թե ինձ: Եթե երբեք իմը նախընտրեմ, մի օր ընդհանուրի հիվանդությունը իմ տանը կհասնի: Սա շատ պարզ թապալիսան ճշմարտություն է, բայց մենք իրենց հայություն պետք է որ դա ճանաչենք, իրեն ազգություն պետականուրեն մտածենք: Գիտե՞ք, ինչ է պատճառը, որ մենք չենք կարողացել այդ անել, որովհետև որիշ ազգերի տիրապետության տակ ենք պարել: Հիմա, որ անկախ ենք, հիմա, որ մենք մեր դաստիարակությունը, մեր կրթական, դպրոցական կյանքը մենք ենք դասավորում, պետք է որ հիմա մենք խելացի շարժվենք և այս բոլորը մենք ի սեր մեր Հայրենիքի: Վերջում ուզում եմ ասել, որ մեր Եկեղեցին Հայոց Եկեղեցին մեր ազգի գոյության միախանման է, մեր պետականությունը մեր Եկեղեցոց անկախ չի եղել. պատությունը կարդացեք և պատմությանը հետևեցեք ուշադիր կերպով:

Եղբայրներ և բոլորեր, մեր Եկեղեցին եղել է սեուցիչ մայրը բարոյական ընթանումների, հոգևոր արժեքների. Եթե մի ազգի մեջ բարոյական ուժը՝ առողջությունը տևարանա, ո՞չ դրամը մեզ կփրկի և ո՞չ էլ զենքը: Կարծուքը մարդ էակի և ազգի առողջությունն է հոգևոր և բարոյական, որ իմաստ կտա և դրամին, և գենքին: Դրամը տոր հիմար մարդու ձեռքը կմսիսի, դրամը ուժ չէ, մարդն է ուժը: Զենքը տոր մի ոճրագործի ձեռքը՝ մարդ կապանի, բայց զենքը տոր բաշսամարտիկի ձեռքը, որ իր Հայրենիքը պաշտպանի, Հայրենիքի գաղափարը ունենա, բարոյական հասկացողություն ունենա, ազգային ընթանում ունենա՝ նա կպաշտպանի: Խնչակ Գալցոյանն է ասում իր Ընդի Միրոյի մեջ. «Տղա, դու ասկյար չես, դու զինվոր ես»: Ես զինվոր եմ, սրբազն զինվոր է, վարդապետը զինվոր է, քահանան զինվոր է՝ նոգերը զինվոր է, կարգ ու կանոնվ պիտի ապրինք: Եթե կարգ ու կանոնն իստիք զինվոր է, կարգ ու կանոնվ պիտի ապրինք: Եթե կարգ ու կանոնն իստիք զինվոր է, նոգերը կրաքաջի: Որպես պարզ օրինակ, առեք այս շենքը, սա բարերի կույտ չէ. ճարտարապետի մորու դասավորված, չափագրված, շինչած տոկուն շենք է: Հաւեւ պատը կը թէնի շենքը, վերցրու այսունը՝ կրանդի շենքը: Ազգն էլ ոի համատեղ կառուցվածք է հոգեկան, ազգային, մշակութային, կրթական,

ընկերային, տնտեսական ազդակներով: Եկեղեցին այս մարմնին պահն է, ճշմարտությունների քարոզիչն է: Էջմիածինը, մեր սրբություն սրբոցը, որին Մայր Աթոռ ենք ասում, Մայր Աթոռ ի՞նչ կնշանակի: Արդի՝ լինենք, եթե ևս ասում եմ իմ մայրը և նրա հետ չեն չեն վերաբերվում զավակի նման, մայր ասելը ի՞նչ իմաստ ունի՝ ես ինձ խարում եմ:

Սուպերվաճակ ասում է. «Եթե մեկն ասի, թէ՝ սիրում եմ Աստծոն, և ասի իր եղբորը, սույն է, ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպես կարող է սիրել Աստծոն, որին չի տեսել» (Ա. ՀՈՎՀ. Դ 20): Այլ Աստծո մերը եղբոր հանդեպ ցուց տված սիրով կարտահայտե, այս է Աստծո ծառան: Եթե մարդուն ատես, չես կարող Աստծոն սիրել: Այսպիս այ մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և բոլոր թեմերով՝ և՛ պատեհ՝ Հայրենիքում, և՛ արտասահմանում, պետք է դառնան մեր ժողովրդի կամքի մեջ ներգրծող ուժ, գաղափար, ապրում, աղոթք, Ավետարանի քարոզություն և ոչ թե քար, հուշարձան, խաչքար, օմքելո միայն: Մեր հայրենը իրենց հավատքն են արտահայտել, իսկ մենք ինչպես ենք արտահայտում մեր հավատքը այսօն: Եկեղեցին նորոգեցիք՝ ապրեք, բայց Եկեղեցին պետք է լցնել, Եկեղեցին պետք է այնպես ապրել, որ դառնան մեր ժողովրդի դաստիարակության կարևորագույն ազդակներից, միջոցներից մեկը:

Այսօր առաջին անգամ որպես Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս այսպիսի մտերմիկ գրուց եմ ունենաւ Թաղինի շրջանում: Դեռ նման գրուց չեմ ունեցել ո՛չ Էջմիածնի քաղաքում, ո՛չ է Երևան քաղաքամայրում. առաջինը Թաղինում է: Այս հիշատակը ինձ համար միշտ քաղցր պիտի մնա և խնդրում եմ ձեզանից՝ բոլորիցդ, եներ մենք այսօր մի որոշում առնենք բոլորս միասին՝ Կաթողիկոսով, սրբազններով, վարդապետներով, քաղաքացիներով իշխանության ներկայացուցիչներով, մշակույթի սպասավորներում բոլորով միասին, որ եթե նոր Կաթողիկոս ենք ընտրել՝ նորոգված ազգ և Եկեղեցի դառնանք:

Ո՛չ իմ համար՝ ես կամ-չկամ, բայց Կաթողիկոսությունը կա: Մենք պետք է փոխվենք և այդ փոփոխությունը պետք է լինի բարեփոխություն: Երեկ գիշեր մի գիրը էի կարդում, այդ գրում մի տող կարդացի. Այ Տոլուոյ ուսում մեծ գրողը ասել է. «Ամեն որ խոսում է աշխարհը փոխելու մասին, ոչ որ չի խոսում ինքնը իրեն փոխելու մասին»: Ծիծու է: Նոր Հայրենիք, նոր ազգ՝ անեկան Հայրենիք, նոր ձևով մտածողություն և այդ մտածողության ողնահար, մայր ջիղ պետք է լինի մեր Եկեղեցին և մեր պետությունը: Մենք՝ հայ մարդիկ այսօրվա՝ 1995 թվականի, որ նայում ենք երկրորդ հազարամյակի ավարտին, բանալու համար երրորդ հազարամյակը մեր պատմության մեջ, մենք փառք տանք Աստծոն, որ անհայտությունը ունեցանք:

Հայրենիքը մեր ձևորով շինենք, որիշը չպիտի զա շին մեզ համար: Երեկ Էջմիածնում ինձ մոտ եկավ ՄԱԿ-ի ներկայացուցիչը Երևանում: Դա ի՞նչ պիտի անի, կօգնենք ձեզ, ասեց, բայց երեկ ես չաշխատեմ, ինքն ի՞նչ կարող է անել, երա օգնությունը որի՞ համար է: Ի՞նչ զեղեցիկ է այն խոսքը, որ ասում է. «Դուն թեզ օգնի, Աստված թեզ կօրհին» և ասվել է «Աշխատանքը թանձրացնալ աղոթք է»: Աստծո հանդեպ հավատարմության եղանակը աշխատանքն է, գործը: Ըստ ենք խոսում, ամեն բանի մասին խոսում ենք, խոսում ենք ու խոսում: Խոսքի առատություն, խոսքի ճշմարտության փաստը սակայն գործն է: Գիտեք, Հիսուս ինչ ասեց. «Թէև ինձ ոչ հաւատար, սակայն գործոցն հաւատացե՛ք». չես կարող գործին չհավատայ: Մեկն ասի, որ ես մեծ տաղանդավոր գրող եմ, բայց չգրի՝ ի՞նչ արժեք ունի:

Մեկն ալ՝ Աստված եթե տված լինի սրանչելի ձայնի տաղանդ երաժշտական, բայց նա չեզի՞ ի՞նչ արժե, կնմանի մի արևի, որ ճառագայթ չունի և նման արև չի կարող երևակայվել՝ արևը եթե արև է, ճառագայթ ունի:

Այսպես էլ, եթե մեկը արժեք ունի, այդ արժեքը պետք է արտահայտի: Գործն է, նվիրումն է, աշխատանքն է, որ այս Հայրենիքը պիտի շինե: Այդ աշխատանքը պետք է լինի ներդաշնակ, միասնական ուժով, ընդհանուրին շահը, Հայրենիքին շահը, Եկեղեցու շահը ամեն տեսակի մասնավոր շահերից վեր դասեղով: Անա ձեզի իմ հասկացողությունը կյանքի, Հայրենիքի և Եկեղեցու մասին: Եթե սխալ բան ասեցի, թող Աստված ինձ մերի, իսկ եթե ճիշտ բան ասեցի, թող Աստված ձեզ օրինի: Ամեն»:

Հաջորդ հանգրվանը Մաստարա ավանն էր, որի է դարի հրաշագելոց Սուրբ Հովհաննեան Մկրտիչ Եկեղեցին, իր 1300-ամյա քարերի շունչը ընդհանունելով հավատացելոց հոգիներին, ուրախությամբ վերամբարձել էր գլուխը՝ դիմավորելու Սուրբ Սեղանի առաջին սպասարկորին և այս միջոցով հաղորդվելու իր Սորբ Միածնակաց Տաճարի սրբարուց և հայարարան ավագանի ու Սուրբ Խորանի հետ: Մի գեղեցիկ պահություն պատմում է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Հայոց դարձի Սաստվածքնկալ օրերին Ամասիայից բերած Սուրբ Հովհաննեան Մկրտչի մասունքն է ամփոփել այս Վայրում և հիմնադրել համանուն Եկեղեցին, որտեղից էլ ծագել է անոնք՝ Մաստարա: Այսօր, 13 դարերի հեռավորությունից, Լուսավորչի արժանի հաջորդ Գարեգին Ս. Հայրապետը Սուրբ Էջմիածնի հոգեկան մասունքն է տանում այնտեղ՝ վերաշինելով և մերանորդելով հայութի ոխտն ու պատգամքը.

«Հավատացյալ, հավատարիմ հայորդիք և զավակունք Հայատանյաց Սուրբեական Սուրբ Եկեղեցու,

Ինձ համար հոգեկան մեծ ուրախության անմոռանալի օր է այսօր: Ես կարդացել եմ ձեր Եկեղեցու պատմության մասին, հիմա ձեր առաջնորդ սրբազնան էլ հիշեցրեց, որ է դարից այս Եկեղեցին կանգուն է մնացել սրտում այս ամբողջ շրջանի մեր հավատացյալ ու սիրեցյալ ժողովրդյան: Ի՞նչ կնշանակի է դարից այս կողմ՝ 13 հարյուր տարիներ, 13 դարեր, որ այս Եկեղեցին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքն է խոսում՝ այս վերջին 70 տարիներին անբարբար լեզվով, քարեղեն լեզվով, որովհետև փակ էր մնացել այդ Եկեղեցին: Խոնց անենք, հավատացյալներ, անցյալն ավաղենք և դրանով գոհանանք: Անցյալը անցել է: Հիմա մենք նայենք ներկային, հիմա մենք նայենք ապագային: Որքան ուրախություն է ինձ համար, տեսնել այս երեխաներին, այս պճլուն աշբերով, վառ նայվածքով, պայծառ ճակատով երեխաներին, պատահեներին, պարմանուիներին, որոնց աշբերի միջից դուք և ես տեսնում ենք մեր Հայոց պանծառ ապագան:

Ով անմեղ է լիբը սիրով
Ու հավատով անսասան,
Ով նայում է վառ հոյսերով
Դեպի Հայոց ապագան...

Երեխներ, դուք ինձ մտիկ արեք, դուք այսօր նայում եք գալիք կյանքին, մենք այս ապրում ենք մի քիչ հիշատակներով: Նա, որ արդեն կանցնե-



Umsf Uuuusuru



Մասսարու, Ս. Հովհաննես Միքայելյանի նկարագում

60 տարեկանը, հինգ հիշելու տրամադրության մեջ կլինե, բայց դուք, երիտասարդներ, դո՞ւք եք այս Հայրենիքի նոր զավակները:

Հայրենիքը չէ՝ այն, ինչ որ եղել է ձեր հայրերի օրով: Մենք օտարի կամքով էինք ապրում, որիշն էր որոշում, թե մենք ինչպես պիտի ապրենք: 70 տարիներ դուք աղջկես ապրեցիք այս երկրում, իսկ ես, որ զայխ եմ արտասահմանից, մենք եւ ապրեցինք օտար երկրներում: Խմ հարազատ հայրն ու մայրը այսպիսի փոքրիկ երեխա էին 1915 թվականին, երբ անապատից փրկվեցին թուրքի յարադանից և սրբ, ազատվեցին և վերապրեցին: Մենք եւ շատ ծանր-ծանր օրեր ենք տեսել, բայց հիմա անցել են այն բոլոր, հիմա մենք նոր՝ ազատ ու անկախ Հայաստան ենք նոշակել, անտուրյուն ենք դարձել, կյանքով ենք ապրում, ազատ ժողովորդ ենք, հետևաբար, գիտցեք հարգը ազատության: Մի՛ զնաք անիշխանության, մի՛ զնաք անկարգության, ազատությունը կարգով, կարգապահությամբ պետք է ապրել, որպեսզի դա ստեղծագործ լինի. իսկ ուզած անձը, ուզած բանը եթե անի՛ դա ազատություն չէ, դա անիշխանություն է, կամ կամայականություն է. կարգով, օրենքով ապրող ժողովորդներն են, որ մեծ կլինեն, տևական կլինեն և հաղորդ կլինեն բոլոր տեսակի թշնամիների առաջ:


Ինչպես գիտեք բոլորդ էլ, ես եկել եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Չեր առաջնորդը, Գրիգորիս սրբազնն ասեց, որ այս շրջանը պատկանում է Սուրբ Էջմիածնին. եկել եմ իմ իրավունքը պահանջելու՝ այսինքն ձեզ առավել ևս կապելու մեր Սուրբ Աթոռ, Մայր Աթոռ, Սորովյուն Սրբոց Լուսնիածնին: Բայց մի բան չանց են, ո՞ր մեկ տեղը չի կապվել Էջմիածնին, միայն Մաստարան չէ՝ բոլոր Հայաստանը, ամրող հայությունը աշխարհի չորս ծագերի. դուք ունեք մի այնպիսի հոգևոր կենսորուն, որ քար ու շենք, զրասենյակ ու թանգարան չէ. այստեղ աղորում ենք ձեզ համար: Գիտեք Էջմիածնին ինչ կեշանակի՝ «Միածնը իշխավ», Սատծու Որդին՝ ինքը, Լուսավորչի տեսիլքի մեջ լուսելեն կերպարանքով իշխավ երկնքից երկիր, մրանկը ձեռքին (ուսնակը, ինչպես ասկում է զրաբար լեզվով) ուկեղեն, բախեց հաւաց գետինը՝ հողը: Ես պատկերավոր ձևով հաճախ ասում եմ Քրիստոս համբուրեց այս հողը Սուրբ Էջմիածնում և ասաց. «Այստեղ պիտի լինի իմ եկեղեցին»: Այս բացառիկ մի շնորհ է հայության համար:

Ել ո՞ր երկիրը կարող է ասել, որ Քրիստոս իշել է իր երկիրը, բացի Պաղեստինից, բացի Եթովենեմից, որտեղ Հիսուս մի անգամ մարդեղացավ, մարմին զգեցավ: Մենք այդ հավատով ապրել ենք՝ Լուսավորչի այդ հավատքով: Շատ հոնաբեներ, բարողություններ եկել-գնացել են, բայց հայու Լուսավորչահիմն հավատքը, Էջմիածնական կենտրոնվ դեկապարված Եկեղեցին մնացել են կանգուն և անսասան, որովհետև նա եղել է մեզ համար Մայր, Մայր սնուցիչ, հոգևոր սնունդ է տվել մեզ: Երբ պատմությունն ենք կարդում, երբ մեր գրականությունն ենք ուսումնասիրում, տեսնում ենք, թե ինչպես սուրբ հայրերը մեր՝ մարտիրոսներ, համատակեներ, հայրապետներ, վարդապետներ, ապրել են այդ հավատքով, գործել են այդ հավատքով և մեր երկիրը պահել են հավատքով քրիստոնյան և հայադրում քրիստոնյա: Ես բոլոր որիշ տեսակ բարողությունների համար մի խոր ունեմ. — նրանք ամափ հման կզան ու կերպան, եկել են ու զնացել պատմության մեջ. մեր Եկեղեցին մնացել է տոկուն և պիտի մնավ տոկուն ձեզանով: Եկեղեցին այս քարը չի, քարը Եկեղեցու արտահայտությունն է Եկեղեցին դուք եք, ձեր հավատքն է: Երբ Վարդամանց զինվորները Սվարարի դաշտ գնացին, երբ Պատնդ երեցը պատերազմի նախորդ գիշերը


հաղորդություն տվեց 66 հազարանոց Սուրբ և քաջ Վարդանի բանակին. Եկեղեցի՝ ուներ այսպիս քարաշեն՝ ո՛չ, դաշտի մեջ էր: Սատծու տաճարն է այս տիեզերքը, ամեն մեկը իր հոգու մեջ ապրում է Քրիստոսի հավատը, նետևաբար դուք եք, մանավանդ, երեխեք, դուք. ձեր կյանքով, որ լինում եք Եկեղեցի:

Վաղը, որ ավարտվի այս Եկեղեցու շինությունը, նորոգությունը, պայծառան այս Եկեղեցին ձեր ձեռքերով, ձեր աշխատաբերով՝ գար, հայոց շարականները երգեք, «Առաւոտ լուսոյ»-ն երգեք, «Փառք ի բարձունք»-ը երգեք, «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստ անեղին» երգեք, երբ որ երգեք «Նորահրաշ պատճառը և զօրագլուխ առարինեաց» այս շարականները, ձեր հոգին կանանի, դուք ինքզինքնի կճանաչեք, թե ով եք. բայց եթե մոռանաք, եթե չերգեք, քարը ի՞նչ կարող է անել: Հետևաբար պետք է հավատրով շնչավորեք քարերը, ոժ տաք, որպեսզի ոժ առնեք քարերից՝ շնչավորյալ քարերից, աղոթաձան քարերից: Այս բոլոր զորությունը հոգնոր, մեր հայրերը որ դրել են այս քարերի մեջ, այդ զորությանը հաղորդ լինելու համար պետք է զգայուն հոգի ունենաք, հավատը ունենաք, այլապես ոչինչ կանուններ այս շենքի մեջ, բայց միայն քար. բայց այս Եկեղեցին քար չ' հոգի է, քարերը հոգի ունեն, բայց հոգի պետք է լինել, հավատը պետք է ունենա՞ նրա զորությունը զգալու համար: Եթե արեք լոյս է տալիս, բայց մեր աշքերը փակ լինեն, մենք լոյս կանունենք, չենք տեսնի: Այս իմաստով ասում եմ, որ մենք պահենք մեր Եկեղեցու հավատը կենդանի մեր մեջ, որ էլ լինենք՝ քաղաքացի լինենք, թե զցողացի, լեռնական լինենք, թե դաշտարենակ, որտեղ էլ որ լինենք, մեր հավատը մեջ ամուր, տոկուն և սոռող մնանք:

Սայօր ես քերում եմ ձեզ այս խոսքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Եվ երբեմն էլ ձեզ տեսնեմ այնտեղ, եկեք երբեմն ոխտի, եկեք այնտեղ, աղոթքների մեջ դուք էլ խառնվեք, որպեսզի մեր մար սրտի հետ հանդորդ մնապով, սրտից հոգեւոր արյուն առնենք և մեր մարմինները այդ արյունով վառ, կենդանի, առողջ և ստեղծարար պահենք մեր նոր Հայրենիքի հետ կապված, մեր հողին արժեքը գիտցող և այս այս հողից կյանք հանող ժողովորդ լինենք և որիշին շնայենք, մենք մեզի հայենք: Եթե մենք զմենք հարգենք, իրար աշքի մեջ նկրայք և քուր տեսնենք, հավատացեք, օտարենք մեզ կնարգեն: Վեր բռնենք և քարը պահենք ընդհանուր ազգի շահը բոլորին մասնավոր շահերից, այս ատեն մենք կդառնանք տոկուն և դիմացկուն ազգ, Սատծուն օրինությանը արժանի ազգ: Թող Հովհաննես Մկրտիչ անվանք մկրտված այս Եկեղեցին դառնա ձեր բոլորի հոգիների նոր մկրտարան, որպեսզի այնտեղ երբ մտնեք, ձեր հոգիները պայծառացած լինեն, ուժեղացած լինեն, լիցքավորված լինեն, և երբ որ դուք գաք այս Եկեղեցուց, Սատծու ուժը ձեզ մեջ զգաք և զնաք, մեր Հայրենիքի այս հողի հետ ապրեք և հողը դարձնեք ձեզ համար կյանքի աղբյուր և նաև մեր համարտության առիթ, որովհետև այս է, որ ունենք աշխարհում, երկու Հայաստան շնունդ՝ այս մեկն ունենք, այս մեկին հարգը գիտենանք և այն ատեն Սաստիք ձեզ կօրինի և հազար կապեր, եթե այսպես ապրեք, Սատծու շնորհրով, մեր Եկեղեցու հովանու տակ և Սուրբ Էջմիածնի հովության ներք: Ամենի»:



Չափակական պահապատճենի ցուցանիշներ



Ասկղելում Ս

Մաստարայից շարապունը ուղղություն վերցրեց դեպի Սառնաղբյուր, որ գյուղը հակող բարձութիւն փրա արթուն դիտողի հման վեր է խոցացած Սուրբ Թադէոս եկեղեցին:

Վեհափառ այստեղ ասաց.

«Հավատացյալ և հավատարիմ զավակներ Հայոց ազգի և Մայր Եկեղեցու,

Դուք, որ սքանչելի մի անունով մերտել եք այս ձեր զյուղը՝ Սառնաղբյուր, և բարձունքին այս եկեղեցին դարձել է ձեր բոլորի համար ներշնչում մի աղբյուր: Այսօր ձեզ հետ լիմելով նորոգյալ հոգիով եմ զգում, զրացած եմ զգում ձեր բոլորի աշապիսի սիրալիր, հայափայել և հարգալից վերաբերմունքի համար: Ապրե՛ք, ժողովուրդ Սատծու: Դուք, որ գիտեք ձեր եկեղեցին հարգել, ձեր եկեղեցիով օրհնված լինեք, հոգիով լիցքավորված լինեք: Դուք ինչ որ անում եք ինձ համար, իմ անձին չի վերաբերում, ես փոքր անձ եմ, բայց դուք իմ անձի միջից ձեր Եկեղեցու համդեա սերն եք դրսւորում: Դրա համար ես գնահատում եմ ձեր այս փառավոր ընդունելությունը և դրա համար ասում եմ ձեզ բոլորից՝ օրհնման լինեք և հազար ապրեք ու կատակեցնում եմ ձեզ, որ հազար կապրեք, եթե այսպիս ապրեք՝ հավատարիմ մեր Եկեղեցուն, հավատարիմ մեր ազգին և հավատարիմ, մանավանդ, մեր գալոց ապագային:

Սիրելի՛ք, դուք այս եկեղեցին ահավասիկ մի քանի տարիներից ի վեր նորոգել եք և եկեղեցվով դուք նորոգվել եք, դուք զրացել եք: Եվ կիրակի օրեր, երբ այստեղ պատարագ է մատուցվում, դուք Սատծու Հոգու հետ հաղորդության մեջ եք մտնում: Այս բարձունքը, այս բոլորն այս եկեղեցիով դարձել է ձեզ համար մի Թաքոր լեռ, որտեղ Հիսուս՝ մեր Տերը, Երկնավոր Վարդապետը, բարձրացավ մի օր, և այստեղ Հայր Սատված Նրան երևաց, և ամպերի միջից ճայն եկավ և ասեց Քրիստոսին. «Դու ևս Որդի իմ սիրելի», և լույս ամպերի միջից շառավիլեց:

Սվետարանիշն ասում է, որ Հիսուսի դեմքը այնպիս պայծառացավ, որ երեք արևի լույս աղբան պայծառ չեր երևար: Դուք ամեն անզամ, որ այս բարձունքը գաք եկեղեցի, ի՞նչ կատարեն ձեր մեջ. Աստված ձեր մեջ կիշնի, դուք Սատծուն կերպարանար աղոթքով, հոգեկան հաղորդակցությամբ: Եվ եթեն մի մարդ կտրվի իր Սատծուց, ինչ էլ լինի, ինչքան կարող անձ էլ որ լինի, տկար կմնա առանց Սատծու:

Մենք ներկայումս, մանավանդ, եռոր սերնի զավակները, ապրում ենք մի նոր շրջան պատմության մեջ: Տեսնում եք բոլորդ էլ ձեր սեփական աշքերով, որ մեր Հայրենիքը կերպարանափոխվել է: Դուք ինձնից լավ գիտեք, որ սրանից հինգ-վեց տարիներ առաջ ինչ պայմանների տակ էիք ապրում և այսօր ինչ պայմանների տակ էր ապրում: Ծիշան է, լավ եմ հասկանում, որ նեղություններ ունեք, ո՞վ չտնի, մենք էլ ունեցել ենք, բայց խերն եմ անհծել բոլոր տեսակի նեղություններին կամ հայ ենք, պիտի տոկանք, իամ հայ չենք պիտի շտոկանք. ես այսպես եմ ընդունում: Կրավի աշխա զանգատը. որի՞ դեմ ենք մենք բողոքում, ինչո՞ւ ենք դժգոհում: Մի դզնի ժողովուրդ չի' կարող ապրել, գործող ժողովուրդն է, որ կապրե՛ ալ կրավե՛:

Սիրելիներ, սա մեր Հայրենիքն է, այս մեր Հայրենիքը մեր գերագույն սրբությունն է, մեր գերազույն հարատորդյունն է: Ես յոդել եմ արտասահմանը, եկեղել եմ հայրենիքում մեռնելու համար: Ի՞նչ եք ողում դեռ, հետևաբար քաջ եղեք, բաջ՝ հայի պես: Ինչո՞ւ, մեր հայրերը այս հողից կյանք

չէի՞ն հաճում՝ հաճում էին, բա մեզ ի՞նչ է պակասում, մենք հայ չե՞նք, մենք ձեռք չունե՞նք, մենք խելք չունե՞նք՝ մենք պետք է որ լինենք այս Հայրենիքի հավատարիմ զավակները: Եվ առոր համար է, որ ևս այսօր նեղել են Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռից ձեզ հուս եւրշնչելու, ձեզ բերելու լուսի և հուսի խոսքը:

Մենք պիտի քայլենք դեպի առաջ. նաև, որ կտկարանա իր հոգու մեջ, այդ անձը այս հայորշան պատմութան մեջ տեղ չի գտնի: Նա, որ կկապվի իր հողին, կկապվի իր Հայրենիքին, կկապվի իր ընտանիքին, կկապվի իր եկեղեցուն, նա, որ կկապվի իր դպրոցին՝ նա է, որ կդժմանա, նա է, որ կհավաքանա: Ապրեք ծողովորդ և այսպես ապրեք Աստոծով, և մեր այս անկախացյալ Հայրենիքի բարիքը մենք ստեղծենք մեր ջանքերով, մեր աշխատանքով:

Թող Աստված օրինի ձեզ բոլորիդ և այս հոգով՝ քրիստոնեական այս հոգով պաշտպանի և գորացնի: Ամեն»:

Հրամեշտ տալով Սառնաղբյուրին, Վեհափառ Հայրապետը այցելեց Զորակապ գյուղ և կարծես թե ծողովորդի ներաշխարհում զանազան պատճառներով գոյացած վիմ-ձորը կապեց-կամրջեց Աստուծո Հոգուն՝ ամբողջ Ծիրակա աշխարհը ամրացնելով ո հաստատելով Տիրոց ուխտադիր ծիածանի ներք, այդ անդունչը լցնելով Հոգու գորությամբ ո կենդանությամբ: Եվ այս աննյութական կամրջումով Թաղենու առաքյալի առաքելահաջորդը մուտք գործեց Մարալիկ քաղաք, որտեղ իրենց Մեծ Հայրիկին ցնծությամբ և խանդավառությամբ էին դիմավորում հատկապես մանուկները: Ակամայից մտարերում են շարականագրի Ծաղկազարդի կամ Արմավենյաց տոնի նկարագիր փառաբանությունը, որ «տղայը ոստովք արմատենեօք երամ երամ դասուք աղաղակէին. Ովսաննա՛, Օրինեալ եկեղեց ամուսնք Տեառն»: Այս տեղ, ինչպես նաև մյուս բնակավայրերում Վեհափառ Հայրապետի մտահոգության հյութն էր հատկապես մատադ սերնդի դաստիարակությունն ու կրթությունը՝ հայի վաղվա հուսն ու ապագան:

Մարալիկի հրապարակում երեխաները ստացան Վեհափառի Հայրական օրինությունը.

«Սիրելի Սրբազն եղբայր, հոգևոր եղբայրներ, քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, հարգարժան նահանգապետ և շրջանի պատասխանատուններ, բանկագին հայրենակից, հավատակից և արյունակից եղբայրներ և քույրեր,

Այսօր այս պահը մի օդակն է այս ազեկության շղթային, որ բացվեց իմ կյանքում Կաթողիկոսական ընտրությունից և Գահակալությունից հետո, ահավասիկ, հազիկ մի ամիս անց: Որևէ մի հոգևոր առաջնորդ, որ Աստծու կամրջը և ծողովորդի ընտրությամբ կոչվել է ծառայելու ծողովորդին, Աստծուն, Եկեղեցուն կամ Հայրենիքին, այդ անձը ով որ էլ լինի, չի կարող ծառայել, եթե չնանաչի ծողովորդին, եթե ծողովորդի զգացումները, ակնկալությունները, սպասումները ևս ուղարկի հաղորդականությամբ շիմանա: Եկել եմ ձեզ ճանաչելու, որպեսզի դուք էլ ինձ ճանաչեք և լինենք միասնական գործունեության նոր առաջապետ մեր ազատ, անկախ Հայրենիքում, որ դարերի երազն է մարմին առել, և ազատ, անկախ պետականության շրջանի մեջ ենք մտել:

Ձեր Շիրակի թւմի պատգամավորները լավ են հիշում, որ երբ Մենք Էջմիածնի Խոսրանի վրա Մեր ոխտը կատարեցինք, Մեր ժողովրդին ողղած խոսրի մեջ ասեցինք. Ես ձեզ համան Հայրենիքի հողի վրա չեմ ծնվել, ևս արտասահմանում եմ ծնվել, որիշ երկրի մեջ եմ ծնվել, բայց Հայրենիքը իմ մէջ է; ծնվել, ևս չեմ եղել դրս Հայրենիքից, որովհետև ստվորել եմ մեր մայրենիք լեզուն, շաղախվել եմ մեր Եկեղեցու կյանքի հետ, իմացել եմ մեր ժողովոյի պատմոյարունք և օտար երկրի մեջ ծնվելով հանդերձ, Հայաստանը իմ մեջ մի օր բացակա չի եղել: Ասոր համար եկել եմ այսօր, երբ իմ ժողովուրդը ուզեց, ցանկացավ, որ ես այս երկրում ծառայեմ, եկել եմ ձեր կյանքը բաժանելու, կիսելու, ձեզ հետ ապրելու՝ Աստված տա այն տարիներ, որքան, որ ինձ փիճակվել է, բայց սրանից հետո որիշ ոչ մի երազ չունեմ, բայց Մայր Հայրենիքում, Սուրբ Էջմիածնում մատադ լինել ենայ ժողովրդին:

Այսօր ես նկատում եմ մեր ժողովոյի մեջ խանդավառության մի նոր ալիք, հոյսի բարձրացում: Եղայրներ և բոլոր, լավ իմացեք, որ մեր Տերը Հիսոս Քրիստոս, Ինը ժողովրդի հետ եղավ միշտ, Նա շրջագայեց գյուղերում, քաղաքներում, անցավ փողոցներից, քարողեց հրապարակներում, մտավ տների մեջ, ծովի մեջ զնաց, լճի վրա նավակից խոսեց, իւռան լանջը բարձրացավ՝ այսեւեղից խոսեց և ժողովրդին հետ ապրեց իր կյանքը: Մենք էլ Նրան հետեւելով, շանալոյ հետեւել, Մեր տկար ուժերով ուզում ենք, որ դուք լավ իմանաք, որ Մենք ձեզ հետ պիտի լինենք միշտ, երբ ձեր կարիքը մեզ կամչի ձեզ ծառայելու:

Սուրբ Էջմիածններ, մեր Մայր Աթոռը, ամբողջ հայության հոգևոր սիրտն է, այն տեղը, որ Աստված և հայություն իրար հանդիպեցին: Մայր Աթոռում մենք ամեն օր աղոթում ենք ձեզ համար: Ես ուզում եմ, որ երբեմն դուք էլ գաք մեզ այցելության, ինձ առանձին շրջողներ Էջմիածնում, եկելք ուխտավորներ իբրև և ասեք՝ մենք եկել ենք Մարտիկ գյուղից, ուրիշներ ասեն՝ մենք եկել ենք Թալինի շրջանից, այսուհետեւ Էջմիածնին Էջմիածնիցներին չի պատկանի, ձեր բոլորին կպատկանի, ամբողջ հայության ողջ աշխարհում:

Իմ վերջին խոսքը ուղղում եմ այս մեր մասնութերին. յստ' մ եք ինձ, սիրելի՝ երեխներ: Ես պիտի խնդրեմ ձեր Սրբազնին և նաև ձեր դպրոցի տնօրինելին, որ ինձ ուղարկի ձեր աշխատանքի արդյունքը պատկերացնող օրագիրը: Վա՞յ որ ձեզնից մեկը ցած նիշ բերած լինի, վա՞յ ձեզ, հա: Տեսն' մ եք այս գավազանը, գիտն'ք որքան ծանը է այս փայտը, սրանով ձեր կըրակներին կտա՞մ: Իսկ եթե դուք ուզեք յավ նիշ բերել, լավ, հաջող լինել, գիտն'ք ինչ պիտի անեմ՝ ես ուկու մատով ձեզ պիտի օրինեմ, ոչ թե պիտի ծեծեմ: Երկրորդ՝ ես մի բան պիտի ասեմ ձեզ, մտիկ արեք, ձեր ծնողները թող չենք. Ուրեմն, նայեցեք՝ ձեր դասերը լավ սովորեցեք, աղվոր արտասանություններ սովորեցեք, երգեր սովորեցեք, զնացեք տուն ասեք. հայրիկ, մայրիկ ես հիմա մի արտասանություն պիտի ասեմ ձեզ. աղվոր արտասանեցեք, և նրանց սրտերը կկակուանան, լայն-լայն նրանց գրաբանները կբացվեն և ձեզ լայ-գ-լայ-վ նվերներ կտան:

Այս խոսքը հատուկ կերպով ուղղեցի մեր մատղաշ սերենին, որովհետև, ինչպես ասում էի Սրբազնին, այս ացելության առաջին տպագործություններից մեկն այն եղավ, որ ես նոր սերունդի թիվը շատ աճած տևաս կամ չեմ տևել հախապես: Շատ երեսներ գնացել եմ, Եվրոպա գնացել եմ, Ամերիկա գնացել եմ, բայց երեխաների աղստիս բազմություն չեմ տև-

սել: Ապրե՛ք երեխեր, միշտ այսպես կացտառ եղեք, միշտ ազգի կյանքին մասնակցեցեք: Ես տեսա ձեր եկեղեցին, որ նորոգվում է, ենտեղ պիտի զնա՞ք:

— Այո՞:

— Շարականներ պիտի երգե՞ք:

— Այո՞:

— Այս ատեն ես ազ ձեզ նվեր պիտի ուղարկեմ Էջմիածնից:

Եկեք բոլորս միասին աղոթքին ունկնդիր դառնանք և մեր հոգիները բացենք Աստծոն և խնդրենք ուժ և կարողություն: Ամեն»:

Արթիկի մշակույթի պալատում էլ մեծ անակնալ էր սպասում բոլորին: Ընթարքի նախարարում Տերունական աղոթքի երգեցողությամբ Վեհափառին դիմավորեցին քաղաքի զոհված ազատամարտիկների որբացալ երեխաները, ովքեր իրենց բախծոտ, բայց ոչ նվազուս ձայներով աղոթք էին վերառաքում Երկնավոր Հորք՝ Վեհափառ Հայրապետի արևատության, Մայր Եկեղեցու Կենդանության և վերածաղկման, Հայրենիքի անսասանության, խաղաղության ու բարգավաճման համար, որպեսզի Տիրոջ արքապոթյան, խաղաղության անուշահոտությունը տարածի Հայաստան երկրում, Նրա Սուրբ ամունը կենդանի կերպով հոչակի Ավետարանի քարոզությամբ Հայ Եկեղեցու ծիրից ներս, որպեսզի Տիրոջ կամքի մեջ գործելով հայր կարդինալ իր սեփական ձեռքերով ու քրտինքով և Աստծո օրհնությամբ վաստակել իր հանապաօրդա հացը նոգու և մարմնի: Այս նախարարում էլ ծաղիկներ գետեղվեցին Հայաստանի Հանրապետության և Արցախ աշխարհի անդորրը պաշտպանած և ներուսաբար իրենց արյունը հեղած քաջամարտիկների հուշտափախտակի առջն, որից հետո կայացավ մտավորականության և ղեկավարության հետ ծրագրված հանդիպումը.

«Ահավասիկ, հարազատ, սիրելի անդամներ Արթիկի շրջանի մեր հայ ժողովոյի պատասխանառու շրջանակների, ահավասիկ այս օրը կյանքում վերածվեց մի բացառիկ օրվա: Ուժերորդ անգամն է, որ ես առավոտից այս կողմ խոսում եմ մեր ժողովրդին և պիտի ասեմ, որ, փառ Աստծո, երբեք նոգություն չեմ գտում: Փառք և գոհություն Աստուծո, որ ինձի տվեց մեր Եկեղեցու համփով մեր ազգին և Հայունենիքին ծառայելու պատիվը, մեծ պատիվ է, բայց ծանր պարտականություն: Այսօր, առաջին անգամ լինելով, ես դուրս եկա Մայր Աթոռուց՝ Սուրբ Էջմիածնից, որպես թեմական, պաշտոնական, Հովվագետական այցելության և այս առաջին այցելությունը փափագեցա տալ այն շրջանի մեր հայության, որ վերջին տարիներին և հատկապես Դյումրիի կամ Լենինականի երկրաշարքի աղետից վեասված, ազդված ժողովրդի զավակներն են: Եկեղեցին իր կոչումով, Քրիստոսից իրեն տրված կոչումով պետք է լինի այն հաստատությունը, այն շարժումը հոգևոր, որ պիտի գնա այն ժողովրդին, որ ամենից ավելի կարիք ունի: Հիսուս գնաց հիվանդներին, աղքատներին, անկյալներին, մեկ խոսրով նրանց, ովքեր իրեն պետք ունենի անմիջականորեն: Ես ցանկացա իմ Հովվագետական այցելությունների շարքը սկսել Շիրակա թեմով, որովհետև Շիրակա թեմը մեր ամենից ավելի տուժած թեմերից մենք են, և ուզեցի մեր ժողովրդին ասել, որ Եկեղեցին Հայոց, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռով, գտնվում է Քրիստոսի Եկեղեցու առաքելության ուղղության մեջ, երբ այսպես գալիս է ձեզ այցելության:

Խորապես գնահատում եմ այն բոլոր աշխատանքները, որ ձեր առաջնորդ Սրբազնը և հոգևարական դասը և մեր աշխարհական պատասխանատու անձները թեմական խորհուրդ անունի ներքի, գործակցությամբ և ամբողջական մասնակցությամբ մեր Հայրենի պետական իշխանությունների, ընծայում են մեր ժողովրդին: Ես տեսա արդեն ոգևորության, հոգևոր խանդավառության մի պիք է բարձրացել մեր ժողովրդի մեջ: Եվ, հետևաբար, մենք կգտնվենք անհրամենչության առջև, որ Եկեղեցու հոգևոր ուժը, հավատքը կյանքից չվիճակներու անդեպես հաղթելու, կյանքի փիլիսոփայությունը, որ Քրիստոսի փիլիսոփայությունն էր, մեր ժողովրդին բաժանվի: «Հաւատը ք կեցուցեն զբեզ»:

Ավելարանական այն մոտ խորն էլ, որ, հավատացեք, մինչև այսօր ահավասիկ 50 տարիներ են անցել մոտավորապես, և այդ խորը մեր Անթիկասի Մայր տաճարի բեմից արտասանեց իրեն հատուկ հավատարի ջերմորյամբ և հաղորդականությամբ Գարեգին Ս. Հովհանիսյան Կարողիկոսը. Ես այն ատեն Պարեվանիք՝ Հոգևոր Ծեմարանի սան էի, երիտասարդ սարկավագ էի, նա ասեց. «Մի երկնիշիր, բայց միան հաւատա, և տե՛ս,—ասեց,— նիվանդներն առողջանում են, տե՛ս ինչ հրաշքներ են կատարվում աշխարհին մեջ, տե՛ս,—ասեց,—մեռելներն անգամ հարություն են առնում հավատքով: Այդ հավատարի անլուկի և մշտագույն զանգակատությ Սուրբ Էջմիածինն է մեր ողջ հայության համար»: Ես այդ դողանջն եմ քերում ձեզ Պարուր Սնակի հետևողությամբ, դողանջը հույսի, դողանջը սիրո. դողանջը լոյսի և վերածնության մեր հայ կյանքի:

Ես արտասահմանից երկար տարիներ շատ մոտից հետեւ եմ մեր հայրենի ժողովրդի և Հայրենիքի կյանքի բնուացքին: Հայոց Պատմությունը, մեր անցյալի կյանքը երեւ մենք ոգենանք ճշգրիտ կերպով ընբունք, պիտի ասենք 1988 թվականից այս կողմ նոր շրջան է, մեր ազգային ինքնագիտակցության, ազգային ազատության և անկախության շարժումի շրջան է: 1988 թվականից առաջ, այս դարում, 1909 թվականից սկսած և նոյնինչ կարող ենք ասել 19-րդ դարի վերջին տասնամյակից, սկսած 1894—95 թթ. Սաստի, Մուշի, Տարոնի ջարդերից, 1909 թվականի Աղիլիսաց արհամայիրքից և 1915 թվականի մեր դեմ գործված ցեղասպանության ահավոր եղեռնից ջարդի տարիներից հետո, 20-րդ դարը ցավով, սլով բացվեց, բայց լոյսով է փակվում: Մենք սհավասիկ 1991 թվականին, Պարաբարյան շարժումով ծնված այն ոգենորության պիքի բերումով, երբ հոչակվեցան Հայաստանի անկախությունը, Սևանամբեր 21-ին շրջադարձ կատարվեց մեր կյանքում և՝ այստեղ, և՝ արտասահմանում: Մենք չենք կարող այն այսպես մտածել, ինչպես մտածում էինք առաջ: Սեփական պետություն ունեցանք, փառք Սաստուծ, մենք մեր համազգային կամքը արտահայտեցինք:

Հիմա ունենք սրանչելի առիթը ձեր կամրով ձեր կյանքը կազմակերպում: Այս օրը պեսով է լինի հայության համար համայնական, միասնական, ամբողջական ազգի և պետության գաղափարով ապրելու պահը: Այս մենք չենք կարող թույլ տալ, որ մանր-մուճը հաշիվներ՝ դավանարանական, գաղափարաբանական և ուրիշ տեսակի հաշիվներ խանգարեն մեր կյանքը ազգային, մեր կյանքը պետական, մեր կյանքը Եկեղեցու:

Մենք պետք ունենք համախմբումից: Գիտեք, երբ մի բանակ գտնվի մի հակատագրական պահի սոցի, երբ փողը կհնչի, բոլոր գինվորները կիմիանան, համախմբումի պահն է, կգան և կդառնան, բոլոր մատները իրար միացնենք, բռունցք, կարիլները իրար միացնենք՝ հոսանք, մի խոսքով:

կդատնան ոչ անհատների մի գումար, այլ համապարփյուն, միասնություն։ Մի մեծ գիտական, ֆրանսիացի Փիլիպտիա ասել է. «Ազգ ավագը մի հավաքական հոգի է»։ Հավաքական հոգի, ինչպես ես, ինչպես ձեզնից որևէ մեկը առանձին մի աշխարհ է, մի անձ է, այնպես էլ ազգը հավաքական մի անձ է, մի մարմին է։ Եթե երբեք մենք բոլոր տանը մեզից այդ հավաքական հոգին մեջ չենդաշակվելու, մենք կդատնանք իսկապես կազմակերպություն ազգ, անհիսանական մի վիճակի մատնակած մի այնպիսի ժողովորդ, որին ես դժվար կատեմ ազգ և պետություն։ Պետություն և ազգ գոտին է, որ կկապե ամբողջ մարմինը, ուժի աղբյուր է։

Մեր Եկեղեցին Մայր Այօն Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ պիտի դառնա բարոյական այն ոժը, որ մեր ժողովրդի զավակներին պիտի փոխանցի Քրիստոսի Սվետութանի ճշմարտությունները, այն ճշմարտությունները, որոնցից մեկը ամենից կենսական է, Հիսուսի բոլոր-բոլոր մյուս ուսուցումները ի մի հավարող այն սկզբակետն է, առանց որի Սվետութանը չի հասկացվի։ Մատթեոսի Սվետութանի է գիսի 12-րդ համարի մեջ Ռոկնեն կանոն ասված մի տող կա. «Ինչ որ ցանկանում ես, որ որիշը անի թեզ համար, նոյնը արա դու նրա համար»՝ որիշի համար։ Ուզո՞ւմ ես մի մարդ թեզ բամբասի, ուզո՞ւմ ես մի մարդ թեզնից գողանա, ուզո՞ւմ ես մի մարդ թեզ վեասի, ուզո՞ւմ ես մի մարդ թեզ դավաճաննի, ուզո՞ւմ ես մի մարդ թեզ սպանի՝ ո՛չ։ Ինչ որ չես ուզում, որ որիշը անի թեզ համար, դու մի արա նրա համար։

Ազգի ուժը որտե՞ղ կկայանա, իր դրամի՞ մեջ, իր գենքի՞ ո՛չ։ Իր բարոյական, իր գիտակցական, մարդկային, հոգևոր ըմբռնումն մեջն է ինքն իրեն ճանաչելու, «Ծանիր զրկեց»-ը գիտնալու մեջն է։ Տվե՛ք դրամ մի հիմար տողի՝ կերթա և կմսիս, դրամը չէ ուժը՝ մարդն է և՛ բանդողը և՛ շինուղը։ Տվե՛ք զենքը մի հիմարի ձեռքը՝ ուրագործ կդառնա, բայց տվեր նոյն զենքը Հայրենիքի, ազգի պաշտպանության զաղափարով ապրող բաջամարտիկին՝ հերոս կդառնա։ Հետևաբար մարդն է կարևորը, ազգի մեջ բարոյական ըմբռնումն է կարևորը։

Եկեղեցին ամեն տեղ մեր բոլոր հոգևորականներով պեսը է դառնու շարժուն և շարժող ոժ ժողովրդի կանոնը բարձրացնելու բարոյականորեն, որպեսզի մեր պետությունը և մեր ազգը զորանան, մեր Հայրենիքը ամրանա և բարզավաճի։ Այս շրջանը հոգևոր զինվորացման շրջան է, զինվորական այլ պատասխանատվությունների կողքին, որի պատասխանատուն մեր պետությունն է, և մենք հարգում ենք մեր սկզբանականը։ Բայց մեր գործը իբրև Եկեղեցի հետևյալն է. հոգով զինել մեր ժողովրդը, նրա արժանապատվությունը արթնեցնել։ «Նորամրաշ պակասոր և զօրագլուխ առաքինեաց»՝ Վարդանին նվիրված շարականի հեղինակ Ներսէս Շնորհակի Հայրապետը գրել է զորագլուխ ոչ թե զինվորների, ասկար ասված զինվորների, այլ պաշտպան զինվորների՝ զորագլուխ առաքինաց՝ առաքինի մարդոց զորագլուխն է Վարդանը, ոչ թե դրամով զործող վարձկան զինվորների։ Եթե հոգին զենքերով Վարդան վատված չլլար, մենք Ավարայրի հակատամարտը, Վարդանանց ներսամարտը չինք ունենա։ Եթե հոգին զենքերով զինված չըլլարին Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսեի մեր հայ տղաքը, եթե իր վեղարը զիմից հանելով Գարեգին Հովսեփյանը չմտներ զննակեների տեղատարափի տակ, «Խվե՛ք տղերը վասն հայրենաց» չստեր, մենք ինչպես կկարողանայինք ունենալ Սարդարապատի հերոսամարտը։

Բարեկամներ, արթննամբ, վերստին մենք զմեզ դիտենք, արժնորենք, քննենք, սրբագրենք: Մենք պետք ունենք ներքին, հոգեկան ջրեղողումի, բցորեղացումի՝ առանց դրա ոչ մեկ ուրիշ ուժ կարող է մեզ փրկել: Ահավասիկ իմ առաջին պատգամը ձեզի: Դուք այստեղ Արթիկի շրջանում և Շիրակա ամբողջ թեմում, դուք, որ տառապանք տեսաք, դուք, որ երկրաշարժի աղետին արհավիրքները տեսաք՝ Մենք ալ այն ատեն եկանք, եկանք և ինչ որ կարող էինք անել Մեր երշանկահիշատակ և ամենասիրելի Վազգեն Ա. Կաթողիկոսին հետ, շանացինք անել այն բրիտոնեական հավատքով, որ մեզ կներշնչի չվհատիլ, չհուսահատիլ: Եվ երբ որ ես Լենինականի աղետի ժամանակ գնացի Լենինական և 10-րդ օրն էր՝ 14 դեկտեմբերին, եկա և այսուեղ գնացի, վերադարձիս Անդրիխասի Մայրավանքում մի քարոզ տվի և երեկ գիշեր այդ քարոզը, ահավասիկ յոթը տարի ետքը վերստին կարդացի: Այնտեղ մի խոսք եմ ասել՝ մոռացել էի, հիմա կրկնում եմ: հայություն և հուսահատություն չեն կրնար իրար հետ հաշովի՝ հայություն և հուսահատություն:

Մենք շատ ավելի ծանր աղետներ ենք տեսել՝ չենք հուսահատվել: 641 թվականին, երբ արաբական արշավանքը կատարվեց, Գվին քաղաքը տակնուվրա եղավ, կործանվեց: Եվ Կաթողիկոսին համար գրվել է, որ դարձավ մեռնաթաղ՝ 30.000 հայ թաղեց այն ատեն, բայց նորից ապրեցինք: Զեմ ողում երկարել. Վերշինը ցեղասպանությունն է երևակայեցեր մեկ ու կես միլիոն հայ շարդվի, իրենց տներից դուրս պոկվեն, արմատախիլ լինեն և անապատ գնան ավագների մեջ, արևի ներքև, առանց սեռների և շատերը մաշելով, կմախանալով մահանան: Խճ հայրն ու մայրը հրանցից են, ովքեր ազատվել են և պատմել են ինձ, թե ինչ տառապանքի միջից են ապրել, բայց ապրել են, որովհետև կամք են ունեցել, հավատը են ունեցել, տեսիլք են ունեցել, ապագայի նկատմամբ ձգտում են ունեցել: Հուսահատական վիճակը, ողբական վիճակը, տեսակ մը դժոնհանքի վիճակը մենք այլևս պետք չեն հանդուրժենք: Մենք այսօր ապրող հայեր ենք նոր Հայրենիքի մեջ, ազատ ու անկախ Հայրենիքի մեջ: Մենք պարտը ունենք կատարելիք՝ կատարի՝ պարտք, որպեսզի մեծանաս Աստծու աշքին:

Նայեք մեր պատմությանը: Երանի, Սրբազն եղբայրներ, մենք մի աշխատանք տանենք, որ այդ օրերին մեր հայ եղբայրների կրած տառապանքները մեր Հայաստանյան ժողովրդին իմանալի դառնան, ծանրթանան: Երևակայեցեր հարյուր հազարներով հայեր նետվեցին Լիբանանի և Միջիանի ծովի ափերը: Միայն կրենց հագուստներն ունեին իրենց հետ, Կիլիկիայից, Արևմտյան Հայաստանից ոչինչ կարող էին տանել: Ես հարց եմ տալիս. Էս հարյուր հազարավոր հայերը ինչպես ապրեցին այդ երկրներում, որ գնացին ո՞չ արարեն լեզուն գիտեին, ո՞չ ֆրանսերեն լեզուն գիտեին, ո՞չ էլ կյանքի ձևերին վարժված էին, և ցեղութիւննով հասան այնուղի: Թիթեղածածկ տների տակ, ցեխոտ (ևս տեսել եմ այդ բոլորը) ապրեցին: Մի հայ գրող երեք հատորներ է գրել, ես հրատարակեցի այդ երեք հատորները՝ «Որը տուն շինեց» վերնագրով: Ինքը որք է եղել, ինքը պատմում է, թե ինչպես որքերը ոչնչից կյանք հանեցին:

Նրանք կամաց-կամաց թողեցին թիթեղածեն տները միայն ու միայն իրենց ձևոքի վաստակով, իրենց ճակատի քրտինքով՝ ո՞չ մի օգնություն, ո՞չ մի տեղից: Սա մեծ նշանակություն ունի: Երևակայեցեր միայն Լիբանանի ծովափին, 20—30 կիլոմետր տարածության վրա, ութ հայ որբանոցներ կային՝

6544 որբերով, 130.000 որբեր կային առանց հոր և առանց մոր: Համաշխառ-հային առաջին պատերազմից հետո մենք ինչպես ապրեցինք: Ապրեցինք քրիստոնեական հավատորով և ազգային, հայկական արժանապատվորյան գիտակցությամբ: Մենք ընկերվելիք ազգ չենք, ահավասիկ տոնելու ենք մեր Եկեղեցու 1700-ամյակը: Հարց եմ տալիս ձեզ, աշխարհումն կգտնվի՞ ուրիշ մի ազգ, որ կարողանա 1700-ամյակ տոնել իր Եկեղեցու մեջ՝ չի կարող, բայց այս մի՛ հապարտանար դուք դրանով, կատարե՛նք մեր հիմնկված պարտքը՝ այսինքն, Եկեղեցին աշխուժացնենք, Եկեղեցին մեր կյանքի մեջ ներկա դարձնենք և ոչ թե ասենք՝ մենք առաջին ազգն ենք եղել աշխար-հում: Եղել ենք, հասկացա, բայց Ե՞նք ազօր՝ դա՝ է հշանակություն ու-նեցողը: Այսօր ի՞նչ ենք, եթե երբեք Մարտինի Եկեղեցին պիտի մնա կի-ավարտ, եթե մյուս Եկեղեցիները պիտի չկարողանանք շինել, հապա որ-տե՞ղ է մեր քրիստոնությունը, ի՞նչի համար ենք մենք հպարտանում:

Եղբայրներ, ժամն է գործի՝ ոչ խոսքի, ամեն մարդ խոսում է: Եթե ու-զում ես, որ քո հնավատացած հշմարտությանը ուրիշներն ել հնավատան, գործի՛ր, մի խոսիք, թող գործ լինի խոսք: Մեր հայրերի խոսքը որտե՞ղ է նրանց շինած Եկեղեցիները, նրանց հորինած երաժշտությունը, նրանց մշա-կած գրականությունը, նրանց կերտած պատմությունը: Հետևաբար, մենք այսօր կոչված ենք նոր Հայրենիքում, Հայրենի ազատ, անկախ պետության այս շրջանում զոհողությամբ, աշխատանքի, կարգապահության, միասնու-թյան, ամբողջական ազգի գաղափարով լծվել գործի: Այս է իմ առաջին պատգամը ձեզի: Եվ Էջմիածինը, որ համազանգումն է բոլոր հայության հոգևոր ապրումների, այս պատգամն է փոխանցում ձեզ: Այս պատգամն եմ փոխանցում ձեզ, եղբայրներ և բոլորեր, 130 այն Կաթողիկոսների անո-նով, որոնք ինձնից առաջ նատկ են այդ Գահի վրա: Նրանց պատգամը ես հավաքել եմ այսօր իմ տկար անձի մեջ և բաշխում եմ ձեզ:

Զորացեք նոգով, տեր եղեք ձեր հայրենի հողին: Մեր թշնամիներին մի անգամ ևս ծիծառել չտաեք մեզ վրա, թող ամաչեն մեր միությամբ և ոչ թե հրճվեն մեր պառակտությամբ, թող ամաչեն մեր շինարարությամբ և ոչ թե ծիծառեն մեզ վրա լրվածության, թուլության, աշխատանքի հանդեպ մեր անտարբերության պատճառով: Սշանատանքն է մարդու հակածն զիքը: Աստ-վածաշունչին մեջ Աստված եքք ուզեց նոյնիսկ Աստմին՝ հախամարդուն անհեծել, նրան ասաց՝ զնա, նախի բրտինորով հացդ շահիք: Դա օրէնու-թյուն է: Ասոր համար մենք պիտի այնպես անենք, որ Հայրենիքը հայի ձեռորվ, հայրենի, հայու ապագային համար պիտի վերաշնենք ու Եկեղե-ցին ձեր բոլորի սպասավորության մեջն է: Եկե՛ք, բոլոր միացեք, եկե՛ք, բոլորդ ներդաշնակվեցեք:

Մերմինք, բոլոր ներդաշնակվենք այդ մի անոն հայության հետ, որ չունի երկու անոն, չունի երկու արյուն, չունի երկու դիմազիծ մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի և մեկ ազգ ապրեք և հազար կապրեք, եթե այսպես ապրեք: Ամեն»:

Վեհափառ Հայրնապես պատգամեց ապրել քրիստոնյային վայել Աստ-վածային հույսով, վանելով հոսանքանության ընկերվածության և ճնշված ազգ լինելու հոգերանությունը, և լծվել միայն ո՛ միայն աշխատանքի, գործի՝ ի փառ Աստուծո, ի բարորություն ծովովդրյան, ամուսնուու ընդառաջ դրս եկալ պատահ հրապարակում անհամբերությամբ՝ սպասող ծողովդրյան բազմությամբ.

«Հավատարիմ և հավատացյալ հայ ժողովրդի զավակներ,

Ես ամենայն սիրով ողջունում եմ ձեզ բոլորիդ այս առաջին այցելության առիթով՝ իբրև նորընտիր Կաթողիկոս Ամենապահ Հայոց: Գալիս եմ Սուրբ Էջմիածնից, բայց Էջմիածնինը միշտ ձեզն է լինելու, Էջմիածնը մի աշխարհագրական վայր չէ, Էջմիածնը հոգի է, խորհուրդ է, գաղափար է, հավատք է, և նրա թարգմանն եմ ես և ոչ թե ուրիշ մի արժանիք ունեցող անձ: Ես ցանկանում եմ ձեր բոլորի համար, որ մնաք այսպէս տոկուն, առողջ և հայորեն, հայու արժանապատվորյան վայել կերպով տանիք ձեր կյանքը:

Եղբայրներ և քույրեր, ես արտասահմանից եմ գալիս, արտասահմանում օտար ազգերի եմ ճանաչում, օտարը մեզի հարկ չի տար, արժեք չի տար, եթե մենք իրար արժեք չտանք, եթե մենք միասնական ձևով չինենք: Ահավասիկ նոր Հայրենիք, անկախ պետություն ունենք, երազուն էնք ազատ-անկախ Հայաստանը՝ ունեցանք, արժեցնենք, Աստծուն ասենք՝ փառք Քեզ Աստված, որ այսօրվան բերեցիք մեզ, և անկախության օրը մենք ողջունեցինք, լինենք արժանի այդ բոլորին:

Երկրորդ՝ ես ուզում եմ ձեզ ասել նաև, որ բոլորդ էլ այն գիտակցությամբ առաջ տանեք ձեր կյանքը, որ մեր Եկեղեցին դառնա ձեր կյանքում ներկա մի գաղափար, մի հավատք: Հավատքով ապրեք, այդ հավատքն է մեզ ապրեցրել, և Էջմիածնինը՝ մեր եկեղեցին, այդ հավատքի զանգակի ժամկոչն է: Մենք այդ հավատքի շվանն ենք շարժում, հավատքն է հնչում և դողանջում ձեր բոլորի կյանքի մեջ, ապրեք, ա'յդ հավատքով ապրեք»:

Այս բազմության ուղեկցությամբ էլ Վեհափառ առաջնորդվեց դեպի Սրբիկի և դարի Սուրբ Գևորգ եկեղեցի, որը ցավոք այսօր խոնարհված, գլխահակ վիճակում է, սակայն իր հովանավոր Սուրբի աջարագովի հովանավորությամբ պիտի վեր պահան՝ դիմագրավելու և հաղթելու ապագայի սպասվելիք բոլոր հարձակումները «երևելի և աներևոյթ թշնամեաց»:

«Սրբիկի շրջանի հայ ժողովրդի հավատավոր զավակներ,

Ես խորապես երջանիկ եմ զգում, որ այսօր, իմ առաջին Հովվապետական այցելության ընթացքում, երբ դուրս եմ գալիս Սուրբ Էջմիածնից և ժողովրդի մեջն եմ մտնում, իմ ցանկությունն էր՝ ճանաչել ժողովրդին և ճանաչվել ժողովրդի կողմից: Այս առաջին մեր հանդիպումն է և առաջին հանդիպումը ուզում եմ, որ լինի աղոթքի հանդիպում:

Ես ձեր եկեղեցին տեսա և այս շրջանի պատասխանատու անձերի հետ երկարորեն խոսեցա: Այս եկեղեցին չի կարելի կիսավարտ թողենել: Հիմա հարցում մը անեմ՝ զնացեք ձեր բարեկամներին էլ ասեք, եթե մեր հայրեց այսքանը շինել են այն դժվար օրերին, մենք ինչո՞ւ չպիտի ամբողջացնենք այն: Հարց եմ տպիս ձեզ՝ եթե նրանք կարող էին, մի՞թե նրանք մերենա ունենին, մի՞թե նրանք եկեղեցականություն ունենին, մի՞թե նրանք գործնական տեխնիկ դյուրություններ ունենին, բայց հավատրով արեցին, և ճշմարտությունը այն է, որ արժանապատվորյան հարց կա և տեսնի, որ մենք այս եկեղեցին հնդիկ շարունակ թողելի ենք այսպես կիսավարտ՝ մեր պատվին, մեր արժանապատվորյան դա մենք կիսակեցնենք, ես չեմ պատկերացնում: Հավատացե՛ք, եթե ժամանակ ունենամ, կգամ ես, աշխատանքի մեջ կմտնեմ, շաղախ կընեմ և կաշխատեմ: Գիտե՛ք, Էջմիածնին ինչպես է շինվել՝ Գրիգոր Լոսավորիչը առել է չափը, Տրդատ թագավորը

Մասիս լեռն է զնացել և ուսերի վրա ժայռեր է դրել և քարերը բերել է Էջմիածին, Աշխեն թագուհին, Խորովիդովան արքայադուտը՝ Տրդատի բուրքը, իրենց բննեցլա սքանչելի հագուստները գոգնոցի են վերածել և հող են թափել հիմքերի մեջ: Բացեք Ագաթանգեղոսը և կարդացեք: Ես պիտի զամ մի որիշ անգամ ձեր Սրբազնին հետ, ձեր հոգևորականների հետ, ձեր պատասխանատու ազգայինների հետ, պետք է մենք չթողնենք, որ եկեղին երկնքին բաց մնա այսպես, և Աստված նայի և ասի. Ինձ համար մի եկեղեցի չե՞ք կարող շինել: Ամո՞թ է մեզ: Աստված ձեզ ուժ տա զործելու: Մմեն»:

Գյումրի հասմելուց առաջ օրվա այցելությունների վերջին հանգրվանը Հափիճ գյուղն էր՝ իր հոչակավոր Հափիճան Սուրբ Աստվածածին վաճեռով, որի պատերը ներծծված լինելով մեր սուրբ հայրերի աղոթքներով ու Սպենտարանական պատգամներով, շարումանների և սրբազն Պատարագի անմահացնող հրացալքով, այսօր պիտի այդ ամենին միացներ ու շաղախեր Ամենայն Հայոց նորմանի Հայրապետի օրինությունն ու հորդոր՝ որպես խոսք վերատիճ նորոգման ու կենասագործունեության: Զորաբերանին ոտքը ամրությամբ հենած Հափիճան վանքը իր հաստարեաս պարհապներով վկայությունն է մեր հայրերի հավատքի կենդանության, Աստուծո Հոգով ու շնչով ապրելու երանության, որ «ո՞» իցէ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ Յիսոս է Որդի Աստուծո»:

Ինչպես Երուաղենում ժողովրդի բազմության ոլենկցությամբ, օրինաբանությամբ և փառարանությամբ մուտք էր գործում Հիսոս Քրիստոս, այնպես էլ Հայ Եկեղեցու առաջին և գերագույն սպասավորը իրեն վստահված նոտի ուրախության ողջուններով առաջնորդում էր հրան դեպի Հափիճան վանք, որի տակավին չորբագործված, բայց սրբազն Խորանից էլ հնեցց Վեհափառի կոչը առ ժողովուրդն Հայոց:

«Հավատացյալ զավակներ մեր Եկեղեցու և հավատարիմ քաղաքացիներ մեր Հայրենիքի,

Սյս օրս իմ կյանքի մեջ և նաև ինձ ընկերակցող սրբազնների և նաև մեր պետական, քաղաքային իշխանությունների համար աննախընթաց օր է: Երբեք չէ պատահել 43 տարիների իմ հոգևորական կյանքում, որ մի օր զամեց այսքան մարդ տեսնեմ, այսքան աղոթք անեմ, այսքան սերտանամ, մտերմանամ իմ ժողովրդի հավատքի և հոգու վկայությունների հետ:

Առայսոյան ժամը ինձ և կեսից մինչև այս պահը գրեթե ոչ մի վարկայն չեմ ունեցել հանգիստ անելու, բայց եթէ հանգիստ անեմ, այդ ինձ անհանգիստ արած պիտի ըլլար, որովհետև չի կարող մեր ժողովրդի այս սրտամու ընդառաջումը Եկեղեցու հանենա, այս բլորը նկատի չունենա, և ասեմ ձեզ պարզ խոսքով, ես այսօր ձեր հավատքով զորացա, ձեր հավատքով բյորեղացա, որովհետև քրիստոնեական հավատքը մարդկանց, անձների, մարդկացին հակենքի կյանքի միջից կարտահայտվե և ոչ թե բուդի վրա և կամ զրավոր ձևով կամ խոսքի հանիսով: Ձեր հավատքի մեջ հավատարմությունը և՛ հուգիչ է, և՛ քաջանքերիչ միանգամայի:

Սյս պահում Եենինական կամ Գյումրի հասմելուց առաջ վերջին հանգրվանն է օրվա իմ այցելությունների: Ես փառք եմ, տակիս Աստծուն, որ ինձ շնորհեց Հափիճան վանքում լինել և այս վանքի պատերի Եերտուն խոսել ձեզ: Հիսոս մի օր, իբր իրեն մոտեցող ժողովրդին և երեխաններին առաք-

յալները հեռացնում էին, ասաց. «Թողեք, որ գան, եթե նրանք լոնն, քարերը կխոսեն», և քարերը պատեղ խոսում են: Ես հարց եմ տալիս՝ դուք ել մտածեք մի պահ, ինչպես, ի՞նչ ուժով, ի՞նչ տեխնիկական նիշոցներով մեր հայրերը այս եկեղեցին կառուցեցին: Հավատրով, եթե հավատը չիներ, և հրաշալի գեղեցկությունը որտեղից կիմեր, և հետևաբար, այդ հավատի ուժը անցյալի հարց չէ, այդ հավատքի ուժը այսօրվա հարց է, մեզ համար արժեք ունի: Հավատքը անցյալին չի պատկանում, հավատքը այսօր ել մենք պետք է արտահայտենք, վաղն էլ: Հավատքը ժամանակ չի ճանաչում, և դրա համար ես ուզում եմ, որ բոլոր Շիրակա թեմի զավակները, ձեր Սրբազն հոր առաջնորդությամբ, ձեր հոգևորականների ծառայությամբ շենացնեն հավատքի կյանքը այս թեմում և, հատկապես, Հայութ այս շրջանում:

Ի խորոց սրտի, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ողջունում եմ ձեզ բոլորիդ: Էջմիածնը, երբեք Վաղարշապատի մեջ մի շենք չէ, Էջմիածնը հավատքի աղբյուր է, որ բխում է և այսօր ես լինելով 181-րդ Գահակավը, իմ ընտրությունից մեկ ամիս ետքը գալով ձեզի, ուզում եմ ասել, որ Էջմիածնը ծառայության կոչված նոգենոր գերագոյն կենտրոնն է մեր երկրում, պետք է հաղորդ լինենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, որ ճրա հավատքով զորանանք: Այնուելի մենք ամեն օր աղոթում ենք Մայր տաճարում, Խջման Սուրբ Սեղանի առաջ: Ես որիշ առիթեներով ել մտածած եմ, եթե Աստված ինձ կյանք տա, պիտի գամ և պիտի մենամ այս վանքի մեջ, մի գիշեր պիտի անցկացնեմ այս վանքի մեջ: Այս վանքի շունչը իմ մեջս պետք է խառնվե, ինչպես որ ձեր կյանքի մեջ է խառնվել: Բայց ճրավիրում եմ ձեզ, դո՞ւք էլ եկեք Էջմիածնն, եկե՛ք, ուստի եկե՛ք և այնուել զորացեք մեր սուրբ հայրերի հավատքով: Հետևաբար, թող այս այցելությունը որպես մեր հայրական միրո արտահայտություն լինի բոլորիդ համար, վերանորոգության առիթ՝ այսինքն, հոգենոր վերազարթոնքի առիթ: Թող Աստված ձեր ո խոր կատարի և ձեր հավատքը զորացնի, որպեսզի մեր նոր Հայրենիքում ազատ-անկախ պետության մեջ կարենանք Աստծոց խնդրել՝ փառք Քեզ, Տեր, անկախություն տվիր մեզ, մենք երախտապարտ ենք Քեզ, մեր Եկեղեցին պիտի շենացնենք, մեր Հայրենիքը պիտի վերաշննենք: Աստված թող օրհնի բոլորիդ»:

Հատիճ-Գյումրի ճանապարհին տեղի ունեցավ մեկ շնախատեաված հանդիպում Փամիկ գյուղի կաթողիկե հայերի հետ, որոնք իրենց կրծի տակ դեռևս կենդանի են պահում Մայր Եկեղեցու Անքայությունը, որի վկայությունն էր այս սրտահուզ հանդիպումը երեխաների «Կեցցե՛ Վեհափառուր» հոգեբուխ բացականշություններով, ովքեր արյան կանչի մերքին զգացողությամբ հասկանում և գգում էին, որ հանդիպել են իրենց հարազատ Հորը, ում միշոցով տեսնում և միախառնվում էին հարազատ Մոր՝ Հայաստանյաց Սուրբեական Սուրբ Եկեղեցու հայրեցյաց Ընդհանրական Տաճ հետ, ում Հայրական խորին սրտի թթիդուվ սպասել էին երկար ժամանակ, և այսօր այդ իշճը իրականացած ու առարկայացած էր ճրանց համար:

«Սիրելի նոգենոր եղբարքներ և հավատացյալ հայրդիներ,

Այսօր իմ առաջին Հովհաննեսական այցելության առիթով ես կողշունամ Փամիկ գյուղի մեջ մեր սիրելի կաթողիկե հայ համայնքի անդամները և շնորհակալություն ու գնահատանք կհայտնեմ Հայր Առաջապահին՝ կատարած ուղերձին համար, իր անկեղծ զգացումներուն և նարգալից վերաբե-

րումին համար հանդեպ մեր Առաքելական Հայաստանյաց Մայր Եկեղեց-վու: Այսօր ևս ձեզ կողջունեմ որպես նոյն ազգի զավակներ, նոյն հավատքի ձեր հոգիներուն մեջ կրողները, և Մենք հայրական քաղցրագույն սիրով կողջուննեմ ձեզ բոլորդ, և ինչ որ ըստնք մեր ժողովորդին, նոյնը կըսենք նաև ձեզի:

Պատմական և վճռական օրերու մեջեն կանցնի ողջ հայությունը, Մայր Հայրենիքի և Սփյուռքի մեջ կատնվի ապագայի իր լինելության կարևոր մեկ համգրվանին: Այսօր մեր երկիրը՝ մեր Հայրենիքը ազատ անկախ պետականություն դարձած է: Սա վճռական դեպք է, սա շրջադարձային նշանակություն ունեցող հանգրվան է մեր ազգի պատմության մեջ:

Պետության ստևկեցումը և ընդհանուր աշխարհի մեջ հայության պահպանության հրամայականը միության, ամբողջական ազգ, մեկ ազգի գաղափարի շուրջը պիտի համախմբե բոլոր անխտիր: Գաղափարաբանական կամ դավանաբանական տարրերությունները երբեք պետք չեն ըլլան իրար միջև վեճի հյութ, այլ պետք է մենք բոլոր համախմբվինք մեկ քրիստոնեական հավատքի և մեկ ազգության տիրապետող կամարակապ ձևով մեզ բոլորին ընդգրկող ազգության մեջ, որ հայ ազգն է և Հայ Եկեղեցին:

Ես սրտանց կաղոթեմ առ Աստված, որ ձեզի տա հավատքի գորացում, առավել նվիրում և մեր Հայրենիքի և Եկեղեցվոր բոլոր գործունեության մեջ ձեր ամբողջական և անվերապահ մասնակցությունը: Կշնորհավորեմ ձեզ և իմ եղբայրական սիրո ողջունը այս Եկեղեցին կուղյան նաև Ամենապատիվ Տեր Հովհաննես-Պետրոս ԺԼ Գալապարյան Պատրիարքին, որուն հետ մենք եղբայրական հարաբերություններ ունեցած ենք առաջին իսկ օրեն, և թող ինքն է մնա առողջ և մնա իր ծառայության մեջ միշտ առատագեր, պայտարեր՝ վասն փառացն Աստուծոն և վասն շինության Եկեղեցվոյն և վասն ամբողջան ու բարգավաճման ազգին և Հայրենիքին ու Պետության Հայոց: Աստված օրինե ձեզ բոլորդ: Ամեն»:

Այս չկանխատեսված հանդիպումից հետո, շարապոն-թափորը շարժվեց դեպի օրվա, Վեհափառի բնութագրմամբ՝ Ծիրակի օրվա վերջին կայսն: Առջևում Գյումրին էր:

1988 թվականի ադեաթից և հրա հետևանենելից դժվարությունների ու ծանրության ներքեւ կորացած ամբողջ Ծիրակ աշխարհը, գլուխ ունենալով դաշտավայրի հարսը՝ Գյումրին, Վեհափառ Հայրապետի այցելությամբ նոր կյանքի ու հարության լիցք էր ստացել, Աստուծոն հետ հանդիպելու և ապրելու իրականությունն ու ճշմարտությունն էր կենդանացել ժողովորդի հոգուն:

Խնեն ժամը շատ ուշ էր, բայց գյումրեցիները քաղաքի սահմանագծում մեծ բազմությամբ, երկար ժամեր սպասելով աղ ու հացով, ավանդական զուտնայի ու դմոլի նմանությունը, պարերի գուապարով դիմավորեցին իրենց հոգու ստացնորդին՝ Տ. Տ. Գարեգին Ա. Առընատիր, բայց վաղածանոյ ու քաշածանոյ Հայրապետին: Ուգլուրության այս ալիքն ու շղթան ձգվում էր մինչև քաղաքի սիրու՝ Յոթվերը Սուրբ Աստվածածին Եկեղեցի, որի առջևի մրապարակում խոնված հավատացյալներին, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, իր անդրանիկ Հայրապետական պատգամը տվեց՝ ասելով,

«Թանկագին հավատացյալներ Հայաստանյաց Եկեղեցվո, զավակներ Հայոց ազգի բնակիչներ Գյումրի քաղաքի,

Այս օրը և վաղը, շաբաթ օրը, մինչև կիրակի կեսօր, իմ կյանքի և կենսագրության մեջ կգրվի որպես Գյումրիի, Շիրակի օր: Այս իմ գահակալությունը որքան կտնի, ես չփոխ, Աստված գիտե, բայց այնքան, որքան ես զգում եմ, ոգում եմ ձեզ էլ վատահացնել, որ ցանկանալով ցանկանում էի գալ Գյումրի և հազիվ ավարտվեց առաջին ամիսը իմ գահակալության, ես ցանկացա գալ պատեղ՝ Շիրակի թեմ, այցելել, ձեր ժրաշան առաջնորդ Սրբազնի հրավերով և նաև բարյացական մասնակցությամբ այս շրջանի հահանգապետին՝ մեր սիրելի Ս. Նորանիկ Քոչարյանին: Եվ պետություն ու Եկեղեցի եթե միասին լինեն պատես, ես կհավատամ, որ հրաշքներ կգործվեն:

Ոգում եմ նաև ավելացնել, որ Եկեղեցին իր առաջին մտահոգություններից մեկը նկատում է այն ժողովրդին ծառայել, որ ամենից շատ կարիքը ունի: Դուք եք, որ ամենից շատ առաջեցիք 1988 թվականի երկրաշարժից, և Եկեղեցին պետք է, որ իր կարիքավոր զավակների հանդեպ հայտնել իր սերը, իր հոգածությունը, և խորհրդանշական ձևով, որպես առաջին թեմ ընտրվիլը Շիրակի՝ Եկեղեցու հանդեպ ժողովրդի իր պարտականության գիտակցության զորացումն է մեր Հայրենիքի մեջ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ: Եկել եմ ձեզ հետ լինելու: Ես չեմ եղել Կարողիկոս Ամենայն Հայոց Էջմիածնի մեջ նատկու համար: Նատեղը իմ հոգիսառնությանը հաշու չի, շարժվել է ինձ հարազատ:

Առաջին անգամ, երբ դուրս եկա Էջմիածնից՝ այդ եղանակ Շիրակի թեմը և Գյումրին, և վատահացնում եմ ձեզ, որ որքան Աստված ինձ կյանքը տա և կարող թյուն, իմ գերազոյն նիգերը չեմ խնայի ձեր թեմի բարգավաճման, ձեր վերքերի դարմանման և ձեր կյանքի պայմանների առաջդիմական ձևով վերականգնման կամ բարելայնման կամ բնականության համար:

Երկրորդ՝ այն ատեն, երբ եկա այստեղ, լաց էր չորս դին, ավել կարչորս դին, դագաղների դեզը իմ աչքերից երեք չի հնուան: Յավ եք, կըսկիծ, մորմոք բոլորի սրտերում: Բայց այդ թվականից այս կողմ փոխվեց ողջ հայության կյանքը և՛ Հայրենիքում, և՛ Արցախում, և՛ արտասահմանում: Դարեւը, դարեւը հայ ժողովուրդը երազել էր իր սևափական կամքի արտահայտությունը ունենալ, իր սևափական հողի վրա: Եվ ատեղծվեց Հայատանի անկախ պետությունը: Մեր երազներին, գերազոյն իղձերին Աստված մարմին հազցրեց և ահավասիկ, ես եկել եմ և ձեր դեմքերի վրա (հակառակ, որ արև չկա) ես արևն եմ տեսնում, մայիս եմ տեսնում: Մի աներ, որ ես չեմ ճանշնար կյանքը այստեղ, ճիշտ է, դժվար, շատ հժվար պայմանների միջից եք անցնում, բայց Եկեղեցին բրիստոնական հավատքի իր բարողությամբ ձեզ ասում է եթե քրիստոնյա եք, եթե հայ եք, չեք կարող հաւաշուկ պարտվածության հոգերանության հետ, չեք կարող ընկրկել, չեք կարող հահանջել, չներ կարող հուսահատվել: 1988 թվականի դեկտեմբերի 15-ին պատեղ ամրուց ցավը տեսնելուց հետո, երբ վերադարձա Ս. Օթիլիան՝ Կիլիկիո Կալողիկոսության հոգնոր կենտրոն, այնտեղ մի քարող տվեցի Մայր տաճարից և հետևալ բառերը գործածեցի այդ քարողի մեջ. «Հայություն և հուսահատություն չեն կարող իրար մեռ հաշտվել»: Մեր ամերջ պատմությունը ես նկատի ունեմ՝ մենք երեկ շնչեցինք, որ վաղը գնանք: Դարեւը են խոսում, հազարամյակներն են խոսում մեր արյունի միջից:

Հարց եմ տպիս ձեզ բոլորիդ, ինչպես ապրեցինք մենք Լենինականի կամ Գյումրիի անավոր աղետից շատ պիելի ծանր, ողբերգական դեպքերից հետո: Մեր պատմությունը ի՞նչ ձևով շարունակվեց երկնել և փա-

ուավորապես ստեղծագործականորեն կերտվել: Հավատք, «հաւատքը քո կեցուցեն զբեզ»: Նա, որ Աստծուն կիավատա, նա, որ Քրիստոսին կիավատա, չի կարող հուսահատվել, չի կարող տրտությով ապրել, չի կարող դժգոհությամբ ապրել, այլ հաստատական կամքով, աշխատանքի մղումով, զոհոնդության գաղափարով մեր ազգը ապրել է միշտ և այսօր էլ պիտի ապրի:

Տես ուզո՞ւ ընդհանուր խոր ասել բարեկամներ, եղբայրներ, քոյլուրներ, զավակներ, ես ձեզ պիտի տամ օրինակը: Երբ 1915 թվականի ցեղասպանությունը կատարվեց և մեկ և կես միլիոն հայեր՝ ձեր եղբայրները՝ նույն արյունը, նույն անունը կրող, երբ Ենք-Զորի անապատում և որիշ վայրերում հողին հաճանվեցին, երբ Արևմտյան Հայաստանի մնացյալ ամբողջ հայությունը արքատախիլ եղավ իր հողերից, իր տներից, իր շենքերից, իր քաղաքներից և դուրս շարտվեց՝ աշխարհով մեկ ցրվեց, ինչպես կարողացանք մենք վերապրել: Զեր եղբայրները և քոյլուրները երբ թռողացին իրենց Հայրենիքը պարտադրաբար՝ մեր թշնամու կողմից գործադրված ցեղասպանության հետևանքով, ոչ թե իրենց կամքով, և զնացին Սիրիա, Լիբանան և այլոր, ի՞նչ ունեին իրենց հետ, ի՞նչ տարան իրենց հետ՝ ցնցուիներ էին իրենց հագուստները: Իմ հայրը, իմ մայրը անապատի ավագների միջից վերապրեցին և ինձ կյանք տվեցին, բայց այդ ժողովորդը, երբ դուքս եկավ իր հայրենի հողերից և գտնվեց «օտար, ամայի ճամփերի վրա», ինչպես ասում է բանաստեղծը, ո՞չ լեզուն էին իմանում և ո՞չ էլ այդ ժողովորդի կյանքը ճանաչում: Թիժենաշեն տների մեջ էին ապրում, ցեխով ծածկված հողի մեջ էին ապրում: Ես տեսել եմ՝ աշքերովս տեսել եմ և նույնիսկ ապրել եմ եղ տնակների, եղ խճիթների մեջ, երբ անձնը գալիս էր, այնպես էր խփում այդ թիթեղին, որ կարծեք թե ականջների մեջ անհաղաք արձագանքում էր: Երբ դուրս էինք գալիս, ցեխի մեջ էինք մըտնում մեր ոտնամաններով, այն ալ ի՞նչ ոտնամաններ: Բայց ապրեցինք և այդ վիճակից դուրս եկանք և տուն-տեղ շինեցինք, գործատեղի բացին մեր հայրերը և նոր կյանք սկսեցին:

Ազգին ամենեն մեծ նկատմած բարերական դեկավարներից մեկը սըր Ռինաստոն Տերչիլ գրել էր 1929 թվականին. «Հայաստանը ընչվեց աշխարհի բարտեզից, և այս ժողովուրդը այսևս փոշի դատավոր սահմանված է, անշոշ, եկել է վերջը»: Այդպես էր մտածում աշխարհն ամբողջ, որ կարծես թե գերեզմանի քարը դրել էին հայության վրա, բայց մարդարե չեին զիտնալու համար, թե նայ ժողովուրդի մեջ կա հավատքի անապատելի ուժը, ստեղծարար ուժը: Այն ատեն, որ մեր հայրերը վերապրեցին անավոր ջարդից, ոչ ոք օգնեց հայերին, մի քանի ժիփոնարներ միայն որբերին հայեցին: Հայը իր ճակատի բրտինքով, իր պատվո գիտակցությամբ, արժանապատվորյան տեր ըլլալու իր կամքով, իր չարքաշությամբ, իր պարկեշտությամբ, աշխատանքի նվիրվելու իր առարինությամբ իր կյանքը վերաշինեց:

Մենք այսօր Հայաստանը ունենք իրենք ազատ և անիւստ պետություն: Ժամանակին կարող էիր ասել, ես էլ կարող էի ասել, թե մենք ազատ չենք, որովհետև որիշենք ասում էին, ինչ որ մենք անելու ենք, մենք չենք կարողանում որոշել: Հիմա ազատ ենք, դուք կարող եք որոշել իրեն ժողովորդ, դուք եք ընտրել մեր պետությունը և այսօր դուք եք շինուու մեր Հայրենիքը, մենք ենք շինելու: Ես հիմա եկել եմ Աստծո կամչին ընդառաջելով, մեր ժողովրդի կամքին ընդառաջելով իմ ամբողջ կյանքը մինչև վերջ, այնքան, որքան տա ինձ Աստված, Հայաստանի, մեր Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնի, մեր ընդհանրական ազգին ընծայելու: Պետք է ձեռք-ձեռքի տանը՝ Եկեղեցին ես չեմ, Եկեղեցին սրբազնեերը, վարդապետները և քահանանեերը չեմ, Եկեղեցին ո՞չ աղյուսն է, ո՞չ մարտարն է և ո՞չ էլ ջանն է, Եկեղեցին ժողովուրդն է՝ դուք եք, հավատըն է ձեր մեջ, որ Եկեղեցին Կշինի՝ ոչ թե քարեղեն Եկեղեցին, այլ կյանք Եկեղեցին: Անապատի մեջ ո՞վ Եկեղեցի ունեցավ, բայց արտորված քահանանեերը բաց օդի մեջ և ավագի վրա պատարագ արեցին և հավատըք կենանաի պահեցին: Մենք այսօր վերանձնակած ազգ ենք:

Խմ այսօրվա վերջին խոսքը, մենք իբրև նորոգակ ժողովուրդ, նոր Համբառապետորչան կանչված ժողովուրդ, մենք պետք է այս թողենեմ այն հոգեքրանությունը, որով ժամանակին մենք ասում եինք՝ ջարդվեցինք, ավերեցին մեր Երկիրը, քանինեցին մեր Երկիրը, «ողբամ զքեզ Հայոց աշխարհն». ո՞չ, հազար անգամ ո՞չ: Նայե՛նք կյանքին, նայե՛նք ապազային, մենք վերածնակած ազգ ենք՝ մեկ ու կես միլիոն զոյն տվեցինք, բայց այսօր որ միլիոն հաշվով ազգ ենք՝ պետորչամբ, դիմագիծ ունենք, ՄԱԿ-ի ճակատի վրա եռագույնն է ծածանվում, մենք նոր ազգ ենք՝ ոչ թե ջարդված, ոչ թե հակածված, այլ վերածնակած, վերաշինյալ Հայրենիքով և ազատ ու անկախ պետականությամբ: Պետք է այս կյանքին նայենք, զործին նայենք և խոսքին այս պետք չէ այդրան ոժ տանք և մեր կյանքը և մեր գործը պիտի ըլլան մեր խոսքը առ Աստված՝ և՝ առ մարդկությունը, և՝ առ մեր ապազան: Թող Աստված այս հոգեքրանությամբ զինեն զձեզ բոլորդ և երբեք չիուահատվեք: Աստվածաշունըն է ասում. «Յոյ ոչ երբեք ամաչեցուցանէ» և մենք այդ կյանքով պիտի նայենք դեպի Հայոց Ապազան: Աստված օրենի ձեզ բոլորիդ: Ամեն»:

Այնուհետև ժողովուրդի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը մոտը գործեց թեմի Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցի, որտեղ գրիգորուն և փառք հայտնեց Ամենակալ Տիրոջ՝ Ծիրակ աշխարհի անասանության և հաստատորչան համար, որպեսզի Նրա ամենակարող Աջը զորավիճ և նովանի լինի Իրեն հավատացող տառապյալ ժողովուրդին, որոնց Ավետարանի ողջունատու խոսքով կանչում է համեմարք. «Եկաց առ իս ամենայն վաստակեաց և հոգնարենք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ. 29):

Օրվա վերջում, գիշերվա բավականին ոչ ժամին Վեհափառ Հայրապետը իշեանեց Ծիրակի թեմի առաջնորդարանուն, որտեղ և հանդիպեց Գյումրիի Ընծայարանի սաներին՝ պատգամերով Օրանց ապրել ընծայալի հոգով և նվիրումով Աստուծ փառքի, Եկեղեցու անսասանության և հարաւունության ու Հայրենիքի շինության և ամեխափուելության համար:

ՄԱՅԻՍ 6. ԾԱԲԱԹ

«Ունկնդիր լերուր լեկեօք ձերովք,
զիւն եկայք ճամապարհ իմոց.
ունուցածան քայլուր լուարուք ինձ, և կեցցեն ի բարոյթեան անձինք ձեր»:
(ԵՍԱՅԻ ԾԵ. 3)

Սուպերտ Գյումրիում բացվեց Վեհափառ Հայրապետի՝ Լորդ Բայրոնի ամագան դպրոց այցելությամբ: Դեռևս 1989 թվականի աղետալի Երկրաշր-

ժից հետո, Վեհափառը, լինելով Կիլիկիո Աթոռի Գահակալ, այցելել էր այս դպրոց, որ այդ օրերին ծանր կացության մեջ էր գտնվում, և դասերը ընթանում էին վրանային ճամբարություն: Սակայն հետագայում Մեծ Բրիտանիայի կառավարության և ժողովրդի ձեռքբանումի և օգնության շնորհիվ այն ընդունեց ալժմյան բարվոր վիճակը:

Վեհափառ Հայրապետին ողջունեցին և փոքրիկ համերգային ծրագրով համեստ եկամ դպրոցի աշակերտները, որից հետո Վեհափառն իր Հայրապետական պատզամք և սերն ու գոհունակությունը հայտնեց ուղցական կազմին և աշակերտությանը.

«Միրեկի և բանկազին ուսուցիչներ և մանավանդ, բանկազին սաներ Լորդ Բայրոնի անունը կրող այս վարժարանի,

1989 թվականին էր, երբ ես առաջին անգամ այցելեցի այս վարժարանը, այն առեն որպես Մեծի Տաճա Կիլիկիո Կարողիկոս, այս շենք շենքը տակավին չկար, այլ վրաների տակ էին դասերը լինում: Այն առեն դուք չեք հիշում, հավանաբար, ես մի խոսք ասեցի: համեստ արտաքին նյութական պայմանները երբեք պատճառ չեն ուսման մեջ հնամանապու կամ տկարանապու: Ես շատ աղքատ դպրոցի մեջ եմ մեծացել, բայց այդ աղքատությունը նյութական երևույթ էր՝ գրասեղանը շատ փայլուն չեր, գրիչ, մատիտ այնքան առատ չտնելինք՝ մեկ մատիտ ունենինք՝ սրում հա սրում էինը, երբ որ վերջանում էր, մի մասի փոքրիկ ծաղրի էր վերածվում: Չոնենինք պետք եղածը, բայց սովորեցինք, ուսուցիչներ ունեցանք՝ դպրոցը ուսուցիչն է, դպրոցը հոգեկան շրտություն է: Խայեցեք, աշակերտներ, այս խոսքը, որ պիտի ասեմ, լավ լսեք՝ ես եւ ուսուցիչ եմ, մինչև կարողիկոսական այս աստիճանին մեջ ամեն շաբաթ մի օրը գնում էի մեր հոգնոր դպրանոցը ներդրություն և այսուեղ դասավանդում էի մինչև ալսօր:

Ասեիիրս այն է, որ դպրոցում միայն թվաբանություն, գիտություն, քերականություն, թվական չափոր է սովորե՝ կանք պիտի սովորե, ապրել պիտի սովորե: Այսօր փոքրիկ մեքենաներ կան, երկու առավել երկու ի՞նչ կանի ասելու համար, կարող եք այսուեղ գումարը ունենալ՝ դա գիտություն չէ: Գիտությունը՝ ինչպես ապրել իրար հետ, ինչպես վարվել իրար հետ, ինչպես վարվել բնույթյան հետ, ինչպես արժևությունը նույթը, մինչև ո՞յ աստիճանի արժևությունը նույթը և ի՞նչ արժեք տակ հոգեկանին, բարոյալանին, իմացականին, հոգնորին և որիշ բաներին, որոնք մնայուն արժեքներ են: Դպրոցը օջախն է, որտեղ մենք սովորում ենք ոչ թե որ ու ցամաք գիտություն, այլ հոգեկան ազնվություն, վերաբերման եղանակ: Եվ ասոր համար ձեզ բոլորիդ ուզում եմ ասել, որ այս դպրոցը Լորդ Բայրոն կոչված, որից այնքան լավ տապահովեցի՝ կարդ ու կանոն կա, կոկիկ դասավորում կա, այս բոլորը պետք է որ շնչավորվեն:

Հիսոս ասել է. «Տոք զկայմերն կալեք և զԱստուծոյն Աստուծոյ»: ինչ որ նյութին կպատկանի, բևականորեն պիտի տանք, մարմին ենք՝ պետք է խնամենք մեր մարմինը, բայց ո՞չ մարմնապաշտ լինենք, ո՞չ նյութապաշտ լինենք: Մարդը կը նկնի իր բարձրությունից, երբ դառնա միայն նյութի հետ՝ նյութով արժևորվող մարդ: Հետևաբար դուք սովորեք ճշմարտությունը դարձայ Ավետարանի բաներով. «Հոգի առաւել է քան զիերակոր և մարմին քան զիաներձ»: Աշխարհում պիտի գիտնաք ի՞նչ բանն է կարևորը և ի՞նչ բանն է հայա կարևորը, և ի՞նչ բանն է անկարևորը՝ այս է դպրոցին արմեսարք: Եվ ասոր համար ես կշնորհավորեմ տեօրենության, ուսուց-

շական կազմի բոլոր անդամները և բոլոր այն անձերը, որ այս դպրոցի բարգավաճման, բարեկարգ պահպանումի համար չեն խնայեք ո՛չ զոհոնդորյան և ո՛չ ել ճիգի որևէ մեկ բաժին, որովհետև սրտի ճռոտիկ ունեն՝ իրենց փառքն է այս դպրոցը, ձեր պատիվն է այս դպրոցը, ինչքան որ դոր այս դպրոցին կտաք, այնքանով կմեծանաք:

Խմ ըմբռնումս ուսուցչորյան՝ այս է. աշակերտով գրադիվ իբրև անձ, ոչ թե անոր գիտություն փոխանցել իբրև գործիք, և դրա համար շնորհավորում եմ ձեզ և այժմ ասում եմ. Անգլիական մեծ պետության ժողովուրդը, եթե մեր աղետին ատիրով պատիսի գեղեցիկ մարդկայնական և ազգերի միջև եղբայրության խկանան արտահպատություն ունեցավ, եկեք արժեցնենք: Այդ հարգանքը, որ մեր հանդեպ նրանք ունեցան, այդ սերը, որ արտահպատեցին և այս դպրոցը բացվեց և տիկին Թետչերը եկավ այստեղ Վազգեն Վեհափառին հետ և այս դպրոցին բացումը կատարեցին, մենք արժեցնենք նրանց այդպիսի համարումը մեր ազգի նկատմամբ և շեն պահենք այս դըպրոցը:

Լորդ Բայրոնի անվան դպրոց այցելությունը երկար և անշնչելի պիտի մնա դպրոցի բոլոր սերունդների հիշողության մեջ, քանզի այն վարժարանի պատության մեջ դարձավ նվիրական և Հայրապետական շնորհարեց օրինության օր, որը հավերժացվեց այս կրթական հաստատության տարեգույթյան մեջ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շրջագայեց քաղաքում, ծանոթացավ տարվող շննարարական աշխատանքներին, եղավ 58-րդ և Սվատրիական կոչվող թաղամասերում, զրուցեց ժողովորդի հետ, իր հայրական չերմ սերն ու հորդորները բաշխեց մանուկներին, հանդիպեց երկրաշարժի հետեւ վաճռով անդամակույց դարձաներին՝ ամենքին ոգուրեկով, գոտեանեկելով և միխթարելով նրանց Ավետարանի լոյս պատգամներով և Աստուծո Խոսքի ուժավորող զրությամբ: Ժողովորդի մեջ շրջելուց, նրանց ցավերին, տառապանքին և դժվարություններին անմիջականորեն հաղորդակից և սրտակից դառնալուց հետո, Վեհափառ Հայրապետին սպասվում էր մի նոր հոգի, քայլ միևնույն ժամանակ բերկրալի հանդիպում Գյումրիի Միքայել Նալբանդյանի անվան Մանկավարժական ինստիտուտում: Մանկավարժական ինստիտուտը 1988 թվականի երկրաշարժից հիմնովին ավերվել էր, և հարյուրավոր պարմանենք ու պարմանուիներ զոհ գնացին այդ սարսափելի աղետին: Բայց այսօր ամբողջությամբ վերանորոգված շները իր լուսավոր դասասենյակներով և, որ ամենախրակը է՝ ուսանողության բայ բազմությունը և նրանց դեմքերից ուրախության միջից նկատվող ապրելու կամքն ու կորովը, կարելի է ասել գրեթե խսպա շնչել էին արհավիրքի վերքերն ու հետքերը:

Սյատեղ Վեհափառին երախտագիտության և ողջունի խոր ուղեց ինստիտուտի տնօրեն Մ. Սարգսյանը, ապա հանուն ուսանողության շնորհակալություն հայտնեց Բ կուրսի ուսանողութիւն Նարինե Ղազարյանը, որից հետո Հայոց Հայրապետը Ծխմարտության, ուաման և ուսուցման մասին իր մտածումները և խոները կիսեց դասախոսական կազմի և ուսանողության հետ:

«Միրելի առաջնորդ Սրբազն, հոգնոր եղբայրներ, պետական, քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ, հարգարժան վարիչ-տնօրեն պա-

ուս Սարգսյան, ուսուցչական կազմ, դաստիառական կազմ և սիրելի ուսանողների և ուսանողութիւններ:

Այս պահը հասունի նշանակություն ունի ինձի համար, որովհետև իմ անձնական կյանքի կարևորագոյն մեկ բաժինը անցել է մանկավարժական բնագավառին՝ այսինքն, կրթական, դաստիառական գործում և, եթե երրությ մի օր ինձ մի անձ հարց տա և ասի՝ Վեհափառ, եթե եկեղեցական կամ հոգևորական չինեիր, ի՞նչ կուզեիր լինել, պիտի ասեի՝ համալսարանի դասախոս։ Այս մեկը ո՞չ որիշ նապատակի համար, ո՞չ փառի համար, ո՞չ դրամի համար, այս մեկը անոր համար, որ իմ հավատքը, իմ ըմբռնումը այն է, որ նա, ով ճշմարտության թարգմանը կհանդիսանա երիտասարդ սերնդին։ Սատծոն գործակից անձ է, որովհետև ճշմարտությունն է, որ երր մարդու մը էության, գոյության, ամբողջ կյանքի շաղվածքի հետ կմիանա, այդ ճշմարտությունն է, որ անհատը և մարդը կփրկի։ Ավետարանն առան է. «Ծանչից զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեացէ զձեզ» (Հովհ. Ը. 32): Կեղծիքը, սուտը, կարճատեսությունը մարդկանց միաւ ճանապարհի մեջ կցցեմ ճշմարտությունն է, որ իրք լուս ճանապարհ կլուսավորե:

Ասոր համար է, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասեց. «Ես լոյս եկի աշխարհ»՝ ես իրք լուս եկա աշխարհ։ Ասոր համար է, եղագարներ և բուրյութը, որ մեր հավատու հայրը մենք կլունենք Լուսավորիչ, իսկ եկեղեցին՝ Լուս Խորան։ Հետևաբար, այս իմացական, հոգեկան լուսն է, որ կիայտաբերեն մեզ համար կյանքի ճշմարտությունը, և առանց այդ ճշմարտության ո՞չ մարդը մարդ կլինի և ո՞չ էլ ասօք՝ ազգ։

Ազսեն պիտի ոգեի ձեզի մի փոքրիկ պատկեր, մի փոքրիկ նմանություն զծել երկու լուսերի միջև։—Փիզիկական, արեգակնային լուսն է, որ իմաստ կուտա տիեզերքին։ Համեցնեք լուսը աշխարհից՝ խավար է. խավարը անգոյլություն է, կույր գոյություն է։ Լուսն է, որ գոյության գոյությունը մեզի կիայտնաբերեն Փիզիկական աշխարհի մեջ։ Եթե երրեք դուք հարցներ աշազորկ մարդուն, թե ի՞նչ է աշխարհը, ճրա պատասխանը ձեզ կհամոզի, թե լուսը ինչ մեծ արծեր ունի... Այսպես է նաև իմանալի լուսը՝ «Ոյս Արարիշ լուսոյ առաջին լոյս, բնակալդ ի լոյս անմատուց, ի ծագել լուսոյ արեգական՝ ծագեան ի հոգիս մեր զոյս Քո իմանալի», Արեագալի շարականն է Ներսես Ծնորհալու զրած, որ չորս տողի մեջ լոյս անօամ երածշտականությամբը բանաստեղծության լուս բառը երածշտական հանկերգի պես, կիանդիպի. «Ոյս առաջին լոյս, արարիշ լուսոյ բնակեալդ ի լոյս անմատուց», երբ արևը ծագի մեջ ծագեցոր իմանալի լուսը։ Ասոր համար չէ արդյոք, եղագարներ և բուրյութը, մտքի հաղորդակիցներ, որ չսպած է մեր մատենագրին կողմէ «Ճաւ է կոյր աշօք, բան կոյր մտօք»։ Մտքի կոյրությունը ահավոր բան է։ Աշքի՝ մուշեն աշքի կոյրության համար դարման կա. աշազորկը գալազան կուսու ունենալ և խարիսխել և տեսնել ճամփան, հոտառությունը, շոշափելիքի կարողությունը կզրաբան, երբ աշքի տեսողության ուժը կոտկաբան։ Բայց ի՞նչ պիտի անի այն մարդը, որ զրկված է իմացական լուսից, չի իմանում, թե կյանքը ի՞նչ է արծու, չի իմանում, թե մարդը ո՞վ է։ Կույր գոյություն մըն է, և ա'յս է տղիտությունը։ Անգիտությունն է մեր ազգի ամենից մեծ վտանգը, որի առաջը պետք է առնենք։ Այս հաստատությունը, որտեղ գտնվում եմ հիմա, իմացական լուսի մի որիշ խորան է։

Խավարը, կյանքի իմաստին, արժեքներու ըմբռնողության խավարը և անգիտությունը մարտասող լուսի խորան է։ Ասոր համար է, որ երբ Մովսես Խորենացին կնկարագրե Թարգմանչի վարդապետաց առարկությունը,

այնտեղ մի հշանավոր խոսք ունի՝ տղիտահալած Գիրքը՝ ճշմարտության խոսնակը, տղիտությունը կիալածե և լույսը կառատացնե մեր կյանքի մեջ։ Անա թէ ինչու այս մանկավարժական կենտրոնը, ուարգելի պարուն տնօրնեն, իմ սրտին շատ մոտիկ հաստատություն է, որովհետև կյալքում հանաչել եմ, Աստված գիտի, թէ որքան եմ հաջողել, լուսին երկրապագու դառնալ և լույսին որոնողը դառնալ իմ տկար կարողության սահմանների մեջ։

Ի՞ո՞ւր, աշակերտներ, դուրս եկար մի ահավոր աղետից։ Ես վկան ենա՝ առաջին վկաններից մեկը, թէ այս քաղաքը և Շիրակա համանգը որքան ցցցից։ Ես այն ատև մի բար գործածեցի, աս երկրաշարժ չեր միայն առաջարծ էր, հոգեշարժ էր, սզգաշարժ էր։

Աշխարհը արթնացավ, և Հայաստանը դարձավ շատ երկրների մասովի, հաղորդագրության միջոցների սևեռակետ։ Բայց մոռացվեց, վերջին տարիներին մոռացվեց, և ես այսօր եթե ընտրեցի որպես առաջին Հովվապետական այցելության դաշտ Շիրակա համանգը, իմ փափազն էր, իմ նպատակն էր մեր ողջ ժողովրդի գիտակցության մեջ և Հայաստանում, և առտասահմանում վերստին արթնացնել Շիրակա համանգին աղետի դարձանումին համայնական, հասարակաց և ընդհանուր պարտքը։ Հոգեվէ չի բավեր, կերակոր տալ չի բավեր՝ վերակառուցել, վերականգնել, ընականու պայմանների բարձրացնել այս համանգի մեր ժողովրդի կյանքը։ Այս պետք է լինի մեր հասարակաց նպատակը և դրա մեջ առաջին պատասխանաւոփորթյունը կիյնա մեր վրա, իբրև շիրակացի ժողովորդ։

Հայաստանի մեր մյուս եղբայրները, ընականորեն նաև արտասահմանի մեր եղբայրներն ել կօան, իրենց ձեռքերը կմիացնեն մեր ձեռքերին։ և սակայն պարտավորության առաջին գծի վրա դարձյալ մենք ենք զտնվում։ Սրդեն շեմ ասում դուք, ասում եմ մենք, որովհետև Սմենայն Հայոց Կաթողիկոսը ով որ ել լինի, չի կարող մի համանգի, մի փայրի քաղաքացի լինել։ Անիկա ամենահայ է և շիրակացի է, և երևանցի է, և արցախցի է, և այունեցի է, և Գուգարաց աշխարհից է, և արտասահմանցի հայ է։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բոլորին համար է և բոլորն ել իրեն համար տեղ ունեն, բայց դուք, շիրակացներ, առաջին տեղում եք։ Եվ ձեր գործը՝ մտավորական դասակարգին գործը, համալսարանական ուսանողության հեռանկարային գործը պիտի ըլլա բարոյական, հոգեոր, իմացական, Շկարագրային, մարդկային վերականգնում՝ առանց որին նյութական վերականգնումը մեծ արժեք չունի։

Երկրորդ հշանակությունը, որի մասին այսօր ուզում եմ մի բանի բառ աւել, այն է, որ մանկավարժության պատրաստվող, իմացական առաջնորդության պատրաստվող, ուսուցչության հանրային դաստիարակության համար պատրաստվող ուսանողները և ուսանողությները լավ պիտի իմանան, որ ուսուցումը տեխնիկա չէ, ուսուցումը անձից բխող առաքելություն է։ Մերեւագնեաւը կարող է համակարգիչ պատրաստել, մերեւական գեներատոր շինել, որը տեխնիկական հյութի անշունչ հյութի հետ կապված գործ է։ Բայց ուսուցիչը, հոգեորականը, գործը, մտավորականը իր անձն է, որ պիտի տա և ոչ թէ մեթոդ կամ այնպիսի մի աշխատանք, որ անանձանական լինի։ Մանկավարժությունը լեզվաբանական գիտություն սովորելու հետ կապ չունի։ Կարող եք սովորել և պարտավոր եք սովորել, բայց դրանով չեք կարող ուսուցիչ լինել։ Ես ունեցել եմ ուսուցիչներ, որոնք մանկավարժական ինստիտուտ չեն կարողացել գնալ, առիթ չեն ունեցել, բայց եր դասարան, բնմու

խուսում էին, մենք տարվում էինք, վեհանում էինք, բարձրանում էինք, խանդավառվում էինք, և եղանք այն, ինչ որ ենք այսօր շնորհիվ այդ մանկավարժների, որոնք հոգոց էին խուսում, իրենց անձն էին անում դասագիրը, իրենց անձից էին բխեցնում ճշմարտությունները և ոչ թե զրբի խարգմանն էին լինում կամ իրեն գործիք գործածում էին գիրքը: Հետևեքար, դուք պետք է այս ուսանողության շրջանին ստվորեք ո՞չ միայն տեսություն, ո՞չ միայն մեթոդաբանություն բոլոր այն բնագավառներում, որտեղ դուք ուսանում եք, այլ պետք է ստվորեք առաքելության գերազույն դասը: Հխոսն ի՞նչ արեց, 12 հոգի ընտրեց, 12-ին նր անձին շորջը բոլորեց, ո՞չ դասարան, ո՞չ դասագիրը, ո՞չ գրաւնդան, ո՞չ գրիչ, այլ՝ հոգի տվեց, իր հոգին տվեց, իր կյանքով նման իրեն տվեց:

Ճշմարտությունը դա է. չասեց՝ ճշմարտությունն այս է, այսպես է, ասեց. «Ես եմ ճշմարտությունը», չասեց տեսականորեն, վերևախավացին կերպով, հայեցողական կերպով: Ճշմարտությունը կյանքումն է արտահայտվում, անձնութիւնը է մարմնավորվում, և դուք պետք է այդ դասը ստվորեք, դուք ձեզ ապօհն, մարդկությանը ընծայելու գերազույն դասը: Եվ դրա մեջն է ձեր ուսումնից անդրագոյն, հանգուցային իմաստը. եթե չկարող են անել, ինչ էլ որ ստվորած լինեք, համակարգիչն էլ կարող է անել, այսօր, մանավանդ այս զարգացման դարում: Վերջապես դուք շիրակացի եք, մենք ունեցել ենք մեծ գիտնական՝ Անահիա Շիրակացին, և դարի այդ հանճարեղ աստղը: Եվ երևակայեք նրանցից մենք այսօր ստվորելու ենք՝ ի՞նչ բան. նա գևաց Շիրակավանցից Բյուզանդիոն, գնաց Տրափիզոն Տյուբիկոս անուն հույն մեծ գիտնականի մոտ աշակերտելու և վերադարձավ իր հայրենիք, չմնաց օտար երկինքների տակ, եկավ, դարոց բացեց:

Ս. Իս, եթե կարդաք նրա նիշնակենսագրությունը, կզգաք ամբողջ դառնությունը, երբ տեսավ, որ իր ուսումն գևահատող մարդ չկար Հայուսանում, ափսոսաց, բայց չխուսահատվեց: Գիրք գրեց և մինչև այսօր իր գրեթե ճանաչվում են մեր գիտական գրականության բարձրակետերը, և մինչև այսօր մենք ուսանում ենք նրանց: Նրա կյանքի օրինակը թող ձեզ համար առաջնորդող աստղ լինի, փառու լինի: Մենք չարհամարհենք գիտությունը, բայց գիտությունն էլ զարդի, փառի չվերածենք՝ գիտությունը ծառապության վերածնենք, գիտությունը մարդու բոլորի ծառապությամբ՝ հոգլորականների, մտավորականների, մանկավարժների, գրողների՝ մի խոսքով, նրանց, ովքեր կարող են ճշմարտության լույսը ծովովիրդի կյանքի մեջ տարածել, ինչպես արևն իր ճանագայթներն է տարածում աշխարհին չորս կողմերը:

Ես հավատում եմ, որ մեր վերստին անկախացար Հայրենիքի մեջ նորաստեղծ անկախ պետականության այս օրերին Եկեղեցին պիտի բերի իր բաժինը, մտավորականները պիտի բերեն իրենց բաժինը, մանկավարժները պիտի բերեն իրենց բաժինը, գիտնականները պիտի բերեն իրենց բաժինը, գյուղացին պիտի բերի իր բաժինը, քաղաքացին պիտի բերի իր բաժինը:

Համաներդաշնակայ, համակարգայ ձեռյ մենք մեր պետության և Մայր Աթոռի միացյալ գործունեության միջից պիտի այս Հայրենիքը անենք այն, ինչ որ Աստված ուզում է, որ լինի, ինչ որ պատությունը սպահանջում է մեզանից, որ լինի, ինչպես մեր երեխանները մեզնից սպասում են, որ լինի: Մեր նախատականները այս են կտակի մեզ: Այս ցուցահանդեպ, որ այս սրանին մեջ տեսա շատ արագ, ակնթարթային, ակնարկային ձևով, ես սրանցից շատ ավելի ծանր տեսարաններ եմ տեսել, բայց սրանք



Չիւակի թամի ԽԵՆԱՍԱԾԻՐԻ հետ

հուշարձն են: Այս ամբողջ նկաքները վկայություններ են ոչ թե անցյալի պատճեածի մասին միայն, այլ մեր անելիքի համար, մեր այսօրվա անելիքի համար: Ես եղել եմ Տէր-Չորում, տեսել 600.000 հայերի գերեզմանը առանց շիրմի, խաչքարի: Այս Հոմնվարին, մինչ ամփանելու առաջ, այսուեղ զեացի, այս ձեռքերովս փորեցի, ո՞չ թե փորեցի, բրբեցի' հողը, ավազը և ուկրները դուրս բերեցի: Տակավին մինչև ասօր, 80 տարիներ են անցել, մենք շատ վերը տեսանք, բայց երբեք մահացու վերքի չվերածեցինք ստացած վերքերը: Վերքի երգ սարքեցինք, ցավից նոր տեսիլք կազմեցինք մեզ մեղքնել ուզող որևէ մի պետոքյան, որևէ մեկ ուժի դիմաց պիտի կանգնենք ուժնեղ, Արարատի հման կանգուն, ժայռի հման անսասան և այդ պիտի անենք ո՞չ թե իսուրով, ո՞չ թե ճառով, և ո՞չ ել բարողով: Սա պիտի անենք կյանքով, նվիրումով ու գործով:

Եղեր հողում, եղեր Հայրենիքում, մի լըեր էս Հայրենիքը, այս է Աստծու տվածը մեզ՝ բա՞ր է, բարից խաչքա՞ր կիանենք, անասո՞ն է, կաշոց մագաղա՞թ կշինենք, մենք զի՞ր կստեղծենք, Աստծու ստեղծագործությանը գործակից կիմնենք: Այս է հայուն ճակուի զի՞րը, պայծառ պահեցեք: Դո՞ւք սիրելի երիտասարդներ և երիտասարդուիններ, որ այս կամքին գործադրողները պիտի լինենք. ձեր երիտասարդությամբ մենք ել երիտասարդաներ և մեր երիտասարդ պետությունը միշտ երիտասարդ, ստեղծագործ և հաղորական պահենք Աստծու փառքին, մեր ազգի պատվին համար: Ամենն»:

Աշոցք մեկնելու ճանապարհին Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Գրումիի Սմերիկայի Հայկական Համախմբումի (Սաամբեայի) կողմից հաստատված տնաշինական գործարան, ծանոթացավ կատարվող և կատարվելով աշխատանքներին, գործարանի արտադրական կարողականությանը, ինչպես նաև մինչև այսօր իրականացրած ծրագրերին, որից նետու Վեհափառն ողևորվեց դեպի Աշոցք, որ մշակույթի տաճ հրապարակում շրջանի ամքող ժողովուրդը անհամբերությամբ և սրտի թթիռով էր սպասում Սուրբ Էջմիածնի Անրկայությանը, բանզի պատմության մեջ առաջին անգամն էր, որ ամենայն Հայոց Կատողիկոսը Հայրապետական այցելություն էր տախի այս շրջանի հավատացյալ ժողովրդին՝ այսինքն սա Աշոցքի ժողովրդի հանդիպումն էր Գարեգին Վեհափառի միջոցով նախորդ բոլոր 130 Հայրապետների հետ, որոնց կնևսավորող շնչի և նորդորների փոխանցողը և թարգմանը եղավ Մայր Աթոռի 131-րդ Գարեգին՝ Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Միրելի առաջնորդ Մրբազան Շիրակա թեմի, հարգարժան պետական Եերկայացոցիներ, պարուն հահանգապետն և օգնականներ, սիրեցյալ և հավատացյալ Աստուծոն, որ գտնվում եք պատմական այս շրջանում Աշոցքի, Ես ձեզ առաջին անգամ տեսնում եմ իրեն ամբողջական հայություն, իրեն համայնական Եերկայություն և ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ արևով, արևի լուսով, պայծառ դեմքերով, Աստծու լուսը ձեր դեմքերի վրա: Աստված միշտ արև տա ձեզի, ձեր կյանքը արևով օծի, որպեսի դուք միշտ Աստծու լուսին մեջ մնա:

Միրելիներ, ոգեցինք, որ դուք գգաք, որ Եկեղեցին, Մայր Աթոռը շենք չէ, աշխարհագրական վայր չէ, ձեր հոգիների մեջ ապրող հավատը է, Եերկայություն է, զՔրիստոս թարգմանող հաստատություն է, Ավետարանը բարողող գործոնություն է, և դրա համար ես թողեցի իմ գրասենյակը,

եկա ձեզ հետ լինելու, ձեզնով գորանալու և ձեզ էլ գորացնելու: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երբ աշխարհ եկավ երկնքից, նա ժողովրդի հետ խառնըվեց, ժողովրդի մեջ գտնվեց, ժողովրդի հետ եղավ, քարոզեց, դարմանեց, բժշկեց, մի խոսքով՝ ծառայեց այդ ժողովրդին: Մենք ալ նրա օրինակով ահավասիկ շրջագայում ենք և առաջին հերթին Շիրակա թեմը, որովհետու այս թեմի ժողովուրդը սրանից շուրջ յոթ տարիներ առաջ երկրաշարժի ամենեն ծանր վերքը կրեց և տակավին այդ վերքը չի դարմանվել ամրողականորեն: Ուզեցինք զավ և ձեզի հայտնել, որ Եկեղեցն ձեզ հետ է և ինչ որ կարող է անել, պիտի չխնայի ձեզ համար, միայն թե դոք հավատքը ունեցեք ձեր ուժերին, ձեր կարողություններին, ձեր աշխատանքներին: Երբ մի մարմին, ֆիզիկական մարմին վերք ունենա, հիվանդություն ունենա և երբ ինքը իր միջոցով կկարողանա այդ վերքը դարմանել, այդ մարմինը բժիշկներն ասում են ամենեն առողջ մարմինը կլինի: Դուքսից եկած ճարդ, դարմանը էլ մարմինը չեն կարող բռնել, եթե այդ մարմինը ներքին ուժականություն չունենա: Դուք ունեք այդ ուժը, հայ եք, հայի պես ապրեք, ինքնավատահ, ոչ թե անցյալը ավաղող, անցյալից դգոնող, ո՛չ, ներկայումս աշխատող և ապագային նայող ժողովուրդ: Մանավանդ մի նոր շրջան ենք մտել Հայոց հազարամյակների պատմության մեջ: Այդ շրջանը կոչվում է ազատ-անկախ Հայրենիքի նոր դարաշրջան: Մենք, որ արտասահմանում ենք ծնվել, արտասահմանում ենք ապրել, միշտ երազել ենք մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը: Այստեղ տեսնում եմ երեխաներ, պանտու աշքերով, անուշիկ դեմքերով երեխաներ: Ես էլ այդպիսի երեխս եմ. և գիտե՞ք, իմ մայրը ինչ էր սովորեցրել ինձ.

Ազատն Աստված այն օրից, երբ հաճնեցավ շումչ փշել,

իմ հողանեյութ շինվածքին կենդանություն պարզենել,

Ես անբարբար մի մանուկ երկու ձեռքս պարզեցի,

Եվ իմ անզոր թևերով ազատություն գրկեցի:

Այսպես ենք ապրել մենք: Այդ ազատությունը եկել է մեզի հիմա և մենք պետք է որ լծվենք աշխատանքի, տանք ձեռք-ձեռքի, միանանք, միության մեջ զգանքը մեր զորությունը՝ լինենք ամրողական ազգ, մեկ Հայրենիք, մեկ հայություն, մեկ Եկեղեցի, մեկ պետություն: Այս թող ըլլա մեր ճակատին պատիվը, պայծառությունը: Աշխարհումս ներկայանանք և աշխարհն ասի՞ հայե՞ր են սրանք, որովհետու միասին են ապրում, հայե՞ր են սրանք, որովհետու սիրում են իրար, հայե՞ր են սրանք, որովհետու շինում են, կառուցում են, որիշները քանդել են, բայց ինքը՝ հայ ժողովուրդը, շինել է, վերաշնել է: Այս է մեր պատիվը, բարձր պահեցեք այդ պատիվը:

Ես եկել եմ այսօր մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, բերել եմ ձեզի Սուրբ Գրիգոր յուսավորչի տեսիլքի լույսը, բերել եմ ձեզի Աստծու այն օրինությունը, որ իշավ Վաղարշապատ և այնտեղ Հայոց հողի վրա ցույց տվեց այն տեղը, որ Նր Եկեղեցին պիտի շինվի: Այդ Եկեղեցին շինվեց Աստծու կողմից՝ «Էջմիածն», Միածն Որդին իշավ, մենքը բարձրացանք դեպի Երեն: Այս է իմ առաջին խոսքը ձեզի, լծվեցեք ձեր հավատքի ուժին, կենդանի պահեցեք մեր հայրերի հավատքը՝ դա է մեր ուժը: Ծիշու է, լսեցի ձեր ստացնորդ Սրբազնից, որ տակավին եկեղեցի չուներ Աշոցքում, ելի հավատք ունեցեք, եղբայրներ, տակավին մի ամիս է Կաթողիկոս եմ ես,

հրաշքներ չեմ կարող գործել, բայց պիտի ջանամ իմ գերագույն կարելին ի գործ դնել, որպեսզի ձեր առաջնորդ Սրբազնի հետ, ձեր աշխարհական, պետական, քաղաքային իշխանությունների հետ, բայց ամենեն ավելի ձեզ հետ միասին ձեռք-ձեռքի տված Աստծո Տունը շինենք Աշոցքում: Այս տեսիլը եւ ողջունում եմ ձեզ և օրհնում եմ ձեզ բոլորդ այժմ և միշտ և հավիտան հավիտենից: Ամեն»:

Աշոցքի շրջանում Վեհափառն այցելեց նաև շրջանի նշանակալից հաստատություններից մենք՝ «ՔԱՐԴԻԹԱՍԽԻ» Նարեկի Աստվածամայր ամուսը կրող կաթողիկ հիվանդանոց, որը քարոզեց՝ շեշտադրելով այն գաղափարը, որ բժշկությունը դավանանք և գաղափարախոսություն չի պահանջում և չի ճանաչում, այն բոլորի համար է անկախ ամեն ինչից, քանզի Տեր Հիսուս բժշկության ամառանոցում հավատաքննության և հավատաքննության:

«Եթե երբեք այս հիվանդանոցին մեջ բոլոր հայերը առանց խտրության պիտի դարձնանվին, այդ է պատիվը, այդ է առաքելությունը այս հաստատության, որովհետև Հիսուս Քրիստոս որևէ մեկին բժշկելու ատեն չասեց, թե ինչ բանի կհավատա՞ կհավատա՞ Աստծոն, ասեց. ոչ այս ձեկին կամ այն ձեկին: Հետևաբար ես որպախ եմ և փստահ եմ, որ այս ոգիով պիտի շարունակվի այս հաստատությունը և այս միասնականության, համարիստոնեական գաղափարաբանության մեջ Հայատանայց Առաքելական Եկեղեցին ավանդություններուն հարգումով և այդ բոլորին եղբայրական գործակցությամբ մենք առաջ պիտի տանինք այս սուրբ գործը և Քրիստոսի սերը պիտի թևստի այստեղ և ամենուրեք:

Վերադառնալով Գյումրի, Վեհափառն այցելեց քաղաքապետարան, որտեղ դիմավորվեց քաղաքագլուխ Միքայել Վարդանյանի և քաղաքային իշխանությանց պատասխանատու պաշտոնյանների կողմից: Այստեղ փոխադարձ գրուցի ընթացքում ըննարկվեցին քաղաքի վերականգնման աշխատանքներին, բնակրանաշինության, արդյունաբերական ձեռնարկությունների և խոնարիված Եկեղեցիների վերաշինությանը վերաբերող բոլոր այն խնդիրները, որոնք ծառացել են քաղաքային իշխանությունների և ընդհանության շրջանի և Հայրապետության ղեկավարության առջև:

Քաղաքապետարանում այս գործնական գրուցից հետո Վեհափառ Հայրապետն ացելեց նաև Գյումրիի հրետանային զորամաս, որտեղ հրամանատրությանն ու զինվորներին պատգամեց կյանքով ու գործով վկայել Հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու նվիրումը, բարձր պահել և արժնութել հայ զինվորի պատիվը, որի հարդական փալլատակումները դարեր շարունակ չեն խամրել և առավել հասու են դրանք մեր ժամանակներում՝ Արցախյան ու Հայատանայան հերոսամարտերով: Հովհաննես Մկրտչի օրինակով խրախուսեց և պատվիրեց Հայոց Բանակի զինվորներին՝ երբեք ու երբեք չչարաշամել զինական դրությունը, այլ գործելով Աստոծ պատգամներին հավատարիմ, գենքը օգտագործել իմաստուն կերպով, միայն ու միայն Հայրենիքի պաշտպանության ժամին, որպեսզի այն չիմի մարդասպանության, այլ մարդապաշտպանության և հայենապաշտպանության գործիք:

«Սիրելի և քաջարի զինվորներ Հայոց բանակի,

Կյանքում այս պահը պիտի չմոռացվի: Առաջին անգամն է, որ ևս գտնվում եմ հայկական բանակի մի ջոկատի առջև, Գյումրի քաղաքում: Աշ միայն իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոս, այլ նաև որպես հոգևորական էս, առաջին անգամ լինելով իմ կյանքում, նայում եմ հայ բանակի զինվորների աշքերին, տեսնում եմ նրանց կեցվածքը և նրանց միշից մեր Հայրենիքի ապահովության և անկախության պահպանումի ու պաշտպանության գրավական եմ տեսնում: Բանակը երկրի ողևացուն է: Աշխարհում պետություններ, ժողովուրդներ, որոնք իրենց հայրենին հողը ուզում են պահել իրենց ազգային անկախության գաղափարականին մեջ և իրողականորեն այդ անկախությունը արտահայտել կյանքում, նրանք ուժ են տալիս, զորացնում են իրենց բանակը, որպես պաշտպանության այնպիսի հավաստիք, որ ոչ մեկ թշնամի համարձակի այդ Հայրենիքին հողը բռնաբարել և ժողովորդը իր ազատության մեջ կաշխանդու:

Հայաստանի Հանրապետության հոչակումից մինչև այսօր, 1991 թվականի սկզբնեամբերի 21-ից մինչև այսօր, դուք գործում եք, ապրում եք, շնչում եք Հայոց Եռագույնի ծածանումին ներքև՝ անկախության Դրոշին ներքեւ: Այդ Դրոշը պաշտպանելը ձեր պարտքն է սրբազն: Մենք, իրեն Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս, երբ Մեր առաջին Հովկապետական այցելությունն ենք տալիս Ծիրակի թեմին և Գյումրի քաղաքին, անհուն սիրով ողջունում ենք ձեզ բոլորի և ձեր մեջ տեսնում ենք նայ ժողովորդի արիության նոր վկայությունը: Մի ժողովորդ, որ հոգեկանորեն իր արիությունը չի կարող արտահայտել, այդ ժողովորդը իրեն պետություն և ազգ երկար չի կարող ապրել: Բնականորեն ես կկարողանայի շատ ավելի երկար խոսել զինվորության առաքելության մասին, բայց վստահ եմ, առաջով եմ, որ դուք պետք չունենա՞լու իմ խոսքին, որովհետև դուք գիտակցությամբ եք ենել այն պարտավորությանը, որ նայ զինվորի պարտավորությունն է:

Միայն ուզում եմ ձեզ մի խոսք ատել. դուք ձեր զենքերի առաջինը և բարձրագույնը նկատեք հոգեկան, բարոյական, ազգային, հայրենասիրական ոգին: Դա' է, որ ձեր մցու զենքերին արծեք կտա, դա' է, այդ հոգեկան արիությունը, ազգային զիտակցությունը, Հայրենիքի պաշտպանութքը, որ ձեր զենքերին իմաստ կտա, այլապես ձեր զենքերը մեծ նշանակություն չւնեն և չեն կարող այն նվիրականությամբ գործածին, ինչ որ բանակի մեջ կործածվեն վասն հայրենաց, վասն հավաստ և վասն հավերժության մեր ազգի: Ուզում եմ նաև ձեզ հիշեցնել, որ երբ նայ ժողովորդի գոյության հայրը խնդրու առարկա էր 451 թվականին, երբ Հայոց սպարապետը՝ Քաջին Վարդան, նեավեց Ավարարի դաշտ, նա կովի մտնելուց առաջ իր ամբողջ բանակով հայորդվեց նորը Պատն Երեցի պատարագով և հայորդության մասուցման:

Երբ դարեր ետքը և այս դարու սկզբին՝ 1918 թվականին, Հայրենիքը վերատին պաշտպանության պետքը զգաց, երբ Սարդարապատան դաշտի վրա նայ զինվորը, զրեթե ամեն մարդ զինվոր դարձած, իր կործքը բացեց և թշնամու դիմաց կանգնեց անխորսակելի պատվարի հման, այն առեն այդ բանակի կողքին եր մի դարարացի հոգևորածիան, Էջմիածնի հոգևորականության փառքերից մենքը, որ թողեց գրիչը, թողեց համաշարանը, թողեց Էջմիածնի Մայր տաճարը և գնաց, զինվորների կողքին կանգնեց և նրանց Պատն Երեցի ողին համաձայն ուժ ներարկեց, հոգեկան ուժ, որպեսի նրանց ֆիզիկական ուժը արժեքավորվի Հայրենիքի պաշտպանության գաղափարովը: Դա Գարեգին Հովկապետական էր, որ նետո եղավ

Կիլիկան Արոռոի Կաթողիկոս, որ մեր պատմության մեջ կմնա ո՛չ միայն իր գրիչովը, ո՛չ միայն իր գիտական, գրական աշխատասիրություններովը, այլ նաև իր հերոսական մասնակցությամբը Հայոց բանակի կողքին՝ վասն պաշտպանության Հայրենյաց Հայոց:

Հարգելի հրամանատար զորավար, ձեր անձի մեջեն Մենք կողշունենք բոլոր մեր այն բաշարի երիտասարդները, որոնք իրենց կյանքը ընծայում են մեր Հայրենիքի պաշտպանության Երր 1940-ական թվականներին, Համաշխարհային երկրորդ պատերազմին, հայ զինվորները գնում էին պաշտպանելու համար իրենց Հայրենիքը, մեր գրագետներից Մուշեղ Գալոյանը «Զորի Միրոն» իր վեպի մեջ գեղեցկորեն նկարագրեց, թե ինչպես մի հայր զավակին առաջնորդում էր դեպի կայարան, որպեսզի այնտեղից շոգեկառքով նա զնա Հայրենական պատերազմի: Այն ատեն ձեռքը դրեց իր զավակի ուսին և ասեց այդ հայ հայրը. «Տղաս, դու ասկյար չե՞ս, դու զինվո՞ր ես»: Զինվորն որիշ է, ասկյարը որիշ է: Ասկյարը մարդ կապանէ, զինվորը մարդ կապաշտպանէ: Հետևաբար, դոք մեր հայ ժողովրդի ամենեն ամուր գոյության կովաններից մեկն եք և ես ցանկանում եմ ձեզ իմ ողջ սրտից, որ դոք շարունակեք գիտակցորեն, նախանձախնդրորեն բարոյական բարձր գիտակցությամբ արժեքավորել ձեր զինվորությունը: Այնքան նվիրական է այդ ձեի զինվորությունը, որ քրիստոնեական Եկեղեցին մեզ՝ հոգևորականներիս ներկայացնում է որպես հոգևոր զինվոր: Հավատարմություն, հնագանդություն, պատրաստակամություն և զոհողության գերագոյն աստիճանի գիտակցություն: Սնավասիկ ձեզ այդ իմաստով կարող եմ ասել պաշտոնակիցներ: Մենք Սատծուն ենք զինվորագրվել, Եկեղեցուն, դոք՝ Հայրենիքին: Եկեղեցին և Հայրենիքը անբաժան են եղել մեր հայ կյանքում: Շարունակեցեք այդ առողջ և պատվաքեր զինվորության զայլափառով ապրել և գործել իբրև Հայոց բանակի զինվորներ: Թող Սատված օրնին ձեզ բոլորիդ և ձեր նման բոլոր հայ զինվորներին: Թող Սատված ձեզ ուժ տա՝ հոգեկան ուժ, բարոյական ուժ, ազգասիրության գիտակցություն և այն ատեն ես կիավատամ, որ Սատված ձեր ձեռքերը կօրհնի, Սատված ձեր կյանքերը կապաշտպանի:

Թող Սատծու օրինությունը անպակաս լինի ձեր վրա և Սատծու աչքը ամենատես և Սատծու Սչը ամենակարող լինեն ձեզի առաջնորդ: Ամեն»:

Վեհափառի օրինությանը հաջորդեց կազմակերպված զինվորական շքերթ-տողանցը, որի ընդունողն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որից հետո ծալիկներ գետեղվեցին զորամասի բակում երկրաշարժի և արցախան ազատամարտի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի առջև: Այս մի-շոցին էլ Վեհափառը ծանրթացավ զինվորների կենցաղին և առորյացին:

Օրվա այցելությունների եզրափակումը եղավ Գյումրիի Վ. Ամենյանի անվան թատրոնի դահլիճում հանդիպումը քաղաքի մտավորականության և ղեկավարության հետ: Լեփ-լեցուն դամլիճը խոսուն վկայությունն էր հավատքի կենդանության և Մայր Եկեղեցու ո նրա Գահակալի նկատմամբ ունեցած սիրո և ակնածանքի: Վեհափառ Հայրապետի խորելով ասած, սա մի զրոյց էր և մտքի հաղորդության անպահոյն մի պահ ժողովուրդը ներկայացնող և ժողովրդի պատկերը հանդիսացող խավի հետ:

«Միրելի հոգևոր եղբայրներ, թանկագին արյունակից և հավատարիմ եղբայրներ և քոչքեր: Այսօրվան իմ ձեզի խոսելը պաշտոնական խոս-

քի, Հայրապետական պատգամի բնույթը չունի: Ուզում եմ, որ մենք բոլորս գրուցի նատենք իրար հետ, մտերմական գրուցի, սրտից սիրտ, մտքից միտք, հոգուց հոգի հաղորդությամբ: Հուետորական, պաշտոնական, պարագայական, հանգամանավոր, հաճախ ձևական խոսքերը կարող են մի որոշ տպավորություն խռովել, բայց ո՞չ սրտերը հոգել, ո՞չ մտքերը պայծառացնել և ո՞չ էլ կամքերը պրեկել: Խոսիլ առանց խոսակցելու ամբողջականութեն իր իմաստը չի գտնի: Խոսիլ՝ ունենդրողին ինքն իրեն հետ խոսիլ տալու նպատակով, այդ է բուն սահմանումը և ճշմարիտ նկարագիրը իրական խորքի: Եթե Հիսուս խոսում էր, ճշմարտությունն էր քարոզում, պարզաբանում, մարդիկ հաճախ ասում էին՝ ո՞վ է սա, ի՞նչ իրավունքը է խոսում, ոչ քահանայապես է, ոչ փարիսեցի իշխանավոր է, ոչ օրենքի մասնագետ դպիր է, ոչ թագավոր է, ոչ թագավորազարժ է, որիկէ՝ կուգա իր խորքին ուժին աղբյուրը, գաղտնիքը: Եթե խոսում էր, մարդիկ, ունենդրելուց հետո, ասում էին իրար. «Խշանանոթեամբ խօսի սա և ոչ որպէս դպիրըն և փարիսեցիք»:

Գործից չեր խոսում, աթոռից չեր խոսում, մականով չեր խոսում, սուրով, բանակով, նիզակով չեր խոսում: Հոգուց էր բխեցնում ճշմարտությունն Աստվածային և դա բաժանում էր հացի պես, հոգեսր հացի պես: Ամեն մարդ, որ ունենդրում էր նրան, ինքն իրեն հարց էր տալիս. ես ո՞վ եմ այդ խոսքերի հայելին մեջ, ե՞մ այն, ինչ որ պարտավոր եմ ըլլալ իմ սրտի թեզադրությամբը, և եթե չեմ այն, ինչո՞ւ չեմ, ինչ որ պարտավոր եմ ըլլալ: Մենք հաճախ խոսքը նկատում ենք որպէս վարագույր, մինչդեռ խոսքը հոսք է և ոչ թե մտածումը ծածկող մի վարագույր:

Այսօր ես ուզում եմ իմ տկար ուժերով ձեզ հետ գրուցի նատել խորքի այս հասկացողությամբ, և ոչ թե բեմի աթոռից ձեզ հետ խոսել: Հաղորդության, մտքի հաղորդության մի պահ թող լինի այս պահը:

Սուաշին մտածումը, որի մասին ուզում եմ ձեզ հետ գրուցել, այն է, որ ներկայում ամբողջ աշխարհում մի կրոնական վերազարտության շարժում է սկսվել: Որտեղ որ զնարք պատերազմներից հոգնած, նաևլան, ավելարակի, քանդումի երևուցներից այլս զգված, պատերազմի, նոր պատերազմի հավանականությունը այլս չտեսնող այս մարդկությունը շվարած վիճակի մեջ է: Այդ ամբողջ նոր բաղարակրություն կոչված իրականության մեջ, պայօքվան տեխնոլոգիայով, գիտությամբ, չոր գիտությամբ, առարկայի բնենությամբ հագեցած և առաս արտադրության մեջ եղող արևմտյան աշխարհի հագեցումի հասած ընկերության, կարող եմ առել նույնիսկ հոգացած վիճակի մեջ մարդիկ հարց են տալիս. ինչո՞ւ ենք ապրում, վասն ինչի՞: Կար մի փիլիսոփայություն՝ Էպիկուրյան փիլիսոփայությունը, որ ասում եր. «Կե՛ր, ա՛րք և որպաս լեռ»: Կյանքի մի հասկացողություն է սա. կեր, խմիր և զվարք եղիր: Բայց կյանքը ա՞յս է: Եթե այս է, ապա մենք ինչո՞վ ենք տարբեր որիշ էակներից, շնչող, զգացող, բայց ան-ասուն մյուս էակներից:

Ես հիշում եմ իմ փիլիսոփայության ուսուցչին, եթե մեր Անրիիխասի դպրելանքում փիլիսոփայության դաս էր տալիս և ջանում էր բացարձիկ, թե ի՞նչ է մարդկային կրաքարի նպատակը, ասում էր՝ եղջանկության որոնումը, և որ Ավետարանի բառերով «Երկնից արքայություն է», որ ի ներք ի մեզ է: Եվ հանկարծ այդ դասախոսը՝ Շահնան Պերպերյան, պատուհանից մյուս կողմ դարձավ և տեսավ կովեր, որոնք վանքի մտի պարտեզի մեջ խոտ էին ուսում. գարնան եղանակն էր, խոտն էլ առան

Գյումրիի դեմքանը բաշնա. հանդիպու բազմի հստակ





Գլուխի պատճենը քառն. Խոնջոված բարի հսկությունը համար




Վեհափառ Հայրապետ քննութեան և Գյումրիի զնոյի գինվորների տողանքը



Հանդիպության Գյումրիի երեսաների հետ



Փամբկի Կարողիկին եկեղեցում



Մասնակիութեա պարագանեա պարագանեա պարագանեա պարագանեա պարագանեա

և, հիշելով նախատերատյան շրջանի փիլիսոփաներից Հերակլիդեսին, ասեց. «Հերակլիդես մի օր ասել է, եթե երբեք երշանկությունը հաճույքին մեջն է, ինչպես չենք դառնա և ասի՝ ես կովկը ի՞նչ երշանիկ եմ, որովհետև կով են: Մենք չետակի տարբերություն ենք դեռու գգայական հաճույքի և հոգեկան երշանկության միջն: Եթե կյանքը միայն այդ է խմել, ուտել, զգարձանալ, ամեն մարդ կարող է ասել, ի՞նչ իմաստ կա ևս կյանքի մեջ. «Սարդոյ որպես խոտոյ են առողք իր, որպես ծաղկի վայրի՝ աճնույն ծաղկեց: Ընչէ ի նմա հողմ եւ ոչ է, և ոչ եւս երեսի տեղի նորա»—ասում է սաղմուերուն: Ոչ թե մարդն է խոտ, մարդու օրերն են խոտի նման, կուգան ու կերպան:

Մենք, հւտնաքար, պետք ունենք ազգովին և իրեն մեկ մարդ մտածելու այս նոր հանգրվանի վրա, մեր պատմական զարգացման պրոցեսի մեջ: Հայատանքը այսօր մի դարձակեսի առջև է գտնվում, զգո՞ւմ եք, թե ոչ չգիտեմ, բայց պարտավոր եք զգալ, եթե հայ եք և մասնակից, պատասխանատվության դերով մասնակից մեր Հայրենիքի վերականգնության այն կարևոր և կենսական գործին, որին լծվել ենք մենք որպես պետություն և Եկեղեցի, որպես համալսարան, որպես կրթական հարկ, որպես մասնավարժ, որպես արվեստագետ, որպես բանվոր, որպես զյուղացի, քաղաքացի, որպես վաճառական, որպես տնտեսագետ, որպես ճարտարարվեստի նվիրված մարդ: Յուրաքանչյուրն ունի իր պարտականությունը կատարելու համագոյակին այս գործի մեջ: Եվ կարևորը՝ ես ո՞վ եմ գիտնալու է, ազգը ո՞վ է գիտնալու է. «Մանի՛ր զեկ»,—Սովորի խոսք է:

Մենք տարի տասնյակ հազարներով երիտասարդներ հավաքվում են Եվրոպական որևէ քաղաքում և շորս-հինգ օր կրոնական խորհրդածության են նվիրում իրենք իրենց: Այս տարի, դեկտեմբերի 28-ից մինչև հունվար 2, Փարիզ քաղաքում հարյուր հազար քրիստոնյա երիտասարդներ և երիտասարդությներ հավաքվեցին, ձմեռվան այդ ցուրտ օդին, քնապարեկերի մեջ պառկելով, եկեղեցու կամարների ներքև: Խակ հախորդ տարին Մյունիստն ըստադի մեջ, Գերմանիա, ուրսուն հազար էր անոնց թիվը: 1997-ին, երկու տարի հետո, մեկ միլիոն երիտասարդներ, քրիստոնյա հավաքով առաջնորդված, պիտի համախմբվեն Հռոմում: Վասն ինչի՞: Իրենք իրենց նաև շենու և կյանքը արծնորելու համար:

Մենք, որ այժմ գտնվում ենք մեր Հայրենիքի շրջադարձին մեկ շրջանում, անկախություն ունենալը չի բավեր, անկախություն պահելն է կարևոր, անկախ Հայրենիքը ծաղկեցնելն է կարևոր, բարգավաճիկն է կարևոր, զարգանալն է կարևոր և ոչ թե ունենալն է: Անկախությունը չի տրվում, եթե մի որիշ պետություն, որիշ ազգ մեզի տար անկախությունը՝ ես նրա մեջ մի մեծ արժանիք չեմ գտնի: Մենք է, որ պեսոք է հոչակեն իրեն հայ, մենք է, որ պիտի լինենք նրա կնքահայրը և մենք է, որ պեսոք է լինենք նրա շինարարը, ճարտարապետը իրեն ամբողջ ժողովուրդ միանությամբ: Ացլա պիտի շրջադարձ ունենանք մենք ներքնապես, նոզեպես: Խնձնից մինչև անենեն պարզ հայր եթե երբեք հոգեկոխության միջից շանցնի անկախության առնդումից հետո, կնշանակի մենք ազգ չենք, այլ ամրույն ենք:

Բարեկամներ, ես փոքր երեխա եի, զյուղու էի և, ինչպես ասեցի Եջմիածնի Մայր Խորանի վրա, Գահակալության առաջին պահին, պատարացի ընթացքին, ես ձեզ նման հայրենի նողի վրա չեմ ծնվել, բայց Հայրենիքը իմ մեջն է ձնվել ա'ն օրից, երբ ես Այր, Բեն, Գիշը նաևաշեցի, ա'ն օրից, երբ իմ մորս օրորոցի մեջ լսեցի նրա երգը, թեն անզիտակից

կերպով, այն օրից, երբ իրեն պատաճի մեծացա գյուղի մեջ և իմ ուսուցիչներս, մեծ մայրիկից սկսյալ, ինձ մի երգ սովորեցրին, ազատության երգը.

Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի,
Եվ իմ անզոր թներով Ազատություն գրկեցի:

Եվ գտամք մենք այդ ազատությունը: Երազեցինք տասմայակներ շարունակ տեսնել այդ ազատությունը և ունեցանք, փառը Աստծու, և մենք պարտավոր ենք ազակերպվելու, պայծառակերպվելու: Այս բառերը մոռացվել են երեսն մեր ժողովրդի մեջ՝ հոգիով պայծառակերպվենք: Սուրբ ՀՀ-միաժինը, Մայր Արոռը մեր պայծառակերպության տեղն է, այն տեղը, որ Աստված իշավ և մեր հոգին մեջ Քրիստոս իր կնիքը դրավ: Այդ հողը նվիրական է: Կրոնքը մեր ամբողջ ազգային շարվածքին մեջը տարրացավ, անբակտեղիորեն միացավ, ընդելուզվեցավ, շաղախմբեց: Հարց տվել եք դուք ձեզի, պատմությունը ուսումնասիրել եք լրջորեն, եղել ե աշխարհում մի տեղ, երկրագունդի չորս ծագերում կա՞ արդյոք մի տեղ, եղել է մի ժամանակ, որ մարդկությունը եղած լինի և կրոնքը եղած չլինի: Չի եղել: Պատմաբաններ, ընկերաբաններ այդ են ասում: Գնաք Ափրիկե, կտևներ, որ բնութենապաշտ և ոգեպաշտ կրոնքներ կան տակավին: Կրոնքների ձևերը կան: Աստվածայինը, գերմարդկայինը, խորհրդավորը, անքմրդներին արտահայտելու եղանակները կտարբերին, բայց ոչ որ կարող է ենթեր Աստծու գոյությունը: Ո՛չ ոք կարող է մերժել Աստվածայինի ներկայությունը մեր մարդկային գոյության բոլոր շաղվածքին, կազմը վածքին մնչ: «Ամեն բանի վրա կարող եմ կասկածել,—ասել է Փրամսիացի փիլիսոփա Դեկարտը,—բայց չեմ կարող կասկածել կասկածելուն վրա՝ այսինքն չեմ կրեար հնավատալ բանի մը: Եթե անհավատ եմ, կնշանակի կհավատամ, որ անհավատ եմ: Առանց հավատքի ոչ ոք կարող է ապրել, բայց անհավատ մարդ գոյություն չունի: Տեսականորեն մարդիկ կրնան ճամարտակել, մտքով խաղեր խաղալ: Ես հիշում եմ, մեծ գրագետ, իսկապես շատ մեծ գրագետ Լուս Շանթը փիլիսոփայականորեն ինքն իրեն հայտարարել էր միշտ իրեն անհավատ: Բայց գիտե՞ք, երբ մահանում էր Բեյրութի մեջ, Լուս Շանթը կանչեց իր աշակերտին և իր վերջին վայրկյանները ապրեց Նարեկացին ունկնդերով՝ իր աշակերտին Նարեկացի կարդապ տվեց:

Մեր Եկեղեցին քրիստոնեական կրոնքին մարմնացումն է հայ կյանքի մեջ, հավատքի ուժականության աղբյուր է եղել մեր ամրող պատմության ընթացքում: Հարց եմ տալիս ձեզ, ինտ դուք էլ հարց տվեք ձեզ. Հիսուսի 12 առաքալմերը, խեղճ մարդիկ՝ մեկը ձկնորս, մյուսը մաքսավոր և ազն, ո՛չ զենք ունենին, ո՛չ գիտություն ունենին, ո՛չ բանակ ունենին, ո՛չ հեղինակություն ունենին, ո՛չ այլ իմացական պատրաստություն ունենին, ի՞նչ ուժով կարողացան հրանք ամրող աշխարհով մեկ քրիստոնեությունը տարածել՝ հաւաքարի ուժով: Սպաններ անոնց՝ հավատքի համար կմեռնեին: Ամեն մեկ քրիստոնյա, որ կրկնաւմ, հոռմեական կրկնաւմ, հոռմայեցի կայսեր և հոռմայեցի լաքեռնականների աշքերի առջև զազանների բերանների մեջ կհողովվեին, երբ մի քրիստոնյա աշխատ մահանար, հարցուր քրիստոնյա կծնվեր դիտողների մեջ: Նրանք հարց կտային. ի՞նչ մարդիկ են սրանք, որ իրենց հավատքի համար մեռնում են: Այդ հավատքն էր ուժը: Մեր հանհատակները, մեր հերոսները ինչո՞վ մեզ կտակեցին այդ հավատքի գոյությունը, եթե ոչ՝ իրենց հանհատակության վկայությամբ:

Բ դարի շնորհանրական Եկեղեցու հայրերից Խզմատիոս Աստվածագջացը ասում է. «Ես, եթե պահանջվի, պարտավոր եմ հացանատիկ դառնալ և գազանի բերանի մեջ իրը աղորիք աղվի, որպեսզի հաց դառնամ որիշենիր համար»: Մաս խորախորհուրդ հավատք...:

Մենք մեր Եկեղեցու դերը ճիշտ պետք է հասկանանք: Ես այդ Եկեղեցու համար ոչ մեկ փաստարանորյուն անելու պարտավոր եմ: Դիտեցեք մեր Եկեղեցին, դիտեցեք մեր քարերը, խաչքարերը, մագաղաքները, բոլորից ի՞նչ կզգանք՝ այնպես, ինչպես աղբյուրից շոր կյանենք, հավատք կզգանք: Երեկ եւ Հաղիձում էի, այդ ձորաբերանին, այդ լեռան պողովնի վրա, ի՞նչ հրաշագործություն է դա. «Երբ մարդիկ լուս, քարերը պիտի աղաղակեն» և քարերը աղաղակում են: Ես իմ աշքերով տեսա, 1966 թվականին Խորհրդային կարգերի տակ երբ տակավին կգտնվելը Հայաստանը, ես այն տեսն երեք անգամ եկել եմ Հայրենից, զնացի Մողեն վանք, այդ վանքի մեջ ես աշքերովս տեսա, որ վանքն ու Եկեղեցին ամբողջ հարդով եր լցված, բայց նույն այդ արերով ես հարդ շտես տեսա մարդիկներ, որոնք գալիս եին և մոմ վառում պատի վրա, դրամ: Բողոքում եին: Եկեղեցին չի կարող գերածվել հարդանոցի:

Սիրելիներ, շատ մարդիկ գտնվեցին, ուժեց մարդիկ գտնվեցին աշխարհում, որոնք մերժեցին Աստծու գոյությունը: Նիշշեն, գերմանացի մեծ Փիլիսոփան, ասեց. «Քրիստոնեական Եկեղեցիները պիտի վերածվեն Հիսուսի գերեզմանների»: Ուրիշ մեկն ասեց. «Կրոնը ափիոն է», «Արոնը միշոց է ժողովորդները շահագործելու համար»: Մեկ ուրիշ գիրք զրեց և զրբի վերնագիրն էր. «God is dead», «Աստված մեռած է»: Ուրիշը գրեց նրա դեմ, ասեց. «Yes, God is dead, but which God?» «Այո՛, Աստված մեռած է, բայց ո՞ր Աստվածը»: Քո շինած Աստվածը կմեռնի, բայց քեզ արարած Աստվածը կապրի, քեզ ստեղծող Աստվածը կապրի: Ուրիշ աստվածություններ ստեղծվեցին, զաղափարարանություններ, իդեոլոգիաներ աստվածների վերածվեցին: Հիմա տնտեսությունը, սպառողականությունը, տեխնոլոգիան տեսակ մը աստվածությունների են վերածված: Բայց այդ բոլորը կերպան: Մենք մեր պատմության մեջ եկած ենք այն պատմին, այսօր, եթե երրիցեւ պատմությունը կարդալ գիտենք և հշանենք կարդալ գիտենք, կգանք այն եզրակացության, որ մենք այսօր վերածնության շրջանի մը մեջ կապրիմք:

Աստված տված է մեզի մի նոր ճանապարհ՝ հայորեն բացելու, հայի կյանքով բացելու և այդ ճանապարհի մեջ մեր հավատոք վերստին ուժականորյան բերելու: Եթե այդ հավատքը ներթափանցի մեր հոգիների մեջ, մեր երեխաները միշտ կյանեն մարդուր: Թող մեզնից լսեն, մեր կյանքով իմանան, թե հավատեականի մասնիկն ենք մենք՝ «Եւ արար Աստուած զերիին և զերիիր: Եւ երկիր էր աներեաց և անպատրաս», քանի էր, «Եւ ասաց Աստուած, եղիցի լոյս, և եղել լոյս Եւ եղել երեկոյ և եղել վաղորդապն, օր մի»: Աստվածաշնչի առաջին զրոյիքը բանաստեղծությունների բանաստեղծությունն է: Ես եկ իմանում եմ, որ աշխարհն չտեղեցվեց վեց օրվու մեջ: Աշխարհն ստեղծվեց հողովով ջոռվ, դարերի ընթացքում: Աստվածաշնչն ասում է. «Մարդն չէր, որ զործէր զերիիր», «Եւ երկիր էր աներեաց և անպատրաս» (Ծննդ. Ա. 2):

Քանի էր. մարդն էր, որ իմաստ տվալ տիեզերքին: Առանց մարդի ծառն ի՞նչ է, առանց մարդի բարն ի՞նչ է, առանց մարդի ջուրն ի՞նչ է: Մարդն է՝ պատկը տիեզերքի ստեղծագործության: Մենք Աստվածային կայծ ունինք մեր մեջ, Աստվածանմանորյուն ունինք մեր մեջ: Մոռացել ենք այս

բանը: Մենք միայն մարմնի մեջ ենք մեացել, մոռացել ենք մեր մեջ եղող կմիքը, դրոշմը, պատկերը Աստուծո: Երբ Հիսուս եկավ, այդ պատկերը, որով մենք արարվել ենք, սրբեց, փոշին դուրս բերեց և մեզ վերատին հայտնաբերեց այդ պատկերով: Ահավասիկ այդ պատկերը դրոշմվեց հայի ճակտին այն օրվանից, երբ Հայոց Տրդատ արքան և Լուսավորիչը՝ Գրիգոր Պարթևը, միասնաբար հոչակեցին բրիտոննեությունը որպես պետական կրոն մեր Հայաստան աշխարհի, 301 թվականին:

Եղբայրներ և բույրեր, երե կարդաք Սգարթանգեղոսը, Հայոց Դարձի պատմագիրը, պիտի տեսներ ի՞նչ զեղեցիկ պատկեր է դա: Ասում է, առասպելական ոնով, Հայոց Տրդատ արքան զնաց ի վեր՝ ի Մասիս, յոթ ժամներ դրավ իր ուսին, ամեն մեկ ժայռը յոթ մարդով կարելի չէր շարժել, բերավ և հայոց եկեղեցու հիմքը դրեց: Աշխեն թագուհին, Խորովդուխտ արքայարույրը իրենց թեհեզյա զգեստները գոզնոցի վերածած հող թափեցին այդ հիմքում: Ի՞նչ խորհրդավոր պատկեր է, ի՞նչ ներշնչողական պատկեր, և շինականները, զյուղացիները, ամբողջ ժողովուրդը աշխատեց, որ այդ եկեղեցին շինվի: Այսօր մենք պատրաստվում ենք տոնելու 1700-ամյակը մեր բրիտոննեացման, որպես պետական կրոնը հոչակման: Ես մի գրքով եմ գրել «1700-ամյակը նոր Հոգեգալուս»: 1700-ամյակը մեզ համար, հայ ազգի համար Սուրբ Հոգվույն վերատին թափանցման, մեր հոգիների մեջ ներթափանցման և մեր հոգիների կենավորման, կաղապարման ուժ է տալիս: Մենք ամեն ինչ պիտի անենք, որ պատիվը մեր ժողովրդին՝ վերածեմք շարժումի, կյանքի, գործի: Աշխարհում չկա մի որիշը, որ 1700-ամյակ կարենա տոնել: Մենք եղել ենք առաջինը, բայց այսօր չիմենք Վերջին գործի: Ոչ թե պատմությամբ պիտի հպարտանանք, այլ պիտի կարենանք մեր ներկան արժեուրել:

Ահավասիկ իմ մտորումները, որ առաջին հանդիպմանը ես ձեզ հետ բաժանեցի և կուգեմ, որ զանք այն եզրակացության, թե այսօր, Հայաստանի անկախության դարաշրջանին, իմ տկար անձին վիճակից, կրել կարողի-կուսական լուծը: Ես շատ ծանր լուծի տակ եմ դրել իմ զլուխը: Ամեն մարդ սպասում է, բայց այդ բոլորը կարելի է միայն համայնությամբ, ամբողջությամբ, զործակցությամբ, սերտակցությամբ, մասնակցությամբ, ներդաշնակությամբ, համակարգումնով: Խներում եմ օգնել ինձ: Մեր գործերը անհատների ծնունդ չեն, հավաքականության ծնունդ են: Գիրը չգտնվեց միայն Մեսրոպ Մաշտոցով, գիրը գտնվեց Մեսրոպ Մաշտոցով, Սահակ Կաթողիկոսով, Վուաշշապուհ թագավորով: Քրիստոնեությունը մենք չընդունեցինք միայն Գրիգոր Լուսավորիչով, այլ Տրդատ թագավորով և որիշներով՝ ամբողջ ժողովրդով:

Եարեկամներ, եկեք այսօր Շիրակա թեմի մեջ, որ գտնվում եմ այսքան ժամանակ, եկեք բոլոր անցնենք մի փոփոխության, բարեփոխության՝ հոգեփոխության միջից: Եղորս, ինձնից սկսյալ մինչև ամենեն պարզ դպրական աշակերտը, որ այսօր տեսա, մինչև գինվորականը, որին ողջունեցի թի առաջ, մինչև այն տնագուրկ լենինականցի հայը: Գացի-տեսա տակավին կիսավեր և կամ անավարտ տեները, որոնք շինվում են: Ամեն մեկը այսև թող դադարի հապառ ավաղելուց, արտավելուց՝ եկա՞ն, կոտորեցի՞ն, շարդեցի՞ն, բանդեցի՞ն: Այդ հոգեբանությունից պիտի դուրս գանք: Դադարենք այլև շարդված ազգ լինելուց: Վերածնված ազգ ենք, անցյալի դեպքերից մեր միտքը սևեռենք ներկայի վրա և մեր ապագայի վրա: Ոչ ոք

կարող է արևը տեսնել, բայց ոչ ոք կարող է առանց արևի որևէ մի բան տեսնել:

Ձե՛ր կարող Սատծուն տեսնել, բայց չեր կարող առանց Աստծու ուրիշ երևողքներ տեսնել և հասկանալ: Խնջակս ասել է մի արվեստագետ՝ «Տիեզերքը ամբողջ հագուստն է, հանդերձն է Աստծու»: Նայեցեք տիեզերքին: Խսկ ես ասում եմ. «Հայաստանը գգեստն է Աստծու, նայեցեք ձեր շորջը և Աստված պիտի տեսնեք»: Բացե՛ք քարերը, և եկեղեցին, զԱստված Հրանց միջից կատնեք, բացե՛ք գիրքերը՝ Աստծու խորսն են զանգահարում և դղանջում: Մեկ խորսով, մենք Մայր Սրբու Սուրբ Էջմիածնին Վերանորոգության շունչով պետք է նայենք և Էջմիածնի լուսը սնուցող ձեզ բոլորիդ բաժին լինի, բայց դուք եկ անցնեք հոգեփոխության միջով: Երբն ազգ այլս դառնանք պետականորեն մտածելու եղանակին: Այդ եղանակը ինձ համար հետևյալն է, թողնենք մանր-մունք, ճճիմ, ժամանակավոր, անցավոր և մաշեցնող հարցերը: Բարձրանանք, վերստին և ճշմարտապես լինենք ազգ, պետություն, Եկեղեցի՝ մենք ազգ ենք, մենք Եկեղեցի: Սատված մեզ տվել է այդ ուժը, մենք օգտագործենք այդ ուժը: Իմ այս խորսը ես փակում եմ ձեզ հրավիրելով այս մեծ շրջադառության, հոգեգարձության, որ մեր արմատներից եկող ավիշին հետ հաղորդությունն է, այսինքն մեր հավատքին ակունքներից շրի գորությունը մեր կյանքի անդաստանի մեջ մուծենք: Պետք է բացվենք, որպեսզի ընդունենք այդ քաղցրությունը, ինչպես ասում է մեր Պատարագը. «Մատի՛ք առ Տեր և առեք զլոյն, Ծաշակեցեք և տեսէք, զի բաղցը է Տեր»: Ձեր կարող լուսը տեսնել, եթե շրացեք ձեր աշքերը, չեր կարող իմանալ հավատքին ուժը, եթե շնաշակեք այդ հավատքը: Հետևաբար օրն է Վերազարդութիւն, օրն է հայրենաշինության, օրն է պետականության գորացման, օրն է Եկեղեցու միասնականության, օրն է հավատքի Վերածաղկման:

ՄԱՅԻՍ 7. ԿԻՐԱԿԻ

«Զմիմեանց բեռն բարձէք,
և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի»:
(ԳԱՂԱՏ. Զ. 2)

Վաղ առավույյան Վեհափառ Հայրապետն այցելեց և զննեց Գյումրիի խոնարիված Եկեղեցիները՝ Ս. Նշան, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ամենափրկիչ, ապա հոգևոր դասի, տեղական իշխանության Անրկայացուցիչներ համագագագետն Անդրանիկ Քոչարյանի, Գերագոյն խորիութ քարտուղար Վարագուան Ավոյանի, Գյումրիի քաղաքապետ Միքայել Վարդանյանի և այլոց հետ մուտք գործեց թեմի առաջնորդանիստ Յոթվիրաց Սուրբ Աստվածածին Եկեղեցի, որտեղ հավատացյալների բազմությունը ուրախության արցունքն աշքերին և գոհության աղոթքը սրտում ու շրջներին դիմավորեց իր հոգու Հովվին ու մեր Եկեղեցու բահանայագետին:

Այսուղեղ օրվա պատարագին էր թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիածյանը, որի՝ Վեհափառին հայտնած շնորհակալական խորսից հետո Վեհափառ Հայրապետը Եկեղեցու սրբազն Խորանից հոգևոր արիության, բաջության և Աստոծ բարի կամքի մերքու ու Սուրբ Եկեղեցու բովանդակությամբ ապրելու հրավիրեց Շիրակի հավատացելոց միջոցով ողջ հայ ժողովրդին.

«Հավատացյալ ժողովուրդ Շիշակա թեմի,

Այսօրվա իմ կրոնական խորին անցնելոց առաջ ես իմ առաջին խոսքը վերաբարում եմ դևակի Աստված, դեպի երկինք, և փառք ու գտնութեան եմ տախի մեր Արարտին, կյանքի բաշխիչն, Երկնավոր Հորը, որ իմ շնորհ արեց, պատիվ ընծայեց այսօր ձեզ են աղոթակից լինելու Սուրբ Աստվածածին Յորվիրաց եկեղեցում, առաջին անգամ լինելով իմ կյանքում և իմ առաքելության դաշտում որպես նորբեանի Ամենայն Հայոց Կարողիկոս: Այս Պատարագը և այսօրվա հոգեոր խորը չեն կարող սովորական մի դեպք լինել իմ կյանքում: Այս Պատարագին և այսօրվան խորը ես ուզում եմ ձեզ են միավիճ Աստծու փառք տալ, որ Նա Իր ամենատես աշրով միշտ հովանի և պահապան է եղել Շիրակա աշխարհին և նրա ժողովը դիման: Ես սրտի պարուր եմ զգում իմ խորին շնորհակալությունները և բարձրագույն զնանատանը հայտնել ձեր հոգեոր առաջնորդին՝ Տեր Գրիգորի արքականիկության, թեմական խորիութին, ինչպես նաև մեր Հայրենի պետության ներկայացուցիչներին համանգաղեատին Շիրակա հանաւեցի, բաղաքավետին Գյումրիի և բոլոր երանց օգնականներին, որոնք լծիւ են նոր Հայրենիքում նոր լուս բերել, վիրավորյալ Հայրենիքին դարմանում բերել: Ազգակերտութիւն, պետականութեն ինքնարտահայտության ու արձանապատվության զգացումը և գաղափարը ներարկել մեր ժողովրդին հայրենաշխնորհյան միշտից: Ես ողջունում եմ նաև այստեղ մեր սիրելի եղբայրներին Հայ Կարողիկն և Հայ Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնց ներկայության մեջ ես տեսնում եմ իրենց սերը և իրենց հարգանքը հանդեպ Մայր Եկեղեցուն՝ Առաքելական Սուրբ Եկեղեցուն Հայատանյաց:

Սիրելիք, այսօրվան իմ խորի բնարան ընտրել եմ քիչ առաջ այս քեմից կարդացված Հովհաննեու Ավետարանի մի հասկածից, մի խոր, որ իմ հոգու խորքում շատ խոր արձագանք է ունեցել և վստահ եմ մեր սիրելի կյանքերի մեջ: Հիսուս ասեց. «Որ զբանն իմ լու և հաւատայ Այն, որ առաքեացն զի՞ւ ընդունի զիւան յախոնեական: Զի ոչ խնդրեմ զիւան իմ, այս զիւան այնորիկ, որ առաքեացն զի՞ւ»:

Հիսուս ժողովրդին ասում է. «Նա, ով իմ խորերը կըսի և կհավատու Նրան, ով իմ ողարկեց, նա հավիտեանական կյանքին մասնակից կդառնա, որովհետև ես իմ կամքը չե, որ արտահայտում եմ իմ խորերի միշտից, այս կամքը Նրա, ով իմ առաքեց»:

Երրայիցի ժողովուրդը Հիսուսի մարդեղության օրերին, երբ Նա երեսերեք տարիներ ապրեց այս երերի վրա՝ շա՛տ-շա՛տ խորեր եր յսել, Աստծու անոնց շատերն են խոսել, մարգարեներն են խոսել, պատրաստել են ժողովրդի միտքը, սիրու, կամքը, ընդունելության զգայուրանը զայիք ամրողական և կատարյալ հայտնության Աստուծո, որ Քրիստոսի անձն էր, կյանքն էր և խորը էր: Բայց ժողովրդի սիրու տակամին կարծ էր, չուներ այն կերպնեկալ վիճակը, որի մեջ Աստծու խորը կարող լիներ հրովարվել անծննելի հատուկ կերպով: Տեսեք. ի՞նչ է առել Հիսուս. «Ես եմ հացն Կենաց», ոչ թե դա է հացն Կենաց: «Ես եմ Շանապարմը» և ոչ թե այստեղ է հանապարմը: «Ես եմ Կյանքը» և ոչ թե Էնտեղ է կյանքը: «Բանն մարտին եղի»: Խորը Աստծու մարմին զգեցավ, մարդ եղավ մեզ հման, որպեսզի մեզ ամի Աստծու հման: Դա է ամրող բրիստության իսկությունը: Աստված յոթերորդ եկեղեցում առանձնացած մի ուժ չէ,

Աստված կա, դոր ոգեք կամ չուզեք, բայց հարցն այն է, Աստված կա՞ ձեր կյանքում, թե՞ չկա ձեր կյանքում : Այդ է մեր ինմանական պարտավորությունը որ որպես քրիստոնյա ժողովորդի: Եթե եղել է այն պատմական փառավոր իրողությունը, որ մեր ազգը պետականորեն, ազգովին ընդունել է զՔրիստոս իբրև ճշմարդի արտահայտությունը Աստծու, եթե երբեք նա ընդառաջեկ է Աստծո ճշմարտությանը, ընդունել է այդ ճշմարտությունը և հոչակել է քրիստոնեությունը պետական կրո՞ն բոլոր ազգերի մեջ լինելով առաջինը, դա մեզ կղճի լորջ և ծանր պարտավորության առջև :

Մենք չպետք է ապրենք միայն ինչատակային կյանքով, որ եղել ենք առաջինը, այլ այսօր ե՞նք, թե՞ չենք: Որքա՞ն ենք, ինչքա՞ն անկանությամբ, և քրիստոնեությունը մեր կյանքում ինչպե՞ս է արտահայտվում մեր առօրյա կենացաղում: Դա' է մեզ համար ինմանականը: Այսօր, երբ ահավասիկ մի ամիսէ ի վեր մեր ազգը ինձ կոչել է այդ ծայրագոյն, բարձրագույն, բայց միանգումայն և ծանրագոյն պարտավորության, որպես Ամենայն Հայոց Կարողիկոս, ես ոչինչ եմ, եթե ոչ արձագանքն Աստծուն՝ ձեր բոլորի ունկնության համար: Ես փոխանցողն եմ. հեղինակը ճշմարտության՝ Աստված Խնքն է, կոտակողը մեզ ճշմարտության՝ Քրիստոս Խնքն է, զայն մեզի որպես Սուրբ Ժառանգ բողոքողը՝ մեր սորբ հայրերն են: Աստված խոսեց, Աստված գործեց մեր Հայրենիքում 1700 տարիներից ի վեր: «Ան, որ կըս իմ խոսքը և կիսավատա հրան, ով իմձ առաքեց, ևս հավիտնական կյանք կընդունի», չմոռանաք այս խոսքը: Մենք այսօր եկել ենք այստեղ Շիրակա թեմին հոգևոր սիրոտ հանդիսացող Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ ներշնչվելու համար մի անգամ ևս և հաղորդ դառնալու այն կյանքին ու այն ճշմարտության, այն խոսքին, որ զայսի է Ավետարանից՝ Քրիստոսաղբյուր այն ակունքից, որտեղից ճշմարտությունը կենդանի և կենդանարար ջորի հնան, կենդանի և կենսատու հացի հնան բաշխվում է:

Ես ոգում եմ այսօր գործնականությեն մի երկուցի անդրադառնալ, որ իմ 43 տարիների հոգևորական կյանքում հաճախ պատահել է և ոգում եմ այսօր այդ փորձառությունն ձեզ հետո բաժանել: Երբեմն մարդիկ իմձ ասում են՝ «Հայր մեր» աղոթքում, Տերուեական աղոթքում, երբ ասում ենք «Եղիշեն կամք Քո», որտե՞ղ է այդ կամքը, ինչպե՞ս իմանաքը Աստծու կամքը: Այսօրվան մեր բնարանի մեջ վերջին տողը չմոռանակը. «Ոչ զեամս իմ, այլ զեամս այնորիկ, որ առարեցն զիս»: Ո՞ր է այդ կամքը Աստծու: Բաց զիրք է այդ կամքը, եթե կարդալ եր իմանում Ավետարանը: Քրիստոս Աստծո կամքը հայտնել է բոլորիս, մենք, սակայն, զգայնո՞ւն ենք, ընկապո՞ւ ենք, ընդունո՞ւն ենք այդ կամքը Աստծու և խառնո՞ւն ենք եղ կամքը մեր մեջ՝ մեր կամքի հետ: Մեր կամքը նրանո՞վ ենք դրոշմում, նրանո՞վ ենք դեկանում. բե մենք ոգում ենք անել այն, որ մեր պարագայական ցանկություններն են այսօրվան հետ եկող, հովի հնան եկող, հովի հնան գնացող: Որտե՞ղ է մեր կեցվածքը Աստծո կամքի նկատմամբ:

Եթե դոր կարդար է եռան քարոզը Հիսուսի, Մատթեոսի Ավետարանի և գլխից մինչև է գլուխը, այստեղ կտեսներ ճշմարտության առատանու ադրբուրը: Այդ փոքրիկ բաժին Ավետարանի՝ մեր ժողովրդահոգի, Աստվածաաշու և հայրենապաշտ Հայրապետներից Խրիմյան Հայրիկը կոչել է «Մարգարիտ երկնից արքապոթեան»: Այդ երեք գլուխները Ավետարանի, որոնք երբ կառդացվեն բաց հոգով, ուաց մտրով, բաց սրով, մարդս կկերպարանափոխիսի, մարդս Աստծո հնմանի: Այդ տողերից մեկն են մեջքերում են և այդ տողի մեջ կա ամբողջ Ավետարանը խտացված. այդ տողը Հիսուս Խնքն է մեզ

ասել. «Թնջ որ ցանկանում ես, որ ուրիշը անի քեզ համար, դու արա նոյնը նրա համար»: Սրա մեջ են խոտացված, ասում է Հիսոս, ամբողջ օրենքի գրքերը Հին Կտակարանի և մարդարեները: Ըոլորին միտքը այս է սերը չի կարող ատելություն ծնկ, թզենուց փուշ չի ծնվի, խաղողից տատասկ չի բռնի, սերը Աստծու մարդու կրաքարացնի, մարդու ճշմարիտ մարդ կանի: Որտե՞ղ եք դուք տեսել, որ սերը ատելություն ծնի: Առեք դուք արվեստագետին, նկարիչին, բանաստեղծին, երաժշտին, քանդակագործին. նա սիրել է իր նկութը, ամբողջ սերն է դրէ իր առաջանդի հետ: Ա՞ր մեկ ստեղծագործ միտքը ատելությամբ կարող է ստեղծագործել՝ ո՛չ մեկ: Ատելությունը կրանդի՛ սերն է, որ ամբողջ կյանքին իմաստ կտա: Կյանքին երջանկության աղբյուրն է այդ սերը և, եթե չես ուզեր, որ մարդը բեզ չարիք անի, դու չարիք մի անի:

Երկրորդ, սիրելի եղանակներ և բույրեր, Բանը խոսք իմաստով կթարգմանվի, բայց գրաքար իմաստով բանը խոսքը չէ միայն՝ ըստ կողմեմ բառացի խոսքը: Բանը կյանքն է. «Եւ Բանն մարմին եղել, և բնակեաց ի մեզ», մեր մեջ բնակվեց: Հետևաքար մենք կոչվել ենք իրեւ քրիստոնյա հայ ժողովորդ այդ կյանքը Աստծու՝ մեր կյանքի հետ խառնել, երկինքը երկրին միացնել: Եվ քրիստոնեությունը կամ Հայ Եկեղեցին համբուլու է Աստծուն և մարդկության, համբուլու է Աստծուն և մեր Հայունիքին: Այսպիսի գիտակցությամբ պետք է մենք զինվենք, այսպիսի գիտակցությամբ պետք է որ մեր կյանքը ապրենք: Բնականորեն ես շատ լավ եմ իմանում, շատ մոտից եմ հետեւել Ծիրակա թեմի մեր ժողովրդի կրած տառապանքներին, նեղություններին, ավերածության, երկրաշարժի իրեւ հետևանքը: Այս Եկեղեցում եմ եղել, բոլորդ հավանաբար հիշում եք, այդ աղետից տաք օր ենքը և եկել եմ երշանկանիշատուկ և անմոռանալի Վազգեն Ա. Կաթողիկոսին հետ միասին՝ տանելու ձեր ցավը, միասին բաժնելու ձեր բոլոր նեղությունները և միասին աշխատելու նեղությունների դարմանումին համար:

Ահավասիկ մոտավորապես յոթ տարիներ են անցել և այսօն ձեր բոլորին ունեմ հասուկ խոսք իմ ապրումիս, իմ համոզումիս արտահայտությունը եղող խոսք: Մենք պետք է այլևս դադարենք այն նոգերանությունից, որ ողբի հոգերանությունն է: Այն նոգերանությունից, այն վերաբերումից, որով միայն նայում ենք այն բոլոր ավերածություններին, ցավում ենք, դժգոհում ենք, բամբասում ենք: Եղանակներ և բույրեր, եկեր վերջ տանք այդ հոգերանությանը և լծվենք Աստծու տված մեր այս ձեռքերով մեր Հայունիքը և մեր ավերակները վերաշնելու նվիրական և սուրբ գործին: Մարդը իր կոշումով Աստծու գործակիցն է: Աստված կգործի, բայց մարդոց միջոցավ կգործի: Աստծու Որդին որ իշավ, մարդիկ ընտրեց, առաքյալներ ընտրեց և նրանցով գործեց: Դո՛յք եք Աստծու ստեղծագործության մասնակիցները: Մեր ավերակները վերաշնելու պարտավորությունը մեր բոլորինն է, ինձ էլ մեջը նկատի առնելով և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Բայց ես ուզում եմ ի սեր առողջության, ազգային, մարդկային առողջության, որ դուք պատասխանատու զգաք վերաշնուրության գործին և ուրիշից միայն շապանք և շակնակներ այն գործո, որ մերը առաջին հերթին մերն են:

Երկրաշարժը պատահեց նաև աշխարհում ուրիշ երկրների մեջ: Նրանք էլ վերը ստացան և իրենց միջոցներով իրենց վերքերը դարմանեցին: Մենք այսօն այլևս վերաշնուրության, վերակազմակերպումի հոգերանությանը դրական գործի, աշխատանքի պետք է լծվենք: Անզին դադար տանք, ձեռքին ուժ տանք, դժգոհության վերջակետ դնենք և կամավոր ծառայության ամբող-

ջական իմբենածայտմի դուռները բանանք մեր կյանքի մեջ: Ասեմ ձեզ, դրանից ավելի առողջարար սկզբունք չկա կյանքու:

Գիտեր, մի օր ի՞նչ պատահեց մի քաղաքում, երբ հայերը ցեղասպանությունից պատված խլաւեների, խրճիթների տակ էին ապրում, թիթեղաշեն, տախտակաշեն, ժամանակավոր տների մեջ էին ապրում: Այդ թաղի դեկավարները մի գիշեր կրակի տվեցին ամբողջ տարածքը: Ժողովուրդը ստիպեցավ փախսել և հարկավորության տակ մնոր շենք շինեց: Դա ժխտական ճանապարհով դրական արդյունքի հասնելու եղանակ է: Աստիճանաբար մենք պիտի լծվենք դրական, գործնական, շինարար այն աշխատանքին, որով կարենանք լսել ողջ աշխարհին, մենք՝ Շիրակի ժողովուրդի զավակներս, կատարում ենք մեր պարտքը, հրամեցնեք, դուք ել կատարեցնեք ձեր պարտքը: Բայց առանց քր պարտքը կատարելու, մի սպասեր որիշին, որ նա կատարի իր պարտքը ընկ համար:

Սկսելով իմ ացեղությունը Բազմաբերդ գտնից, անցա Թալիհ, ապա Սառնաղբյուր, այսուհետև Արթիկ, զնացի մինչև Չերակապ և Աշոցք, գնացի ամեն տեղ, որովհետև չեմ ուզում ժողովուրդի մասին մտրով մտածել: Ուզում եմ տեսնել, նրա հետ հաղորդվել, նրան փոխանցել կենդանի հաղորդությամբ Աստծու պատօնամները:

Պիտի երբամ Սպիտակ, պիտի երթամ Վանաձոր, ճանապարհին Զարդի Զոր պիտի իշնեմ, պիտի երթամ, նաև նեչեցյալներին հարգանք պիտի ընծայեմ: Բայց չեմ ուզում գնալ առանց ձեր կողմից գորանալու: Դուք եթե ուզում եք ինձ զորացնել, ես ձեր նահատակներին պիտի ասեմ՝ հանգչեցեք, հանգիստ մնացեք, մենք ձեր մահը կյանքի պիտի վերածնեք, մենք վերապրողներս, դուք, մենք՝ բռն՛րս, Պետություն ու Եկեղեցի, պարզ մարդիկ: Դժգոհելով, բամբասկով, տրտնչալով ո՞վ մեզի կօգնի. մենք մեզ կվճառենք: Քարը քարի վրա դիր, թող տեսնե Աստված, թող տեսնե ուրիշը և պատիվ ընծայե քեզ: Դժգոհանքի խոսքը ոչ մի հարգանք չի ներշնչում: Հոգեւիխության միջից պետք է անցնենք բոլորս: Աստվածաշնչում զրվել է յոթ տարիներ կան սովի, յոթ տարիներ կան առատության: Աղոթում եմ առ Աստված, որ սովի յոթ տարիները գնան պատմության և բացվեն մեր կյանքում յոթ նոր տարիներ վերաշինության, վերակազմության, վերաշխուժացման, վերակենսավորման և վերածննդյան: Մանավանդ նրանք, ովքեր գնացին հազարներով, ձեր հայրերը, մայրերը, եղբայրները, բույրերը, զավակները, որդիները, աղջիկները, մանուկները, նրանք գնացին և ես զգում եմ, որ կարծեք երկնքից նայում են մեզ և փառը են տախի Աստծուն, որ մեր Հայրենիքը անկախացավ: Մենք որիշ պետություն չունինք՝ կամ ենք հայ, կամ չենք հայ: Եթե հայ ենք՝ Հայրենիքով ենք հայ, եթե զորավոր ենք, պետությամբ ենք զորավոր: Այլապես ի՞նչ ենք, ժողովուրդի կտորվա՞նք ենք՝ ի՞նչ: Ազգ ենք՝ զոտի լինենք, ձեռք-ձեռքի տանք, միանականությամբ, եղբայրությամբ հայու պատիվը բարձր բռնենք, ոչ թե խոսքով, այլ կյանք՝ գործո՞վ: Անավասիկ թէ ինչո՞ւ եմ եկել ես Հայատան: Եկել եմ մեր ժողովուրդի հրավերով, որ իմ կյանքը խառնեմ ձեր կյանքերին իմ հոգնոր եղբայրների և աշխարհական եղացրների մնա գործացաբար: Մենք որիշ կյանք չունենք այլև, որիշ նախական ծաղկումը, ճառագայթումը, հոգեկոր ճշճարտությունների, բարոյական սկզբունքների բարոգությունը և մեր պետության զրացումը, ամրացումը և մեր Հայրենիքին բարգավաճումը:

Սա' է մեր հայրերի կտակը, բարձր շալկենք, որպեսզի ցած, գետին չտես-
նի: Այդ սուրբ շալակը մեր ուսերից վար չզա:

Եղբարներ, բոցրեր, իմ առաջին այս խոսքը սվարառում եմ այն մտածու-
մով, որով սկսեցի Հայոց՝ Ս.ստծու խոսքը, հավատացե՞ք Նրան, ով առարել
է Հիսուսին, Աստված՝ Երկնավոր Հայրը մեր, յաեցե՞ք Ս.ստծու կամքը: Եթե
ես ճիշտ եմ հասկանում Քեզ, Ո՞վ Աստված, ես Քո կամքը այսօր տեսնում եմ
մեր Եկեղեցու վերածաղկումի մեջ, Ո՞վ Տեր, Քո կամքը տեսնում եմ մեր Հայ-
րենիքի ամրացման և վերածնության մեջ: Արա' ինձ մի խողովակ, որ այդ կամ-
քը փոխանցեմ իմ ժողովրդին՝ հայ ժողովրդին, որտեղ էլ որ նա լինի, այս-
տեղ՝ Ծիրակում, կամ այլ վայրերում: Դո՞ւք, երիտասարդներ, վերջին խոսք
ձեզ է խորանի վրա լինեք թե Եկեղեցում, կամ բակում, կամ խանութում,
կամ տանը, կամ փողոցում, կամ դաշտում, կամ գործատեղիում: Դո՞ւք,
երիտասարդներ, ապագայի աշքն եք՝ բացված դեպի մեր Հայոց պայծառ
ապագան: Ձեր հայրերը արին, ինչ որ կարող էին անել, հիմա ձերն է
հերթը: Ո՞ր օրվան եք սպասում. զցողերի մեջ բահանա չկա, հոգևորական
ծառայող չկա, երկներից պիտի չիշենեն, մենք ենք: Մարգարեի նման կանգ-
նենք Ս.ստծու առաջ և ասենք. «Անավասիկ ես Տեր, ուղարկիր զիս»: Քա-
շություն, հոգևոր արիություն, գաղափարական մեծություն, հավատքի զո-
րություն, նվիրումի կամք,—ատսեր են, որ կմնան, աշխարհը կապացանաց-
նեն ու կիրաշինեն: Գծորիհանքը, բամբասանքը. տրտունքը մարդու կապա-
նեն, կամքի մեջ մարդու կապանեն, բայց նպատակապաց տեսիք, կամք,
հավատք, գաղափար, ծառայություն, զոհողություն,—սրանք են, որ մարդու
Ս.ստծուն կմնանցնեն: Աստված Խնքը զոհվեց խաչի վրա մեր սիրույն հա-
մար և մեր մեղքերի համար: Աստված երեւ Խնքը խուսարենցավ իր Երկ-
նակին Ս.ստվածային փառքից ու մարդ դարձավ, մենք ինչ ենք անելու: Պետք
է գնանք մեր Եղբայրներին հոգևոր սնունք տանք, որպեսզի այս Եկեղեցին
ծաղկի: Երկու տեսակի չափանիշներ կան կյանքում գնայունք և մնայունք:
Եթե գնայունքն ետևից գնանք, մենք էլ կցնանք: Խնչակն հայրենի բանաս-
տեղն է ասում. «Հարդը գնում է, ցորենն է մնում»: Օրտեղ է մեր ցորե-
նը, մեր հոգեկան առաքինությունները, մեր բարոյական առողջությունը,
մեր ծառայական կամքը, մնացյալն ամբողջ հերիաթ է, սուս է, ծամանա-
կավոր է, անցավոր:


Ինչ որ կմնա և ձեզ կպահի և ձեզ անմահության բնակիչ կդարձնի՝ այդ
Ս.ստծու խոսքին, կամքին գործադրումին մեջ է. «Որ լսէ զրանն իմ և հաս-
տայ Այնմ, որ առաքեացն զիս, նա' ընդունի զկեանսն յախտենական»: Այդ
հավիտենական կամքի ճանապարհորդները եղան մեր հայրերը, մենք է
չենք կարող այդ ճանապարհից դորս զալ և գնալ մայշերի վրայից և կամ
գնալ փշերի ճամփով: Քայլենք մեր հայության Մայր Ռուիով՝ Եկեղեցու,
Հայունիքի, Պետության ճամփով և ի ծառայություն մարդկության և ի պան-
ծացում Ս.ստծու փառքին հավիտենից: Անեն:

Սուրբ Աստվածածին Եկեղեցում արտասանված Հայրապետական պատ-
գամը նաև հրամեշուի խոր էր՝ ուղղված Գյումրիի ժողովրդին, որի տա-
ռապանքին ցավակից, աշխատանքին գործակից և աղոթքին աղոթակից
եղավ Վեհափառ Հայրապետն այս երկու օրերի ընթացքում ճանաչելով և
ճանաչվելով հրամից: Սակայն վերջնական հրամեշու Գյումրիին տրվեց
Զարդի Զորում և Ծիրակի գերեզմանատանը, որոնցից առաջինը հավեր-
ժացնում է հիշատակը շուրջ 18.000-ի հասնող հայերի, ովքեր զոհ գնացին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Գլուխ Տարիք Անոնք 1915 թ. օպերի կեսարական ողբանական



թուրքական արշավանքին 1920 թվականի նահանջի ժամանակ, իսկ երկրորդը՝ 1988 թվականի աղետավի երկրաշարժի նահատակների: Այսուղև, Հոգեհանգստան սրբազն արարողությունից մետք հրաժեշտ տպալ տեղի ժողովրդին, Վեհափառ Հայրապետը մեկնեց դեպի Վանաձոր:

Վանաձոր տանը ճամապարհին գրեթե բոլոր գլուխերում գառնուկների մասադներով և ծաղկվների տարափով էին ընդունում ու բարի զարուստ մարդու Վեհափառ Հայրապետին և ցանկանում ու աղոթում, որ Սատուծո աշը ամենատես և Աջը ամենազօր մշտապես հովանի լինեն Հայրապետին իր առաքելության ընթացքին:

Զնայած տեղատարափ անձրևին, վանաձորցիները Սուրբ Աստվածածին եկեղեցում, գլխավորությամբ տեղի բահանա հայրերի, թեմական խորհրդի և քաղաքային իշխանությունների՝ հանձինս քաղաքապետ Վ. Մատինյանի և ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանի, մեծ աշխույժով և խանդավառությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին: Վեհափառը Գրումբի Սուրբ Աստվածածին եկեղեցու լուսաճառագ սուրբ Խորանից համբույրով ողջույն էր բերել Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, որոնց միախառնման հաղորդավարը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարն էր առաքելահաջորդ և Լուսավորչաժառանգ Գահակալով.

«Փառք Քեզ Աստուած, իմառք Քեզ, յաղագու ամենայնի Տեր իմառք Քեզ»:

Ի խորոց սրտի այժմ ծունկի կգամ իմ հոգու մեջ և աչքերս մի անգամ ևս երկինք բարձրացնելով, փառք կտամ Աստծուն, որ ինձ շնորհեց այս բացառիկ առիթը և առաջին առիթը՝ լինելու ձեզ հետ աղոթակից այս Սուրբ Աստվածածին տաճարի մեջ և առ Աստված վեր առաքելու գոհություն ձեր բոլորի հավատքի կենդանության և ձեր կապվածության՝ սիրո կապով, ձեր առնչության, սերտակցության համար մեր դարավոր Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և նրա հոգևոր կենտրոնը եղող մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Առաջին անգամն է իմ կանքում, որ ես գտնվում եմ այս քաղաքի մեջ, որ երեկ կոչվում էր Կիրովական և այսօր կոչվում է Վանաձոր: Զգիտեմ, որիի դարերին ի՞նչ է կոչվել, բայց ինձ համար ինչ անոն էլ որ տրվեր, այս հայկական դարավոր հողի վրա ապրող մեր ժողովրդի զավակները երեք հիմնական առարկնություններով են միայն, որ կկարողանան իրենց հայ անունը արժեցնել և հողին իմաստ տալ:

Առաջին. Աստվածապաշտություն: Ով ինքն իրեն կկտրի Աստծոց, կդադրե ճշմարիտ մարդ լինելուց, որովհետև մենք ստեղծվել ենք Աստծու պատկերով՝ «եւ արար զմարդն հոգի կենդանի»: Մենք հյոր չենք, սույ մարմին չենք, մենք միայն ժամանակով չենք չափվիք, մեր կանքը չի վերջանան այս հողի ներքև, հողից կակսե, Աստծու շնոր կշնչավորվի և անմանության կզնա: Հետևադար նա, ով ինքն իրեն երկնքից կկտրի, Աստծոց կկտրի և կրածանի, չի կարող ճշմարտապես մարդ լինել, և ես պիտի ազելացնեմ չի կարող ճշմարտապես հայ լինել: Բացեցնք մեր որևէ եզր Հայոց պատմության՝ հազարաման պատմության, ո՞ր մեկ բրակին նայենք և Հայոց եկեղեցու գմբեթը չտեսնենք, ո՞ր մեկ կղզու հայենք՝ Սևանա կղզի, Վանա կղզին, այնտեղ՝ կղզիների վրա պիտի տեսնեք տաճարներ: Մեկ խորով՝ Աստված միախառնվել է մեր Հայոց պատմության, մեր Հայոց կանքին և մենք չենք կարող կտրվել Աստծոց մեր Սուրբ Եկեղեցու դարավոր, Առաքելական Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու ճանապարհով մեզ առաջնորդող: Հետևադար, հայ լինելու առաջին արժանիքը ինձ համար Աստվածապաշտության մասին առաջին արժանիքը ինձ համար առաջնորդողը:

բյունն է: Հայաստանը համբույրն է Աստծու և հայու: Աշդախի նվիրականությամբ ես ըմբռնում եմ Մայր Արքոր և մեր Եկեղեցին և, հետևարար, իմ առաջին խոսքն է ձեզ, եղբայրներս, բոլորերս, լավ մտիկ արեք, Աստծու Հոգին ձեր հոգու մեջ կենդանի պահեցեք և ձեր բոլոր արարքների, բոլոր խորհրդածությունների, բոլոր խոսածների մեջ Աստծու ներկայությունը զգացեք:

Երկրորդ, հայրենապաշտություն, հողապաշտություն: Հայրենիքը մի որևէ հող չէ: Այն հողը, որի մեջ մեր կյանքի դրուժն է դրվել, որիշ հող է, դա մեր հողն է, դա մեր շինածն է: Ինչպես անցյալները ֆրանսիացի մի մեծ քաղաքական դեկապար (այսօրվաճ վարչապետը Ֆրանսիացի)՝ Եղուարդ Բալաղյուր, ասել է. «Ֆրանսիան ստեղծումը չէ բնույթյան, Ֆրանսիան ստեղծումն է ֆրանսիացի ժողովույթյան»: Հայաստանը բնության ստեղծումը չէ: Այս հողը, որ Հայաստան կլոչվի, այս հողի վրա ծառ կա և որիշ հողի վրա էլ ծառ կա, բար կա, որիշ տեղ էլ քար կա, բայց այստեղի ծառը որիշ է, այստեղի՝ քարը որիշ է: Այստեղի՝ ծառը Սուսաց անտառ է, այստեղի՝ քարը խաչքար է, կենդանու կաշին մագաղաթ է, այս նվիրական է, որովհետև մեր ձեռքերի ձեռագործն է Հայաստանը:

Տիեզերքը Աստծու ձեռագործն է: Տիեզերքին մեջ հայր այդ պատառին վրա, որ հագուստն է Աստծուն, այնտեղ հյուսել է իր ձեռագործը, որի անունն է Հայաստան: Հետևաբար, երկրորդ հատկանիշը բոլորին, մեզ ճշշմարտորեն հայ ընող առաքինությունը Աստվածապաշտությունից հետո, հայրենապաշտությունն է, հողապաշտությունը, հողին կապվածությունը, մանաւագանդացությունը: Ես զպիս եմ մի այնպիսի երկրից, որտեղի հողի մեջ չի ծնվել հայր իր պատմությամբ: Սիրելինե՞ր, բոլորս էլ մեր խղճի հետ մի պահ խոսակից դատնանիք, խոսնեք մենք մեզ հետ: Մենք շատ փոթորիկների միջից ենք անցել, տեսակ-տեսակ փորձություններ են եղել մեր Հայրենիքում:

Հայր խաղաղ չի ապրել դարերի բնրագրում, բայց այսօր, հազար փառք Աստծուն, հակառակ բոլոր տեսակի տեսնեալական, կենցաղային, ընկերային, քաղաքական, ապահովական բոլոր տեսակի դժվարություններին, մենք ծունկի գանք Աստծու առաջ և ասենք. Փառք Քեզ Տեր, որ մեր երազին, դարավոր ցանկությանը և իշեմերին մարմին զգեցուցիր և ազատ, անկախ, սեփական, ինքնիշխան և զերիշխան Հայոց պետությունը ստեղծվեց: Այսօր վերանկախացավ Հայաստանը, որովհետև Հայաստանի և Սփյուռքի ժողովրդի մտքի, հոգու մեջ ազատության և անկախության գաղափարը երբեք չմարեց, երբեք չշիշեց: Մի խոսքով՝ մնաց կենդանի, առողջ և առուզ: Հետևաբար, այդ ազատ և անկախ մեր պետականության շրջանին եկեք ամբողջությամբ կապվենք մեր ձեռքերով, մեր շիղերով, մեր ոսկորներով, մեր ամբողջ էռորյամբը այս հողը պահենք հայկական, հայադրում և հայական: Այս թող լինի մեր նպատակը այս նոր շրջանին, առանց խտրության, առանց դավանարանական, առանց գաղափարաբանական, առանց դասակարգացին խտրության և Հայաստանում, և' Արցախում, և' Սփյուռքում առհասարակ:

Երրորդ հատկանիշն է՝ մշակութի նվիրումը: Մեր ժողովուրդը կաղքատան, կտկարանն, եթե երբեք մեր գիրը, գրականությունը, երաժշտությունը տկար լինեն: Եթե մարդկային քաղաքակրթության բարձրագույն արտակայությունները մենք մեր Հայաստանի հողին վրա, մեր ժողովրդի կյանքի մեջ շարտահայտնենք, ինչո՞վ պիտի հպարտանանք, ինչո՞վ մենք զմեզ ազգերի մեջ պիտի արծերավոր զգանքը: Մի փոքրիկ հարց տամ, ինչո՞վ հայ ենք՝ միայն հողո՞վ պիտի ասեք, միայն Աստվածպաշտությա՞մբ

պիտի ասեք: Ուրիշներն էլ Աստված պաշտում են, որիշներն էլ հող ունեն; Մեր ինքնության մեծության և արժանապատվության չափանիշը մեր գիրն է, մեր գրականությունն է, մեր մշակույթն է: Բարեկամներ, եթե մեկը հարցնի ձեզ՝ ո՞ր ազգին կպատկանեք, ի՞նչ պիտի ասեք: Պիտի ասեք Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհապու, Կոմիտաս Վարդապետի, պիտի ասեք մեծ ճարտարապետ Տրդատի, մեծ գիտնական Անանիա Շիրակացու, մեկ խոսքով, մեր հոգին բարձրագույն աստիճանի արտահպտությամբ աշխարհին և մարդկությանը բացված մեր մեծ դեմքերի, մշակույթի մեծ առաջըալների: Հետևաբար, երրորդ հատկանիշը պետք է լինի մշակույթի, լեզվի, դպրության, արվեստի մեր վիրաբերությը:

Այսօր ես գալիս եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ամեն անգամ այս վերջին ամիսների ընթացքում երբ դիտում եմ Մայր Աթոռի հրաշալի գեղեցկությունները, ամբողջ պատմության առկացությունը, ամբողջ պատմության պերճախոսությունը այդ բարերի միջից, ասում եմ, ես որքան երջանիկ պետք է զգամ իմ կոչումի մեջ՝ իրեն անդամ, իրեն հայ հոգևորական, ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպեսզի քարերի շշունջը լսեմ, այս քարերի շնչով զորանամ: Մի խոսքով, մեր Եկեղեցին եղել է նաև մշակույթի կենտրոն, մեր վանքերը եղել են մշակույթի օջախներ: «Մի ճշխարով, մի կում ջրով և տքնությամբ գիշերն անքում՝ պատմությունը մեր գրեցին մագաղաթի փրա դժգույն»: ինչպես ասում է Ավետիք Խաչալյանը:

Հետևաբար, այսօր առաջին անգամ գալով Վանաձոր, ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունները հայտնել ձեր ժրաշան առաջնորդին գերաշնորհ Տեր Գրիգորիս արքեպոս. Բունիածյանին, հոգևոր դասին, ձեր աշխարհական պատասխանատուններին, Եկեղեցական խորհրդի անդամներին, հատկապես մեր պետական քաղաքացին իշխանությունների ներկայացուցիչներին, որոնք սերտորեն, սրտակցորեն Եկեղեցու զարգացումն են ցանկանում: Բայց մենք ունենք մի հիմնական կարիք: Այդ կարիքն է՝ մարդու կարիքը: Այսօր ձեր մեջ երիտասարդներին կոչ են անում, բոլոր երիտասարդներին, ովքեր իրենց մեջ զգում են Աստծու կանչը, ովքեր իրենց մեջ զգում են ժողովրդի կարիքը, ո՞ր օրիվան են սպասում, թող գան: Եկեղեցու մեջ երանք, ովքեր ունեն այդ ձգտումը, լցվեն Աստծու Հոգով, լցվեն մեր մատենագրության, մեր Եկեղեցու հոգևոր զորությամբ, լցվեն Ավետարանի հավերժաշունչ պատգամներով՝ Քրիստոսի Հոգով, և պատրաստվելուց հետո, իրեն հոգևորականներ՝ Վարդապետ, քահանա, գնա՛ն, ժողովրդի մեջ մտնեն և ժողովրդին գգացնեն այդ երեք պաշտությունները. Աստվածաշուություն, հայրենապահատություն, մշակութափաշուություն:

Մեկ խոսքով փակիմ. ես այնքան ատեն, որ Աստծու շնորհով Կաթողիկոս կմնամ, այնքան ատեն, որքան ինձ կյանք տա, ես երեք ժողովրդից չպիտի կտրվեմ, ես ձեզի դարձալ պիտի այցելեմ, որովհետև մի հովիկ առանց հովի հովիկ չեմ: Մի հովիկ հոգևոր պետք է իր ժողովրդի մեջ լինի, ժողովրդի ցավը տանի, ժողովրդի ապրումները իր հոգու մեջ ապրի: Մեկ խոսքով, ցանկանում եմ ձեռ բոլորիդ, որ այս կապը՝ հոտ և հովիկ, Հայուապետ և ժողովրդը մնա միշտ կենդանի: Դուք էլ ձեր աղոթքների մեջ հիշեք ինձ, ինչպես ես Սուրբ Էջմիածնում իմ աղոթքների մեջ պիտի հիշեմ Վանաձորի մեր սիրելի ժողովրդյան Աստծու փառքին, մեր Եկեղեցու պայծառության և մեր Հայրենիքի շինության համար: Ամեն:

Սուրբ Աստվածածին եկեղեցում ժողովրդի լայն զանգվածների մեջ հանդիպմանը հաջորդեց այս քաղաքի կենտրոնական մասում երկրաշրջի

և հայոց անկախության համատակների հիշատակին կանգնեցված խաչքարի տաղը ծաղկների գլուխումն ու Հոգեհանգստյան աղոթքը, ապա այցելու թյունը Վանաձորի քաղաքապետարան:

ՄՅԱՅԻ 8, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

«Զի ես ձեզ զայն հայու աւանդեցի՝
զոր և եսն ընկալայ,

եթէ Քրիստոս մեռու վասն մեղաց մերոց,
եւ զի թաղեցաւ, թէ՝ և յարեաւ յարու նրբորդի»:
(Ա. ԿՈՐՆԹ. ԺԵ 3—4)

Վանաձորում Վեհափառ Հայրապետին անակնկալ հանդիպում էր բա-
պավում շնախառեաված և ծծրագրված մի հանդիպում Վազգեն Ա. երջան-
կահիշատուկ Հայրապետի անոնք կրող դպրոցի աշակերտության և ուսու-
ցիչների հետ, որոնց պատգամնեց լինել արժանի կրողները Վազգեն Վեհա-
փառի անվան, մշտապես ապրելով նրա թողած բարի ավանդներով և մատ-
նամշած ճանապարհի ուղեգծով:

Այս սրտառու ակցից հետո Վեհափառը Վանաձորի մշակույթի պալա-
տում հանդիպեց քաղաքի հանրության, դեկավարության և մտավորակա-
նության հետ: Դամիճի ծայրենիքայր լցված լինելով վաս արտահայտությունն
էր Ծողովրդի ակնկալությունների և շեմս սիրո գգացուների՝ հանդեպ Հա-
յաստանյաց Սուաքելական Մայր Եկեղեցին ու նրա Գահակալը.

«Ես փառք եմ տպիս Աստծուն, որ ինձ տրվում է առիթը, ձեզ հետ գոր-
ծակից դառնալ ոչ այնքան և այնպես, ինչպես անում ենք համայն խորանից
եկեղեցու կամ սրահի բեմերից, պաշտոնական, Հայրապետական պատգա-
մի իմաստով, ես ուզում եմ ձեզ հետ խոսել մուեմարար այնպես, ինչպես
ըմբռնում եմ իմ առաքելությունը որպես նորընտիր Կաթողիկոս Ամենայն
Հայոց, այնպես, ինչպես ըմբռնում եմ նաև ձեր գործը, որովհետո այդ գոր-
ծին ամրողությունը կներառի իր մեջ ձեր բոլորի մասնակցությունը:

Սուաշին ներթին ես ուզում եմ ձեզ բոլորի հայտնել, որ մենք անցյափի
առաքելության շարունակողն ենք և ոչ թե մի նոր առաքելության սկսողը,
որից խորով՝ ինձնից առաջ այդ նույն զամբի վրա եղել են 139 Հայրա-
պետներ, որոնք դարերի ընթացքում Սուրբ Գրիգոր Լուսավորչից սկսա-
մինչև այսօր, 301 թվականից մինչև այսօր, կատարել են իրենց պարտակա-
նությունը հանուն Աստծու, հանուն մեր Սուրբ Հայրերին, մեր Եկեղեցուն,
հանուն մեր Հայրենիքին և մեր ամբողջ ազգին, ինչի դա Հայրենիքում Հա-
յաստան աշխարհում, և կամ արտասահմանում: Հետևաբար, մեր գործն
է առաշին ներթին ամեն բանից վեր Աստծու Խոսքը՝ ճշմարտու-
թյունը՝ Աստծուց եկած, Քրիստոսվ հայտնված, Ավետարանով քարոզված,
այդ ճշմարտությունը մեր ծողովրդի կանքի սեփականությունը դարձել:

Փակտոս Բուգանի պատմիչն ասում է, որ Եկեղեցու սպասավորները գը-
նուս էին Հայաստանի չորս կողմերը և քարոզելիս անձքին հման տկացնուն
էին Աստծու Խոսքը, բայց ծողովրդի հոգին եղքեք չեր ազդված: Պատճառն
այն էր, որ այդ Խոսքը քարոզվում էր ոչ հայերեն լեզվով, այլ հոմնարեն և
ասորերեն, ու Աստծու Խոսքը մի օտար խոսք էր թվում հայ ծողովրդի համար:

Նրե Գ. Դարում, հիշում եք հավանաբար, Սուրբ Մեսարոս Մաշտոց գտավ հայերեն Այբուրենը և Սատվածային Գրքերը թարգմանվեցին մեր հայերեն լեզվին, պատմիչն ասում է. «Սքանչելի լիներ աշխարհն Հայոց, յորժամ գլուխ առաքելական գնդին Պատոս և դաս մարգարեցից հայերենախօս և հայրենաբարբառ գտան», այսինքն, սկսեցին հայերեն խոսել: Հայերեն լեզվով Աստված սկսավ խոսել մեզ ենու և այդ եղավ մեր Ռուկ Պարք, երբ Սատծո շունչը միացավ հայու շունչին, Սատծո Խոսքը Աերթափանցեց հայու հոգու մեջ:

Դարեր շարունակ աղյ քարոզությունը կատարվեց և մեր ժողովուրելք քարոյական բարձր ընթառումների, սկզբունքների, հոգևոր արժեքների ծառան եղավ, սպասավորը եղավ, ստեղծագործողը եղավ: Մենք երբ մեր պատմությունը բաղդատենք որիշ ազգերի պատմովան, մեր պատմության մեջ ամենից ուժեղ ներկայությունը եղել է քրիստոնեական ճշմարտության, քրիստոնեական հավատքին հավատարմովայունը: Անձնող տարիներին մեր ժողովրդի զավակներին ասվեց, թե քրիստոնեովայունը խարուսիկ կրոն է, թե անհիմն կրոն է, թե ճշմարտությունից ենու կրոն է, թե մարդկանց ձեռքերում շահագործող զործիք է, այինու է, մեկ խոսքով՝ աթեխատական քարոզություններով ուզվեց, որ մեր ժողովրդի նոգին բաժանվի, անհաղորդ մես Սատծո Խոսքից՝ քրիստոնեական հավատքից: Եվ չեաջողվեցին: Եվ երեք չեն կարող հաշողվել ոչ թե այսօր, ոչ թե միայն չեն հաշողվել անցյալում, նման փորձ երթեր չի հաջողվի նաև ապազալում: Ինչո՞ւ Եկեղեցու համար Ավետարանում ասվել է մի խոսք. «Իրունք դժոխոց զնա մի չաղթահարթացեն», նաև որիշ խոսք է ասվել. «Երկիմը և երկիր անցցեն, և բայց իմ ոչ անցանցեն», այսինքն իմ խոսքի Վատահությունը հավիտենական է և այս դարին չի պատկանի, և այս մարդուն չի պատկանի, բոլոր ժամանակներին և համայն մարդկության բաղկացուցիչ ազգերին, ժողովուրդներին և ցեղերին կպատկանի:

Միեկի՞ր, ես կուգամ հիմա իմ ամենեն կարեոր ասելիրին: Այս հավատքի քրիստոնեովայան, գերազույն իմաստը և արժեքը և որիշ կրոններից ունեցած տարբերությունը այն է, որ քրիստոնեովայունը արժեք կոս մարդ եւկին: Մարդը ինքը Սատծո պատկերով է ստեղծված: Երևակացեք մարդըն է, որ կիմաստավորի ամբողջ գոյությունը տիեզերքի: Եթե մարդը հանեք տիեզերքից, բնույթունը, անշունչ իրականությունը, կենդանական աշխարհը, բուսական աշխարհը ի՞նչ կարծէ: Կույզ գոյությունն է, անիմաստ: Քարը ի՞նչ արժեք ունի, եթե քարից տուն չես սարքի, արձան չես կանգնեցնի, խաչքար չես հյուսի: Ուրեմն տիեզերքի առարկաներին իմաստ տվողը մարդն է: Մարդու հարաբերությունն է, մարդու անոր հանդեպ ունեցած արժեքագործուն է: Մեր Հայաստանը հող չէ միայն: Հայու ձեռքի շնորհըն է, այսինքն մեր ստեղծագործությունն է: Քրիստոնեովայունը մարդ անհատին գերազանց արժեքը ճանաչող կրոնը է: Որիշ գաղափարաբանություններ մարդը կգործն անձնական շահերին և քմահանուրներին համար. քրիստոնեովայունը մարդու փրկության համար է:

Քրիստոս ինքն եկել է, որ մարդուն ասի, թե մարդը Աստվածանման մի եւակ է, Սատծո շունչը ունի իր մեջ և պես ու ըստ այնմ ապրի իր կյանքը: Այդ կյանքի մեջ ամենեն էականը Խաչը է: Մի մեծ գիտնական ասել է, «Աշխարհի բոլոր կրոններում կա սիրո գալափարը, բայց ոչ մեկ կրոն չի ունեցել Խաչը, բայց քրիստոնեովայունից»: Խաչը գերազույն արտահայտությունն է սիրո սկզբունքին: Երևակացե՞ր, ի՞նչ կեշանակի ասել՝

ես Աստծուն կսիրեմ և չկարենալ եղբորը սիրել: Այդ կեղծիք է: Հովհաննեսն առարյալը ինքն ասում է. «Եթե դուն Սատծուն կսիրես, որին չես տեսնում և շես կարող եղբոր սիրել, որին տեսնում ես, այդ ի՞նչ տեսակ սեր է»: Մեր կյանք է, հարատեսություն է, որիշին հանդեպ ըստ ցոյց տված վերաբերմունքի շափանիշն է: Քրիստոնեությունը իրեն սիրո վարդապետություն մեր ժողովրդին տվել է այդ սերը զոհողությամբ արտահայտելու փիլիտոփայությունը: Եթե մեկը կամավոր հանձնառություն չի ստանձներ, որիշին հանդեպ պարտականություն չզգար, այդ անձը ո՞չ մարդ է լիրիկ իմաստով, հարազատ իմաստով, ճշմարիտ իմաստով և ո՞չ է հայ: Մենք մեր կյանքում չենք կարող ապրել իրեն անհատ մարդ, պետք է հայ ապրենք իրարժությունը: Ես մի գրություն ունեմ «Մարդը մարդ է մարդով» վերնագրով: Մարդը մարդ չէ ինքն իրունք. ինքն իրեն համար և այս տարածքը, որ համայնության, ազգի, համայնքի գաղափարն է, դրա անհատն անհատ անցնող կապը սերն է և եղբայրությունը և իրար հանդեպ նույն տեսիլիքն, նույն գաղափարին, նույն հավատքին բաժանումն է: Եթե բոլորս այդ նույն հավատքը ունենք, այն ատեն է, որ մենք ազգ կիմենք, ազգական ես, դուք, մյուսք, եթե անհատներ լինենք՝ գոտմար կիմենք, մարմին չենք դառնա: Դրարմով, իրար հետ լինենք է, որ մենք ազգ կենացվենք. այդ ազգի կապը սերն է, քրիստոնեության ամենեն մեծ ճշմարտությունը, որ Խաչով կարտահայտվի:

Ինչո՞ւ ենք խաչ հանում, ինչո՞ւ ենք խաչը մեր պարանոցներից կախում խաչը զարդ է: Խաչը խորհրդանշի է: Եթե նայում ես երկընքին մոտեցող մեր գմբեթներին և խաչը տեսնում ես, հիշեցնում է քեզ, որ կյանքի իմաստ ունի, եթե կարողանա այդ կյանքի բաժանելու որիշների հետ և այդ կյանքը ապրել որիշներով: Գիտեք, որ որոշ մեծ ազգերի բաները ամենից լավ հարդարված սենյակներն ունեն: Մեկ օրենք կա միայն, որ մարդուն կզգացնե, որ բանուց դժոխք է: Գա այն է, որ ոչ ոք կարող է այդ մարդուն այցելել: Այդ մարդը առանձին կտողնեն, կտրված որիշներից և այդ մարդը կանդրադանս այդ բանտարկության շրջամին, թե իր համար դժոխքը առանձնությունն է, որիշին հետ չկարողանալ լինելն է: Մարդուն բանուք, այն կաշկանդող ուժը, որ իր գոյության իմաստը կիշացնի՝ առանձնությունն է: Ընտանիքը ընկերության առաջին կորիզն է: Զի կարող լինել մարդկություն՝ առանց ընտանիքի, չի կարող լինել ազգ՝ առանց ընտանիքի: Եթե երեք մենք՝ հայերս, ընտանիքան ասախիք և սրբությունը բարձր ենք դասել, դրա մեջ բրիսոննեության այդ գաղափարն է, որ անենից մեծ ազդեցությունն է ունենել:

Սիրելիներ, ես կզամ հիմա իմ խոսքի վերօնի բամբին: Մենք այսօք անցյալը ավաղելով չենք կարող մեր ապագան կերտել: Անցյալում ինչ պատահել է, դրա մասին մենք դառնությամբ խոսելով չենք կարող ոչինչ անել մեր ապագայի համար: Անը իրար հանդես, սերը ամբողջին հանդես, սերը եկեղեցու հանդես, սերը ազգին հանդես, սերը պետության հանդես, դրանք են, որ մեր ուժը են դեպի անդի ապագան զնացող: Դառնությունը մեր մեջ կիշացնի մեր անձը: Հետևաբար, ես տեսնում եմ, որ մենք մատնավորաբար այս դարաշրջանի ավարտին երբ մտել ենք մի նոր ողի, մեր ազգային պատմության ընթացքում հագուրամայկելուի մեջ, դա կոչում ենք անկախության և ազգային շրջան, այս ժամանակ ձեզնից յուրաքանչյուրը իր պատահանաւ տվյալները պետք է կատարի, որպեսզի ազգը ազգ լինի, Հայրենիքը Հայրենիք լինի և Եկեղեցին է՝ Եկեղեցի: Ոչ որ կարող է ինքն իրեն դուք պահել, եթե ինքն իրեն ճշմարտորեն հայ է զգում: Մաս-

Արդյունաբար միաժամանակ վեճսարշադարձ սպիտակի



նակցություն՝ այս է կյանքի սահմանումը ինձ համար, ոչ թե քաշվիլ, ոչ թե մեկուսանալ, ոչ թե առանձնանալ, այլ զալ և մտնել մեկ ճանապարհի մեջ ձեռք-ձեռքի, միասնական կամքով և հառաջատես գնացրով:

Ամբողջ երեք օր Շիրակա համանգում էի, այժմ գտնվում եմ և ոռովա աշխարհում և այս երկու աշխարհներն էլ տուժվեցին այն ահավոր երկրաշրջի աղետից, որին ենթարկվեց մեր ժողովուրդը: Խմացա ձեր քաղաքային իշխանություններից, ձեր Սրբազնից, ձեր հոգևորականներից, որ այժմ դուք անցնում եք վերաշինության, վերակազմավորման, վերականգնումի ընթացքի միջից: Այս ընթացքը մեր բոլորի հասարակաց գործն է, ոչ թե իմ, ոչ թե նրա, ոչ թե մյուսին մեր բոլորի գործն է: Եթե մենք ոգում ենք Խաչի նշանը այսօր ապրել և Խաչով ապրել, պետք է գիտենանք զոհողությամբ ապրել: Այն, որ չի կարող զոհվել, իմաստ չունի նրա կյանքը, խոտի պես կգա և խոտի պես կգնա: Մեր արևմտահայ բանաստեղծներից Վահան Թերեյանը մի սրանչելի տող ունի, որ ինձ համար մարդարտաշար է, որ առեն մեկ հայի կրծքից կամ վայի պետք է կախվի:

Ի՞նչ մնաց, կյանքեն ինձի ի՞նչ մնաց,
Ի՞նչ որ սուի ուրիշին՝ տարօրինակ այդ միայն:

Մերը որ տաս, զոհողությունը որ կկատարես, դրանք են, որ քեզ կերպանկացնեն և քեզ կարծեսորեն, քո կյանքը կիմաստավորեն: Առեւ մեր բոլոր մեծերը, նրանք, ովքեր մեր պատմությունը կերտեցին: Տաղով, իրենց իրենց տաղով, իրենց ունեցածը տաղով՝ ունեցան: Խնչակն Ավետարանը ասում է. «Ան, որ ունի, անոր շատ պիտի տրվի, իսկ ան, որ չունի, ունեցած անզամ ձեռքեն պիտի տոնվի»: Ոչ թե իր ունեցածը, այլ իր ունենալուն իմաստավորումը. եթե մեկը չի գիտեր իր ունեցածը, իր եղածը՝ Աստծու տուրքը, Աստծու տուրքով ձեռք բերած իր կարողությունը, հմտությունը, հարստությունը, եթե պիտի չկարենա իրենց դորս ուրիշին և ընդհանուրին ի սպաս դնել, եղել է, չի եղել, պատմությունն անզամ նրա անոնքը չի հիշատակի: Ես եկեղեցիներ եմ տեսել, մանավանդ Ստեփանոս Նախավկայի եկեղեցին, որ Արարու գետի մյուս ափին է Պարսկաստան: Այդ եկեղեցու ամեն մեկ քարի վրա գրվել է. «Քարս այս յիշատակ է Խաչառուրին», մեկ խորով, ամեն մի մարդ իր կնիքը է դրել այդ եկեղեցուն, ինքը զնացել է, եկեղեցին մնացել է: Բայց ինքը պատմակերտության՝ պատմություն կերտելու առաքելութան մեջ տեղ է ունեցել և դրանով է արժեքավորվել: Այսօր Վարդանի գերեզմանն անզամ տակավին վիճելի է բանասերների համար: Որտե՞ղ է թաղվել Վարդանը, մարդ չի գիտեր: Բայց ի՞նչ փոյթ, թե որտե՞ղ է թաղվել՝ Վարդանը կապրի, զոհվելով ապրեց, ոչ թե ինքն իրեն համար ապրելով ապրեց: Այն, որ այդ ձեռք կապրի, անիկա անման կմնա: Այս է մեր կյանքի՝ հայ կյանքի փիլիտիայությունը:

Գալով մեր օրերի պարտականության, մենք մեր ձեռքերով, մեր զոհողության գիտակցությամբ, մեր ամբողջական մասնակցությամբ, յուրաքանչյուրը մեզանից իր չափով և իր ծնով պետք է բաժին բերե երկրի այս վեհապահ բաժնի վերականգնումին. և ոչ թե միայն նշութական վերաշինության շենքի, քարի, աղյուսի, այլ վերաշինության հոգեկան իմաստով: Պետք ունենք բոլորս էլ փոխվելու, մի նոր հոգեբանության մեջ մտնելու: Դա քիստոնեական հավատքով թրծված հոգեբանությունն է և ազգի անկախությամբ

զապանակված, մեր ինքնուրյան, արժանապատվորյան գիտակցությունն է:

Ես եկել եմ արտապահմանից մեր ժողովրդի կամքով: Իմ ամրող կյանքը սրանից հետո Հայրենիքին, Մայր Սրբող Սուրբ Էջմիածնին և մեր ժողովրդի համար է: Ինչպես մեր Հանրապետության Նախագահն ասեց, մենք մեր գլուխները իրար միացնենք և մատադ անենք մեր ժողովրդին: Այրիշ նպատակ չկա, որիշ երազանք չկա: Մենք փառք չենք փնտրում: Բայց ո՞վ ենք մենք առանց ձեզի: Դո՞ւ եք, սիրելի ժողովրդ, դո՞ւ եք, որ մի եռ բորաչի, հոսանքի միջից պետք է անցնեք, և ես պիտի շանամ իմ բոլոր ուժերովս, ոքան էլ տկար լինեն այդ ուժերը, իմ եղբայրների՝ հոգեւորական եղբայրների հետ միասին, Մայր Սրբող Սուրբ Էջմիածնինը առավել աշխատացնել, որպեսի քարոզության վերածվի, հոգեւորականներ դուրս գան ու մեր ժողովրդին ո՞ւ տան՝ հոգեկան ուժ տան, բարոյական նկարագիր տան: Ես սի բան եմ նկատում և արտասահմանում, և՝ Հայրենիքում: Մեր ժողովուրդը տոմաւմ է սի բանից՝ մսխումից: Մեր հայրերը ցեղասպանության օրերին մեռան հացի կարտուֆյունից: Խակ հիմա, մանավանդ որոշ տեղեր, ոչ այս օրերին թերևս Հայաստանում, բայց արտասահմանում, մեր ժողովուրդը մեռնում է ոչ թե հացի պակասից, այլ հացի շատությունից: Մեր Եկեղեցին իմաստութամբ է ասել, որ որկրամոլորդյունը մահացու լոր մեղքերից մեկն է: Շոալլորդյունը, անհմասս արծեքների հետեւից վազքը, արդուգարդից, ճոխակացությունից, ավելորդ հիմարական վատնումներից շատ ենք տառապում: Աստված կյանք և ուժ է տվել մեզ: Այդ բոլորը գործածենք ոչ թե մենք զմեզ փշացնելու համար, ալկոհոլամոլորդյան կամ շատակերության և կամ մսխումի հիմար-հիմար կյանքի ձևերին երթառվ, անդրադառներ, որ մենք ունենք այնպիսի հոգեկան, բարոյական արծեքներ, որոնք երրինց պետք չեն, որ գետին ընկնեն, այլ՝ բարձր մնան, մեր կյանքում արժերվեն: Գրանով է, որ մեր ազգը հպատացել է, դրանով է, որ ազգը տոկացել է, դիմացել է և այս օրերին է հասել: Մեզ կմնաւ հիմա շարունակել այդ կյանքի ողին: Աղեսոր այն ատեն աղետ է, եթե նրանից ոչինչ կտվուինք: Եթե աղեսորից ստվորներ, թե ինչպես կարող ենք մեր կյանքը ապրել, մենք որիշ աղետներից կփրկվենք:

Սիրելի եղբայրներս, քուրերս, այսօր ես իմ խոսքը փակելու եմ հետևյալ աղոյքը ձեզ հիշեցնելով: Մենք ասում ենք համախ՝ «Պահպանիշ և յոյս հաւատացելոց Քրիստո Աստուած մեր, փրկեա զմեզ յերեւելի և յաներեւոյց թշնամույն»: Երեկի թշնամին աշքի առշնեն է, կտեսնես, կխուսափին, բայց աներեւոյց թշնամին այն բոլոր ապականությունները, բարոյական կյանքի խաթարումները, օտարամոլորդյունը և աշխարհիկ հաճույքների հետեւից վազքը՝ սրանք են, որ մեր աներեւոյց թշնամին են: Հիմա ձուզման, ապազգայնացման, օտար բարեկին հետևելու, կուրորեն հետևելու մոլորդյունն է մտել մեր ազգի մեջ և մեզ մեր կյանքում սպանում է: Կյանքի մեջ է պատահում մահը հիմա, առաջ կյանքից հետո էր մահը: Խսկապես այս օտարամոլորդյունը, բարեկի խաթարումը՝ դրանք է, որ մեզ կփշացնեն: Մի ազգի ուժը իր բարոյական բարձրության մեջ է, իր գիտակցության մեջ, իր երեխաների դաստիարակության մեջ, իր հանրային կյանքի ներլաշնակ կազմակերպության մեջ: Ընդհանրական շահերի գերադասաման և երկրորդական ու մասնաւոր և ժամանակափոր շահերի ստորադասաման իմաստության մեջ կկազմանա ազգի մը մեծության գաղտնեիք:

Անավանիկ, թե ի՞նչ մտորումներով, ի՞նչ մտածումներով ես ուզում եմ Կաթողիկոսական Գահակալության շրջանը սկսել միշտ ժողովրդի հետ լի-

նեղով, մողովրդի նետ հաղորդ մնալով և քրիստոնեության ճշմարտության ները մեր ազգային կանոնու շահալով ամեն բան ավելի տարածելու, որպեսի օտար մարդիկ, ապազգային բարբերով մեզ շահագործեն: Խնդրում եմ ձեզանից լսեցեր ինձ, ես օտարների հետ շատ եմ ապրել: Այսօր զայխ են մեր երկիրը, զայխ են այս երկիրը և մեզ քրիստոնեաներին քրիստոնեություն են քարոզում: Խնչու հեթանո՞ս ենք մենք, քրիստոնեություն չունե՞մ մենք, ո՞ր քար մերցեն Հայաստանէց՝ տակը Քրիստոսի հավատքը կա, ո՞ր մեկ բլին նայես և վրան եկեղեցի կա: Մեր հայրերի հայտառը այս երկիրի ամեն մեկ բժիշի մեջն է տարրացել, մագաղաթի հետ է հույսացել, երածության մեջն է տարրացել: Մենք ուզով, նույնիսկ այս տարիներին, որ մեր քրիստոնեական հավատքը ազատ կերպով չենք կարող ապրել եկեղեցում, հավատքը երեք-երբեք չի մեռն Հայաստանում: Հիմա օտար քարոզիչներ, տեսակ-տեսակ աղանդավորներ զայխ են և մեզի ասում են, թե ինչ է Քրիստոս: Ես նրանց մի պատասխան ունեմ, ուզում եմ դոր էլ այդ պատասխանը տաք. զնացեք այնտեղ, որ Քրիստոս չի քարոզվել: Գա՞ է Քրիստոսի պատգամը. «Գնացեք այսուհետեւ աշակերտնեցեր զամենայն հեթանոս, մկրտնեցեք զնոսս, ուսուցեք նոց զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեռ», Մատթեոսի Ավելատանի իշլ գլխի վերջին տողերն են:

Աշխարհում չկա՞ն որիշ երկրներ, չկա՞ն որիշ ազգեր, որոնք Քրիստոսի անոնք չեն լսել կամ չեն ընդունել զՔրիստոս: Մենք այսօր պատրաստվում ենք տոնել մեր Եկեղեցու հիմնադրության 1700-ամյակը: Որտե՞ղ էին նրանք մինչև հիմա, երբ մենք Ավարացի դաշտում քրիստոնեությունն էինք պաշտպանում: Որտե՞ղ էին նրանք, երբ մեզ վրա օտար ազգեր խուժում էին և մենք դիմանում էինք խաչի հշանով, քրիստոնեական հավատքով: Դրանք մեզ հետ կապ չունեն: Կարուկ եղանակ կա վերաբերվելո՞ւ դռները փակել, եղանց ատէ, զնացեք այնտեղ, որտեղ մարդիկ քրիստոնա չեն, հարգանքով, առանց բռնության, բայց այնպիսի «զայխ» հավատքով, որ որիշները մեր ժայռ հավատքի հետ շխադան, և կոտորվանքներ չըերեն մեր մեջ: Բայց որա համար մենք ոչ թե որիշի արածին պիտի հակազդենք, այլ մենք մեր գործը պիտի կատարենք, մեր եկեղեցիները պետք է շինենք, մեր եկեղեցին պիտի դատարկ շրողնենք, այլ լցնենք:

Իմացա, որ ձեր եկեղեցին տանեն կյարակի լցում է, ապրե՞ք: Եթե ձեր կյանքը լցնեք, որիշները պարապ չեն գտնել այնտեղ ու ին գա և որու չեն ցանի: Մենք դրական ձևով պիտի մոտենանք, ոչ թե ժխտական ձևով: Մենք մեր Եկեղեցին պիտի այնպիսի կենսավորումի ուժու ընթացքի մեջ դնենք, որ մարդիկ ամաչեն զայտ և մեզի՝ քրիստոնաներին, քրիստոնեության համար արյուն թափած հայերին քրիստոնեություն ուզեն քարոզել: Հետուարար, հարգանքը բոլոր մարդոց կարծիքներին: Մենք կրոնական ազատությունը հարգում ենք, բայց մեր ազատությունը որիշ ձևերով մարդիկ շահագործեն: Մեր քրիստոնեությունը Հիսուսի քարոզած վագերական կրոնն է, մեր հայրերի 1700 տարիներ ապրած կրոնն է: Զաման և մարդու օրի մեջ պղտորություն շխանեն, զաման և ցորենի մեջ որու շշանեն: Գնան այնտեղ, որ չկա քրիստոնեություն: Այս է ճշմարիտ առարկությունը, այս է ճշմարիտ միահնարությունը: Հետուարար, մենք կոչիմ ենք, այնտեղ կամ Հայաստանի ամրող տարածքում, Արցախի մեջ և Սփյուռքի մեջ, մեր Եկեղեցին վերակենացնացել, վերստին այն ուժականությանը բերել, որով այդ Եկեղեցին պահպանել է մեր Սուրբ Հայոց հավատքը և մեր նիմիական ազգը: Ի՞նչ են ասել Վարդանանց ներուները. «Հայր մեր՝

զուրբ Անետարանն գիտեմք և Մայր՝ զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ՛՝ Ընդհանրական Հայոց Եկեղեցին: Մենք իրք Հայր կճանշեանք Ավետարանը և մայր կճանշեանք մեր Եկեղեցին, մենք ալ ամենքս անոնց զավակներն ենք, հետաքրքր, մեր Հայոն ու Մայրը, այդ Եկեղեցական ընտանիքը շեն պահենք, առողջ պահենք, առողջ պահենք, գործոն պահենք, որպեսզի մեր ղղուներից և պատուհաններից որիշներ չմտնեն և որոն շցանեն մեր Հայոց փոքր ածուկն մեծ:

Այսօր ին առաջին հանդիպումն է ձեզ հետ, Աստվածառա, չգիտեմ որքան կյանք կտա մեզ, բայց մենք որիշ անգամներ ևս պետք է հանդիպենք: Հոտ և հովիվ պետք է միասին լինեն, որպեսզի որիշներ չգան և մեր հայ ժողովրդի ամբողջականությունը և միությունը չխանգարեն: Միասնականությամբ, համագործակցությամբ ազգ և Եկեղեցի, պետություն և Եկեղեցի գործակցաբար պիտի հառաջ տանենք այն սուրբ առաքելությունը, որ մեր հայրերի մեզի թողած կտակն է:

Աղջունում եմ ձեզ բոլորիդ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և որևէ մեկ ասեն, որ իմ ձեռքից որևէ մի գործ կգա ձեզ համար անելու, վստահ եղեք, որ ոչինչ կիսնայէմ այդ գործը անելու համար: Աստված օրինի ձեզ բոլորիդ, զորացնի ձեզ բոլորիդ: Ամեն»:

Վանաձորից շարապունի ողվեց Ստեփանական, որի վերականգնման գործում մեծ նպաստ ունի Վեհափառ Հայրապետը: Ստեփանականի սահմանագծում քաղաքագլուխ Արամ Բարաջանյանը քաղաքացին իշխանությանց Աերկայացուցիչների և ժողովրդի բազմության մեջ դիմավորեց և ուղեկցեց Վեհափառին դեպի քաղաքի Սուրբ Սարգսի եկեղեցի, որտեղ խոր ողդեղով ժողովրդին, մաղթեց՝ ասելով. «Մեր եկեղեցու հոգևոր արեւ ձեզ հետ լինի միշտ», այն արևը, որի ժերմությամբ մեր սրտերից պիտի համար ցուրտը, որի լուսի ծավալումով պիտի «մեկնի մէզն ու մատախուղը, գնայ գիշերն» և թագավորեն Տիրոց խաղաղությունն ու սերը՝ Սուրբ Հոգու անուշանաւ ու անուշաբույր Աերկայության պատուիները:

ԱՅԺԿարագրելի էր Վեհափառի հանդիպումը ժողովրդի մետ Ստեփանավանի մշակույթի պալատու, որտեղ քաղաքային իշխանության կողմից Վեհափառ Հայրապետին շնորհվեց քաղաքի պատվալոր քաղաքացու կոչումը, որից մետք Վեհափառը օրինեց Աերևա ժողովրդից.

«Սիրելի հոգևոր եղբայրներ, առաջնորդ Մքրազան, քաղաքավոլու Ստեփանավանի, քաղաքային խորհրդի անդամներ և թանձնագին հայրենակիցներ, նոյն արյունը և նոյն անունը կրող համարադրացիներ, քանզի ես ալ Ստեփանավանցի եղա, անսվասիկ փաստը: Խայց այնուղ մենք գիր գրած էիք դուք, մեկ բառ գրած էիք, վասահ եմ՝ ձեր սիրուց և հարգանքի արտահայտություններ ատամկա: Դուք ըստած էիք այդ գիրին մեջ Պատվո քաղաքացի: Ես այդ գիրը պիտի փոխեմ ինձի համար, կսահեմ զայն իրեւ ձեր սրտին ազնիվ արտահայտությունը, ես պիտի գրեմ անոր տեղը պարտվո քաղաքացի: Պարար ունիմ այս քաղաքին հանդեպ և ոչ միայն պատիվը կվայելու առ քաղաքահին ուսառ:

Այսօր ևս ունիս իմ խորիս մեջ երեք հասցեներ, երեք խումբեր, երեք դասակարգի հարթենականներ, որոնց սովորությունը են իմ խոր:

Սուաշին տարեց սերունդին, այն հայրերն ու մայրերն են, որոնք վեսերան առունեն են շահել իրենց զնոհողութան օնուր և ոչ ունիսկա ե-

Անդրակինություն և բարեկամություն



կած որպես շնորհ: Մենք այսօր և վաղը ողջ Հայաստանի տարածքի փրանչելու և մեր պատերազմից ազատագրման 50-ամյակը: Մեր Հայաստանի Հանրապետության նախագահը, այժմ որիշ ազգերի, որիշ պետությունների պետերի հետ միասին ներկայացնում է հայ ժողովրդի հարգաճը այն բոլոր ազգերին, որոնք մասնակցեցին պատերազմին վերջ տալու և մեր Հայութիքը ազատագրված տեսնելու սրբազն, Ավիրական գործին: Տեսնում են, որ ձեզնից շատերի կործքերը շրանշաններով են այսօր հարուստ, բայց այդ շրանշանները երկնքից շնետվեցին անձնին հման: Դրանք շահվեցին ձեր հերոսական մարտնչումին որպես արդար և բնական գինը և վարձատրությունը: Ձեր սերունդին երբ կնայեմ, կասեմ՝ մենք երախտագետ ենք ձեզ, որովհետև դուք այնպիսի սերունդ պատրաստեցիր, որի հաջողությունները այսօր բազմապատիկ որախություն ձեզ պետք է պատճառեն, որովհետև դուք տքնեցիր, դժվար, շատ դժվար օրների միջից անցաք, բայց ձեր և գորգուրաճը հանդեպ ձեր զավակներին այնպես արտահայտեցիք, որ մենք մեր սերունդի միջին սերունդի հայերս միայն երախտապարտությամբ լցված կրնանք ըլլալ ձեր հանդեպ:

Չեզոք ոմանք Համաշխարհային Առաջին Պատերազմից հետո, Յեղասպանությունից հետո, տեսան մեր ժողովրդի շարդի հետևանքով կրած այն տառապանքները: Դուք իմ հոր սերունդն եք, ես չեմ կարող ձեզ մոռանալ, որովհետև դուք առաջին և դառնագոյն տառապանքը տեսնելուց հետո կրնցիք մեկ այլ արհավիրք՝ 70 տարիների այն վարչակարգի տիրապետությունը, որ ձեզ ասում եք՝ դուք չեք կարող ձեր ճակատագիրը որոշել, մենք վերից պիտի որոշեմք ձեր անեկիքը: Դուք մարդ եք, բայց կամք չունեք, դուք հայ եք, բայց ազգային կամք արտահայտելու իրավունք չունեք: Ահավասիկ իմ հայրեր և մայրեր. դուք այսօր մեզնից ավել, փոքրիկներից, երիտասարդներից, չափահաններից ավել որախանալու, առ Աստված գոհություն մատուցելու իրավունքը ունեք, որովհետև ցավը տևաք, ահավասիկ, կտնունեք նաև մեր ազատագրումը, մեր անկախացումը:

Ձեր սերունդից քանի՛-քանի՛ հոգիներ գնացին հողին, առանց տեսնելու այն օրը, որ դուք տեսաք, ազատ, անկախ Հայրենիքը: Երազեցին շատերը, տքնեցան շատերը, տառապեցան շատերը, երանք այժմ երկնքից են նայում, երանք հրճվում են երկնքից: Դուք երկրի վրա եք: Սրտանց աղոյում եմ առ Աստված, որ ձեր կանքը երկար պահի, որպեսզի դուք վայելք մեր Հայրենիքի անկախացլաւ պետականության այս օրերը և ձեր օրինանքը տաք իրեն երեց սերունդի անդամներ մեր նորակազմ Հայրենիքին և երա երիտասարդ բոլոր նվիրյալներին՝ Նախագահից սկսած մինչև ամսնեն պարզ պետական պաշտոնյան:

Երկրորդ հասցեն, որին ուղղում եմ իմ խոսքը միջին սերունդի մեր հայ եղբայրները և քոյլերն են: Այդ սերունդի մեջ նկատի ունենալով մեր սիրելի Արամը՝ քաղաքազոյիս Ստեփանավանի, և երա բոլոր օգնականները և բոլոր այն անձերը, որոնք լինեն հրապարակային, հանրային պատահանատվության մեջ, լինեն անձնական գործի մեջ, տասնու են այն շալակը, որ մեր հայրերը մեր ուժերին դրեցին: Ես մի պատկեր ունեմ, որ որիշ տեղ գործածել եմ, բայց Հայաստանում այդ պատկերը տակավին չեմ գործածել: Ասովածաշնչի մեջ մենք կարդում ենք, որ երբայցի ժողովրդի զավակները ուզում էին գրավել Երիքով քաղաքը և չեն հաջողություն: Ամեն անգամ հարձակվում էին և, սակայն, հետո մղվում էին: Եվ մի օր Տապանակ Ռիմտին շալակնեցին քահանաները և յոթ անգամ դարձան Երիքով քաղաքի շուրջը, և

Երիբով պարհապնդը խորտակվեցին: Ի՞նչ կար այդ տապանակին մեզ. Տասնարանց պատվիրանները Սովուսի, ծաղկալ գավազանը Ահարոնի և մասնաւուն, իբրև հիշատակ անապատացին կամքեն ազատագրման: Եթեր նվիրական սրբություններ այդ ժողովորդին, որուն դիմաց բոլոր տեսակի խոչընդունելը հաղթահարվեցին: Հիմա ես ել ասում եմ, մեր հայ ժողովորդի Տապանակ Ավատին ո՞ր է: Այն շաղակը անտեսնելի, խզի մեզ, նոզու մեջ, սրբի մեջ տարփած այն տապանակը, որի մեջ կան երեք նվիրական սրբություններ՝ Հոսանքորչի հավատք-արշունիքի կամքենից մի ճառագայթ, Մեսրոպ Մաշտոցի Գիրը, Քաջն Վարդանի Սուրբ: Եթեր նվիրականություններ: Եթե այս երեք սրբությունները մեր ժողովորդը տանի իր հոգու մեջ կենքանի, այն ատեն ո՞չ մի վտանգ, ո՞չ մի պատճառիք չի կարող Հայատանին ընկնել: Ոգու հարատոթյունն է, որ մարմնին ուժ կուտա, կանքին իմաստ կուտա: Ասրեցե՛ք այս կյանքը առանց այս երեք սրբությունների, ի՞նչ իմաստ ունի կյանքը. «Կեր, արք և ուրախ լեր»: Եթե այս է կյանքը, դա ի՞նչ կյանք է: Դա բնախոսական կյանք է, դա զգայարանական կյանք է: Մարդու որիշ է, մարդու զաղափարների կհավատա, զաղափարներից ուժ կառնի, հավատրով կանանի, նախատակ կհետապնդե՛ արվեստ, մշակույթ, մեկ խորով՝ հոգու պայծառ արտահայտություն: Եթե երբեք այս արժեքներին, այս բարոյական հասկացություններին կապված չի-նեմ, մենք չենք կարող մեր կյանքը առաջ տանել դեպի պայծառ ապագան:

Միշին սերունդին՝ մեր սերունդին և նաև անոնց, որոնք այժմ պատասխանատվություն են վերցրած ժողովորդի կամքով, ժողովորդի ընտրությամբ և իրենց էլ ամբողջական և անվերապահ նվիրաբերմանը, այդ սերունդին ասում եմ. Շաղակը բարձր պահեցեք, վայ՝ այն օրվան, երբ այդ երեք սրբությունների Տապանակ Ավատին մեր ուսերից ցած զա և հող տեսնի: Դա այնպիսի մի սրբություն է, որ ոսից ուս կփոխադրվէ և գետին չի կարող տևանել: Դա մեր հոգուց հոգին կանցնե, սերունդից սերունդ կփոխանցնե, որպեսզի մնա կենդանի և դրանով ապրենք հավերծ:

Միշին սերունդին էլ ասում եմ. պատվով, բաշությամբ, պատասխանատվության զգացումով, ընդհանուրին շահին նվիրվելու զաղափարով հառաջ տարեք այս նվիրական շաղակը, որ մեր պատմության ներուներից, մեր սրբերից, մեր Հայրապետներից ծառանզություն է թողնված մեզ:

Երրորդ հասցեն դուրս եք, երեխեր, դպրոցական երեխեր, երիտասարդներ, պատանիներ: Դուք եք, որ այժմ պիտի կամավորվեք, պատրաստվեք: Ձեր պայծառ աշքերի մեջ, ձեր այդ սեզ ճակատների վրա մեր ամրող Հայոց ապագան է, որ կենաչ: Մենք կանաց-կամաց կերպանք, բայց դուք կամաց-կամաց կօքաք: Եվ դուք եք, որ պիտի հաջորդեք միշին սերունդին: Հովհաննեսի Թումանյանն ասել է. «Ապրեք երեխեր, բայց մեզ պես չապրեք»: Ես բանատեղծ չեմ, ենոու-հեռու է ինձնեւ ամենայն հայոց բանատեղծ լինելու այդ շնորհը և պատիք, բայց ես ալ, որ մի հոգենր Ամենայն Հայոց եմ, եկեղեցու պետ, ենտերաք, Թումանյանի ասածը կարող եմ մի թիշ փոխել: Թումանյանն ասել է. «Ապրեք երեխեր, բայց մեզ պես չապրեք», իսկ ես իբրև Ամենայն Հայոց Խարողիկու ասում եմ. «Ապրեք երեխեր, մեզնից ավել ապրեք»: Այնույն սապրեք, որ ձեր հայրենը, եթե բաներ կացին, որ չկարդացան անել, դուք անեք, ինչպես նրանք արեցին ավելին, բայց ին որ արեցին իրենց հայրենը: Դուք ավելի լավ պիտի լինեք, բայց մենքը: Դուք ենք արժանի զավակները, որ տանեք ազգի կյանքը բարձունքից բարձունքը, փառքից փառք, դեպի վերելք, միշտ հեռուն նաևեք, միշտ դեպի լավը հա-

յեր: Եվ բոլորիդ հիմա մեկ խոսք պիտի ուղղեմ և դրանով կփակեմ: Մենք պիտի շարժվենք հետևյալ սկզբունքով.

Հայաստանը չէ այն, ինչ որ էր տասնամյակներ առաջ: Հայաստանը է այն, ինչ որ ուզե, որ նայ ժողովորդը ինքը ըլլա: Հետևաբար, ի՞նչ կողեր, որ ըլլա ձեր երկիրը՝ լավ կուզեր, լավ պարեր: Ոչ թե ուրիշից սպասեր, ձեր ձեռքերի շնորհները խառնեցեր այս հողին, այդ հողից հյանք հանեցեր, որ մեր Հայրենիքը նայի ձեռքով շինվի, հայրենաբանի հայության և նաև արտասահմանի հայության միասնական գործակցությամբ և օճաւղակությամբ: Ժողովրդի խոսքը մտիկ անենք. «Դու քեզ օգնի, Սատված քեզ կօրմնի»: Եթե նույնիսկ անձրև զա, ինչպես ժողովրդական առածն ասում է, ցնցուղը ձեռքից մի զցիր: Ցնցուղը միշտ պահիր ձեռքուսդ, աշխատանք, բռ բաժինը բեր, Սատծու բաժինը բռդ Սատծուն, որովհետև Նա կօրհնի նրան, ով արժանի է օրինավոյան, ով ինքն իրեն կօգնի, իր նմանին կօգնի և Հայրենիքի ծաղկմանը իր մասնակցությունը կըկրի:

«Ընորհը Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ անեւսեանդ: Ամէն»:

Սունկանաւալսնից Վեհափառը շարժվեց դեպի այս այցելության վերջին հանձնվանքը՝ Սպիտակ քաղաքը: Երշրուաշարժից հիմնովին ավերված Սպիտակը այսօր վերականգնվում է հայի ճակատի գրով ու Տիրոջ անսուն Խոսրով ամրացած պիտի կերտի նոր արջալոյս:

Սպիտակի սահմանագծում քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու նովիկ Սպիտակ արեղա Սողոմոնյանը, քաղաքագլուխ Հ. Սաստրյանը և քաղաքային իշխանության Անրկայացոցիշները քաղաքի և շրջակա գյուղերի ժողովրդի հետ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին՝ նրա միջոցով տեսելով իրենց ապրելու հույսն ու գրավակիսնը:

Սպիտակից քիչ հեռու գտնվող Լուսագուղ վայրում էլ Վեհափառն իր վերջին պատգամը տվեց իր հավատացյալ նոտին, որը կարելի է բնորագրել որպես Ծիրակի թեմ կատարած այցելության ամփոփում և նրավեր աշխատանքի ու կյանքի՝ Սատծու փառքի ծառապության և Հայրենիքի շինության համար:

«Սիրելի հոգնոր եղբայրներ և հարգարժան պետական քաղաքային իշխանությանց ներկայացոցիշներ և թանկագին հավատացյալներ՝ հարազատներ,

Այս արևին ներքեն, Սատծու ստեղծած բնորացն տաճարի մեջ, ևս երբ առաջին հանդիպումն եմ ունենում Սպիտակի ժողովրդի հետ, փառք եմ տալիս Սատծուն, որ արևով եմ տեսնում ձեզ բոլորիդ: Սրբ լինի միշտ ձեր բոլորի կյանքը: Անձրեւ, մուշը շատ ծանր նառապ ձեր բոլորի վրա: Ծիշտ ասվեց, որ Սպիտակ անուեր առնչվեց մեր Անրկա մամանակների պատմության ընթացքում ցավի, վշտի, կործանումի, մահվան, սոգի բառերին հետ: Սպիտակ ասողը կնիշի երկրաշարժը: Սպիտակ ասողը կնիշի այն հազարավորների անենա մեկնումը այս աշխարհից, որ իրենց կամքից կախում չուներ և հանկարծ բնորացն մեկ անսպասելի ցնցումի հետևանքով նրանք, որոնք երկրի վրա էին, հանկարծ երկրի տակը թաղվեցին: Ահավասիկ, շորջ լոր տարիներ են անցել, ես երանց հիշատակը չեմ մոռանա և ձեզ խոսք առաջ առաջ իմ աշքերը դեպի երկինք եմ բարձրացնում առ Սատված և նրանց հիշատակն եմ օրինում: Թող նրանք երկնքից դիտեն մեզ՝ ապրող-

Աերիս: «Ռդրամ մեռելոց» և այժմ «կոչեմ ապրողաց»: Ճիշտ է, մանը եկավ, վիշտը այցելեց մեզ, բայց ինչպես ճիշտ նշվեց, ես առագել ես պիտի շեշտեմ այն ճշմարտությունը, որ մենք եղել ենք կյանքի համար և ոչ թե մահպես: Մահը մեզ պիտի պատահի ուզեմք կամ չուզեմք, այսօր կամ վաղը, այսպես կամ այնպես. դա մեր կամքից վեր է: Դա մարդկային մեր գոյության հետ առնչված բնութեալան, բնախտական երևոյց է: Խնչ որ մեզի տըրվել է, դա կյանքն է: Մենք կոչված ենք ոչ թե մահվան մասին մտածելու, որի մասին մտածելու ավելորդ է: Մենք ոչինչ կարող ենք փոխել մահվան իրողությունից: Մահը մահ է ամեն տեղ, բայց մենք ստացել ենք Սատուց կյանքը զայն ապրելու համար, զայն արժեքավորելու համար: Ծյապես, որ երբ մահը զա ու տանի այն, ինչ որ տարվելիք է, այսինքն ֆիզիկական գոյությունը մեր, մենք չգնանք մահվան հետ անհետ, մնանք մենք իբրև հիշատակ, մնանք իբրև գործ, մնանք իբրև զաղափարի վկաներ, մնանք իբրև հավերժական Սատու կանչին մասնակից անձեր այս երկրի վրա: Մեր բրիստոնեալան հավատքը մեզ անմահություն կներշնչի: Այդ անմահության շունչն է, որ այժմ պետք է մեր բոլորի՝ սպիտակցիների և ամբողջ աղեսի գոտի կոչված շրջանի ժողովրդին մեջ վերսին շնչապորի անմահության զաղափարը: Եղել ենք կյանքին համար, պիտի նայենք կյանքին և այդ կյանքը պիտի արժենորենք այնպես, որ երբ մահը զա, մեզ չկարենա տանել ամբողջությամբ և մնանք մենք իբրև հավերժական ժողովորդ:

Եղբայրներ և բույրեր, անավասիկ ճիշտ մեկ ամիս անցավ այն օրից, երբ ազգի կամքով, Սատու տնօրինությամբ ես կոչվեցի այս ամենեն ծանր պարտավորության, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնն է մեր Եկեղեցու և ազգի կյանքի մեջ: Երևակայեք դուք, 35 թեմեր Հայաստանում, Արցախում, Անխիլին Սովորական Միությունից անշատված Երկրների մեջ, ինչպես Պաշնակցային Ռուսաստանի, Աւկրանիայի և մյուս Երկրների մեջ, արտասահմանի շորս տարածի վրա, և այդ 35-ի մեջ ես բնութեցի Ծիրակի թեմը, որպես առաջին թեմ Հոգվագետական այցելության համար, որովհետև իմ ըստրոնուով Եկեղեցին եղել է առաջին ներթին կարիքավոր, աղետից այցելված, բայց ոչ թե աղետված, մահվանից այցելված, բայց ոչ թե գերեզմանված, հուսահատությունից այցելված, բայց հուսով ապրող և ապրելիք ժողովրդի մետ: Պարզ խոսքով՝ եկել եմ ասելու, որ ձեզ հետ եմ ձեր նեղության օրերին և եկել եմ մասնակից հառնալու կարողության գերազուն աստիճանի շափով այն բոլոր վերակառուցման, վերականգնման աշխատանքներին, որին այժմ լծվել է ամբողջ, այսպիս կոչված, աղետի գոտու ժողովորդը, և դրա մեջ հատկանի Սպիտակի ժողովորդը:

Աղոթում եմ նաև առ Սատված, որ աղետի գոտի արտահայտությունը կամաց-կամաց մեր բառարաններից դուքս հանիլի և կոչեմք այս շրջանը վերակենդանության շրջան, վերածաղկման շրջան: Բնության արհավիրքները հաճախ բնության վրա այնպիսի շարիքներ կրերեն, որոնցով բնությունը կվնասվի: Կզան փոխորիկը, երաշուը, մարախը և բնության գեղեցկությունները և բնության գորութեալականությունները կոտանեն: Բայց կզա գարուն, կվերածաղկի այդ բնությունը: Կյանքն էլ բնության հետ կարելի է նմանեցնել: Կզա մահ, կզա հիվանդություն, կզա աղետ զանազան տեսակի, բայց մարդը, ազգը, ժողովորդը եղել է վերակենդանության համար և մենք այդ վերակենդանության շունչն է, որ ուզու ենք բերել ձեզ բոլորիդ: Եկել ենք աւելու ձեզի, մի՛ խնայեք ոչ մեկ ճիգ՝ ձեր ձեռքերով ձեր կյանքը վերակա-

ուղղվու համար: Եթե դուք ձեր գերազույն չափի կարելին ամեր, հավատացեք, Սատված ձեզ կօգնի: Եթե մարդ ինքը ոչինչ անի անձնապես, ո՞չ որ իրեն կարող է օգնել, որովհետև Սատված անզամ տիեզերքի մեջ գործելու համար մարդն է ասեղծել, մարդը եղել է լծակը տիեզերքի, մարդը եղել է պասկը Աստծու ստեղծագործության: Թաճկագին զավակներ Հայաստանաց Եկեղեցու, եթե ճիշտ եք հավականում բրիստոնեական մեր հավատքը, մեր հավատքը եղել է մահվան հաղործու հավատք: Այդ հավատքն է զինել մեր բոլոր նախնիներին: Այս Սպիտակի կամ աղեւոյալ գոտու աղեւոյաց շատ-շատ ավելի մեծ աղեւոներ է անցկացրել մեր ժողովուրդը իր պատմության ընթացքում:

Դուք, մանավանդ դպրոցականներ և երիտասարդներ, եթե նայեք պատմությանը, պիտի տեսնեք, որ պատմեցան տարիներ, որ ավելի քան երկու ու կես միլիոն ժողովուրդ իրենց տներից դուրս թափվեցին, արմատախիլ եղան ցեղասպանության ժամանակ: Եթե զգիտեք, գնացեք, ձեր ուսուցիչներին հարցրեք: Ես իմանում եմ, որովհետև իմ հայրը և իմ մայրը այդ արտորի ժամանակ փրկվել են, իրենք տեսել են իրենց յոթ եղբայրների և քոյրերի մահը: Փառք Աստծու, դուք ձեր հոգերի վրա մնացիք, նրանք՝ վերապրողները, իրենց հողերից կ դուրս չարտվեցին: Անեն մեզը մի երկիր ընկալ, անձանո՞ւ լեզուներին և կյանքին. իրենց ունեցած ժառանգությունից ոչինչ կրցան տանիլ այնտեղ. ցնցուիի հման հագուստներով գնացին, բայց եղի ապրեցին:

Սպիտեցին, որովհետև հավատքով գործեցին, բրիստոնեական հավատքով ներշնչվեցին, կյանքին հայեցին: Ես գիտեմ այդ սերունդը մեր պատմության մեջ, անձանք տեսել եմ այդ սերունդը՝ որքերի սերունդը: Դուք կարող եք երևակայել այդ տարիներին 130.000 որք անհայր ու անմայր փոքրիկներ: Այն վանքում, որ ես ապրել եմ, մեծացել եմ Սնթիլիս կոչված վանքը Շիրամանում, 1400 որբեր են ապրել այդ փոքրիկ տարածության վրա, որ հետո վերածվեց կաթողիկոսարանի: Իրենց Հայրենիքից պոլիված, արմատախիլ եղած տղաներ գնացին, չարքաշ աշխատեցին, քար կտրուեցին, համփա շինեցին, կոշիկ կարեցին, կոշիկ ներկեցին, կոշիկ հնակարկատեցին, մինչև որ հասնեն արքեստի, գիտության, տեխնոլոգիայի և որիշ բարձր մակարդակների: Բայց նրանցից ոչ որ չնորաց, մորացկան չեղավ: Արար մեծ եկեղեցականներ, արար աշխարհի մեծ դեկապարներ ինձ անձանք ասել են, որ համերը երբ գնացին այնտեղ, նրանց համար, նրանց դիտելով, արարները մի առակ են ստեղծել. «Մի մորար, նայի՛ր հայերին»: Ի՞նչ մեծ պատիվ է մեր ազգի համար:

Հետևաբար Սպիտակի թանկագին ժողովուրդ, արեք ձեր բարձրագոյն աստիճանի կարելին, նայելով միշտ կյանքին, հույսով միշտ լեցուն և ոչ թե հուսահատությամբ, ողբով, հոգեկան աղեկությամբ: Մի լիներ այսպես կյանքից դժողով ժողովուրդ: Եղեք կյանքով խանդավառ ժողովուրդ: Ասեք մահվան. դու տարար այն, ինչ որ կարող էիր տանել, բայց մենք ապրում ենք կյանքի համար և պիտի ապրենք այնքան ատեն, որքան Աստված մեզ շունչ է տվել, ստեղծագործականորեն պիտի աշխատենք: Մենք պիտի հոդին մեջ աշխատենք, պիտի աշխատենք բոլոր այն գործարանների մեջ, որոնք կամաց-կամաց, վերաշինվելով են, բայց անաշխատ, անզործ մարդը ինձի համար չի կարելի ամբողջականորեն հայ նկատել: Հայը եղել է գործի համար, այս երկրից կյանք հանելու համար:

Դուք եւ եղեք հոգով զինված, արի, հայու վայել գավակենք և այդպիսի կրամքով, կրամքին նայող և անմահութանը շահող ազգային անձեր Սպիտակի շրջանուն: Թող Աստված ձեզ ուժ ներշնչի, հույս ներշնչի և աշխատանքի կամքը պրկի, որպեսզի երբ որդիշները զան, ձեր ձեռքի «հունար»ները տեսնեն, դաշտերը թիշ մը պվելի կանաչած, բերքը պվելի առատացած, տները մի թիշ պվելի շինված և ասեն, այս ժողովորդը ոչնչից այս է արել, դուք եւ ձեր ձեռքերը միացրեք նրանց ձեռքերին, որովհետև նրանց ձեռքերը աշխատող ձեռքեր են և ոչ թե նորացող: Այս թող լինի իմ առաջին պատգամը ձեզ բոլորիդ ուղղված, մանավանդ մեր այս սիրատուն փոքրիկ աղջիկներին և տղաներին, որոնք դպրոցուն պետք է սովորեն կրամքի իմաստը: Իրենք երբ մեծանան, ասեն, թե մահը տարավ մեր նախորդներին, որքան մանուկներ դպրոցական զոհ գնացին, բայց եկի մենք կանք: Եվ այնքան ատեն, որ կանք, մենք Աստծոն, մեր Մայր Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Հշիմաննեն և մեր Հայաստանի անկախ պետականությանը պիտի հավատարիմ գտնվենք և մասնակից դառնանք, որովհետև Աստված այս աղետից հետո մեզի մեկ բան պատիվ արեց, այն է՝ մեզի տվեց ազատ, անկախ, ինքնիշխան Հայկական պետություն: Անցնող 70 տարիներին ինչ որ կորցդինք իբրև ազգ մեր սեփական կամքի արտահայտության տեսակետից, այսօր դա վերաշնորհ նոր կրամքով, Հայաստանի անկախ պետականության ամրացումով և զարգացումով, որովհետև պետությունը մենք ենք: Մեր բոլորի մասնակցությամբ է, որ կիֆին պետությունը և Եկեղեցին, ինչ որ դուք կուզեք, որ առ լինի վասն փառացն Աստուծո, վասն շինության և պատվոյն ազգին Հայոց և վասն պայծառության Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավիտան հավիտան հավիտանից: Ամեն:

Սյցելության ամենավերջին հանգրվանը Սպիտակի թիթեղաշեն Սուրբ Հարություն եկեղեցին էր Հարության խորիդանիշը և այդ Հարության ազդարարողն ու համագունդը է Սուրբ Էջմիածինը իր ազգությի Գանձալով, որի ճշմարիտ և անաղաոտ պատկերն ու նկարագրի հությունը Հռոմ անսպաս հեղման շնորհով բացահայտել է անմահանուն Հովհան Մատուցի Հայրապետը. «Յեկեղեցիս օրինուցք զԱստուծ, եւ զՏերն յաղբերացն Խորակէի, անս սիրեցէք զեկեղեցիս, եւ սիրեցալք յեկեղեցոյ, զբարացու բաղցրացոյ եկեղեցի, զգաւազան բնտելացոյ, զգալս զգախնան առար գձեզ պայծառացոյ, զբնանիս ճշմարտութեան ամաչեցոյ» Ամեն:

Սուրբ Հարություն եկեղեցում սոլոթքից հետո Վեհափառն սցցելեց և ծանրություն բաղադրու կառուցվող նոր կեկեղեցու շինարարության աշխատանքներին, խրախունեց, բացակերեց և օրինեց աշխատանքները իրականացներին, այցելեց և երկրաշարժի զոհերին ի հիշատակ կանգնեցված խաչքարի առօլ աղոթք և խնդրանք բարձրացրեց առ Բարձրացն Աստղած, որպեսզի Տերը երկնային խորանների լուսերի մեջ պահի նրանց անման հոգին, ինչպես նաև ոժ և կորով պարգևի նրանց կրամքն ու գործը շարունակողական:

Այս հոգեշունչ արարողությամբ էլ Վեհափառ Հայրապետն ավարտեց այցելությունը Շիրակի թեմ և ոչ երեկոյան վերաբարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ այս անգամ արդեն ժողովրդի շունչը խառնելու Խման Սուրբ Մեղանի խաչից ճաճանչող Լուսավորչի շնչին:

Վեհափառ Հայրապետի Շիրակի թեմ կառարած Հովհաննելուական այցելությամբ ժողովուրդը հանդիպեց Աստվածական Սուրբ Էջմիածնին, հանդի-

պեց Տիրոջ քարոզած բաջ և բարի հնվվին, որ իր անձը ընճայաբերել է Գառան գոհասեղանին որպես զոհ ընտիր և անարաս: Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունից Ծիրակ աշխարհը շարժվեց... երկրաշարժ էր, սակայն ոչ փլուզման ու ասերի, այլ Վերինանոսի և կյանքի, հոգիների և սրբութի միահյուսման, հավատքի, հույսի և սիրո վերընծուղման, Տիրոջ հրեղեն համբուրից կրակե քարացած լեզուների հմատ ծաղկած Սուրբ Էջմիածնի համբուրնական հնոց-ձուլարանում, հոգիները ապականող ցանված որոնս ու փառակալած մասնգ մաքրելու շարժ էր Աստվածապաշտության և ինքնանաւողության լուսարձակի հերքը: Սղեսի յոթ տարվա մղձավաճից հնոտ Վեհափառի շորբերով հնչեց Արարչի հրամանը. «Եղիցի լոյս» և վատահ ենք, պիտի չուշան «Եւ եղի լոյս»-ը, որը տեսնելու և դրանով ապրելու ճշմարտությունը ի լուր ողջ հայության և աշխարհի դողլանչեց Մարտվանքի Լուսակառուց Խորանից:

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԿԱՎՈՐ ԳԱԼՍՏՅԱՆ





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՍՈՒՐԲ ԽՍ. ԶԻ ՏՈՆԻՆ
(14 մայիս)**

«Յանուար Հօր և Որդու և Հոգուն Սրբութ Ամեն»:

«Զոր տեսաք և լուսը՝ պատմենք զձեզ, զի և դուք հաղորդութիւն ու հիցիք ընդ մեզ, և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր և ընդ Որդու իրու Ֆիտուսի Քրիստոսի» (Ա. Յովհ. Ա. 3—4):

Քիչ առաջ, այս Սուրբ Եկեղեցու կամարների ներքեւ ընթերցուեցին այս բառերը, որոնք քաղուած են Յովհաննու Առաքելոյն առաջին թղթից և առաջին գլխից: Ֆիտուսի ամենէն սիրելի աշակերտներից՝ Յովհաննեւը ասու է. «Այն ինչ որ մենք տեսակը և լսեցինք, ձեզի կպատմենք, որպէսզի դուք մեզի մետ հաղորդակից դառնաք և մեր հաղորդակցութիւնը լինի ամբողջական Հօր Աստծոն, Նրա Որդուն Ֆիտուսի Քրիստոսի հետ»:

Ֆիտուսի կեանքը բաժանող, Ֆիտուսի մատերութեան մէջ ապրող առարկալները, Ֆիտուսի Համբարձումից յատոյ, համարձակ, յանդուգն, արի հոգիով քարոզեցին Ֆիտուսի ճշմարտութիւնները, որովհետեւ չէին կարող իրենք իրենց մէջ պահել Լոյսը: Լոյսը իր բնութեամբ իսկ ճառագայթում է. ևա ով լոյս ունի իր մէջ՝ չի կարող իր անձին և իր սեփական, անհատական կեանքի մեղ պարունակին մէջ պահել այդ լոյսը: Խճչակն Աւետարանի մէջ ասուել է, լոյսը աշտանակի վրայ կը դրուի և ոչ թէ անկողնու տակ, ոչ էլ զրուանի ներքեւ: Ֆիտուսի առաքեալները սկաս այնպիսի ուժգնութեամբ, յարատեսութեամբ և մարդկայնօրէն անկարելի թուող քաշութեամբ լոյսին ճառագայթները դառնալ աշխարհին չորս կողմերը:

Մենք՝ հոգեւորականներս, որպէս նրանց՝ առաքեալների անարժան յաշորհները, մենք էլ պարտաւորութիւնը ունենք նրանց ճանապարհին հետեւելու և դառնալու վկանները այն ճշմարտութիւններին, որոնք Աւետարանից են բխում և եկեղեցու կեանքից են անցնում և մեր փորձառութեան միջից են փոխանցում:

Աւետարանի այդ ճշմարտութիւններից շատերը ինձ համար վերստին բարձրութիւն գգեցան, երբ անցնող շարաթ ինձ վիճակունց Աստծու օրհնութեամբ և տնօրինութեամբ իմ առաջին Հովուապետական այցելութիւնը կա-

տարեկո Շիրակայ թեմում՝ Հիւսիս-արևելտեան շրջանում մեր Հայաստան աշխարհի, այն մասը մեր երկրի, որ սրանից եօթ տարիներ առաջ երկրաշարժից այնքան խորը ցնցուեց, և ահաւոր ողբերգութեան մի դուռ բացուեց մեր ժողովրդի կեանքում։ Եօթը տարիներ առաջ այդ երկրաշարժից վճառուած, երկրաշարժի զոհ գնացած ձեր հայ եղբայրներին և բոյթերին ուզեցի զնալ առաջին անգամ Հովուապետական ացեղութեան, որովհետև ցանկացայ եկեղեցու հոգածութիւնը հանդէպ ժողովրդի, յանուն Աստծու, յանուն Քրիստոսի ցոյց տալ առաւելաբար, տառապող, զրկուած, վերքից տակաւին կըտտացող մեր ազգի այն անդամներին, որոնք գտնուած են մեր երկրի Հիւսիս-արևելտեան շրջանում։

Եւ այսօր Մայր Արոռ Սուրբ Էջմիածնի սրբազնասուրք այս թեմից ուզում եմ իմ ապրումները և տեսածները պատմել մեր ժողովրդին, և նրանց միջից անդրադառնալ այն հշմարտութիւններին, որոնք մեր կեանքի համար կենսական են, եթէ մենք ուզում ենք այդ կեանքը լինի հարազատօրէն բրիստոնէական, վաւերականօրէն մարդկային և հշմարտօրէն հայկական։

Միրեկի՞ր, Աստուած ինձ ուժ տուեց, փառը Նրան, որ ես գտնուեցի զրեթէ բոլոր շրջաններում, գրեթէ բոլոր ծխական այն համայնքների մէջ, որոնք կազմում են Շիրակայ թեմը։ Սկսեցի գիտերից, գնացի Ներքին Բազմաբերդ, անցայ Թալին, գնացի Մաստորա, Սառնաղբիր, Մարալիկ, Չորսակապ, գնացի Արթիկ, Հատիճ և ապս Գիւրի, և Գիմրիից յևսոյ մինչև Աշոցքի շրջան, գնացի մինչև Սպիտակ, մինչև Վանաձոր և մինչև Սունիանաս։ Եւ ի՞նչ տեսայ. հանդիպեցի գիտացու, չարքաշ մարդու, որ իր ձեռքերն է խառնում հողին և իր կեանքն է իր ձեռքերովը, իր բրտինքովը շահում։ Գնացի բաղարացի մարդին, տեսայ նրա բնակարանային պայմանները, հանդիպեցի մանուկներին, դպրոցական, երիտասարդ, հանդիպեցի մտառրական, ուսուցիչ, արուեստագէտ դասակարգերին, եղայ տառապեալին հետ, հաղորդուեցի գինուորականներին հետ, խորհրդակցեցի մեր հոգեռական եղբայրներին հետ, գտնուեցի մեր պետական բաղարացին իշխանութեանց Եերկայացուցիչներին մօտ, մի խօսքով՝ ժողովրդի բոլոր խաւերի, ժողովուրդը և ազգն ու եկեղեցին բաղկացնող բոլոր տարրերին հետ կարողացաց շփում հաստատել, ուղղակի հաղորդութիւն ստեղծել և նրանց պատի տրոփը զգալ իմ երակների մէջ։ Այդ բոլորից ես բաղում եմ հետևեալ զիսաւոր հշմարտութիւնները։

Առաջին. **Փառը Աստծոն,** բրիտունէական հաստարք կենդանի է մեր ժողովրդի մէջ։ Ես դա տեսայ այն սիրալիք, շերմօրէն ընդառաջող դիմառութեան մէջ, որ ժողովուրդը ցոյց տուեց։ Հաւատրի ծարաւը, բրիստոնէական հշմարտութիւնների հանդէպ զգացնութիւնը առողջ է մեր ժողովրդի մէջ և նա, ով կասի, թէ անցնող 70 տարիների ընթացքում մեր վրայ պարտադրուած վարչակարգի բերունով հաստարք անհետացել է սիսակ է խոսում կամ սուս է ասում։ Հաւատրը առողջ է։ Կը մնայ, որ այդ հաստարք զիտակցական ապրումի, զործի, վարուեակերպի վերածուի մեր ժողովրդի բարոյական նկարագրի վերականգնման, առողջացման համար ե՛ւ իբրև մարդ, ե՛ւ իբրև հայ, բրիստոնէաշոնց պատզամներով մեր կեանքը կատալարկու իմաստութեամբը։ Եւ այստեղ եք, որ տեսայ առաջին վերքը՝ «Հոնձը բացում են, և մշակը՝ սակաւ», — ինչպէս ասում է Աւետարանի մէջ։ Այս՝ պէտք ունենք մենք մենք այդ ժողովրդին զնալու, այդ ժողովրդի կեանքին մէջ մտնելու, այդ ժողովրդի կեանքի շրջագի մէջ Աւետարանը բարգմանելու։ Մի խօսքով եկեղեցին պատ, շահ, խորան, կամար, գմբեթ լինելուց աելի, պէտք է

դառնայ ժողովրդի մէջ գործող հոգեկան ուժ, բարոյական ուսուցում, նկարագրի կազմակարգման ընթացք: Մենք պարտաւոր ենք լինել այն, ինչ որ Աստուած ուզում է, ոչ թէ այն, ինչ որ մենք մեր պարագայական, ժամանակաւոր, մակերեսային, զգայարանական, հաճոյապաշտական ախտրժակենթից տարուած ուզում ենք, որ լինենք: Ո՛չ, պէտք է լինենք այն, ինչ կերպարով մեզ Աստուած ատեղծել է և ուզում է, որ մենք մնանք պայծառ, անաղարտ այլ Աստուածային դրոշմին, Աստուածային կնիքին մեր վրայ անապական պահպանումով:

Սիրեկինե՞ր, ալստեղ կամ աշխարհի որեւէ մի տեղ, որ նայում էք Սուրբ Հօմիածնին՝ մեր Մայր Աթոռին, այստեղից ես յատարարում եմ մեր ողջ ժողովրդին, որ աղետը, որ պատահեց՝ աղետ չի մնայ, եթէ երբէք մենք աղետից դաս սովորել գիտենանք: Աղետը աղետ է այն ատեն, եթիւ մենք աղետից ոչինչ ենք հասկանում, ոչինչ ենք սովորում և այնպէս ենք ապրում, որ կարծէք թէ աղետ եղած չկննի մեր կեանքում: Վիշտը, տառապանքը, նեղութիւնը մի դպրոց են մեզ համար և այդ դպրոցի առաջին դասը, որ ես սովորեցի իմ այս Հայրապետական այցելութեան թեթաքրում, այն է, որ մենք բոլորս հայաստանցի հայերս, ամենից առաջ, մենք պէտք է, որ մեր վերբեր մեր ձեռքերով դարմանենք: Այեւս բողնենք այն լաց ու կոծի հոգեբանութիւնը, ննշուած մարդի, զրկուած ազգի այն հոգեբանութիւնը, որ կը կաշկանդի մեզ: Մենք տէրն ենք մեր անձերին, լինենք տէրը մեր կեանքին՝ այսինքն, մենք աշխատենք մեր վերքը մեր ձեռքերով դարմանելու:

Երկրորդ մեծ դասը, որ ես սովորեցի և մենք սովորելու ենք, այն է, որ այեւս մեր այն եղբայրները և բոյրերը, որոնք ուզում են իրենց եղբայրութիւնը և զօրակցութիւնը յայտնել Լենինականի շրջանի մեր ժողովրդին, պարտաւոր են անդրադառնալ այն իրողորթեանը, որ այեւս ամենից կարեւոր բաժինը այս գործի մէջ պէտք է լինի բնակարանաշինութեան գործը, արդինարերական միջոցների ստեղծուումը և ոչ թէ շարունակումը այն շտապ օգնութեան, որ սկսուեց երկրաշարժի աղետի օրից և շարունակում է որոշ աստիճանով մինչեւ այսօր: Ես տեսայ, թէ որքան ընտանիքներ տակալին գտնուում են առանց բնակարանի, տակալին վարարուած տների մէջ են ապրում: Տեսայ դիմացը նաև այն սրանչելի գործը, որ կատարուել է շենքը են բարձրացել, փատակ չենքեր են վերստին նորոգուել: Խմ մտրից անցաւ այն պատկերը, որ լոյսի և խաւարի խաղի պատկերն է. մի կողմ մոյք էր, միւս կողմ լոյս էր: Լոյսը նոր շինուածն էր, մոյքը այն էր, որ տակալին մընում էր երկրաշարժի վերքի արինուո քամենու:

Հետևարար, մենք պէտք ունենք այեւս ե՛ւ արտասահմանում, ե՛ւ այստեղ լծուել շինագարական գործի, որովհետեւ դա իր մէջ ունի երկու բարիքներ. առաջին՝ հանգստաւու, չեմ ասում շոաց, գեթ բնականոն պայմանների մէջ ապրողը նուազ կտառապի, քան խելց պայմանների կամ բնակարանների մէջ ապրողը: Մենք երշանկութեանը աւելի նպատակ կլինենք բնակարան հայտարան հայտարան հայտարանով, քան մի պատառ հաց տալով: Երկրորդ՝ մենք աշխատներ, գործ ստեղծած կիմենք անգործ մնացած մեր եղբայրներին և բոյրերին համար, որից խօսրով կրթանկ բարիք ունի բնակարանաշինութեան և արդինարերական միջոցների ստեղծման կենսական գործը:

Այստեղ ես ուզում եմ եշել, որ սրանչելի գործ է կատարել «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամը. տեսայ նրանց շանքերով շինուած հարիրաւոր տները. և մենք պէտք ունենք մեր բոլորի աշխատանքները համակարգելու, ներդաշնակելու, միութիւն ստեղծելու և ոչ թէ ցրի կերպով,

իրարից անտեղեակ կերպով մեր օգնութեան և աջակցութեան ու զօրակցութեան գործը յառաջ տանելու:


Երրորդ՝ Ես սովորեցի այն դասը, որ մենք եթէ երբէք ուզում ենք մեր ժողովուրդը այս հոդին կապուած պահել, պէտք ունենք մեր Հայրենիքի շինարարութեան այն առողջ բաղարականութեան մշակումին, որով մենք այլևս հոդը մեր սեփականը նկատնաք, մեր գերագոյն հարատութիւնը: Մի մեծ դեկապար մի մեծ ազգի ասել է. «Մի ազգ բաղկանում է երեք բամենից՝ հոդը՝ Հայրենիքը, ժողովուրդը և օրէնքները: Վերջին երկուսը կը փոխուն՝ ժողովրդի կեանքն ու օրէնքներն էլ կը բարեկառեն՝ կը փոխուն: Միակ այն բանը, որ կը մնայ անփոփոխելի, դա հո՞ն է, երկի՞րն է»: Եղապեճե՞ր, մենք նոր ենք դուրս եկել Հայոց ազգի դիմ զործուած ցեղասպանութեան 80-ամեայ ոգեկոչման օրերից. ապրիլի 24-ն էր դա: Մէկ եւ կէս միլիոն հայ մարդ զոհ տուեցինք: Փառք Տիրոց, հազար փառք իրեն, որ մենք մէկ եւ կէս միլիոնի թիւր վերագտանք՝ և աւելիով: Բայց հոդը, որ զնաց՝ Արքատեան Հպատականը, ահաւասիկ այսօր տակաւին մեզ համար կորսուած հոդ է:


Հայրենիքն է, որի շինութեան գործին պէտք է մենք լծունք, որովհետեւ Հայրենիքը սոսկ հոդը չէ, հոդին վրայ մեր խառնած քրտինքն է, հոդին մէջ մեր բափած արինն է: Մի խօսքով, մեր ամրող էութիւնն է, մեր ազգային ինքնութեան և արձանապատութեան զգացումն Է դա է, որ հոդը կը վերածի Հայրենիքի: Եւ դրա համար այսօր Մենք կոչ ենք ուղուու մեր ժողովուրդին Մայր Աթոռի այս Սուրբ բեմից եւ այստեղ Հայաստան, եւ ի սփիռս աշխարհի: Երկրաշարժի առիթով մեր ժողովուրդը յուզուեց, շարժուեց և այն ատեն ևս ըսի, եթէ Հպատականում երկրաշարժ տեղի ունեցաւ, ողջ աշխարհում մարդաշարժ տեղի ունեցաւ, հոգեշարժ տեղի ունեցաւ: Այն ատեն եղան բազմաթի օտար ազգեր, որ օգնեցին մեզ. գրեթէ անմասն չմնաց որեւէ մի հայ, որ իր քաժմնը չքերէր այն զօրակցութեան գործին յատուկ նուրբահապրութիւններով և յատուկ հանգանակութիւններով: Եւ եթէ կան տակաւին այդ գումարներից մնացած գումարներ, օր առաջ փոխանցուեն դրանք «ՀԱՅԱՍՏԱՆ» հիմնադրամին, որպէսզի Հպատակի վերաշնուրական գործը աղետի գոտու մէջ առանձ թափով առաջ երթաւ և մենք պայծառ դիմագծով աշխարհին ներկայանանք, որպէսզի նոր շինուած շնորհի փայլը տարածուի և վնասուած շենքերի վերքը դարմանուի մեր ժողովուրդի կեանքում:

Ահաւասիկ, թէ ի՞նչ եզրակացութիւնների եմ եկել ևս այս օրերին, երբ վերադաբել եմ Շիրակալ թեմին իմ տուած առաջին այցելութիւնից: Այնտեղ եկենքներ ունենք, որոնք կը կարօւեն ամսիջական վերանորոգութեան: Այնտեղ ունենք դպրոցներ, որոնք պէտք ունեն խնամքի: Եթէ մենք կարենաք մեր հասարակական ընդհանրական հաստատութիւնները զօրացնել, երանց միջից անհատները և ընտանիքներն էլ կը զօրանան:

Ահա, թէ ինչ տեսանք և ինչ լսեցինք և այսօր պատմում ենք ձեզ, հաղորդում ենք ձեզ, որպէսզի դուք եւ հաղորդակից դառնար ողջ աշխարհում այս բոլոր իրականութիւններին և ճշմարտութիւններին և ըստ այնմ ձեզնից իրարանչչիւր կատարէ իր պարտականութիւնը ի՞ր ձեռով և ի՞ր չափով: Այս կիրակին Մայր Աթոռում ևս հոչակում եմ Հիւսիս-արևմտեան մեր հայ ժողովորի կիրակի: Այսօր մեր աղոթքների սիրտը երանք թող գրաւեն, երանք՝ ովքեր այդ աղետի զոհերը եղան: Անցեալ կիրակի ճիշտ այս ժամին զմբերահատեալ և վերասիկ զմբերաստրեալ ծօթվերը Սուրբ Աստուածածնի եկեղեցում էի և այստեղից էի խօսում մեր ժողովրդին, շանալով

Արանց հաւատքը, վստահութիւն և լաւատեսութիւն եւթշնչել: Այսօր, մի շաբաթ ետք, այս Մայր Տաճարում սիրոս բանալոյ կոչ եմ անում մեր ողջ ժողովրդին, որ իր մտածութենքի և իր արարքենքի մէջ հայրենաշխնդութեան գործը նկատի ունենայ և մոռացոյթեան շուայ երկրաշարժից վնասուած մեր Հայրենիքի այդ բաժինը և մեր ժողովրդի սիրեցեալ զաւակները Գիւմրիի, Սպիտակի, Սուելիսանաւանի, Վանաձորի և նաև այլ բոլոր այն գիւղերի մէջ, որոնց պատկերը իմ աշքերից երեք պիտի չենուանայ: Աստուած զօրացնի նրանց և զօրացնի ձեզ բոլորիդ «ի խնամս մարդասիրութեան խրոյ» և իսեւեանս յախտենից: Ասէն»:





ՇիրակաՅ ԹԵՄԻՆ ՄԵՐ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱԿԱՐՏԻՆ, ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻ
ՈՒԽՏԱՎԱՅՐԻ ՕԶԱԽԻՑ ԱՂՋԹՔ ԵՄ ՎԵՐԱՌԱՔՈՒՄ
ԱՌ ԲԱՐՁՐԵԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ

«Բարերար և բազումողորմ Աստուած, հայցում եմ Քեզանից, որ սիրոյ, լոյսի և հաւատքի ապրումներով լցնես սրտերն ու հոգիները Շիրակի տարածաշրջանում ապրող Քո հայկեան ցեղի զառակներին, համայն արանց և կանանց, ծերոց և տղայոց, որք են ի նեղութեան իրենց տների աւերման, աշխատանցների քանդման, վիրաւորուած կամ հիւանդ լինելու, գործազորկ մնացած լինելու և այլ կարիքների պատճառներով։

Զօրացոր մեր հոգեւորականներին և պետական ու քաղաքային իշխանութեան սպասարքներին, ժողովրդի բոլոր խաւերին և դասակարգներին, յատկապէս դպրոցական երեխաններին և նրանց ուսուցիչներին, աշխատող մարդկանց, հիւանդներին, որբերին, վիրաւորներին, վաճառականներին, հողագործներին, արհեստարքներին և արուեստագէտներին ու մտաւորականներին, հաստատութիւններին և կազմակերպութիւններին, որպէսզի կարողանան փոփով վերականգնել իրենց անհատական, ընտանելիսն և համայնական կենաքը և ի սպառ բռնձկ բոլոր վերքերը երկրաշարժի պատճառած աղէսի։

Տէ՛ր, շնորհեա՛ ամենեցուն զերկնային իմաստութիւն և զնոգեսոր արիութիւն փասն պատերազմին կենաց ըստ Առաքելոյն Սրբոյն Պողոսի (Բ. Տիմ. Դ. 7) զի կարող լինիցին բարուր ընթանալ և զասակն ժառանգել ի փառ Ամենակալին Աստուծոյ, ի շինութիւն ազգին Հայոց, և ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեաց և ի բարօրութիւն Շիրակայ Տիրախնամ թեմին. ամէն։»

|

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԺՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՍՅԱՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՑԱԽԻ ԹԵՂ



«Ես եկի զի զկեան ունիցին, և առաւել ես ունիցին»:
(ՀՈՎՀ. Ժ 10)

1995 թվականի մայիսի 19—22-ը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասխագովի և Արցախի թեսի առաջնորդ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանի միացյալ հրավերով, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Մայր Աթոռիս միաբաններ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խըմբագիր Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի, Միքայել ծայրագոյն վարդապետ Աշակերտանի, Գրիգոր Վարդապետ Զիթքչյանի և Վազգեն սարկավագ Գալստյանի, Հայաստանի Հանրապետության փոխնախագահ Գևագիկ Հարությունյանի, Կրտնից գործոց նախագահի պաշտոնակատար Լազար Սուշյանի, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանի, Մայր Աթոռիս մամլո դիվանի տնօրեն Արքար Ասիֆեյանի և լրատվական գործակալությունների թղթակիցների, այցելեց մաքառող և մարտնչող Հայոց արձվանիստ Արցախ աշխարհիք:

Սուրբ Հջմիածնի Գաբրիալեարից շատ քերին է բախտ վիճակից այցելել Արցախ աշխարհ, որի սրբություններն ու սրբանշելիքները դարեր շատունակ բարեկասուն և օգնական են եղել հրանց բազ հովվարժան ու հայրապետական մականի ներքու ապրող, առեղծագործող և այս ստեղծագործության արագ ներմանը սրբագրու առավելանի համար:

Պոլոս առաջալը պատգամուն է. «Եղբայրեն՝ դուք կոչված եք ազա-
ռության. միայն թե ձեր ազատությունը սուկ մարմնի օգտի համար չլինի,
այլ սիրո՞վ ծառապեցեք միմյանց» (Գ.Ա.Դ. Ե 13):

Ցոթամյա դաժան ճակատամարտից հետո, Արցախն այսօր խաղաղության երանությունն է վայելում, խաղաղություն, որ ձեռք է բերվել թափված թանձն արյամբ՝ հանուն փառացն Աստուծոն և հանուն Հայրենիքաց սիրո, որ նորովի վերաբարձումն է Վարդանանց և Ղևոնդյանց հերոսամարտի:

Վեհափառ Հայրապետի երթը դեպի Արցախ անցնում էր Սյունյաց աշխարհով՝ որը մշտակա ամրության պատվար է Արարատյան ոստանին և Սրբություն Սրբոց լուսակառուց Ս. Եջմիածնի Մայր Աթոռին:

Գորիս քաղաքի մոտքին Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին նկել Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Արքահամ վարդապետ Ակրտչյանը, նոգեոր դասի, շրջանի պետական և զինվորական Անրիայցոց շինուերի նետ: Կարճատև դադարից, նաև «Հայաստան» Հիմնադրամի կողմից շրջանում ծավալած աշխատանքներին ծանոթանալուց հետո, Վեհափառ Հայրապետը շարժվեց դեպի Արցախ:

Հայաստանի և Արցախի սահմանագծում Աղյավնագետ (Զարու) գյուղում, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև Էպիսկոպոս Մարտիրոսյանը, նոգեոր դասը և Լեռնային Դարաբաղի Հանրապետության վարչապետ Լ. Պետրոսյանը, քանակի հրամանատար գեներալ Ս. Բաբայանը և պաշտոնատար այլ անձներ ավանդական աղ ու հացով և ժողովրդի քաջմությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին: Յնծություն էր Արցախ աշխարհով, քանզի Հայոց Հովհաննեսի օրինությունն եկավ կմբելու այս քաջմաշարչար երկրի խաղաղությունը և հուսադրելու՝ ասելով. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (ՀԹՈՄ. Ը 31):

Արցախում Վեհափառ Հայրապետի այցելության առաջին հանգրիւմն եկավ նախկին Լաշին, այժմ Քաշաթաղ, իսկ Վեհափառի բնութագրմամբ և որպակվորմամբ՝ Քաջաթաղ քաղաքը, որը Ծովիի հերոսական ազատագրումից հետո նոյնական խնամքինց Հայոց զենքի առջև և այսօր հայաշունչ ու հայաբարբառ շորջ երեք հազար ընակչությամբ ոգու ամբողջ ջերմությամբ իր գիրկն առավ իր նոգեոր հորեւ ու խնամողին: Խայտացող մանուկները, պատերազմի դառնությունը թոքափած և որպակվորման արցունքախառն ձրախոռով ծերերն ու երիտասարդները մեկ քան են ասում մեզ, որ Արցախը հնդիք է աշխարհին և ապրում է Տիրոց հարության օրինակով ու գորությամբ:


Քաջաթաղի հրապարակում ժողովրդի անունից Վեհափառ Հայրապետին ողջունեց քաղաքագույն Ալեքսան Հակոբյանը, ապա Վեհափառ Հայրապետության, նախարարներ, քաղաքապետներ, պետական անձնավորություններ և շատ սիրելի, թանելազին եղբայրներ և քուրեր,

«Սիրելի հոգեոր եղբայրներ, հարգարժան փոխնախագահ Հայաստանի Հանրապետության, հարգարժան վարչապետ Արցախի մեր հայ Հանրապետության, նախարարներ, քաղաքապետներ, պետական անձնավորություններ և շատ սիրելի, թանելազին եղբայրներ և քուրեր,

Ես առաջին անգամն եմ, որ արևին նայում եմ ձեր աչքերի միջից: Ես արևը տեսել եմ 60 տարիներից ի վեր, երբ աշխարհ եմ եկել, բայց այսօրը արևը որիշ լուս ունի, որիշ համ ունի, որիշ ջերմություն ունի ինձ համար, որովհետև դուք չեք կարող երևակայել, թե ի՞նչ է Եղանակում մի անձի համար գտնվել մի այնպիսի վայրում, որի անունն է լսել հազար անգամ, բայց այդ վայրը չի տեսել իր կյանքում: Եվ ահա, փառք Աստծու, տեսնում է ա-

Uralbusmuseum Ulrichshausen





Անհայտակ քաշարակում (Ղաշիս)

ուաշին անգամ այս առավոտ, շրջանի պատագրման երրորդ տարեդարձի պայծառ օրը: Փառք եմ տալիս Սատծուն՝ մեր Երկնավոր Հռոբ, որ իսա շնորհեց այս պատիվն ու երջանկությունը, որ ես տեսնեմ հայ ժողովրդի այն զավակներին, ովքեր շատ նեղության օրերի միջից անցան, մահվան հովիտից քայլեցին, ոմբակումների, կուլը զինարարակումների, մահվան վտանգի, կյանքը կորցնելու սպառնալիքի տակ ապրեցին, և այսօր, ահավախի, Աստված լսեց իրենց իջաքը և պարգևեց իրենց այս օրը, որ ցանկանում էին իրենք, և ցանկանում էր մեր ազգը և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ արտասիմանում: Ես գալիս եմ այնպիսի Երկրից, որտեղ օտար շատ մարդկանց հետ եմ համարվել, բայց շատ բիշ է պատահել, որ գտնվեմ մի քաղաքում, որի բոլոր բնակիչները առանց բացառության հայի արյուն ունեն, հայի անուն ունեն, հայի պատիվ ունեն, հայի պարտք ունեն և հայի ապագա ունեն:

Դուք այս երկիրը վերատին հայացրիք, այս հոդը դարձավ հայացունչ, հայաբարբառ, հայահոգի ձեր բոլորի Երկայությամբ, կապվածությամբ այս հոդին: Ես շատ ավերակ տեսա այս քաղաքում, բայց հավատում եմ, և վայ ձեզի, եթե իմ հագաւորը ի դերս ելնի, որ եթե մի քանի տարի հետո գամ, ոչ մի ավերակ չեմ տեսնի ձեր քաղաքում, որովհետև մեր պատմությունը միշտ այսպես է եղել. մենք միշտ շինել ենք, մենք միշտ կառողել ենք, թթւամին է քանդել, բայց մենք վերաշինել ենք: Մի մեծ պատմաբան, բյուզանդական պատմությունը գրող մի հեղինակ, ասել է. «Եթե ուզենամ ես հայ ժողովրդի համար ասել, թե ինչ է այդ ժողովորդը, պիտի ասեմ՝ կառուցողների՝ ազգ»: Այս երկիրը, քարը, հոդը, ծառը, բույսը աշխարհում ուրիշ տեղ է կարող ենք գտնել, բայց որովհետև մենք սրանց մեջ մեր քրոտիքն ենք խառնել, մեր տաղանդն ենք խառնել, մեր արյունն ենք քափել, այս հոդը ուրիշ է մեզ համար: Մի բուռ հոդ վերցրեք այս տեղից և մեկ ուրիշն էլ՝ Եվրոպայից, Ամերիկայից, աշխարհի մի որևէ տեղից և տարեք մի լարուատորիա, կասեն նոյն հոդն է: Բայց հոդը մեզանով է տարբեր: Երբ մեր կյանքն ենք խառնում այդ հոդին, այն մեր գոյությանը մասն է դառնում և անքածան մասը: Ծի՛շո Է, 70 տարի բռնագրավեցին, բայց 70 տարին ի՞նչ կարծի մեր հազարամյա պատմության մեջ, երբ թշնամին եկել ու գնացել է, մենք ենք, որ մնացել ենք, և ելի պիտի տոկանք:

Սիրեկի երեխեւք, ես այսօր շատ-շատ որպիս եմ, որ եկեկ եմ ձեզ մոտ: Որտեղից եմ եկեկ, գիտե՞ք Սուրբ Էջմիածնից, որին Մայր Աթոռ ենք ասում: Այն մեր հոգևոր կենտրոնն է: Գիտե՞ք ինչու է կոչվում Էջմիածնի, որովհետև Հիսուս Քրիստոս, որի անունով մենք խաչ ենք հանում, եկավ ուկե ունակը ձեռքում, եկավ երկնքից, խփեց զետեին և ասաց. «Այստեղ պիտի շինեք իմ եկեղեցին», և դա եղավ Էջմիածնիը՝ Միածին Որդին իշավ Հայաստան: Ես գալիս եմ 1700-ամյա նվիրական այդ կենտրոնից և ողջուն եմ բերել ձեզ Մայր Աթոռը Սուրբ Էջմիածնից: Հրավիրում եմ ձեզ, որ երբ Հայաստան գաք, ալսինքն՝ ձեր երկիրը, վայ որ Երևան գաք և Էջմիածնին չգաք: Այդպես չի լինի, դա մեղք կինին: Եթե գալու լինեք Երևան, անպայման եկեք Ս. Էջմիածնին, այնտեղ, եկեղեցուն, ես ձեզ կօրհնեմ, ձեր շնորհները կշատանան, մեր Հայրենիքը ավելի պացան կդառնա, դուք Ել ավելի ուժեղ կդառնաք:

Սիրեկի եղբայրներ և բոյրեր, մի խնդրանք ունեմ ձեզ. անցյալը մի ավաղեք, անցյալից մի դժողոհեք, Երկան է կարևորը, հոդին կապվեցեք, հոդից կյանք հանեցեք հայի պես: Եթե մի օդանավ անցնի ու տեսնի ձեր

մշակությունը, սահ առանց ճանաչելու՝ հայեր են ապրում այս երկրում, հայերն են, որ այս երկիրը շենացնում են:

Սատված օրինի ձեզ բոլորիդ և Քաջարադը լինի բոլորիդ համար, ձեր նվիրական կյանքի կենտրոնը, որպեսզի եքք ես աշխարհում ուրիշ տեղ խուսան, ասեան, «Քաջարադը հալուրչան պատիվ բերաղ համայնք Է»: Ապրեր բոլորդ էլ: Ամեն»:

Քաջարադից շարապյունն ուղղվեց դեպի Արցախի սկրտը՝ Շոշի: Ասսծու գորոյշան հրաշքով ազատագրված Հայոց թագուհին, բազմած անառիկ բարձունքին, կարծես հնկում է իր եղրայրների և բոյրերի անդորրը: Նա իր հրաշգեղ Կանաչ ժամով և Ամենափրկչան Ղազանչեցոց եկեղեցիով դարձայալ Լուսափորիչ-Մեսրոպյան աղոթքը է բարբառում ասելով. «Տեր եթէ կամիս կարող ես զիս փրկել» և Կատահ ենք, որ լսել է կամ դեռ պիտի լսի Տիրոց մշտանորդ պատախանը, թե «Հաւատք քո կեցուցին զքեզ, մուտ յուրախութիւն Տեառն քո»:

Մանուկների թոյովվախոս լեզվով հնչած «Հրաշափառ», «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետու մուտք գործեց Կանաչ Ժամ, որտեղ առաջնորդ սրբազնը բարի գալուստ մաղթեց Վեհափառին՝ ասելով, որ արցանցին Հայոց Հայրապետին է Ավիրում աշխարհի ամենամեծ և ամենազորավոր գենքը՝ հայի աղոթքը: Կանաչ Ժամի վերանորոգված սրբազն խորանի առջևից Վեհափառը նորդորեց իր ժողովրդին՝ ապրել որպես եկեղեցի, ապրել աղոթքով և Աստուծո վերանորոգով ու վերափխող սիրով.

«Սիրելի հոգևոր եղրայրներ, հարգելի պարոն փոխախազահ Հայատանի Հանրապետության, հարգելի ներկայացուցիչներ Լեռնացին Ղարաբաղի Հանրապետության և բարեկաններ, հավատացյալներ և դուք, մանկոնք եկեղեցվո,

Առաջին զգացումը, որ այսուղի բարձրանում է իմ սրտից դեպի Աստված, փառատրոյներ, փառաբանությունը և գոհուրցուն է ի խոռոց սրտի առ Աստված՝ հետևյալ բառերի մեջ խտացված. «Փառք Քեզ Աստուծ, փառք Քեզ, յաղագ ամենայնի, Տեր, փառք Քեզք: Իմ կյանքում երբեք չի ակնկալում, որ Աստված ինձ պիտի շնորհի այս բացառիկ հոգեկան ցնծորյան և ենրին հոգեկան բավարարության ատիքը: Ես մեծացա օտար երկների ներք, այս դպիրների, այս սարկավագների, այս հոգեւրականների նման. որտեղից իմ մտրովս կանցեմ, թե Աստծու տված օրերից մի օր. ես իր շնորհին պիտի արծանի լինեմ և տեսնեմ Արցախ հայկական աշխարհը, և Շոշի պատմական բաղադրի այս եկեղեցում պիտի աղոթք վերառաքեմ իրեն՝ Աստծուն, ձեր բոլորի ներկայությամբ: Կյանքը խորհուրդ է: Մեր պատմությունն էլ խորհրդավոր, խորհրդալից համազգային կյանք է: Օրեր կգան նեղության, օրեր կգան տառապանքի, օրեր կգան մահվան և օրեր կգան կյանքի և վերհարության:

Ես եկել եմ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպեսզի ձեզ հետ դառնամ աղոթակից: Սրբազնն ասեց, որ դուք ինձ տավիս եք ամենից մեծ գենքը՝ աղոթքը: Ես ուզում եմ, որ մենք այդ գենքը գործածել գիտեանք՝ այսինքն, աղոթքը դարձնենք մի այնպիսի ուժ, որ մեզ Աստծու հավիտենականության գաղափարի մեջ կենդանի պահի: Նա, ով կիսրվի Աստծոց, կիադարի մարդ լինելուց: Այդ պատճառով առաջին խոսք առ Աստված

ուղղված աղոթք է. ես շնորհակալ եմ, որ ձեր աղոթքների մեջ հիշում եք ինձ և իմ ամբողջ սրբով ցանկանում եմ, որ այդ հոգևոր շունչը տարածվի ողջ Արցախ աշխարհի հայ ժողովրդի կյանքի մեջ: Երբ եկեղեցի մտա և բացի զի ձայնը մեր սիրատուն աղջիկների, ամբողջ հոգով ես ցնծացի և առ Աստված շնորհակալություն հայտնեցի ձեզ համար: Դուք նոր սերունդ եք, եկեղեցի և մեր հայրերի շարականներս եք երգում, դարձեք դայրին եք կապում, Սաստուն մարդկանց եք կապում, երկինքը երկրին եք կապում: Աստված օրինի ձեզ և ձեր ճեղուներին, սիրելի երկաներ: Եվ լավ իմացեք, որ եկեղեցին այս քարը չէ, շահը կամ մոռն ու աշտանակը չէ, եկեղեցին դուք եք: Երեւ դուք աղոթեք, եկեղեցին լցնեք, շարականները ձեր շրթներին ծաղկեցնեք, այն ծամանակ է, որ Աստված երկան կլինի ձեր մեջ: Եկեղեցին Սաստուն և մարդու հանդիպումն է և այդ հանդիպումից են ծնունդ առնում այս բոլոր քարերը:

Քիչ առաջ աշքերիս դիմավ Ղազանչեցոց եկեղեցին՝ Սմենափրկիչը, իր հոկտեմբերի դեպքի վեր պացող գմբեթով: Դա հավատքի վկայությունն է: Երեւ հավատքը չիներ, եթե բուն եկեղեցին մեր հոգիներում չիներ, ոչ մի եկեղեցի չէր կառուցվի: Քարը մարդու ճնունդն է, քարի վրա դրված կնիքը մարդու կնիքն է: Երեւ հավատք ունես, քարը բու հավատքի թարգմանը և խոսնակը կլինի: Հետևաբար, իմ առաջին խորս է ձեզ. կենդանի պահեցեք, արքուն պահեցեք հավատքը: Այն մեր հայրերի թողոնք չէ միայն, մեր հայրերի կոտակը չէ, Սաստուն տված կյանքն է, որ մենք այսօր պետք է ապրենք:

Եկեղեցին կենդանի հաստատություն է դառնալու, նա չպետք է մեա դարուց-դարուց հիշատակ...: Ես երիտասարդներին կոչ եմ անում, որ իրենք կիրակի օրեր, տոնական օրեր գան այս եկեղեցին, ծաղկեցնեն իրենց երկալությամբ և առ Աստված իրենց հաղորդությամբ: Առաջին խոսքը փակում եմ՝ ասելով. «Ո՞վ Տէր երկնի և երկրի, նորունք զիաւաս ի ժողովորդս մեր, որ յԱրցախ յաշխարհն: Օթնենա Տէր զառաշնորդ սրբազնն, զիոնկորական դասն և զպետական իշխանութիւնն Արցախայ աշխարհի և Հանրապետութեան Հայոց և զիաւատացեալ, զիաւատարին և զարիասիրտ ժողովուրդս Քո ընդ հովանեսաւ սուրբ և պատուական խաչիդ Քով ի խաղաղութեան: Փրկես Տէր յերեկի և յաներնցը թշնամոյն: Արծանաւորեան գոհութեամբ փառաւորել գթեզ, այժմ և միշտ և յախտեան յափտենից: Ամէն»:

Կանաչ Ժամի դիմավ վեր է խոյանում Արցախ աշխարհի նրաշալիքնեցից մեկը՝ նոշակալվոր Ղազանչեցոց եկեղեցին, որ հավատքի ներշնչման աղբյուր է եղել և Ե՛ սերունդների համար: Ոչ միայն հավատքի աղբյուր, այլև ինքն իսկ կենդանի հավատքն է Արցախի հայի, քարերի վերածված սիրո, հուսիս և ազատության ռանձրացումն է այն հայի հոգուց աղբյուրացած: Տաճարում կատարված աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետուն իր Հայրապետական խորս ուղղեց ռակուն հավաքված շուրջ երկու հազարի համարող ժողովրդին.

«Սիրելի առաջնորդ սրբազն՝ Պարզ եախսկոսիս Մարտիրոսան, հարգաբժան պետական երկայացուցիչներ, հոգևոր երբաշրմեր և հայրենակից, արյունակից, հավատակից եղբայրներ և քուրեր,

Դուք չեք կարող պատկերացնել, թե հոգեկան ի՞նչ մեծ ապրում է ինձ համար դրսից, աշխարհագրականորեն եմ ասում, դրսից եկող մի հոգևորականի համար և Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետի համար, գալ և Շուշին տեսնել Արցախ աշխարհում, այս բաց երկնքի ներքեւ, այս հոգեղինացյալ հողի վրա: Զնոպանար այս բառերը հոգեղինացյալ հող, որովհետև այս հողը մեզ համար ստիգմական հող չէ, այս մեր սեփական քրիստով թրծած, մեր արյունով ոռոգված, կյանք տվող հող է, սուրբ հող է, նվիրական հող է: Եվ այսօր ձեր բոլորի առջև, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Մայր Արքոց Սուրբ Էջմիածնի, ես խոնարհում եմ մեր սրբերի, մեր հերոսների առաջ՝ ասելով. փառք Քեզ, Տեր, փառք Քեզ, որ ինձ այսպիսի՝ ծովովրդի ծառան դարձրեցիր: Ես հետևել եմ ձեր պատմությանը ոչ թե հեռավոր անցյալի այլ ճանապարհ ամենադժվարին օրերի, ձեր տագնապի, տառապանքի ու գոյամարտի հերոսական պատմությանը:

Ես շնորհակալություն եմ հայտնում ճախ ձեր առաջնորդ սրբազնին, որ հրավիրեց ինձ ձեր բոլորի անունով, երբ մեկ և կես ամիսներ առաջ կոչված Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնին Աստծու կամրով և ծովովրդի ընտրությամբ, ես այս հաղորդությունն եմ ունենում ձեզ հետ և ձեզ անույն եմ զգանում, որովհետև Աստծու սերը, Աստծու հավատքը մարդկանց միջից է արտահայտվում: Եթե ձեզանց որևէ մեկը ասի, որ ինքն Աստծուն սիրում է, Աստծուն, ում չի կարող տեսնել և, սակայն, չի սիրում իր եղբորը, ում տեսնում է, Ավետարանն առում է, որ այդ մարդը սուստ է խոսում: Աստծու սերը արտահայտվում է մարդկանց հանդեպ ցուց տրված սիրում միջից: Այսօր ձեր սերը հանդեպ եկեղեցու ինձ գորացնում է և ես փառք եմ տալիս Աստծուն, որ այսպիսի հավատարին, հավատացյալ և հերոսական ժողովրդի զավակ եմ եղել և երան ծառայելու եմ կոչվել:

Երկրորդ ես տեսնում եմ, որ մեր ծովովրդի մեջ արցախսի հայը, շուշեցի հայը այսն Արցախսի աշխարհագրական սահմաններով սահմանափակվող ժողովորդ չէ: Ես արցախսի եմ, ամբողջ հայ ծովովրդը արցախսի է. երբ այսպես հավատարմորեն հայության անունն ու պատիվը բարձր կապահեք այս հողի վրա: Ձեր պատմությունը մտած հանաշած լինելով պիտի ասեմ. ես, որ գալիս եմ Լիքանանցից, այցելել եմ շատ երկներ, 43 տարիներ որպես հոգևորական ծառապել եմ արտասահմանի հայ ծովովրդին, եղել եմ Շարքագույն Արևելքում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Հնդկաստանում, Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Միջին Արևելքի երկներում, ասում եմ ձեզ բոլոր հայերի անունով, բոլորն էլ արցախսի են, երբ Արցախսի հարցը արդարության, խաղաղության և մարդկային իրավունքի հարց է: Բնականորեն, երբ հարկը պահանջեց և տակավին պահանջում է, ձեր սրանցելի երիտասարդներին տալիս եք վասն պաշտպանության ազգային կանքի և մեր Հայրենիքի սուրբ հողին: Ես որիշ տեղ առել եմ, միջազգային հրազդականություն ասել եմ, որ հայը ոչ որի չի սպանել սպանելու համար: Հայ միայն ինքն իրեն է պաշտպանել: Այս է մեր պատմության դասը:

Մենք ո՞ր ազգից ենք ուզել կողոպտել երան հայրենիքը, բաց չենք թողնի որիշներն էլ մեր Հայրենիքը կողոպտեն: Դա մեր իրավունքն է: Սա պատրազմ չի, սա ինքնագոյության պայքար է: Այդ կյանքը մեզ Աստված է տվել և մենք մեր կյանքը միայն Աստծուն կտանք: Հետևաբար, այսօր ձեր բոլորի առաջ և այս երկնքի ներքեւ հարգանք եմ ընծայում այն բոլոր ազգամարտիկներին, այն բոլոր բազ, արի հոգով զինված սղաներին ու աղջկեներին, ովքեր մի օր ինձ և ձեզ պես ապրում են, շնչում են, աշխատում



Վեհապատ Հայրաբեկը օրինու է, նորածին մանկան: Քաշարսն (Լաշին)

էին, որախանում էին, կյանքը վայելում էին, բայց եթե Հայրենիքի պարտը կանչեց նրանց, գնացին և իրենց գերազուեր տվեցին իրենց կյանքը: Հարգանքը բոլոր համատակներին, առանց որոնց մենք այսօր ժաման չենք կարող ունենալ մեր դեմքերի վրա: Նրանց հիշատակը երբեք պիտի չմոռանանք, նրանք գերեզմանված անձեր չեն, նրանց գերեզմանք մեր սրտերն են, մեր հոգիներն են, որովհետո ես գիտեմ, թե ինչ է հշանակում և դոր ել գիտեք, թե ինչ է կյանքը: Անենից թանի բանն է: Եթե որ մարդ իր կյանքն է տալիս, հշանակում է, որ կյանքից վեր՝ Աստծոն, ազատության Հայրենիքին է տվել այն: Եվ Աստված կը նորուի և ձեզ համար ուժի կվերածի այնպիսի մահերը, ինչպիսին են սուրբերի և համատակների մահերը:

Սիրելիներ, մեր Եկեղեցին միշտ եղել է քարոզիչը խաղաղության, հետևելով մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի այն պատգամին, որ ասում է. «Խաղաղութիւն զիմ տամ ձեզ»: Հիսուս, որ երկնքից երկիր իշավ, Բեթղեհեմի մեջ ծնվեց և իր Ծննդան օրը երկնքում հրեշտակները երգեցին. «Փառ ք բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճուրիւն»: Եկեղեցին, որպես Քրիստոսի շարունակող մարմնը տիեզերքում, քարոզել է և բարզում է խաղաղությունը՝ արդարության հետ միասին: Մենք այսօր են ասում ենք, այս հոդի վրա ենք ասում, ինչպես մեր գահակալության օրը, ապրիլի 9-ին, Էջմիածնի Մայր տաճարի խորանի վրա ասեցինք, այդ նվիրականագոյն պահին մեր կյանքում, մենք Սրցախ չ չորոշացանք և ասեցինք, որ մենք պիտի շարունակենք մեր երջանկահիշատակի հախորդի՝ Վազգեն Ա. Վեհափառի ուղեգիծը, որ մեր և ուղեգիծն եր իր ողջությանը, եթե մենք Կարողիկոսն էինք Մեծի Տաճար Ամելիկիո Արքունին: Մենք երկուսով միշտ նոյն գաղափարն ենք տարածել, այն է՝ բանակցության, խորհրդակցության միջոցով լուծենք մեր տարակարծությունները և ոչ թե պատերազմով:

Մենք չենք ուզում, որ պատերազմով որևէ մեկը մեռնի: Մեր գերազուն գաղափարն է, որ մարդիկ իրար հարգեն, մարդոց իրավունքները ճանաչեն: Մենք ուրիշ ոչինչ չենք ուզում: Այս հոդը մերն է, մեր հայրերի գերեզմաններն են այս հոդում: Հազարներով հուշարձանները վկայում են, ինչպես այս եկեղեցին, ինչպես թիզ առաջ տեսա մյուս եկեղեցին և Սուրբ Հովհաննես Մկրտիչը՝ Գանձասարը, Դադի վանքը, Ամարասը, ո՞ր մեկն ասեմ: Մենք ոչ որի դեմ չենք, ոչ որից վրեժ չենք ուզում, միայն ուզում ենք ապրել Աստծո համար, մեր հիշատակը երկարենք վասն մարդկության, վասն քաղաքակրթության և վասն երշանկության: Ես այսօր ի խորոց սրտի շնորհավորում եմ ձեզ՝ ապրողների: Բանաստեղծն ասել է. «Ողբամ մեռելոց» և հետո ասել է «Կոչեմ ապրողաց»: Քիչ առաջ հարգանքը ընծալեցի նրանց, ովքեր իրենց կյանքը տվեցին մեր Հայրենիքի համար, իսկ այժմ ձեզ ես կոչում Պարուր Անալի անլուկի բառերով: Սիրելիներ, դոր կանքը ունեք ձեր առջն, արժեցրեք այդ կյանքը, մի՛ վատնեք կյանքը: Հոդին կապվեցեք, այս երկխաների կրթությունը ապահովեցեք, որ լինեն մարդ, որ լինեն հայ Աստծո զգացումը իրենց հոգիների մեջ և ազգի պատիվը իրենց կրծքերի տակ: Այդ թող լինի ձեր փառը:

Ի՞նչ եմ ժառանգել ես հորիցս. ոսկի, ո՛չ, ուկուց առավել՝ նրա հոգին, ազգի համար ապրող հոգին: Իմ մեծ մորիցս եմ ժառանգել եկեղեցու մերը, դրանց ավելի ի՞նչ կա թանկագին: Աստված տվել է մեր Սրցախ այս սրան չելի գեղատեսի, բարեկեր, կանաչավետ աշխարհը: Եկեք այն արժեցները մեր կյանքով: Ձեր հերոսները, ովքեր ընկան պարտականության գետնի վրա, ովքեր իրենց կյանքը տվեցին իրենց արտունը ընծալելով, և ձեզ խընդ-

րում եմ, ձեր մյուս հեղուկը տվեք՝ բրտինը, ձեր հավատը, նվիրումը, կարգապահությունը, զիտակցությունը, ազգային արժանապատվությունը, ձեր ըրհատունեական հավատը: Այս է, որ պահանջվում է ձեզանից: Ես գիտեմ, որ մենք այստեղ ենք հավաքվել, բայց այնուղիղ, սահմանի բոլոր պատճեշների վրա, մեր երիտասարդները պաշտպանում են մեզ: Եվ երբ որ հարկը լինի, մենք մեր արյունն է կտանք և տվեցինք, բայց երբ որ պարտականությունը կանչի, մենք մեր հայրենիքը պետք է շինենք, ոչ թե միայն պահենք: Պահենք, այս՝ բայց պահենք շինելու համար, ստեղծելու համար, բարգավաճության տառելու համար: Հետևաբար, ես այսօր եկել եմ ձեզ աշխատանքի հրավիրելու, որպեսզի աշխարհն մի անգամ ևս փաստենք, որ մենք հորից կյանք կհանենք և ոչ թե կյանքը հորին կխառնենք: Մենք մարդ չենք սպաներ, մենք մեր հորդ կպահենք ու կծաղկեցնենք և կապրենք Աստծու և մարդկության համար:


Իմ խոսքը այս հորից վրա ես փակում եմ այսօր՝ խոր գնահատանք հայտնելով այն հոգելոր աշխատանքին, որ մեր Արցախի թեմի հոգևորական դասը ընծացում է մեր ժողովրդին: Սրբազն, Սատված Ձեզ զորացնի և մը նաք միշտ այսպես պարտականության գերազույն աստիճանի գիտակցության վրա ի սեր այս փառավոր ժողովրդի:

Երկրորդ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի միջոցով ես ուզում եմ իմ հարգանքը և գնահատանքը հայտնել Հայաստանի Հանրապետության ողջ պետական կազմին՝ վեճաչոր նախագահից սկսած մինչև ամենեն խոհարի սպասավորը: Ես գնահատում եմ, որ ես ինքն անձամբ ընկերացավ ինձ՝ ասելու համար ձեզ, որ պետությունը Եկեղեցու կողրին է կանգնած, իսկ Եկեղեցին հոգևոր մշակության է նվիրված մեր ժողովրդի և Հայութնիքի Վերաշինության նվիրական առաքելության մեջ: Ես ողջունում եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահին՝ պարուն ժորելու Քոչարյանին, և վարչապետի՝ Ալոնարդ Պետրոսյանի անձի միշտ ես հայտնում եմ իմ խոր գնահատանքը այն հավատարիմ ծառայությանը, որ պետությունը տանում է ամենադժվարին պայմանների մերը: Ես էլ պատասխանառությունն ունեմ, շատ ծանր է մեր գործը, Հայրենիքը կերտելը դյուրին չէ, Եկեղեցին վերածալիկեցնելը դյուրին չէ: Ենե՛ք ձեր պետության հետ: Եթե դուք ձեր ուժերը համարքեք և համարքեք, հրաշքեք կգործեք: Միասնությունն է մեր ոմի աղբյուրը: Այսուեւ պիտի մեջքերեմ մի սրանչելի վկայություն՝ ԺԷ դարի մեր պատրիարքներից մեկի՝ Հակոբ Նալյանի կողմից գրված: «Փոքրերը կմեծանան միարանությամբ, մեծերը կփռքանան անմիաբանությամբ»:

Այսօր ողջ հայության համար, լինի Հայաստանում, Արցախում, լինի արտասահմանում, միության հրահանգն է, որ Աստծուց գալիս է յուրաքանչյուրին: Միաստեղման, համադրության, միասնության կոչն է, որ անում եմ ձեզ բոլորին: Երկրորդական, երրորդական հաշվիներից վեր մնանք, իբրև մեկ ազգ՝ մտածենք, մեկ Եկեղեցի մտածենք և մեկ պետություն մտածենք: Այս է, որ ես բերում եմ ձեզ իբրև իմ սրտի խոսքը այսօր, երբ առաջին անգամ իմ շրթներն եմ բացում դեպի երկնք և դեպի մեր ժողովուրդը՝ Արցախի հորի վրա: Հողը բռներ, եղայրներ և բույրեր, դառնա ուկի: Ուկին հոգելոր իմաստով ըմբռնենք և ոչ թե սոսկ կյուրական իմաստով: Թող Աստծու շնորհը, սերը և հավատը դառնան հացի և ջորի պես ոժ տվող ձեր կյանքում, ամբողջ Արցախի տարածքի վրա, հերոսական Շուշիից, պատմական Շուշիից, ճշակույցի կենտրոն եղած Շուշիից մինչև բոլոր գյողերը: Այսօր, Յօ-ամյա կյանքում առաջին անգամ լինենկով, երբ մերս մտա Արցախ, նախկին Լաշինից

Վեհապետ Հայրապետ օրինակ և ուժիքի մասին





Աժականացման օրուն կողմանածիր հուշությունը

անցա և երբ այնուել մեր երեխաների երգերը լսեցի, պարերը տեսա, սիրալս լցվեց հոգեկան ապրումներով և ասացի՞ Տեր, փառք Քեզ, որ վերստին հայ կյանքն ես վերադարձնում այնուել, որտեղ ուրիշներ ուզեցին այդ կյանքը խափանել և հողը մեզնից պոկել: Զթողեցինք, Սատված շրողեց: Դուք է Աստծու հետ գործակցեցիք և ահավասիկ ունեցանք այս հողը, պահե՛նք այս հողը, ծաղկեցնե՛նք այս հողը վասն փառացն Աստծոն, վասն շինության ազգին Հայոց և վասն պայծառության Հայաստանյաց եկեղեցվո, հավիտյանս հավիտենից: Աւեն»:

Ծուշից շարապյունն ուղղվեց դեպի Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտ: Քաղաքի ժողովուրդը արդեն դուրս է եկել Շենուարից, որտեղ տարիներ շարունակ սաղմուն ու աղոթք էր քաղում և հոգու քնար շարականներով «ճոր երգ էր երգում» Աստծու փառքի հոչակման և Հայոց գենքի հայթանակի պայծառ երազով լցված: Ստեփանակերտում Վեհափառ Հայրապետը Համաշխարհային պատերազմի և Արցախյան գյոյամարտի զուտնի հիշատակին կանգնեցված հուշահամալիրի մոտ հուսադրեց և խրախուսեց իր հավատավոր ժողովրդին, նաև աղոթք վերապաքելով երկինք բոլոր այն հոգիների համար, ովքեր ուրիշների կենաց համար շխմայնցին իրենց կյանքը՝ դառնալով թթխմոր Հայոց հակայածավալ խմորի մեջ:

«Միրեկի բնակիցներ Ստեփանակերտի,

Տակավին օրը շրացավ այն վայրկյանին, երբ ես կյանքումս առաջին անգամ ուտք դրեցի Արցախի սրբացալ, նվիրականացայ հողի վրա: Այս առավոտ էր, որ իմ դողովո ոտքերը այսպիսի սրբավայր հողի վրա կոխելու համար մուտք գործեցին Արցախ: Այժմ Արցախի մայրաքաղաքն եմ մտնելու և խոր շնորհակալության զգացումով ողջունում եմ ձեզ և գնահատանք հայտնում այն մտածումի համար, որ ձեզ պետական իշխանությունները առաջարկեցին ինձ այսուել կանգ առնել՝ ողջերին, ապրողներին իմ խորը ասելուց առաջ, իմ զգացումները և մտածումները ձեզ հետ կիսելուց առաջ: Հարգանք ընծայելն երանց, ովքեր մեզ նման ապրում էին, բայց այժմ չկան երկրի վրա: Մենք հավատում ենք, քրիստոնեական հավատքի հարազատ զորությամբ ենք հավատում, որ նրանք հիմա երկնքից դիտում են մեզ: Ես այդ զգացումով եմ կանգնած ձեզ դիմաց, որպես նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց, և ասում եմ ի խորոց սրտի. Փառք նրանց, ովքեր փառք համարեցին իրենց կյանքը ընծայելու, որպեսզի Հայրենիքի կյանքը չկորսի: Նրանք իրենց անձնական, անհատական կյանքը տվեցին, որպեսզի մեր հավաքական կյանքը, համայնական գոյությունը չվերանա աշխարհից:

Ես խնարդիվում եմ բոլորի առաջ, այն քաջամարտիկների, ովքեր իրենց տները թողեցին, իրենց ծնողներին թողեցին, իրենց կանանց ու զավակներին թողեցին, զնացին և պաշտպանեցին Արցախը՝ Հայրենիքը, նաև նրանց՝ ովքեր Սումգայիթում և այսոր զոյն զնացին թշնամու վայրագության, վասն հայրենիցաց և վասն ազգին Հայոց: Մի մեծ պատմաբան ասել է. «Հռոմի կայսրությունը, որ ավելի քան 600 տարիներ ամրող աշխարհն իշխեց, հանկարծ կործանվեց, որովհետև հոռմանացին իր մեռելներին մոռացավ»: Երբ մեկը իր մեռելներին, իր նեցեցյաներին, իր հանատակներին կմոռանա, իր արմատներից կկտրվի: Այդ պատճառով անցյալը կդառնա կանհիշատակ գոյություն, մինչդեռ անցյալը մեզ համար հոգեկան ոժ է: Հար-

գանք նրանց և Աստված թող երկնքի մեջ նրանց հոգիները Իր երանական խաղաղության մեջ ընդունի:

Իմ երկրորդ խոսքը ուղղում եմ ձեզ՝ ապրողներիդ: Այսօր երրորդ հանդիպումն է Արցախի ժողովրդին. առաջինը եղավ Լաշինում, որը հիմա նոր անոն ունի՝ Քաջարադ: Քաջարադ անոնքը ևս չեմ սիրում՝ Քաջարադ ասենք: Սյնտեղ ևս կերպարանափոխություն տեսա «ի խաւարէ ի լոյս, յանգիտութեան ի գիտութիւն, ի մահուանէ ի կնանա»: Սլդ կերպարանափոխությունը տեսա: Երկրորդ՝ ձեր վերի բաղեցիներին հանդիպեցի՝ Շուշիի մեր ժողովրդին: Խոկ այժմ ձեզ ասում եմ, որ հանգիստ ապրեք, որովհետև վերը եղբայրներ ունեք և ոչ թշնամինեք: Հանգիստ ապրեք Ստուփանակերտում, կերտողական գործի նվիրութեք, շինարարական գործի լծվեցեք, որովհետև եթե ոզում եք այս ննջեցալների հիշատակը անմահացնել, խոսքով և զացումով չպիտի բավարարվեք, այս պիտի գործով այս երկիրը շենացնենք, որպեսզի նրանք երկնքից մեզ ասեն. մենք իզուր տեղ չմեռանք, մեր հողը այսօր մեր երբայրներն ու բույրերը ծաղկեցնում են հայի պես:

Որքան որպահացա այս երեք վայրերի մեջ, տեսնելով այսքան երեխաներ, մատղաշ սերունդի, նոր սերունդի ծիլեր մեր ազգի կյանքի մեջ, և ասում եմ, երեխաներ, ձեզ շատ եմ սիրում: Գիտե՞ք ինչու եմ սիրում, որովհետև ես ել ժամանակին ձեզ պէս եմ եղել, հիմա չեմ կարող լինել: Ուզում եմ ձեզ պէս լինել, բայց չեմ կարող: Դուք պիտի խմանաք, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, շատ էր սիրում երեխաներին. Մի օր ի՞նչ պատահեց, գիտե՞ք: Երբ երեխաները գնում էին նրա մոտ, առաքյալները արգելում էին: Ասաց՝ «Թողե՞ք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև նրանցն է արքայությունը»: Եվ դուք եւ այս սիրույն կարծանանաք, եթե հաջող և լավ լինեք դպրոցի մեջ, ընտանիքի մեջ և այն ատեն կտեսնեք, թե ձեր ծնողները որքան երշանիկ կլինեն, իսկ հանատակները երկնքից կօրհնեն ձեզ՝ իբրև Աստծո օրհնության ճառագայթները ձեզ վրա: Ամեն»:


Ուշ երեկոյան Վեհափառ իշխանեց ԼՂՀ ընդունելությունների տակը, որ և Ամենայն Հայոց Հայրապետին աշահամբույրի և բարի գալուստ մաղթելու եկալ ԼՂՀ Հայսագահ Ռ. Քոչարյանը, ուժ հետ հանդիպմամբ և գործնական գրուցով ավարտվեց Արցախի ալցելության առաջին օրը:

ՄԱՅԻՍ 20

«Եղբայրներ, զմիմեանս թեու բարձէք,
և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի»:
(Գ.Ա.Ղ.Ա.Տ. Զ 2)


Առավոտը Արցախում բացվեց Խոջարուի ուսումնական գունդ այցելությամբ, որտեղ Վեհափառ Հայրապետը օրինեց Հայրենիքի պաշտամության գործին լծված նայ Երիտասարդներին՝ մասթելով, որ Աստված Եր տմենաւը Սջով գորսակի լինի նրանց այս խիզախումի մեջ.

«Միրելի գինվորներ, զինվորագրայ մանկունք Արցախի մեր նայ ժողովրդի,



“Uthuvelam zuywaksa h qumh zhunpuyung Lqaz kusurayung qibularuung hunkuun

Դաստիարակության պատմության առաջնահերթ գործությունը կազմում է պատմության վեհական գործությունը՝ պատմության առաջնահերթ գործությունը կազմում է պատմության վեհական գործությունը՝



Այս առավոտը իմ կյանքում պիտի մնա մի անողոանալի առավոտ: Իմ առաջին առավոտը Արցախում սկսում եմ ձեր տեսքը և այս ամբողջության տեսարանը իմ աշքերում պահեկոլի: Դիտում եմ էս լեռները, ամբողջ օրը լինելու եմ Արցախում և այդ ընթացքում ձեր տեսքը, ձեր երևույթը, ձեր շարքերը այսպես իմ մտքից պիտի երբեք դորս չգան:

Իմ ամբողջ կյանքի ընթացքում առաջին անգամն է, որ այսպիսի ստվարաթիվ հայ գումարի եմ հանդիպում, որը տակապին նոր կյանքին, գիտակցական կյանքին բացվող երիտասարդ սերունդից է բաղկացած, նրանցից, ովքեր պատրաստվում են այն մեծ գործին, նվիրական ու հայրենապաշտպան գործին, որ աշխարհում եղող բոլոր գործերի ազնվագույններից մեկն է: Այսօր ես շնորհակալություն եմ հայտնում Արցախի Հանրապետության նախագահին, վարչապետին, մեր քանակի ընդհանուր հրամանատարին և բոլոր պատասխանատուններին, որ ինձ տվեցին այս մեծ կարելիությունը, եզակի պահը, որ ես լինեմ ձեզ հետ, աղոյք անեմ ձեզ հետ և ձեզ համար: Դոր գիտեք անշուշտ, որ ես գալիս եմ ամբողջ հայության, աշխարհի չորս կողմերը ցիրուցանված հայ ժողովրդի հոգնոր կենտրոն և մեր սրտում Սրբություն Սըրբությանց ճանաչվող Մայր Արոռ Սուրբ Էջմիածնից: Ահավասիկ, մեկ և կես ամիս է, երբ Աստծո կամքով և մեր ժողովրդի ներկայացուցիչների ընտրությամբ ես կոչվեցի հոգնոր զինվորության՝ այս կարևորագույն և բարձրագույն պաշտոնին:

Հոգևոր զինվորություն բառակապակցությունը հատուկ կերպով ընտրեցի: Ահավասիկ, Արցախի թեմի առաջնորդը, տեսնում եք նաև եայիսկոպոս, վարդապետ, քահանա և սարկավագ հոգևորականներ՝ մենք եւ մեզ ըմբռնում ու դավանում ենք որպես Աստծո զինվորները, Եկեղեցու զինվորները, մենք եւ ձեզ նաևս համազգեստ ունենք և մենք եւ թողեկ ենք մեր անհատական գոյցությունը ու դարձել ընդհանրական գոյցության փոքրիկ մասնիկ: Նա, որ զինվոր կդառնա, պետական սպասավոր կդառնա դեկավարի բարձրագույն աստիճանից մինչև ամենից խոնարհ աստիճանը, նա այլևս ինքն իր մասին չի մտածում, այլ այն գաղափարի, այն նպատակի, այն առաքելության, որի համար հագել է այդ տարազը:

Եվրոպական մի երկրի համալսարաններից մեկում մի ուսանող որիշ մի ուսանողի համազգեստից պոկել է այն նշանը, որ նրա ընդհանրական ծառապության նշանն է եղել: Նա հարձակվել է արարքը կատարողի վրա և պատժել է նրան՝ ասկով, որ դու չես կարող իմ պատիվը ունեալոյն անել: Այնուհետև, երբ դեկավարը կանչել է նրանց և ամեն որ ասել է, այս մեկը մյուսին խփեց, տնօրինն ասել է. խփողն է իրավունք ունեցողը և ոչ խփողը, քանզի նա իր արարքով այնպիսի հանցանք է գործել, որով արհամարել է սրբություն ճանաչված մի նվիրական խորհուրդ:

Այդ խորհուրդը մեզ համար մեր տարագն է, Հայրենիքի համար մեր Դիրշն է ու Եկեղեցու համար Սուրբ Խաչն: Դուք եւ քաջ երիտասարդներ, այս հաստատության մեջ եք, որպեսզի պատրաստվեք վաղվա այն մեծ պայքարին, որի անունը է հայրենապաշտպանություն: Մենք չենք գնում պատերազմ որիշ մարդիկ սպանելու, նրանց հողերը գրավելու համար: Մենք ուզում ենք մի բան, որ այս հողը Արցախի և Մայր Հայաստանի, որ մեր հայրերը թողեկ են իրեն սուրբ կտակ, մեզնից ոչ ոք իրավունք չտնենա լիելու: Դա՛ է մեր գաղափարականությունը: Հայաստանը, որ ազգը ձեզ կպատվի, երբ որ դուք կարողարանությունը այնպիս առողջ անել, որ շատնանք սպառական գինվոր, այլ դատնանք քաջամարտիկ՝ այսինքն, հոգով, մարմնով կովեր և զինվոր, այլ դատնանք քաջամարտիկ՝ այսինքն, հոգով, մարմնով կովեր և

ոչ թե միայն զենքով: Զենքը արժեք կունենա այն ժամանակ, եթե մարդը այդ գենքին կմտանա այն գիտակցությամբ, որ այդ զենքը նվիրական մի գործիք է որպեսի ժողովրդի կյանքը, Աստծու տված կյանքը որիշները մեր ձեռքից չխլեն: Մենք իրավունք ունենք այդ կյանքը ապրելու, Աստված է մեզ տվել եղ կյանքը: Գերազույն նվերը, որ Աստված տվել է մարդուն, կյանքն է: Եվ ինչպես Աստվածաշունչ մատյանում ասվել է, նող առաջ Աստված երկրից և շոնչ փեց այդ հողի մեջ «և մարդն եղան հոգի կենդանի»: Մեր կյանքը Աստծուն է զալիս և Աստծուն կվերադառնա և մենք այն խաղի գոհ չենք դարձնի որիշների հաշիվներին, որիշների շաներին:

Սիրելի երիտասարդներ, այսօր ես եկել եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և երևակացեմք, իմ խոնարի անձի միջից ձեզ են նայում Հայաստանաց Եկեղեցու բոլո՞ր, բոլո՞ր անդամները՝ Մայր Հայրենիքից մինչև Սփյուռքի շորո ծագերը: Եթե վերադառնան Էջմիածնին, պիտի խոսն բոլոր հայերի հետ, ովքեր գտնվում են Հայաստանում և այլուր, ովքեր սպասում են ինձնից, իրենց ընտրած Ամենայն Հայոց Կաթողիկոսից, որ ես լինեմ ձեզ հետ աղոթքով, կյանքով և մարդկան այն բոլոր միջոցներով, որ Աստված տվել է մեզ: Մեր հոգեւորականները, ձեր պետական, բաղարական բոլոր պատասխանատուների կողքին ձեզ հետ են, հաճախ են մտածում ձեր մասին: Մենք Սուրբ Էջմիածնում ամեն առավոտ աղոթը ենք անում, հիշում ձեզ և հոգեւոր կյանքով ձեզ հետ լինում: Խմբչիացոց ես ուզում եմ պատել ասել, որ այն փոքրիկ գրքովկը, որ պատրաստել է ձեր հոգեւոր առաջնորդ՝ ողդված հայ գինվորներին, պետք է բոլորդ կարդար: Եվ այսուել եղած գաղափարները ձեզ համար պետք է լինեն սեունդ սեունդ բարոյական, սեունդ հոգեւոր, որպեսի դուք կարողանաք ձեր առաքելությունը ճիշտ ըմբռնել և բարձրագույն մակարդակով արտահայտել այդ գինվորությունը:

Քանի որ ձեզ հաճախ տեսնելու առիթ չեմ ունենա, այստեղ ուզում եմ իմ խոսքին մի բաժին ևս հավելել, այն, որ մենք երկու տեսակ թշնամիներ ունենք: Մենք այն թշնամին են, որին աշքով կարող ենք տեսնել, բայց կա մի որիշ թշնամի, որը աշքով չի տեսնվում անտեսանելի, աներկույթ թշնամին է դա: Եվ եթե որ թիշ հետո աղոթը անեմ, դուք կտեսնեք այդ աղոթը բաների մեջ «իրեկեա զմեկ յերեւակի և յաներեւայթ թշնամոյն» արտահայտությունը: Ո՞րն է աներկույթ թշնամին: Տեսանելի թշնամին հատակ է, յա ով է, իսկ աներկույթ թշնամին մեր մեջ առաջ եկող փորձությունն է թուլության, տկարության, գաղափարի նահանջի: Եվ մենք այդ մենքը թույլ պիտի չտանք, որովհետև այն ավելի վտանգավոր է: Եթե մենք թույլանանք, ի նշ կարող ենք անել, պարար ո՞ւ պիտի հասնի: Այդ պատճառով երբեք պետք չէ այդպիսի թերացում ունենանք:

Սիրելի երիտասարդ եղացներ, մենք աշխարհիկ կյանքի ժամանակավոր, վաղանցուկ հաճույքներից երբեք չպետք է այնպես աղդվենք, որ մեր հիմնական առաքելությունը, գաղափարը, այն հոգեկան մղումը, որ մեզ տանում է դեպի ինքնապահումները, հանկարծ թույլան: Եվ երեւ այս մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տեսի, ոչ մի պատեսն ընկերում, նահանջ, թույլացում մենք չենք մեզ կյանքը կարող թույլատրել: Գև դավանանություն է Աստծուն, դավանանություն է Հայրենիքին և դավանանություն է մեր Արցախին: Հետևարար, ցանկանում եմ ձեզ բոլորին տոկությունն, հարատեսությունն և առողջ պատրաստությունն, բարձրագույն առաջինաբարակությունն: Ինչ որ տրվում է ձեր պատասխանատուներից ու մեծերից, յորացրե՛ք, ձեր կյանքի' մեջ խանեցեք և եղեք զա-

դափարական գինվոր, զենքի գինվոր լինելուց առաջ: Գաղափարն է, որ զենքին իմաստ կտա և այդ գաղափարի համար եմ եկել ձեզ ասելու, որ մեր Եկեղեցին օրինում է ճրանց, ովքեր կյանքն են պաշտպանում և Հայրենիքն են պահպանում:

Տեսե՛ք, սիրելի երիտասարդներ, ձեզ հետ է ամբողջ հայ ժողովորդը՝ առանց կրոնական կամ գաղափարաբանական կամ քաղաքական, դասակարգային խորության: Անապասիկ ինձ հետ եկել է Հայաստանի Հանրապետության փոխականական պարուն Գագիկ Հարությունյանը: Նրա՝ ինձ հետ լինելը այս այցելության ընթացքում, այց մեծ զաղափարն ունի, որ ուր իմաստը, նաև տեսանելիորեն ընթանալու, որ Հայաստանի Հանրապետությունը ձեր կողքին է կանգնած իր ամբողջ կարողականությամբ և պատրաստակումությամբ՝ գերազույն աստիճանի աշակցությունը բերելու ձեր սրբազն դատին և Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Նա ոչ միայն փոխականական է Հայաստանի Հանրապետության, այլ նաև ընդհանուր վարիչն է «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամի, որը մեծ շանառությամբ լծվել է Արցախի վերաշինության ու ավերակների վերականգնման գործին:

Բարեկամներ, քաջ գինվորներ, եկեղեց, բոլոր կը միասին արդարացրեք այս սրանչելի անունը, որ նաև կարծարաբուխ ձևով մեր ժողովորդը տվեց ձեզ: Մեր ժողովորդը ձեզ չի կոչում գինվորներ, այլ՝ քաջամարտիկներ, քաջությամբ մարտը առաջ տանողներ: Մեր Սուրբ Գրքի՝ Աստվածաշունչ Մատյանի ամենից խորունկ հշմարտություններից մեզ փոխանցող Պողոս առաքյալը ասում է. «Կյանքը մի ասպարեզ է պատերազմի, բարփոք պատերազմը պատերազմին այժմ, ինձ մենում է Աստծո կողմից տրվելիք երկնքի պրակը»: Մենք ունենք ներքին թշնամին, որ մեզ սպազարեցնում է և պարտավոր ենք բարփոք պատերազմը պատերազմել երա դեմ, առողջ, արևոն պիտի լինենք, որ այդ ներքին բարփոք պատերազմը շահներ, որպեսզի շահներ նաև մեր հայրենապաշտպանության այն գոյամարտը, որ մեր բոլորին հասարակաց, ընդհանրական առաքելությունն է:

Անապասիկ, ինչ մտածուներով, ինչ զօացուներով ևս այս սրանչելի տեսարանի առջև եմ կանգնած և Հարաբայի լեռների ամրության պես ձեզ եմ առանմ. ամուր բռնկեցեք ձեր պատիվը, թող դիմացիները իմանան, որ սովորական մարդկանց մետ չէ իրենց գործը: Դա՛ է մեր ուժը և աղբյուրը մեր ուժի, թող չցամաքի այդ աղբյուրը, չոլիքանու երա հոսանքը մեր ժողովրդի և հատկապես ձեր կյանքի մեջ: Այս սրտարուխ զօացուներից և մտածուներից մենու պղոթենք Աստծոն, որ ձեզ պաշտպան լինի, օրինի և զորացնի վասն հայրենաց և վասն ազգին Հայոց, վասն Եկեղեցիովոյն Հայաստանաց և վասն Ամենակալին Սստոծո, Հոր և Որդի և Հոգվոյն Սրբ, այժմ և միշտ և համիտյան հավիտնենից. ամեն»:

Վեհապատ Հայրապետը գինվորյալ երիտասարդաց խոր ողջելուց հետո, «Պահպանի» աղոթքով Ամենակալ Սստոծոց քաջություն, իմաստություն, նամրերություն և լուկունություն խնդրեց Հայրենիքի պատությունն ու հզորությունը պահպանող երիտասարդների համար, Խաչի պահպանության հովանու ներքո:

Անուհետև, ըստ նախատեսված ծրագրի, Վեհապատ Հայրապետը գնաց Մարտոմի: Ասերանի պարհաների մոտ ժողովորդը, քաղաքի դեկանաց գլխավորությամբ, մեծ ցնծությամբ ու նոգեկան իսկեղավայրությունը դիմավորեց Վեհապատ Հայրապետին: Փողոցների ողջ երկայնքով կանգնած

երեխաները, որ Արցախի աշխատացող Անդրկայի և ապագայի պայծառ կյանքի խորհրդանիշն ու հույսն ուն, ծաղկելերի հնողեղ էին տեղում իրենց Հայրիկի վրա:

Սակերանից շարասյունը շարժվեց Մարտունի, որի ճամապարհն անցնում էր Սղոցան քաղաքով, որը պատերազմի ծանր հետքերն է Կրոս իր վրա: Արցախ աշխարհին այդքան ցավ պատճառած Սղոցանը այսօր լու է: Լու է, որովհետև նրա դիմաց կանգնած է մարտ ունեցող արցախցին, որի հերոսների արյան հեղմանք ողջ Արցախում է տիրապետող դարձել այս աղաղակող լուսոյութեաբ:

Մարտունու հրապարակում, որը վեր է խոյանում մերօրյա հոչակավոր գորավար Մոնիք Մելքոնյանի՝ ղարաբաղցիների սիրելի Ավոյի կիսանդրին, Վեհափառ Հայրապետն օրինեց իր առջև հավաքված Մարտունու գրեթե ողջ բնակչությանը.

«Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան հախազահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հարգարժան փոխնախազահ Հայաստանի Հանրապետության, պետական անձնավորություններ և սիրելի հայրենակիցներ,

Այս պահին իմ խոսքը ձեզ ուղղելոց առաջ, ես պարտը եմ զգում սրբական պարտը, Հայրապետական պարտը նաև, որ մենք դառնանք դեպի մեր այն մերուսները, նրանց, ովքեր այժմ այստեղ աշքերով մեզ չեն տևսում և երկրի վրա չեն ապրում: Բայց եթե երեք երկրի վրա չեն ապրում, պատճառը այն է, որ իրենց Հայրենիքի համար, սուրբ հողի համար, այս մեր մատղաջ մերունիդ ազատ-անկախ ապրելու նվիրական գաղափարի համար իրենց կյանքը նվիրեցին, զոհեցին Աստծու: Հետևաքար, առաջին իմ խոսքը ես ուղղում եմ նրանց և ձեզ իմ պատճառը տպուց առաջ այժմ կատարելու եմ հոգեհանգստաց արարողություն և ապա իմ խոսքը ուղղելու եմ ձեզ:

Հավատացալներ և հավատակից եղբայրներ, բոլորեր և զավակներ ազգին Հայոց, այս արևի ներքեւ, մայիս 20-ի այս առախու, մենք բոլոր հավաքել ենք այստեղ, որպեսզի մեր մեջ, յուրաքանչյուրի մեջ անհատապես և բոլորի մեջ հավաքարար վերամրացնելու, ուժեղացնելու, ամրապնելու քրիստոնեական և անսամբելի հավատքը ի Քրիստոս: Այդ հավատքը է եղել մեր հայրերի և հախանայրերի հոգեկան ուժի աղբյուրը: Առանց այդ հավատքի մենք կիմենք տիար ծողովորդ: Հավատքն է, որ մարդուն անձմանության հույս է ներշնչում, կյանքի իմաստն է արժեորում և երջանկություն բերում մեզ բոլորին: Ես գալիս եմ քրիստոնեական այդ հավատքի Հայաստանյան աղբյուրից՝ Սուրբ Էջմիածնից, որ Մայր Աթոռ ենք կոչում: Մեր սրտերում ներկա, մեր կյանքից անքածան, հավատքի աղբյուր, Սրբություն և Սրբոց Սուրբ Էջմիածնից, որտեղ սրանից մեկ և կես առաջ մեր ծողովորդը Աստծու կամքով իհեծ տվեց այս բարձրագույն աստիճանի ծանր պարտականությունը՝ մեր ծողովորդին հովվելու քրիստոնեական հավատքի և ազգային առողջ գիտակցության մեջ:

Ես ցանկանալով ցանկացա, որ առաջին հերթին իմ Կաթողիկոսական գործունեալության մեջ հանաչեմ ձեզ՝ իմ ծողովորդին: Ես միայն գրասենյակում Կաթողիկոսապետուն վարելու համար չեմ ընտրվել, ես եղել եմ ձեզ հետ լինելու, ձեր մեջ լինելու, ձեզ համար միայն գործելու, որովհետև դուք եք հարստությունը մեր Հայրենիքի: Եկել եմ առաջին այցելությունը տալու ձեզ և պարտը եմ զգում շնորհակալության և գնահատանքի խոսք ուղղել ձեր հոգևոր առաջնորդին՝ Պարզե եպիսկոպոս Մարտիրոս-

յանին, որ իբրև առաջնորդ նշանակվելուց մինչև այսօր Դարաբաղի ամրող ժղովրդի մարդկային և ազգային իրավունքի դատը, գաղափարը և պայքարը իր հոգու մեջ է շաղախտել, ամրոջ հոգեոր դատով հանդերձ: Շնորհակալություն կիայտնեն նաև, մանավանդ մեր սիրելի նախագահին՝ Ռուբերտ Քոչարյանին, և շորջը բոլորքած պետական բոլոր ներկայացուցիչներին և քաջարի այն երիտասարդներին, ովքեր այժմ ձեզ հետ չեն և սահմանագծում արթուն կանգնած են: Ես նրանց պատկերացնում եմ հիմա պատճենների վրա առանձին, բայց ժողովրդի հոգին իրենց մեջ զգացող, որ պաշտպանում են հողը, որպեսզի դուք այդ հողը արժեցնեք ձեր ծառայությամբ, ազատ և ապահով պայմանների ներք:

Ես ուրախ եմ նաև, որ այսօր մեզ հետ է Մայր Հայաստանի Հանրապետության փոխնախագահ պարուն Գագիկ Հարությունյանը, որ ինքն այսուելի իր ներկայությամբ և մասնակցությամբ մեր բոլոր խորհրդակցություններին ուղում է ասել ձեզ, որ Հայաստանի Հանրապետությունը ձեզ հետ է ամբողջ սրտով և իր բոլոր կարելիություններով: Եվ ես շնորհավորում եմ իրեն, որ Մայր Հայրենիքը, պիտակորությամբ մեր սիրելի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և իր ավագանիի, այսպիսի հասկացողությամբ է դեկապրոտեկտում մեր ժողովրդի ճակատագիրը:

Երրորդ իմ խոսքը, որ այսօր ուղղում եմ ձեզ՝ Մարտունիի մարտունակ հոգով ժողովրդին, հետևյալն է՝ սիրելիներ՝, և զայխ եմ արտասահմանից, ես շեմ ծնվել ո՞չ Արցախում և ո՞չ էլ Հայաստանի սուրբ հոգում: Ես «օտար, ամայի ճամփերի վրա» եմ կյանքի կոչվել, բայց իմ ծննդյան առաջին խկ օրից Հայրենիքը, հայոց լեզուն, հայոց գրականությունը, հայ ժողովրդի ապրելու կամքը իմ մեջ ծնել են իմ ծնողները: Եթե դուք ընդունեք, անզամ եթե շընդունեք, ես այսօր ինձ պիտի հայութաբեր Մարտունիի քաղաքացի: Դրա պատճառն այն է, որ ոչ թե զտեմում եմ այսօր ձեր մեջ, այլ ոչ որ մարտ ունի՝ մարտունեցի է: Եվ ես մարտ ունեմ, մեր սիրելի եղբայրները մարտ ունեն, մարտը, պայքարը զոյմարտ է ինձ համար՝ լինելույամ պայքար: Մենք ոչ որի հանդեկ թշնամություն չունենք, ոչ որի հողը չենք ուզում կապտել, յորացնել, գողաճնել, շահագործել: Մենք ուզում ենք միայն այն հողը, որ Աստված է մեզ տվել մեր հայրերի մշակությամբ: Մենք երազել ենք այն Հայրենիքը, որ կոչում ենք Արցախ, թող որիշները մեզանից մեր հողը չվերցնեն: Դա' է մեր ամրող ուզածք: Եվ դրա համար հողը միայն պաշտպանել բավական չէ: Մեր արյան գնուվ պաշտպանեցինք, ազատագրեցինք և պիտի շարունակենք պաշտպանել: Դա մեր իրավունքն է Աստծոնց արրված իրավունքը: Բայց հողը պահպանելուց բացի, մենք պիտի է հողը մշակենք, հողին արժեք տանք մեր աշխատանքով: Եթե մի տարի հետո որիշները զան, ասեն, ևս հողը չէ այն, ինչ որ անցյալ տարի կամ հախորդ տարիներին: Հողի մեջ մեր ձեռքերը խառնենք, կյանք դուրս բերենք, մեր պարտեզները մշակենք, մեր բրախճորդ ջրենք այն, որովհետև ես հողը մենք ենք և մենք են մեր հողին ենք, բայց կենդանության օրոք և ոչ թե մահվանից հետո:

Վերջապես այսօր թե՛ Լևոնային Դարաբաղի Հանրապետությունը, թե՛ Հայաստանի Հանրապետությունը և թե՛ մեր Եկեղեցին՝ Մայր Այսոռ Սուրբ Էջմիածինը, ձեռք-ձեռքի տված պիտի լծվենք շինարարական աշխատանքի, որպեսզի երբ մարդիկ այս հողը տևանեն, աւեն, հայեր են անցել այս հողից, հայեր են ապրում այս հողում, հողը դարձել է Հայրենիք, հողը դարձել է քաղաքակրթություն: Այս արքի, հունվարի 7-ին, գնացի Տեր-Զոր, որ մեկ և

կես միլիոն հայեր գոհվեցին: Միրիայի այդ ավագների ու անապատների միջից ձեռքերովս ուկորներ հանեցի: Խմ հայրերի ուկորներն էին: Բայց էի ապրեցինք, մահից այն կողմ ապրեցինք, մահի դեմ ապրեցինք, մահը խորտակով ապրեցինք և մահվան մենք պատասխանում ենք միայն կյանքով, գործով: Հայի ճակատի գիրն է, հայի պատիվն է աշխատանքը: Մենք որիշներից այլևս չակեց է սպասեմք մեր կյանքը, մեր ձեռքերով, մեր կամրով, մեր խելքով ու բրտինով պիտի շահենք այն, բանզի աշուղի խոսքով այդպիսով շահած և՛ի պատառ հացը, իշխանական ձաշ է իմանիք:

Նո եկել եմ ձեզ ասելու, մի՛ հայեր անցյալին միայն, մի՛ ցավեր միայն, մի՛ ողբար միայն, մի՛ լացեր միայն, աշխատեցե՛ք, հրճվեցե՛ք, կյանքին լավագութեամբ նայեցեք: Խոչ այդ լավագութեամբ աղբյուրը այս առաջին շարբում կանգնած պետուի աշքերով սիրատուն երեխաներն են: Հավատացե՛ք, սիրոս գարնան ծառի պես ծաղկեց, երբ տեսա նրանց: Տեսա նրանց հաշարադում, որը ևս Քաջարադ եմ անվանում, Ծովիում, Ստեփանակերտում: Այս առավոտ իմ աշքերը արեիս բացեցի մեր գինովոների սպասական դարոցում և նրանց ենտ եղաւ: Այս երիտասարդությանն ու մանուկներին, որ տեսա, խեղորու եմ ձեզ գորգորեցն'ք նրանց: Մենք կդնանք, բայց սրանք պիտի մենան, ինչպես մեր հայրերը գնացին և մենք մնացինք:

Ահավասիկ, հեռացագ 86-ամյա իմ բարեկամ, մեր սիրելի և անմոռանալի նախորդը՝ Վազգեն Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Եկա ևս, վաղը ես է կցնամ և կամ ուրիշներ: Ուկի շրջա է հայությունը, օղակները իրար և՛ն կապվելու և, եթե երեք ուկին հասարակ մետաղ դառնա, մեշիկ-մեշիկ մեզ համար: Ուկի ենք, ուկի մենաք և ես երեխաներն էի, որ ուկու արժեք ունեն մեզ համար, տվեցե՛ք, աշխատեցե՛ք, մի՛ խնայեր ո՛չ ձեր հաճույքից, ո՛չ որիշ վաղանցող արժեքներից: Ինչ որ նրանց համար եք անում, ապացակու Աստծո իտարի և Հայրենիքի բարգավաճման ու պայծառության համար գործած կիներ:

Ահավասիկ իմ խոսք Մարտոնիի մեր պատվական ժողովրդի գավակեներին: Եվ այժմ աղոթում եմ առ Աստված, որ միշտ իր նոյնանին, իր ամենազոր Սշը և իր ամենատես աշքը ձեզ վրա պահի հավիտյան հավիտենից, ամեն:

Մարտոնու մարտական ժողովորդին իր Հայության պատգամը տարուց հետո Վեհափառ Հայրապետա ուղևորվեց դեպի Ամարասի մեծամաքրավ վանք, որտեղ ևս, դիմելով հավաքվածներին, ասաց:

«Հարգարժան նախագահ և Աերկայացուցիչներ, մեր ժողովրդի սպասակորության ծառայության կոչված ազնոյի ազգայիններ և բանկագին հավատացյալ ժողովուրդ մեր,

Ուզում եմ առաջին խոհ բռնկից բռնորդ է գիտակցեք, անդրադառնար այն իրողության ու ճշմարտությանը, թե ինչ է հշանակում ինձ համար, վստահարար հան ձեզ համար տարիներ-տարիներ Ամարասի մասին լըսած լինել, կարդացած լինել և, ապաց, աշքերով չկարողանալ տեսնել: Այսոր ձեր բռնորդ ներկայությամբ ծովելի եմ զայխ իմ հոգու մեջ և փառ եմ տալիս Աստծոն, որ ինձ այս մեծ պատիվն արեց, որպեսզի այս բարերի հետ աշքով շիվեմ և այս բարերի մեջ կարդաս հոգելեն ներկայությունը և հոգելից ներգործությունը մեր հայրերի դարավոր հավատքի: Քարը կգտ, բարը կխորտակվի, նրա տեղ նոր բար կգտ, պատուիանք կխորտակվի, նրա

տեղ տախտակի փոխարեն նոր տախտակ կգա: Քանի՞-քանի՞ հազար եկեղեցիներ բանվել են մեր հայ ազգի պատմության մեջ, բայց մի բան չի բանդվել՝ դա հոգու մեջ եղող եկեղեցին Է՝ հավատը: Երբ այդ հավատը կենածի է, բանդվածի տեղ նոր կշինվի, բայց երբ հավատը ինը խորտակի, ազգը կվերածվի մի մարմնի, որ հոգի չունի: Հավատըն է տալիս այն ուժը, որ կանքը պետք է ապրել Աստծո հրամայականի ներքև և հավատենորյան համար և ոչ թե միայն ծննդելու, անելու և մի օր խոտի հման անհնատանալու: Եկեղեցին է մեզ տախտի իմաստը կյանքի:

Սպիրի, երեխեր, դուք մահայանդ, երբ ստորեր ձեր լեզուն և ստորեր աղոթքները և ստորեր ազգի ազատության զարաֆարը և հրանց հետ առնչեք ձեր կանքը, այն առեն մարդ կիհներ, այն առեն հայ կիհներ: Այլապես խոտի հման մի գոյություն ենք աշխարհում: Եթե ազգ ենք եղել, հավատընվ, գաղափարով, անկախությամբ, ազատությամբ, ուժով մենք զմեզ արժենքներ: Ամարա՞ս... քանի՞-քանի՞ գրեթում եմ կարդացել, Հայաստանը դեռ չտեսած: 60 տարիների կանչըտմա առաջին անգամն է, որ տեսնում եմ այս սրբավարը: Երևակայեր, երբ անդրադառնում եմ մի պահ ձեզ հետ միասին, սա մտերմիկ խոսք ընդունեցեք, նոր կողմից իր զավակներին խոսկցություն ընդունեցեք, թե Գրիգորի Գրիգոր Լուսավորչի բռոք, եկել է պատեղ և ինքը հաղածվել, հահատակիվ ու սպանվել է, բայց իր հավատը վկայություն եղող մասունքները մնացել են չորրորդ դարից մինչև այսօր:

1700 տարուց ի վեր այս եկեղեցին քանի՞-քանի՞ սերունդների ուսուցման, հոգեկան գորացման աղբյուր է եղել, քանի՞ հազարներով մարդիկ են մտել ևս եկեղեցին, աղոթք են արել, շարական են երգել, իրենց ինքնությունն են արտահայտել, Աստծո Հոգին իրենց մեջ են ապրել: Եվ Սուրբ Մեսրոպ Մաշտոց, որ մեր գիրը գտավ ու ՅԵ հոգիանց բամակը ստեղծեց, որ բլոր բանակները կործանվեցին, բայց այդ ՅԵ գրեթից բաղկացած անմահական բանակը ապրեց: Տեսե՞ք, ես Հայաստանում չծննվեցի, Հայաստանում շապրեցի, բայց միացել ենք գրով, միացել ենք արդրքով՝ ո՞չ աշխարհը կարող է մեզ անջատել, ո՞չ թշնամին կարող է մեզ բաժանել, եթե մենք գիտենամք հավատընվ ապրել, այդ գիրով ապրել և Մեսրոպ Մաշտոցի լեզուն հնչեցնենք մեր շրթունքներին, ստորենք տառերը, դա' է միայն մերը, դա' է, որ մեզ անջատում է որիշներից, դա' է մեզ ատում, որ դու հայ ես: Եթե մենք ոռուանաեք, մենք մեր թշնամին կիհնենք:

Երևակայե՞ր, 600.000 հայեր՝ ձեզ հման նոյն արյունը ունեցող, ձեզ հըման նոյն հավատը ունեցող, ձեզ հման նոյն լեզուն ունեցող, ձեզ հման նոյն անցյալը ունեցող, քշվեցին անապատ՝ արև և ավագ և որիշ ոչինչ: Եվ ի՞նչ պատահեց, մի հայ մայր, ամբողջ երկու շարայ բերանում մի պատու հաց չդրած և մի կում չուր շխմած, գրեթե կմախացել ու մահանում էր, և զիտեր, որ իր ձեռքերում գտնվող երեխան էլ պիտի մահանա, ավագի վրա գրեց Ա, Բ, Գ, Դ, որպեսզի երեխան չմոռանա հայերենը: Անավասիկ մենք այս ենք:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, գրեթը արարելուց հետո, պատեղ՝ Ամարասում, դպրոց բացեց, դրանից հետո որքա՞ն սուրբեր, հայրապետներ, վարդապետներ եկան և այս բարերին շունչ տվեցին: Հիմա դուք եք տերք: Մի՛ ասեք այլիս, որ որիշը չի բռնաւ, դո՞ւք եք ձեր տերք, ունեք ձեր նախազանը, ունեք ձեր վարչապետը, ունեք ձեր բանակը: Դո՞ւք եք այս հոդի տերք: Այլև դուք պիտի այս հոդից կյանք հանեք: Մի սպասեք, որ որիշները ձեզ օգնեն: Ժամանակին մեր հայրերը, երբ մենք Սփյուռք շունեինք և օտար-

մեր մեզ չեմ օգնում, ինչպես էին իրենց ձեռքերով կամքը շահում այս նողերի վրա: Հետևաբար եղացրներս, բոլորն, թույլ տվեր ասել ձեզ, որ դուք պետք է այս հոդի արժեքը իմանաք: Ֆիշու է, որ աշատեղ ամեն կիրակի Պատարաց չի մատուցվում, բայց մանավանդ, դուք երեխաներ, պատահներ, պարմանուհիներ, սովորեցնք մեր շարականները, ո՞վ կարող է ձեզ արգելել: Եթե դուք ոգենար «Հայր մեր»-ը սովորե, ո՞վ պիտի ձեզ խանգարի: Պետք է գտնեմ նվիրաց մարդիկ, ովքեր շահան այդ սովորեցնելք: Դուք պիտի սովորեք մեր շարականները, նույնիսկ եթե եկեղեցու Պատարաց չի մատուցվում, դժվար օրերից ենք անցնում, բոլոր ել գիտեք, բայց Աստծո օգնությամբ կօգ օրը, հավատացնք, ձեր մնացուն քահանան է կունենար, բայց ունենար կամ չունենար, միայն քահանայով եկեղեցի չի լինի:

Դուք եք եկեղեցին: Երբ «Հայր մերը» երգեք, պետք է դողան այս բարեր, ձեր հավատքը պետք է փոխանցեք երանց, որպեսզի հետո երանք ինեցն դարավոր լկոցն բացեն և խոսն, ու երանց միջից հավատքը արտահայտվի: Սահմանիկ իմ զգացողությունը առաջին անգամ Ամարատում լինելով: Հուամ, աղոթում եմ Աստծուն, որ սա իմ վերջին այցելությունը չի ինք, այլ որ նորից կարողանամ գալ այստեղ: Բայց, իմ անուշիկ երեխաներ, եթե ուրիշ անգամ ես այստեղ գամ և դուք աղոթը շահեք, շարականը չերգեք, այն ատեն ես ձեռանից կխոռվեմ: Ուրեմն պիտի սովորենք այս բոլորը, պիտի նորոգվենք իրեւ ազգ և Արցախի հայությունը աշխարհին պիտի փաստի, որ ոչ միայն ազատազրված է, այլ ատեղձագրրծական է, շենացնում է իր կյանքը և մարդիկ թող ուրախանան, երբ տեսնեն Արցախի ժողովրդի վերակենդանացումը և, մանավանդ, այս երեխաների եկեղեցուն կապվածությունը: Ամեն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռին միարաններով իշխալ՝ հարգանքի տուր մատուցելու Ամարացի սուրբ Խորանի ներք հանգչող Սուրբ Գրիգորիսի Աշխարհներին: Եվ շիրմի մոտ հնչած «Որբ Զարդարեցին» Սրբոց թարգմանչաց նվիրված շարականը էլ նորոգեց Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ծառացելու սրբազն ուխտը: Ակամայից մեր աշքերի սոշն հառնենց այն հոգեհոյոց դրվագը, երբ Երուսաղեմի Սրբազն Պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Ռուբանը, այցելելով Օչական՝ Սուրբ Մեսրոպի գերեզմանին, ասել էր. «Կյանքին մեջ այնքան վար հայած չունեի ես՝ ալման վեր տեսած ըլլալու համար»:

Սուրբ Գրիգորիսից բարեխոսություն հայցելով Հայոց երկրի խաղաղության և ապահովության համար, Վեհափառ Հայրապետը շրջեց, դիտեց և շոշափեց Ամարաց սրանցելիքի ամբողջ համալիրը՝ ցանկանալով երա բարերի միջից իր երակների մեջ փոխադրել այդտեղ թափված հերոսների արյունը, հոգու մեջ ավելացնել այդ պատերում խաւացված անմանանուն սորերի աղոթքն ու արցունքը, իր իմացականության դաշտը վերստին շրդելով այդ խցերու ծնունդ առած և արձանացած գիտության ու մշակույթի մեղրամբով: Ամարաց ճանապարհը տարավ դեպի Հադրութ՝ պատմական Դիւկալ:

Քաղաքի մոտքին շրջանի վարչակազմի ղեկավար Գ. Հայրապետյանը ժողովրդի մնացածիվ բազմության հետ դիմավորեց Վեհափառ Հայրապետին՝ առաջնորդելով Հադրութի ալգի-հրապարակ, որտեղ և Ամենայն Հայոց Հովվաստինը պատգամեց իր հավատացրաց սուրբին:



Հայրություն

«Միրելի առաջնորդ սրբազն» Պարզի եպիսկոպոս Մարտիրոսյան, նովուոր եղբայրներ, հարգարձան հախազան Առնային Պարարադի Համբաւության, հարգարձան փոխնախագահ Հայաստանի Հանրապետության, պետական և քաղաքային Անկախացուցիչներ, այս շրջանի վարչակազմի հախազան և բանկագին, սիրեցյալ ու հավատափոր հայորդիներ Հայրությի՝ այժմ բառը պիտի փոխեմ և կոչեմ Գիգակի»:

Ահավասիկ մեկ օր և ավելի է, որ ես գտնվում եմ պատմական, հայուշունչ, հայամարմին Արցախ աշխարհում: Հազիվ մեկ և կես ամիս անցած այն օրից, երբ Աստծու կամքով և մեր ծողովրդի ընտրությամբ Մենք Կոչվեցինք այդ ծանր պարտավորության և քարձրագոյն աստիճանի պատմականատվության, Մեր առաջին պարտըերից մենքը համարեցինք գնալ մարդու ծողովրդին, ճանաչել երան և ճանաչվել երանից: Այս բառերը ինձնից չեմ ստեղծում, այլ քաղում եմ մեր Սուրբ Ավետարանից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերն են սրանք, երբ նա ասեց. «Ես եմ հովին բաշ, հովի բաջ զանձն իր ղեկ ի վերայ ոչխարաց: Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն»: Հետևելով մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսի այս սրբաշոնց բառերին, ահավասիկ Հովհաննետական գավազանը ճեռու վերցրած, հովվի ցուարը շալակած, ես սկսեցի գնալ և ծողովրդին հանդիպել՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Անկախացուցիչ Պատրիարքության վայրում: Ձեր կյանքում զգացնել, որ Էջմիածինը վայր չէ սուլ, նա ձեր հոգու մեջն է:

Մենք եկել ենք Մայր Աթոռի մայրությունը և օրնեուրույնները ձեզ փոխանցելու, որպեսզի դոր գգաք, թե ունեք պատմական հոգեւոր Կենտրոն՝ սրբաւելի, որ ճանաչվել է որպես ամբողջ աշխարհի մեջ առաջին պետական քրիստոնյա ազգի կենտրոն: Դա մեծ պատիվ է մեզ համար և մենք պետք է գիտենանք դա արժեցնել, այդ հոգեւոր կենտրոնը՝ Սուրբ Էջմիածինը, մեր կյանքում ներգործուն վիճակի մեջ ղենենք՝ դոր այցելեք, Մենք այցելենք, կենդանի հարաբերություն լինի, որպեսզի գգաք Աստծու շունչը ձեր կյանքի մեջ:

Հարաբաղում գտնվելու երկրորդ օրվա հետմիջօրեին ես այս շրջանի ծողովրդի ծոցում եմ, որի հետ կապված անձնական շատ նվիրական հիշատակներ ունեմ: Օրեւ տեղ որ գնացի՝ Քաջարան, Շուշի, Ստեփանակերտ, այցելեցի գինվորական կենտրոն, գնացի Մարտունի և հիմա եկել եմ Հայրութ: Առաջին անգամն է, որ ես Արցախ եմ այցելում և հայրաց այս Արցախի որեւ մեկ շրջանի հետ ողղակի կապ չունեմ, բայց Հայրութի հետ կապ ունեմ: Կհարցներ՝ ինչպես. ձեզանից որեւ մենք չի՝ հիշում, երբ 1991 թվականին Հայրութի ծողովրդը բռնորոշամբ դորս էր մովե իր հայրենի նույրից և ձեզանից ունանք հասել էին Գորիսի շրջանի Խոնձորեսկ գյուղ, այնտեղ ես ձեզ գաղթական տեսա:

Սցերս արցունքով լցվեցին, ձեր ձայները մինչև այսօր իմ ականջում միշտ հնչել են: Ասում էիր այն ժամանակ, որ ուզում ենք մեր շրջանը գնալ, ուզում ենք գնալ մեր տունը վերաշնել: Փառք Քեզ, Աստված, հազար փառք Քեզ, որ մեր ծողովրդի սրտի ձայնը լսեցիր և ինչպես ասեց ձեր վարչական կենտրոնի հախազանը, ձեր ազատամարտիկների՝ Արցախի ծողովրդի բաջ որդիների մարտուն, պաշտպանությամբ, հերոսական ջանքով դոր վերադարձ, ձեր տան իրավասությամբ, մեր տերը լինելու ձեր իրավունքը արժեցրիք: Հազար՝ ապրեք, բարի եկաք ձեր տունը, շնչացրեք այն, որ երբ աշխարհը տեսնի, ատենք. թշնամին ավերակի վերածեց, մենք պարտեզի կվերածենք: Մենք շինարար ծողովուրդ ենք, մենք չենք բանդում, քանդվածն

ենք վերաշինում: Դրանից ավելի ի՞նչ պատիվ եք փնտրում: Այսօր ողջ Արցախ աշխարհում ես մի նոր շունչ եմ տեսնում: Սա ոչ միայն բնորդան, զարգան մեղմ, ծաղկուն և կանաչավետ շունչն է, այլ ձեր վերանորդման, վերաբանմանի, ձեր վերատեղագործության շունչն է, որ զգում եմ ամեն տեղ: Եվ իսկապես տեսնում եմ, որ կուրքած փայտը վերստին իր տեղին է դրվում, ընկած քարը պատի մեջ է զետեղվում, եկեղեցու գմբեթը դարձյալ դեպի երկինք է խոյանում, արդիած հողերը կրկին կանաչում են:

Դուք ձեր ձեռքերը խառնում եք այս հողին, կցանք եք հանում և հողին իմաստ եք տաղի՝ այս հողի տերը լինելու: Խսկ տեր լինելը ճշմարտորեն իրական է, երբ ծառան ես լինում: Մենք հողի ծառան լինելով, հողի տերը դարձած լիինենք, որովհետև այս լիինի մեր աշխատանքի պատուիք: Ես եկել եմ ձեզ ատկու, շարտեալիք՝ այս ճանապարհը, որ երկու ուղիներ ունի՝ բացուրիան, արդուրան ճանապարհը, բանզի երբ որիշը մեզանից մեր հողը է խոյն, չե՛նք թողնի, լինենե՛նք, բայց չե՛նք թողնի: Սա պատիվն է հայության, բարձր պահեք: Այլևս մենք որիշների կողմից ոչխարի նման քշվող, ոչխարի նման մորթվող ժենք: Ապրե՛ք, Վարդանանց սկրունդն ենք, Սարդարախատի սկրունդն ենք, Արցախի բաշամարտիկներին ննոնդ տվող սկրունդն ենք՝ պատիվ ձեզ: Ես ատկ և ատելու եմ ողջ աշխարհում, մենք հրաժարվել ենք շարդված ժողովրդի հոգերանություննից:

Մեր մասին միշտ ատել են, հայերը շարդվել են, ցեղասպանության են ենթարկվել, գաղթական են եղել, կարծեր թե մենք պատիվ չունենք: Խնչո՞ւ այդպես սրբամարհիւած ժողովորդ պիտի լինենք: Մենք պաշտպանել ենք այս երկիրը դարեր շարտեալիք Երևակայե՛ք, մինչև 2000 թվականը, այս տարիների ընթացքում տոնելու ենք մեր Սույր Էջմիածնի հիմնադրության 1709-ամյակը: Եվ ես առանց հպարտանալու պատու եմ միայն պատմական ճշգնարտությունը. հինգ միլիարդ հաշվիվող մարդկության մեջ չկա մի ազգ, որ կարողանա իր եկեղեցու 1700-ամյակը տոնել: Մենք առաջինն ենք քրիստոնեության հոչակել պետական կրոն, արժեցնե՛նք այս, նորոգենք մեր եկեղեցիները, շունչ տանք մեր դարցներին, որ երբ ճարդիկ դիտեն, ասեն. Աստված ացելել է այս երկիր, Քրիստոս իօլ է այս երկրում և մենք դարձել ենք Աստծո հավատարիմ ժողովորդը: Այս է մեր պատիվը: Հետհաբար ողջունում եմ ձեզ իմ առաջին Հովհաննեսական այցելության այս օրերին:

Հավատացե՛ք, պատմեան որ էլ զնամ և խոսեան Արցախի ժողովրդի մասին, պիտի շխուտն երևակայված, տեսականորեն ընթանված մի շրջանի մասին, այլ ձեր անունով պիտի խոսեան, ձեր դեմքերի յախտը պիտի ունենան իմ մայտի մեջ, ձեր ձայնը պիտի զօմ իմ ձայնի մեջ, ձեր բազուկների, երակների տրուիք պիտի զօմ իմ երակների տրուիքունի մեջ: Մենք և դուք միացած պիտի լինենք և պատել է, որ պիտի արժեցնենք մեր Եկեղեցու վերածննդը: Մենք պարտավոր ենք նետուել մեր հայրերին և Սույր Ավետարանի պատգամներին, ճշմարտություններին: Եվ երե դրանք գործադրող ժողովորդ լինենք, որենք Եկեղեցի ենք փառավորապես: Հիսուս ասեց. «Ով իմ խոսքերը կրի և կգործադրի, նա է իմ եղբայրը, մայրն ու քուրը»: Նա, ով Հիսուս ասածները կրի և կգործադրի, նա իր տունը շինած լիինի ժայռի և ոչ ավագի վրա:

Դուք ասեք հիմա իման. ես կարո՞՞ն եմ իմ խոսքը փակել այս երեխաներին առանց մի խոր առելու: Ե՞նչ անուշիկ երեխաներ կան այստեղ, երբեք չեն կարող երեխակայել: Զգիանի, որ պարզան թվով, կայտան դեմքով, մենք կասենք պերտուն աշքերով, պայծառ ճակատներով անուշիկ փոքրիկներ

կան: Եկե՛ք ինձ մոտ բոլորդ է: Մեր Տերը, երկանավոր Վարդապետը, որ աշխարհ էր եկել, շատ էր սիրում երեխաներին: Մի օր, երբ երեխաները իրեն մոտ էին ու հագուստներն էին քաշում, Հիսուսի առաքյալները արգելում, հանդիմանում էին նրանց: Բայց Հիսուս ասեց. «Թողէ՛ք մանուկները ինձ մոտ գան, մի՛ արգելեք նրանց»: Եվ դարձավ մեծերին՝ ասեց, որ եթե դուք մի փոքրիկի խնամք չտանեք, ձեր սիրաւանոցից երկանարար կկապեմ և ծովը կնետեմ՝ այսինքն ով փոքրիկներին չի սիրում, պիտի պատժի: Ես շատ եմ սիրում ձեզ, դուք ուրախ եղեք, միշտ լավ սովորեք և եկեք այս պահին իմ խոսքը ավարտելով միասին աղոթք անենք, որպեսզի Աստված մեզ պահի իր խաղաղության մեջ: Անենք»:

Հայոցութից Ստեփանակերտ վերադարձող Վեհափառ Հայրապետն անցավ Հարավային Արցախի հայկական վերապրող գրեթե ողջ բնակավայրերով. որտեղ կրկին ծխում է հայի երդիկը՝ ի նշան կյանքի և ստեղծագործության: Այս ամբողջ շրջագալությանը Վեհափառ հայրապետին ուղեկցում էր նաև ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

ՄԱՅԻՍ 21

«Նորոյ երկնից և նորոյ երկրի
ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք,
յորս արդարութիւնն ընալէ»:
(Բ. ՊԵՏ. Գ. 13)

Արցախ աշխարհի չքնաղագեղ դժու Գանձասարը բազում փորձությունների և արհավիրքների միջով անցավ, բայց միշտ մնաց անսասան և անվճակ հաստատելով Աստվածախոս սաղմոսանվագը. «Եթէ ոչ Տէր շինէ զոտ և, ի նաևիր փատակին շինողը նորա. եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն տրնեն պահապանք նորա» (ԱՂՄ. ԾԽ 1):

Վերջին յոթ տարիների դաժան պատերազմի ընթացքում արցախցին իր հայացքը հասել էր Գանձասարին, որ Վեհափառ Հայրապետի այցելությունը նաև պատմական նշանակություն ուներ, քանզի 1357 թվականին Վազգեն Ա երշանկանիշտառակ Հայրապետի այցելության վերանորոգումն էր սա, բայց արդեն օտարի լծից ազատագրված Արցախ աշխարհին և գերության շրջաները թոթափած Գանձասարի իշխանություն.

«Գոհություն առ Աստված, որ ինձ և ձեզ շնորհ արեց զտնվելու այս պատմական և սրբություն ճառագայթող թոշնանման կամարակապ նեկենեցում: Երազ էր շատերին համար տեսնել Գանձասարը և այդ երազը այսօր լույս գտեցավ: Ես ոչ միայն քարեր տեսա, քարեր դիտեցի, այլ նաև լսում եմ ձեր ձայները, դիտում եմ ձեր դեմքերը և տեսնում եմ վերանորոգման, վերականգնանացման շտեռը, որ ծայր է առել արցախյան աշխարհի մեջ Հայաստանի հետ միասին և այսն Գանձասարը պատմություն չէ՝ կյանք է, այսօր ապրվող կյանք է: Եվ դա է ամենից էականը մեր Հիսուս Քրիստոսին ճառակելու համար, դա է նաև էականը նայ ժողովրդի համար: Մենք անցյալի շատ փառեր ենք ունեցել, բայց անցյալի չենք վերածվել: Մենք ապրող ժողովուրդ ենք, և մահապանդ, առավել ևս ապրելիք և ավելի բարգա-

վաճ կյանքով ապրելիք ժողովուրդ ենք: Եվ եթե այստեղ Պատարագից առաջ մղվեցի այս մի քանի խորերը ասեղու, հավատացե՛ք, ձեր համախումբ ներկայությունն էր պատճառը և այս անուշիկ լիոբրիկների շարականի երգեցողությունը, ովքեր իրենց զիլ, մատղաշ ձայնով դարավոր մեր աղոթքներին նոր շունչ տվեցին, նոր պայծառություն բերեցին, շարականները գըրքերից դուրս եկան և ծաղկեցին նրանց շուրթերի վրա: Եվ երբ տեսնում եմ մեր նոր սերունդին, մանուկներին, պատանիներին, որ այսպես շարական են երգում, խկապես ասում են, որ մեր ազգը մնանավում է մի կաղնու, որից նոր ճյուղեր են դուրս գալիս և այն առավել ևս կանաչում, կենդանանում է և ավելի խոր արմատներ է գցում մեր հողի ընդերքի մեջ:

Թող Աստված ձեր աղոթքները ընդունի և այս քարերը այլևս միայնակ չմնան, առանձին չապրեն՝ ձեր շնչով ապրեն և ամբողջ աշխարհում վկայեն, թե հավատքը ժամանակի հարց չէ, այն մարդու խնդիր է: Մարդ երեւ հավատքով ապրի, քարերը կյանք կառնեն և կյանք կտան մեզ բոլորիս: Ամեն»:

Իսկ հընթաց Սուրբ և Անմահ Պատարագի, որ մատուցում էր Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Վեհափառ Հայրապետը Սրբազն Հոր շնորհակալության խորից հետո Արցախյան լեռների խնամքի մերքու մնացած Գանձասարի վանքի լուսարձակող Խորանից ուղեց գոհարանական իր խորը.

«Յանուար և Որդու և Հոգիոյն Սրբոյ: Ամեն».

«Տեր եթէ զշրջուն իմ քանաս, բերան իմ նրգեսէ գօրհնութիւնս Քո»:

Սահմուելքովի բառերով իմ կյանքում առաջին անգամ այս սրբալոյս տաճարի բեմի վրա, քարոզլստության առաջին պահին, ևս մի անգամ բացում եմ իմ շրթները Գանձասարի վանքում, դառնալով արձագանքը մեր Երկնավոր Վարդապետ Հիսուս Քրիստոսի. «Տեր, եթէ իմ շրթները բացես,— ինչպես բացեցիր այսօր,— ես Քեզ օրհնություն պիտի կարդամ», որպեսզի օրհնությամբ լցվի Արցախ աշխարհը, որովհետև օրհնությամբ կառուցվեց այս սուրբ եկեղեցին, օրհնությամբ դարեր շարունակ եկեղեցին դարձավ հավատքի խոսնակ, Ավետարանի քարոզիչ, հոգու սնուցիչ այս քարերի և քարերից հոսող հավատքի տեր անձերի անլոկի բարբառով:

Այսօր, թի առաջ, այս բեմից կարդացվեց Ավետարանից մի հատված, որի վերջին նախադասությունը հետևյալն էր. «Ես եկի, զի զեւանս ունիցին և առավել ես ունիցին»:

Հիսուս ասեց. «Ես եկա, որպեսզի ինձ հավատացողները կյանք ունենան և առավել կյանք ունենան»: Նա խոսում էր ժողովրդի հետ և առակավոր ձևով, պատկերակից ոռով Աստծու Եշմարտություններն էր փոխանցում հրան: Իսկ ժողովուրդը մի հոտ էր, որ իրեն ուղղություն տվող հովից չուներ: Եվ Հիսուս ասեց. «Եշմարիս հովիցը նա է, որ դռնից է ներս մտնում և ոչ թե նա, որ գողի նման կրդից է մտուր գործում: Այդպիսին գող է և ավազակ, իսկ նա, ով դռնից է մտնում, նա է Եշմարիս հովիցը: Նրա ձայնը կլւեն և իրեն կհետևեն: Ես եմ դուր»: Հիսուսին հետևողը արքայություն կմտնի, որովհետև նա է ճանապարհ բացողը մեզ համար դեպի մարդկայն կյանքի այն գերազում ապրումը, որ Ավետարանը կոչում է «Երկնից արքայութիւն», «զի արքայութիւնն երկնից, — ասում է Հիսուս, — ի ներքս ի ձեզ ե»՝ երկնից թագավորությունը ձեր հոգիների մեջ է:

Մարտական ճամաչարին. Խոլի աշխատանիր հետ





Գանձասար. բարոյն և Վեհափառը

Երջանիկոթյան ապրումը, գոհունակության և կյանքը իմաստավոր կերպով ապրելու հոգեկան զգացումն է երկնքի արքայությունը, որ սկսում է այս հոդելեն երկրից, բայց չի վերջանում այս երկրով և դա անենական, հավերժական, երանական կյանքն է, որ Սատված պատրաստել է մեզ համար: Ի՞նչ ո.գեց ասել Հիսոս, երբ ասեց «Ես եկա, որպեսզի կյանք ունենաք»: Միթեն մարդիկ կյանքը չունեն՝ ապրում էին, ծնվում էին, ուստի մահանում էին: Բայց եթե ա'յս է կյանքը, որեւմն այն իմաստ չունի, բանզի չի տարբերվում ո՛չ բուսական և ո՛չ էլ կենդանական կյանքից: Մրանք էլ ծնվում են, աճում, պսղավորվում և հետո անհետանում են:

Սաղմուներգուն ասում է. «Մարդոյ, որպէս խոտոյ նմ առորք իր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ: Ծնէ ի նմա հոդմ և ոչ է և ոչ եւս երեխ ի տեղի նորա»՝ հոդմի փշելուց կշորանա և անզամ չես իմանա, թե որտե՞ղ է եղել այն՝ նոյն է կամ չի եղել, այլևս իմաստ և նշանակություն չունի: Հիսոս չասեց, թե նս եկա, որպեսզի ա'յտ կյանքը ունենաք, այլ ավելացրեց. «Ես եկա, որպեսզի առավել կյանք ունենաք»: Այդ առավել քառը մեծ նշանակություն ունի՝ կյանքի մեջ կյանք ունենաք: Ի՞նչ է նշանակում: Այնպիսի իմաստավորված մի գոյուրյուն, որ մարդուն լիարժեք անձ լինելու և արարածներից տարբեր լինելու զգացում է տապիս: Հիսոս եկավ մեր կյանքի մեջ հոգենոր, իմացական, բարյալիկան այնպիսի երանգներ բերելու, որ այդ կյանքը արծուորվի մեզ համար և դառնա իմաստալից կյանք, որ երբ մահը գա ու տանի բնախոսական կյանքը, ապս. չկարողանա տանել հոգու կյանքը, մեր կյանքը, մեր այն ապրումը, որ երբեք ժամանակ ու տարածություն չի ճանաչում:

Ա'յտ կյանքն է, որ ապրվել է եկեղեցում: Այս պատերն ու քարերը քար են, որ էլ լինեն՝ լեռան, թե դաշտի վրա, ձորագետակի վրա քարը քար է: Բայց երբ մարդը քարը վերցնում և նրան իմաստ է տալիս՝ քանդակում խաչքար, իր հոգին է այդ քարի մեջ դնում: Եվ քարը դադարում է քար լինելուց ու այն դառնում է հոգու վկացություն, ճշմարտության վկացություն: Հետևաբար, Հիսոս եկավ և մեզ տվեց քրիստոնեական կյանքի այդ հասկացողությունը: Եվ ինչպես նիմա ես ծուեկի չգամ իմ հոգու մեջ և չասեմ՝ փառք Քեզ Տեր, որ այնպէս արեցիր, որ մեր հայ ազգը եղավ առաջին ազգերից մեկը, որ ընդունեց այդ իմաստով կյանքը ապրել՝ քրիստոնեական իմաստաբրությունը միհամառնեց իր գոյության, իր ազգային ինքնության, իր լինելության հետ և դրանից երբեք չբաժանվեց:

Ծատ հավածանքներ եկան, ավերակներ ու կործանումներ եղան, բայց հավատը մնաց անխախտելի և մնացինք ու ապրեցինք: Տեսեք, քանի՛ ազգեր եկան ու գնացին պատմության թատերաբնից և հիմա այդ ազգերը միայն թանգարաններում են պահպում ու հիշուում: Բայց եթե մենք տուկացինք որպէս ապրոյ և շնչող ազգ, դրա ամենամեծ ուժը այն է, որ մենք հավատացինք, որ կյանքի մեջ կյանք կա և այդ կյանքով ապրված կյանքն է, որ հավերժական է դրանով է, որ մենք ապրում ենք:

Դո՛ոք մարդկանորեն ամենադժվարին և ամենածանր օրեր ապրեցիք Արցախում: Այս մի քանի օրերին, որ ես գտնվում եմ Արցախ համակոսմ, զնացի մինչև Հադրութ՝ հարավ, և հիմա եկել եմ հյուսիս, անցել եմ բոլոր քաղաքների, ավանների, գյուղերի միջով: Մենք հեռու գտնվելով շատ մոտից ենք հետևել ձեր կյանքին: Արցախի քարտեզները այնտեղ՝ կիրանա նում, բոլորքանչչոր հայի պատից էր կախված կամ սեղանի վրա էր դրված

և ամեն օր խոսքում էր այս կամ այն շրջանի՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Գանձասարի կամ Վասր գյուղի մասին, սրանք մեզ համար դարձել էին մեր կյանքի մասնիկը, թե ո՞ր տեղն էն այսօր բռնագրավել մեր թշնամիները, ո՞ր տեղն է այսօր պատագրվել մեր քաջամարտիկների հերոսական պայքարով։ Եվ նոյնիսկ ևս Գարենականըում աշակերտներին դիտողություն եմ արել, որովհետու դասերը թողել և քարտեզի վրա բուն ընթությամբ հետևում էին Արցախի ժողովրդի հերոսական պայքարի յուրաքանչյուր իրադարձության։ Բայց ինչպես կարողանայի արգելել այդ երիտասարդներին, ովքեր նույն արյունու ու հավատքը ունեն, թեև հեռու էին աշխարհագրականորեն, բայց հեռու չէին հոգեկանորդն և ձեր կյանքը էին բաժանում, այն կյանքը, որ քրիստոնեական հավատորդ է դրոշմված, Մուրք Մեսրոպի գիրով է կնքված, մեր հերոսների արյանը է շաղախված, մեր սրբերի աղոթքով է նոխացած և հօրորացած։


Այսօր եկել եմ ձեզ մոտ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից։ Աստված աշխատ տօնօրինեց իմ կյանքը և մեր ժողովրդով ացնելու կամեցավ, որ ինչ տվել է ինձ իրեն կյանք՝ չգիտեմ քանի տարիներ, այդ ամբողջը իմ Հայրենիքին, Արցախի ժողովրդին և իմ ազգին պիտի ընծայեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Խորանից, որտեղից ել բերում եմ ձեզ այդ հավատքի ուժը։

Էջմիածնին մեր գերազոյն սրբությունն է։ Այստեղ է իշել Քրիստոս Երեխաներ, դպրոցականներ, դուք լավ իմացեք մեր պատմությունը, որ սրանից 1700 տարիներ առաջ մի գիշեր, երբ քեած էր Գրիգորը, որ հետագայում պիտի Լուսավորիչ կոչվեր, հանկարծ մի լուս ծագեց։ Լուսի մեջ տեսավ, որ Հիսուս եկավ ոսկի մորճը ձեռքին, հարվածեց այն Վայրին, որ հանաջվում էր որպես սահնարաւան՝ այսինքն դժոխի կենտրոն, և ասեց. «Այստեղ պիտի կառուցեք իմ եկեղեցին»։ Աստված է իշել մեր Հայաստան աշխարհը և ցոյց տվել մեզ իր Տաճ տեղը։ Աշխարհում ո՞ր մեկ ազգն է այսպիսի տեսիլ ունեցել և այսպիսի տեսիլքով իր եկեղեցու կյանքը սկսել։ Մենք պետք է արժեցնենք մեր այդքան հարուստ անցյալը։ Հարգանք անցյալին, բայց ի՞նչ է պարտքը իմ, ձեր, այս Երեխաների՝ ներկայի և գալիքի համար։


Այսօր հատուկ կերպով եմ եկել այստեղ, **ԺԳ** դարից շինված և կանգուն մնացած Մայր տաճարը՝ ասելու համար, որ եթե ձեր հայրերը, իմ հայրերը պատեղ, Էջմիածնում, Գաղի վանքում, Ամարասում, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցուն և որիշ վայրերում տասնյակներով եկեղեցիներ են շինել, հարց տանք մենք մեզ, թե ինչպես են կառուցել։ Մեզանից ավելի՝ հարուստ են եղել՝ այս հողն են ունեցել, որից ի՞նչ են ունեցել, եկեղեցական հոսանքը են ունեցել, խոշոր մերենաներ՝ են ունեցել։ Այս քարերը իրար վրա իրենք են բարձրացրել հավատքի ուժով, իրենց երկիրը Աստծո վկայարան դարձնելու կամքով։ Այս է մեր արժեքը, դրանից երե պարպեսներ, ոտեղ, խմելով ի՞նչ կինենք՝ ոչի՞նչ, մի օր կծնվենք, անհմաստ կապրենք ու կմեռնենք-կգնանք։ Հավատք, գաղափար, մշակույթ, հայրենիքի սեր, Աստծո օրինությամբ հավիտենական կյանքի՝ առավել կյանքի գաղափար, այս է, որ մեզ պիտի հզորացնի, ա'ս է, որ մեզ պիտի դարձնի ժամանակակից շընկնված և ժամանակով չվերջացող ազգ։

Դարեր ենք ապրել այս հոդին։ Մի օր մի օտար երկրում 300.000.000 հաշվով ժողովրդի մեջ, մի թղթակից ասաց. «Այս տարի մենք տոնում ենք մեր քաղաքի Երկուհարյուրամյակը և ոչինչ չի կարող բաժանել մեզ մեր Երկուհարյուրամյա քաղաքից»։ Դարձա և ասացի. «Շնորհավորում եմ,

Վեհապատճեն Հայութիք Գանձասարի վանական



Մարտին Առաքել Հայոց պատրիարքի հիմնական գործությունները



Սատված նոր երկուհարյուրամյակ պարզի: Բայց դուք ել հիշեք, որ սրանց տասը տարի առաջ մենք ել տոնեցինք մեր Երևան քաղաքի 2750-ամյակը»: Տեսեք, ինչքա՞ն արմատ ունենք, ինչքա՞ն ուժականություն ունենք. եկեք հաղորդ մնանք այդ ուժականությանը և այս երեխաները սովորեն մեր քրիստոնեական հավատը: Այդ ժամանակ է, որ կուժեղանանք: Եվ Սուրբ Էջմիածինը մեզ համար միշտ պիտի լինի այն սնուցիչ մայրը, որի հոգևոր կարծ ենք խմել և այդ կարով ենք սնանել, այդ կարով ենք մեծացել, այդ կանուքների հետևից չերթանք, այլ հոգով լցվենք, ազգ դառնանք՝ այսինքն, գիտակցություն ունեցող, իր ինքնության արժանապատվությունը զգացող ազգ դառնանք: Մեր ազգը կնքվել է Աստծոց, Քրիստոսի Ավետարանով, մեր հայրերի աղոթքով: Այս շարականները, որ երգում էիր, երեխաներ, դարեր ու դարեր երգվել են մեր ազգի զավակների կողմից:

Դո՞ք, ծնողներ, խոսր ձեզ եմ ուղղում, այս երեխաներին ձեր տան մեջ սովորեցրեք մեր աղոթքները: Տունը տաճար է հայի համար: Մեծ մայր է սովորեցրել ինչպես աղոթել, Սուրբ Գիրը ևս է պատմել ինձ: Մենք պես է հոգեկանորեն լցնենք մեր տները, մեր ընակարանները, մեր ընտանիքները: Եվ այդ ժամանակը բոլոր ընտանիքները կզան, կիավարքեն այս եկեղեցուն և կիազմեն մեկ ընտանիք՝ հասարակաց, ընդհանրական ընտանիքը, որը եկեղեցին է, ազգն է, մեր Հայրենիքն է և մեր մշակույթն է նաև:

Ամեն անգամ, երբ շրջում եմ Հայաստանում և տեսնում այն բոլոր վկայությունները, որոնք թողել են մեր հայրերը, ես դրանք անցյալի հետ չեմ շահկապում, դրանք իմ մեջն են, իմ հոգում, նրանք անմահ են, որովհետև առավել կյանք ունեն: Եթե նյութական կյանքով ապրենք միայն, ափսոս և՛ մեզ, և՛ մեր գոյությանը, մարդկային կյանք չէ այդ: Բայց եթե հոգեւոր կյանքով ապրենք, ազգային իմաստով, հայրենասիրական ոգով և Աստծո շնչի ներքն, Ավետարանի լուսավորության տակ, այն ատեն է, որ ես ձեզ կշնորհափորեմ իբրև արժանի ժառանգորդները մի մեծ ազգի՝ փոքր թվով, փոքր հողով, բայց մեծ հոգով ազգի: Այդ մեծ հոգին չփոքրան: Եվ դուք միշտ հաղորդ լինեք հայության այս մեծ հոգու հետ և չփոքրացնեք ձեր մեջ այդ մեծ հոգին, մշտաբարբառ, մշտակենդան և մշտահոս հոգին մեր հոգիների մեջ:

Այսօրվա Պատարագին ես ուզում եմ իմ գնահատանքը հայտնել ձեր առաջնորդ սրբազնին, որ ամեն ճիզ է թափում, որպեսզի շեն մնա սուրբ հավատը Արցախ աշխարհում, նաև բոլոր հոգևորականներին: Ապե՞ք, սիրեկի հոգեւոր եղբայրներ՝ վարդապետներ, քահանաներ, սարկավագներ, հազա՞ր ապրեր, եթե մեր ծողովուրդը այսպես հավատքով ապրեցնեք: Խորանի վրա տեսա երիտասարդներին, երիտասարդներ եմ տեսնում նաև ձեր մեջ. առաջ եկեք, տղաք: Եթե մի գյուղում քահանա չկա, երկնքից չպիտի բերքի, այլ դո՞ւր պիտի լինեք: Եթե դոք չլինեք, ձեզ նմանները չլինեն, այս եկեղեցին ինչպե՞ս պիտի շենանա, հոգու վկայություն ինչպե՞ս պիտի դառնա: Քաջ եղեք, քանզի հոգևորական դառնալը ամենից մեծ պատիվն է, որովհետև ամենանվիրական պարտքն է՝ Աստծո թարգմանը լինել մարդկանց: Սորյա կյանքի սպառողական երկույթներով դուք ձեզ մի՛ մաշեք, այլ «առաջ մատիք»՝ Աստծո առաջ, ծողովուրդի առաջ և մի գյուղում, ավանում, քաղաքում եթե տեսնեմ, որ եկեղեցին փակ է, թվում է, թե մի կոյց բան կա մեր մարմնի վրա: Բացենք մեր աշքերը, որպեսզի կարողանանք մեր հավատքի տները շենացնել՝ որպեսզի առավել կյանքը լցվի մեր մեջ:

Թող այս մտածունք մենք գոտենապնդվենք, զրահանք և մեր հոգեոր հայրեի գործունեությամբ, մեր պետական իշխանությունների հոգատարությամբ և մեր քաջարի բանակի պաշտպանությամբ կարողանանք այս հոդը մեզ համայ պահել կենդանի և կենդանաբար: Այսօր դուք պետք է լավ հմանաք, որ Հայաստանի Հանրապետության փոխնախագահի այցելությունը ինձ հետ, ևս կենացին Պարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայությունը մեր կրդիթ ունի խորիդանշական մեծ նշանակություն: Սա ասում է մեզ, որ պետությունը մեր կողքին է հոգեոր այս մեծ վերստեղծման, վերանորոգության շրջանին: Ես իմ գնահատանքն եմ հայտնում նրանց, իրենց ինկապես նկելեցու արժեքը ճշգրիտ կերպով հասկացողության և առ այդ իրենց տարած աշխատանքների համար: Թող Աստված օրինի նրանց, որ պեսօք նրանց մեծ ո դժվարին պարտավորությունը՝ հայրենաշխանության, ազգակերտումի, պետական կառուցումի այս ամենադժվարին օրերին լինի պտղաբեր «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վարսուն և ընդ միոյ հարիլ», ինչպես ասում է Սուրբ Ավետարանը:

«Ենորիք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենաւանդակությունի: Անձն»:

Մարտավերտ քաղաքն էր օրվա մյուս հանգրվանը: Զարմանալի անոն: Այս նա կրում այս փոքրիկ լեռնաշխարհի բնակավայրերը՝ Մարտակերտ կամ Մարգակերտ: Վեհափառ Հայրապետի այցը այս քաղաքին երկու նպատակներ: Կ հետապնդում էր իր մեջ՝ շնորհավորել կերտած մարտի հաղթանակը և անցելով մարդ կերտելու գործին: Քաղաքի մարզադաշտը լեփեցում էր ժողովորի բազմությամբ: Օրսաւորե վերադարձող բնակիչների թիվը հասնում է շուրջ 3000-ի, որոնց մեծ մասը եկել էին հաղորդակից դասնալու Հայոց Վեհին: Մարզադաշտի դարպանների մոտ երեխաների հուկա խումբը երգերով և ծաղիկների տեղատարափով դիմավորեց Սմենայն Հայոց Հայրապետին՝ այս եղանակով առանց մեծ-մեծ խոսքերի վստահեցնելով, որ իրենք լինելու են արժանի ժառանգք ոչ միայն մեր անցյալի պատմության ներուների, այլև իրենց հայրերի և եղբայրների, ովքեր գոհվեցին, որպեսզի իրենք ապրեն Աստծուն և Հայրենիքն անմնացորդ ծառայելու համար.

«Առաջնորդ սրբազն, հոգեոր եղբայրներ, հարգարժան փոխնախագահ Հայաստանի Հանրապետության պարու Գագիկ Հարությունյան, հարգարժան վարչապետ Լեռնային Պարաբաղի Հանրապետության և պետական ներկայացուցիչների, քաջամարտիկ գինվոր եղբայրներ, հավատացյալ և հավատարին հայորդիք:

Այս օրը իմ կանքի մեջ ամենագեղեցիկ օրերից մեկը պիտի մնա և երեք շախութ մոռանամ և չեմ կարող մոռանալ իմ այս առաջին հանդիպությ Մարտակերտի քաջարի ժողովրդի հետ: Երբ սրանց մեկ և կես տասին առաջ Աստծու կամքով և հայ ժողովրդի ընտրությամբ կոչվեցի Սմենայն Հայոց Կաթողիկոսության նիմիականագույն, բայց ծանրագույն պարտավորության, առաջին պարտը զգացի ժողովրդիս հետ լինել, ժողովրդիս մոտ լինել, ժողովրդիս ապրուները իմ կյանքի ապրուների հետ շահախել: Մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս Խր Երկնային առաքելությունը երկրի վրա կատարեց միշտ շրջագալելով ժողովրդի մեջ, զնալով ժողո-

Հայության շարունակ Մարտակերի գնդակ



վըրդին, մոտենալով ժողովրդին, խոսելով ժողովրդին, իր մտածումները, իր գաղափարները, իր սկզբունքները ժողովրդի հետ բաժանելով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եկեղեցական հոգեոր կննորոնն է ամբողջ հայ ժողովրդի: Եվ, հետևաբար, ով էլ լինի այնտեղ, Կաթողիկոսը չի կարող ինքն իրեն կարել ժողովրդից: Եվ այսօր ձեր առաջնորդ սրբազնի, նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ պարուն Խորեւու Քոչարյանի միացյալ հրավերով, ես եկա Արցախ և շուգեցի Արցախից մեկնել առանց հյուսիսայից կողմն աշխարհիս տեսնելու: Առավոտյան Սուրբ և անմահ Պատարագ մատուցմեց Գանձասարի վանքում, այնտեղ իմ խոսքն ուղեցի ժողովրդին և ցանկանալով ցանկացա գալ այստեղ՝ Մարտակերտ, և լինել ձեզ հետ աղոթքով, մտածումով, սրտով, մտքով ու հոգով:

Սիրելինե՞ր, ճիշտ է, որ առաջին անգամն եմ իմ աշքերով տեսնում Մարտակերտը և ամբողջ Արցախ նահանգը: Բայց վերջին յոյ տարիներին գրեթե ամենօրյա հետևողությամբ մենք շատ մոտից ենք հետաքրքրվել այս աշխարհի մեջ տեղի ունեցող հեղաշրջող իրադարձություններով: Ամեն անգամ, որ լուրերը ստանում էինք Մեր գրասենյակում՝ Բեյրութում, բացում էինք քարտեզը և կարծեք ձեզ հետ միասին շրջանից-շրջան հետևում էինք բոլոր տագնապալի դեպքերին, այն բոլոր անարդար հարձակումներին, որոնք կատարվեցին մեր ժողովրդի դեմ, երբ ուզեցին այդ ժողովուրդի ազատ կամքը՝ Աստծո տված կամքը ազատության խել իրենից:

«Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ յադապ ամենայնի, Տէր, փառք Քեզ»: Եկավ ազատության օրը: Գիտեմ, դժվար եկավ, բայց ո՞ր ազատությունն է դյուրին եկել որևէ ազգի պատմության մեջ: Ազատությունը միշտ ձեռք է բերվել զոհողությամբ: Նա, ով զոհողություն չի կարող անել, ազատություն չի կարող վայելել: Մենք մեր ազգային քայլերգում ասում ենք.

«Ամենայն տեղ մանը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իր ազգի,
Ազատութեան կը զոհուի»:

Նա հայության փիլիսոփայությունն է: Եվ այժմ իմ խոսքը հատուկ կերպով ուղղում եմ բոլոր իմ այն եղբայրներին, ովքեր որիշ տարագ ունեն: Մենք հոգեւորականներս, զինվորներ ենք, մենք ել որիշ տարագ ունենք: Մենք դադարել ենք անձ լինելուց, անհատ լինելուց: Մենք մեզ տվել ենք ընդհանրական արժեքի՝ գերագույն Էակ Աստծուն և նվիրական սրբությունն Հայրենիքին ծառայելուն: Դուք այսօր այսինչ-այսինչյան անունը շունեք միայն, այլ ունեք հաջոց զինվոր տիտղոսի պատիվը և ազգը ձեզ նման երիտասարդներով, ձեզ նման զինվորներով կարող է միայն և՛ համարտանալ, և՛ փրկվել, և՛ պաշտպանվել, և՛ զարգանալ:

Ես այս երկնորով բացված Աստծո տաճարի մնաց, հոգուս մեջ ծովնի նկած իմ հարգաճքի խոսքը ուղղում եմ դեպի Աստված և հարգում եմ անմահ, անմեռ, անթառամելի հիշատակը բոլոր այս բաշամարտիկների, ովքեր երեկ ձեզ և ինձ նման ապրում էին, կյանքը վայելում էին, բաց երբ նկավ պարտականության ժամը, իրենք իրենց գերազույն ուժը, գերազույն քարիքը՝ կյանքը, չզլացան: Կյանքից ի՞նչ կա թանկ: Հարգանք նրանց: Եվ ես զգում եմ, եթե հոգով մոտենաք կյանքին, դուք ել պիտի զգաք, որ նրանք

այժմ երկերից մեզ դիտում են: Նրանք չեն մեռել, նրանց մարմինը հող է դարձել, այն, ո՞ր մարդու մարմինը հող չի դառնում, բայց նրանց գաղափարը, Աստվածային անմահ Հոգու ճառագալը նրանց հոգու մեջ անմահ է: Երկերից այսօր հրճվում են, եթե տեսնում են, որ դուք այժմ այսպես ազատ կարող եք ձեր հողի բարիքները ձեր ձեռքերովք դուրս բերել հողից և կանեքը ապրել խաղաղության մեջ: Ես ձեր ղեկավարներից շատ լավ տեղեկացկ եմ, թե տակավին Վերջնական խաղաղություն չի հաստատվել: Տակավին մի քանի կիլոմետր այն կողմ, մեր սահմանի վրա, ապահովություն չկա: Բայց ես գյուղացու զավակ եմ, ամբողջ պատանեկան կյանքը ապրել եմ զյուղի մեջ: Ես գիտեմ, թե ի՞նչ է նշումներում անձնի և արևի խաղը: Գյուղում երբ անձք գար, բոլոր տուն էինք մտնում, երբ արևը բացվեր, տունը թողնում, դուրս եինք գալիս դաշտում աշխատկու:

Իմ մեծ պապը ասում էր. «Տղա՛ն, արև կա, տան մեջ մի մնաց գնա դաշտ աշխատելու»: Եթե իմ խոսքերը լավ հասկանաք, կանեքը անձնի և արևի փոխանակման շարունակական հաջորդություն է: Երբեմն արև է գալիս, երբեմն անձն, երբեմն կարկուտ և երբեմն էլ ձյուն: Ես ձեր ցավը շատ լավ եմ հասկանում, ձեր պայմանները լավ եմ ըմբռնում, որովհետև գրեթե տասնինց տարիներ Լիբանանում ուսումնարի ո հրացանաձգությունների ներու եմ ապրել: Կիլիկյան Աթոռի վանքում ամիսներ եմ անցկացրել և կողմում հատած և քանից ավելի ուսումնարի ուսումնական վանքի վրա, հազարավոր հայ տեսեր են քանդվել և միայն երեք տարվա ընթացքում, Լիբանանի գաղթական հայերս այնուղի կարողացանք վերականգնել 2224 տեսեր:

Եղացարներ, մենք պատերազմ չենք ուզում, որիշի հողը չենք ուզում, որիշի իրավունքը չենք ուզում կապտել, յուրացնել ու սեփականացնել: Մենք հարգել և հարգում ենք մեր բոլոր հարկաներին: Ազգային արժանիք է դա, Աստծու հրաման է դա, բայց նաև Աստծու հրամանն է մեզ՝ կանեքը պաշտպանել: Կյանքը Աստծու տված գերագույն բարիքն է և այն որիշները իրավունք չունեն մեզնից լուկու: Մենք պարտապոր ենք Աստծու տվածը Աստծուն վերադարձնել, այն շահեցնելով և իրագործելով մեր կյանքում և ոչ թե որիշի կամ մեր ձեռքով փշացնել:

Խաղաղության շրջանում մենք պետք ունենք ասելու, արևը դուրս է եկել և պետք է գնալ մեր գործին: Մեր ձեռքերով, սեփական ուժերով, մեր իրավունքը եղող այս նվիրական հողից մեր կյանքը շահենք և դրանով ցույց տանք աշխարհին, որ հայի անցած տեղում կանաչ կրուսի, այնուղից կյանք առաջ կգա: Աստված տվել է այս հողը: Մենք այդ հողի տերն ենք և այդ հողի ծառան ենք: Իմ դողդոց ու տկար ձեռքերը խաչը և Ավետարանը բռնելուց առաջ, այս կարողիկոսական գալաքամը բռնելուց առաջ հող է բռնել՝ պատիվ իմ ձեռքերին, որ հող է մշակել ու նրա հետ է խառնվել և տեսել է, թե մի հատիկ սերմից ինչպես է հասկը դուրս գալիս:

Սիրեկիներ, Աստված որքան կյանք տա Մեզ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մենք երեք պիտի չդադարենք ձեր մասին մտածելուց, ձեզ համար աղոթելուց և ձեզ համար գործելուց: Ուրախ ենք Մենք, որ այստեղ ունեք մեր ծողովրդին նվիրված, Աստծու աղոթքը իր հոգու մեջ խառնած և մեր պատագրական պայքարին ամբողջականորեն նվիրված մի հոգևոր առաջնորդ՝ հանձնին. Պարզ եպիսկոպոս Մարտիրոսանի, և բոլոր այն հոգևորականների, ովքեր խաչով օրինում են և աղոթքով խնդրում Աստծուն, որ փորձանքը, պատերազմը վերջանա և նայք Արցախի մեջ իր արդար

Խոսկուսա յոհկովիսու տաճախին



գործը տանի վասն Աստծու և վասն Հայրենյաց: Շնորհավորում եմ մեր բոլոր հոգևորականներին, բոլոր եկեղեցականներին, ովքեր իրենց գործն ևս կատարում այս հողի վրա: Ես այսօր ձեր առաջ կանգնած առաջին անգամն է, որ ձեր աշքերին եմ նախում և ուրախ եմ, որ իմ աջ կողմում կանգնած է Հայաստանի Հանրապետության փոխնախագահը, որ եկեղեց է հատուկ կերպով լինելու Ամենայն Հայոց Կայողիկոսի հետ և մեզ հետ լինելով ամբողջ մեր ժողովրդին ասել, որ Հայոց Պետությունը իր նախագահով և ամբողջ պետական կառավագանում է Հարաբաղի ժողովրդի կյանքով ու գործով արդարացվող այս դատը, որ ազատագրության արդար դատն է մեր ժողովրդի: Ահավասիկ, երա կողքին կանգնած է իր եղբայր՝ վարչապետը Լեռնային Հարաբաղի Հանրապետության, որպես ներկայացուցիչը Արցախի Հանրապետության նախագահի: Պետություն և Եկեղեցի՝ միասին, որովհետև երբեք բաժան չեն եկեղեց, այլ մեր պատմության մեջ միշտ եղել են կողը-կողրի: Ես ողջունում եմ ազատ, անկախ մեր Հայրենիքի այս միասնությունը մեր Եկեղեցու հետ, նաև շնորհավորում եմ Հարաբաղի մեր իշխանությանց, որ այսպիսի հարգանք և սեր ցուց տվեց հանդեպ Մայր Արքու Սուրբ Էջմիածինը, մեր Եկեղեցին և Մեր տկար անձին: Այժմ ես ուզում եմ, որ մենք բոլորս աղոթք անենք առ Աստված, որ Ինքը զորացնի մեզ: Այնքան ժամանակ, որ պատերազմ չկա, զործ կա, գրեցեք ձեր բարեկամներին ու ազգականներին որտեղ էլ լինեն, թող վերադառնան: Այս է մեր հողը, աշխարհում որտեղ ենք կյանք փնտրում, եթե ոչ մեր հողի վրա: Հետեւարար, վտանգն էլ մերն է, կյանքն էլ մերն է, ցավն էլ մերն է, ուրախությունն էլ մերն է: Լինենք միասին, գործներ միասին և եթե պետք լինի՝ նեռնենք միասին՝ հավերժորեն միասին ապրելու համար: Ամեն»:

ՄԱՅԻՍ 22

«Աւոտած, որու գարօնալ կնցուցեն զնաց,
ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ»:
(ՍԱՂՄ. ՁԴ 7)

Գերշին օրն անցավ Ստեփանակերտում: Վեհափառ Հայրապետը նախ բաղարի զինվորական հիմքանանցում գոտեպնեց Վիրավոր ազատամարտիկներին և քաջալերեց ու գնահատեց բժիշկների այդքան ծանր պայմաններում կատարած հերոսական աշխատանքները: Այսումետև այցելեց նոր կառուցվող մանկական ախտորոշման հիմքանանց, որտեղ, բացի բուգոր միխթարությունից և բարյական աշակցությունից, Վեհափառ Հայրապետը նաև շուրջ 100.000 ԱՄՆ դոլարի հասնող հյութական օժանդակությամբ սատարեց իրականացվող աշխատանքները՝ ցանկություն հայտնելով, որ այդ հիմքանանցը կոչվի արցախցի զավակներից մեկի՝ Գարեգին Ա Հովետիյանց Հայրապետի անունով: Հանդիպում տեղի ունեցավ նաև ԼՂՀ կառավարության նախանձելում, որտեղ, ծանոթանալով Արցախի վերաշնուրյան և ստեղծագործական կյանքը բնականն հունի մեջ դնելու աշխատանքներին, Վեհափառ Հայրապետը հոյզ գոհոնակություն և իր զորակցությունը հայտնեց կատարվելիք բոլոր ձեռնարկներին: Այս ամենին եկավ ավելանալու նաև շնախատեսված մի շատ հոգիչ համդիպում Ստեփանակերտի առաջին զորագնդի հետ, որին Վեհափառ Հայ-

բապեսի օրհնությամբ պիտի հանձնվեր Ղարաբաղյան բանակի առաջին նարտական դրոշը: Դրոշի հանձնման սրտառուց արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը հայրական օրհնություններ բաշխեց Հայոց ազատագրական բանակի մարտիկներին:

«Մեծարգոն նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հարգարժան և սիրեցյալ գորավար և գորավուխ, հարգելի փոխնախագահ Հայաստանի Հանրապետության նոգեոր եղբայրներ և պատվական, թանկագին արյունակից և ճակատագրակից գինվոր եղբայրներ,

Ես այսօր սրտիս խորքերից փառք եմ ընծայում Աստծուն, որ ինձ այս մեծ պատիվը շնորհեց և առանձնաշնորհումը, որ իմ տկար ձեռքերով, բայց Աստծու գորովությամբ օրհնեմ այն դրոշը, որ ձեր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատիվն ու քաջորդյունն է խորհրդաշտում: Ես հազիվ ընտրված Ամենայն Հայոց Կաթողիկոս ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, այսօր ինձ բախտավոր եմ զգում և փառք եմ տալիս Աստծուն, որ այս քաշուիկ պատիվը շնորհեց ինձ ձեր առաջ գտնվելու և դրոշը օրհնելու:

Սիրելի գինվորներ, դուք այսօր գտնվում եք մի այնպիսի պարտականության առաջ, որ ողջ հայության՝ և՝ Ղարաբաղի, և՝ Հայաստանի, և՝ ամբողջ արտասահմանի հայության հարգանքի և հիացումի առարկա եք դարձել: Հազա՞ր ապրեք: Հավատացնք ինձ, Աստծու ձայնը կարծես իմ մեջից խոսում է: Հազա՞ր կապրեք, եթե միշտ այսպես ապրեք՝ պատրաստ, արի՛, մեր Հայրենիքի պաշտամունքը ձեր հոգիների և նրա պատիվը ձեր կրծքերի ներքի: Այսօր ինչ որ ասաց մեր սիրելի նախագահը, ինչ որ ասաց ձեր զբնիակներ, ինձ համար թանկագին խոսքեր են և այն բանաձևը, որ կարդացվեց և ծածանվեց դրոշը, այդ բանաձևը մենա ձեր սրտերի վրա գրված երկարագիր և ոչ թե թղթի վրա մնացող գրչագիր: Ազգերը հաճախ պատվիրվում են այլազան շափանիշներով: Ասկել է, ասացեք ով է ձեր պետական կազմը, ասեմ, թե դուք ինչպիսի պետություն եք, ասացեք, թե ինչ տեսակ հոգևորականություն ունեք, ասեմ, թե ինչ տեսակ եկեղեցից եք, ասացեք ինչ տեսակ մտավորականություն ունեք, ասեմ, թե ինչ տեսակ կյանքը, և այժմ երկներից դիտում են մեզ: Հարգանք բոլոր այն քաջամարտիկներին, ովքեր իրենց արյունն ընծայեցին վասն պաշտպանության Հայրենյաց մերոց:

Մեր ազգի այսօրվա չափանիշն էլ դուք եք՝ ձեր պատրաստականությամբ և, մանավանդ, զոհողության գիտակցությամբ, որով դուք արժենում եք ձեր գինվորությունը: Ես օրինում եմ հիշատակը բոլոր նրանց, ովքեր ձեր շարքերից գնացին ճակատամարտ՝ գոհելով իրենց կյանքը, և այժմ երկներից դիտում են մեզ: Հարգանք բոլոր այն քաջամարտիկներին, ովքեր իրենց արյունն ընծայեցին վասն պաշտպանության Հայրենյաց մերոց:

Պատիվ, հարգանք և քաջակարանք ձեզ, որ գիտեք այսպես պատրաստական հոգով ընդառաջել ձեր մեծերի հրահանգին և ծողովորի ձայնին, որպեսզի այդ ձայնը չլու: Դուք միշտ պատենչի վրա եղեք և ձեր հոգեոր գինակիցները, զոհողության խորհրդանիշ խաչը բարձրացրած որպես մեր դրոշ, միշտ կանգնելու ենք ձեր կողքին, լինելու ենք ձեզ ինտ, երբ դուք այսպես լինեք Հայրենիքի, ազգի հետ: Ես իմ շնորհակալությունն ու գնահատանքն են հայտնում նաև մեր Հայաստանի Հանրապետության փոխնախագահին, որ եկել է զորակցություն հայտնելու հանուն Հայաստանի Հանրապետության և նրա նախագահի: Եվ թող ես էլ կերպահայրը լինի այս մեծ արարողության, ինչպես նրա կատարողը եղավ ձեր նախագահը և

օրինողը եղավ իմ տկար անձը: Աստված օրինի և զորացնի ձեզ «ի խնամք մարդասիրութեան իրոց» և վասն պաշտպանության հայրենաց մերոց, հափոյան հավիտենից: Ամեն»:

Սյս տեսակցությունից հետո Վեհափառ Հայրապետու այցելեց նաև քաղաքի կենտրոնում նոր եկեղեցու շինության համար հատկացված տարածք՝ մաղթելով, որ Տերը այն վերածի մի խսկական հավաքատեղիի և մաքրման սրբազն թուրատան:

Քիչ անց Վեհափառ Հայրապետը Ստեփանակերտի մարզադաշտում հանդիպեց և իր հայրական խոսքն ուղղեց այնուղիւ հավաքած հոծ բազմության ծերերին ու մանուկներին, երիտասարդներին և երիտասարդունիներին.

«Սիրելի առաջնորդ սրբազն՝ Պարգև եպիփոնոս Մարտիրոսյան, հարգարժան նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հարգելի փոխնախագահ Հայաստանի Հանրապետության, սիրելի հոգևոր եղբայր և թանկազն ու հավատարիմ հավատացյալներ,

Սյս բովեն ժամանակացոյցով չի շափվի: Իմ հոգու մեջ ապրումները այնքան հորդահոս կերպով են բխում, որ ես չեմ կարող ժամանակի սահմանափակումների կամ աշխարհագրական սահմանների ներքև դնել այդ ապրումները: Սյս պահին դարերն են ինձ խոսք, այս պահին ձեր միջից ես խոսում եմ ողջ հայության հետ և՝ Արցախում, և՝ Հայաստանում, և՝ համայն աշխարհում:

Սուածին հերթին, երբ Արցախի հողի վրա իմ խոսքն եմ ուղղում Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի ծողովրդին, փառք եմ տալիս Աստըծուն, որ ինձ շնորհեց այս գեղեցիկ, իմաստալից և ներշնչողական պահը: Մենք հոգևորական ենք դարձել ոչ թե մենք մեզ համար, այլ Աստու և ծողովրդին ծառացելու համար: Երբ գտնվում ենք ծողովրդի մեջ, երբ գործում ենք ծողովրդի հետ, երբ աշխատում ենք ծողովրդի համար, այն ժամանակ միայն մեր հոգևորական լինելը իմաստ է զգենում: Այսօր ես այդ իմաստն եմ ապրում, երբ գտնվում եմ այսքան բազմության մեջ Ստեփանակերտում:

Չատ սիրելի եղբայրներ և բոյցեր, 1989 թվականին երբ ես իմ երշանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով գտնվեցի Սուրբ Էջմիածնում, այնուղիւ մի խոսք ասեցի և այդ խոսքը գրեթե բառացիորեն այժմ մեշքերում եմ այստեղ. «Զգիտեմ, թե գալիք պատմաբանները ի՞նչ բառերով են բնորոշելու այս վերջին շրջանը մեր Հայոց պատմության: Բայց ես նախազգում եմ, հոգու մեջ ապրում եմ այն գաղափարը, որ առողջ պատմագետը պիտի ասի մինչև 1988 թվականը նախաղարաբարյան շրջան և դրանից հետո՝ դարարադան շրջանն»: Իսկ դրանից երեք տարի հետո, երբ հոչակվեց Մայր Հայաստանի անկախությունը և կազմվեց Հայաստանի Հանրապետությունը, նոր և փառավոր լուս ծագեց մեր բոլոր երազների վրա: Եվ դոք գգում եք, դուք տեսնում եք, որ ես բախտավորությունը չեմ ունեցել ծնվելու իմ հայրենի հողի վրա, բայց իմ Հայրենիքը եղել է իմ հետ առաջին այն օրից, երբ ես աշքերս բացել եմ արևի լուսին: Հայրենիքը աշխարհագրական սահման չէ միայն: Հայրենիքը ապրում է, կյանքի հասկացողություն է, ինքնության ճանաչում է, արժանապատվության գիտակցություն և ստեղծագործություն

Ե: Ուրիշ տեղ ասացի, բայց այստեղ հարկ եմ գգում կրկնել. եթե Ստեփանակերտից և մի որիշ երկրից մի բոլո հող վերցնենք, տանենքը մի գիտական կենտրոն և փորձեք այդ հողերի տեղային տարրերությունները գրանել, պատասխանը չեք կարող իմանալ: Բայց եթե Հայաստանի հողին մեր կյանքը շաղախենք, այն ժամանակ հողը կդադարի հող լինելուց, այս կդառնա Հայրենիք: Այսպէս է եղել մեզ համար: Արցախը կերպարանափոյսեց մեր ողջ հայոքյումը: Այսև հայը չէ այն Ամերիկայում, կամ Լիբանանում, կամ Մարդագոյն Արևելքում, կամ Հարավային Ամերիկայում և կամ մեր Մայր Հայաստանում, ինչ որ եր սրանից յոթ կամ տասը տարիներ առաջ: Մի հրաշագործություն կատարվեց, հայտնություն եղավ Արցախը: Արցախը անընհատ ճնշվել էր, բայց չեր խամրել, չեր խեղդվել և ահավասիկ, փյունիկի մման նա վեր հառնեց և այսօր խմոր է դարձել Հայոց աշխարհի զանգվածում:

Հարգա՞նք ձեզ, որ Հայոց վերահնունիք ուսմիտրանները հանդիսացար: Ես իմ մաղթանքն եմ բարձրացնում առ Աստված և հարգանքի խոր ողղում բոլոր այն հոգիներին, այն ազատամարտիկներին, ովքեր իրենց արցունք խառնեցին այս Հայրենի երկրին և նյութենեն հողը հոգեղեն Հայրենիքի վերածեցին:


Հարգա՞նք ձեզ, այս երկիրը կառավարող պետական ներկայացուցիչներ: Դուք ձեր գործը չտեսեք որպես պաշտոն, պաշտոնակատարներ չեք, այս ձեր պաշտոնը պիտի ըմբռնեք և ըմբռնելու եք որպես կոչում, նվիրում, անձնական ներդրում և ոչ թե պաշտոնի պարտականության ձևական կատարում: Ձեր կյանքի հետ է խառնվել ձեր պաշտոնը և դրա համար ես աղոթում եմ Աստծուն, որ օրինի ձեր գործը, այս ժողովուդի կյանքը կազմակերպելու և պետականորեն իրեն ազգ մեր ժողովորդի պատիվը բարձր պանելու:


Հարգա՞նք ձեզ, այժմ իմ դիմաց կանգնած գինվոր եղբայրներ: Առավոտյան ես ուրախության արցունքներով դիմեցի այն դրոշը պաշտպանության, զոր բարձրացրին ձեր կենտրոնական գնդի գորակայանում: Այդ իմ կյանքի գերեթանիկ պահերից մենք եղավ: Դուք այսօր այս ժողովուդին տուխի եք ապահովության զգացումը, ազատությունը արծնորում եք, որովհետև տալիս եք նրան Հայրենիքը վերաշինելու և իր ավերակները վերականգնելու: Աստված ձեզ օրինի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հարատուրեն աղոթում ենք ձեզ համար, որպեսզի արի նոգով և քաշությամբ տանեք ձեր նվիրական գործը:

Խսկ ժողովուրդ Հայոց, որ ի Ստեփանակերտ, ես գտնվեցի Արցախ աշխարհի ազգագան կենտրոններում՝ հարավից մինչև հյուսիս: Այսօր վերցին պահս է Հովհաննեսական առաջին այցելության և քիչ վերջ, ավարտելուց հետո իմ երեքրոյա Հայրապետական այցելությունը, վերադաշնայու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Ես վերչերս ձեր հողի ծնունդ զավակներից մենքի գործունը կարդացի: Մենք, որ ծնվել է Ղարաբաղում, բայց չի կարողացել ապրել այստեղ, եկել, այցելել է իր հայրենիք և գրել իր հուշամատշանում.

«Քարի վրա է ծնվել հայը, քարի վրա ապրել, քարով ապրել, քարը քարին դրել, քարերի վրա բարձրացել, քարեր բարձրացրել: Քարերի մեջ է անել մանուկը, քարով համ առել, քարն ինացել, քարի պես ամրացել: Ու այսպէս հազարավոր տարիներ հայն իր առաջին քայլից քարի հետ է ապրել, քարը մշակել, քարից շուր քամել»: Ես կարող էի ավելացնել իմ

Շնչի. Վեհանդառ Հայրական վիրունի ազգային սիմվոլիկական ինս





Անձնագիրը պահպանվում է առաջնային համակարգություններում՝ սպառագիր կամ պատճենագիր ձևով:

բարերով՝ քարի պես էլ տոկում մնացել: Բայց ևս փակում եմ որիշ խոսք ասել ձեզ: Ֆիշտ է, որ Հայաստանը քար է հնչակ-վել, բայց ոչ միայն և միայն քար, բայց է այլև քա'ր, քա'ր, քա'ր ասել: Մենք հո'ղ ունենք, հողն է մեր հարստությունը, հողից ենք կյանք հանելու: Մեր արվեստը քարի վրա դրոշմում ենք, խաչքար ենք դարձնում, տաճար ենք կանգնեցնում, պալատ ենք շինում, բայց մեր կյանքը հողից ենք դորս հանում: Հողն է Եվկրական: Ես դիտեցի ձեր աշխարհը վարժունամյա կյանքում առաջին անգամ լինելով: Փառք Քեզ, Աստված, որ այսպիսի հող ես տվել Արցախի իմ պատվական ժողովրդին:

Հիմա ժամանակն է շինելու, կերտելու, ստեղծագործելու: Ես ձեզնից հեռու չինելով գիտեմ տակավին շատ դժվարություններ ունեք: Հարյուրից ավելի երկրներում եմ եղել և ասում եմ ձեզ, որ ամեն երկրում էլ դժվարություններ կան: Սա մեր երկիրն է, դժվարությունները մեր դժվարություններն են, հետևաբար, պիտի կրկնապատճենը մեր ոմերը, որպես աշխարհին մի անգամ ևս փաստենք, թե մենք հող չենք ուզում հողից հարստանալու համար, մենք մեր հողը մերն ենք դարձնում, որպեսի հողից մարդկությանը կյանք և ստեղծագործությունը ընծայենք:

Անա թե ինչու այսօր, իմ անդրանիկ Հովհաննեստական այցելության առիթով, սրտագին կոչ եմ ուղղում ձեզ. Լծիեցե՛ք աշխատանքի, սուրբ է աշխատանքը մեր քրիստոնեական հավատքով:

Իմ վերջին խոսքը ուղղում եմ այն մատղաշ սերմնին, այն փոքրիկներին, այն դպրոցականներին և ուսանողներին, որոնց այնքան առատորեն հանդիպեցի ամբողջ այցելության ընթացքում: Միրելի երեխաներ, դուք մեր աշքն են՝ բացված դեպի Հայոց Ապագան: Այնպես արեք, որ դուք ուսման մեջ, կյանքում սովորեք ազնվագույնը և լինեք ձեր հայրերի զոհողության արժանի սերունեց: Ձեր կյանքը դյուրավ շշահեցիք, ձեր կյանքի համար որիշները իրենց կյանքը տվեցին: Հետևաբար դուք, երիտասարդներ, պետք ունեք առավել գիտակցությամբ, նվիրումով, կյանքով վկայել այն ճշմարտության մասին, որ հայր եղել է ստեղծելու համար և ոչ թե քանդելու: Եվ եթե երբեք մեր հերոսները իրենց արյամբ վկայություն տվեցին, դուք ձեր կյանքով պիտի տաք, ձեր աշխատանքով: Ահավասիկ, թե ինչ ապրումներով ես ուզում եմ այսօր իմ սրտագին կոչը ուղեկի ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, այն գերազույն սրբությունից, որ ողջ հայության հոգեկան զորացման աղբյուրն է: Աստված պահի, պահպանի, ծաղկեցնի այս հողը ձեր ձեռքերով, ձեր քրտիներով և ձեր աշխատանքով: Թող Աստծու ամենատես աշքը և ամենազոր Աջք պահպան լինի ձեզ վրա, մին և նոր սերունդին, մեր ողջ հայությանը «յաշխարհն Արցախ եւ ի ժողովորդն Հայոց, որ յայտ հահանգի» հավիտյան հավիտենից: «Ամեն»:

Այսքան այցելություններից և տեսակցություններից հետո Վեհափառ Հայրապետի ուշադրության տեսադաշտից չէր կարող դուրս մնալ մշակութի, ազգի ապագան կերտող գիտության և կրթության ոլորտը: Արցախ այցելության և ժամանակային, և տրամարանական ավարտը եղավ Վեհափառ Հայրապետի հանդիպումը Ստեփանակերտի պետական համալսարանի ուսանողության և դասախուական կազմի հետ:

«Հարգարժան դեկապարներ, մորի առաջնորդներ հոգեր լուսատան, որ այստեղի համալսարանն է Արցախի մեր հայության կյանքում բացված,

Ես առաջին հերթին իմ խոր շնորհակալությունն եմ հայտնում այս համապատասի ղեկավարությամբ, որ ինձ հրավիրեց ձեզ հետ լինելու երեքրոյս Հռովմապետական այցելության ավարտին և ձեզ հետ խոսակից դառնալու առավել մտերապելությամբ, քանի պաշտոնական հաղորդակցությամբ:

Այսօր մահավանդ, երբ զգացումները, մտածումները, տպագրությունները ամբողջ Արցախ աշխարհին և ժողովրդական լայն խավերին այցելելուց հետո իմ մեջ ամփոփելով, ես մղվում եմ հոգուս մեջ ծովնի զարու և ասելու՝ Փառք Քեզ Տեր, որ այսպիսի ժողովրդի ծառահ լինելու պատվին արծանացրի ինձ: Արցախ, Ստեփանակերտ, Շուշի և մյուս անունները հայ ժողովրդի կյանքի բառարանի մեջ նոր լուս գգեցան վերջին յոթ տարիների ընթացքում: Հիշում էինք պատմության գրքերի խորքերից, մագաղաթներից, գրական էջերից Արցախի հին փառքի մասին: Լսել էինք, կարդացել էինք, որ Արցախը եղել է մշակութային ամենաստեղծագործ կենտրոններից մեկը Հպատակն աշխարհի և հայ ժողովրդի: 1989 թվականին երբ ես կիրանանում, Կիլիկյան Արտօնի շրջափակում, գրքերի ցուցահանդեսի տարեցրսերորդ հանգրվանին, խոսք ուղղեցի հազարավոր ժողովրդին, որ հաւաքված էր այսուղի, այդ խոսքի վերնագիրն էր՝ «Հայ գիրը այգեստան Հայոց», խորագիրը՝ «Չո՞ն Արցախի հայության»:

Այդուն հիշել էի այն բոլոր տպարանները, թերթերը, դպրոցները, որոնք Արցախի փառքն էին հանդիսանում: Կարդացել էի Արցախի ժողովրդի հարազատ զավակներից շատերի այն գրությունները, որոնք ինձ համար հոգեկան, հմացական, մշակութային աշխարհի հարստացման աղբյուրներ եղան: Լսել էի անձամբ այն ձեր մեկ զավակին, որ այս հոդի վրա էր ծնվել, բայց այսուղի չէր ասրել և իր հոգու մեջ Արցախը միշտ ապրել էր՝ Գարեգին Ա. Հովսեփյան Կաթողիկոսին: Կարդացել եմ իւղի գրեթե բոլոր գրքերը:

Երբ դուք նոր էիք սկսել շարժումը, 1988 թվականին, հեռավոր Լիբանանում հատած և Արցախն ամբողջ Մեր հոգեկան աշխարհի մեջ փոխադրած տաղեր գրեցի, քարոզ խոսեցի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում՝ աւելով հետևյալը. «Սիրելի՛ք, հարազատ որդիք Հայկազնաւ ցեղի, բաջ գիտենք, որ ձեր սիրուն ու մտաքը, կյանքն ու կամքը ծանրագոյն պահե կանցնի: Հետևյանք ձեր բոլոր տագետապներուն, մասնակից զգացիք ձեր ապրումներուն, անձական շրջանում, միասնական դիքորոշումին, Արարատանման կամքին: Այո՛, արդար է ձեր դատը, որ մերն է, ինչպես բոլոր անոնք, որոնք Հայէի արյունն ունին իրենց մեջ, Լուսավորիչ սուրբ հավատքը ունին իրենց հոգիներու մեջ, Սուրբ Մեսրոպի ուկե գիրն ունին իրենց նակատներուն և մեծաբանչ Հայոց լեզուն իրենց շրջումներուն, Սուրբ Վարդանի արի արակեց ժառանգ եղող կայծն ունին իրենց կամքերուն մեջ, Սարդարապատյան շունչն ունին իրենց կրծքերի տակ: Զեզի հետ ենք և ձեզի հետ պիտի մնանք ու պիտի գործենք»:

Խոսքս ավարտել էի հետևյալ բառերով, որոնցով հիմա այսուղի իմ խոսքը պիտի սկսեմ. «Ձեր հատը որքան նվիրական է և դժվար՝ տվյալ իրականության շրջագիծի մեջ է, հարկ է արիության հետ ցուցաբերել խոհականություն, քաշության հետ՝ իրատեսություն, հավատարմության հետ՝ տոկություն, անձնանիվության հետ՝ գգատություն, նախաճաշխնդրության հետ՝ շրջահայցություն, խանդապատության հետ՝ ծանրախոհ հանդարտամտություն, պահանջին հետ՝ հարգանք դեպի օրինական կար-

գերճ ու հաստառությունները: Այս բոլորը հանրային հաստառության հասած ազգի բաղկացուցիչ հատկանիշներն են»:

Դուք նորի սպասավորության նվիրված անձեր եք: Այս ժողովրդի կյանքը, մտածողությունը և քան այնմ վերաբերումը առաջնորդելու կոչված սեուցիչներն եք: Եվ այդ պատճառով երեւ ինձ մի օր առնեն, թե Վեհափառ, երեւ նոգերական եղած չկինեիր, ի՞նչ կուզեիր լինել: Համալսարանի մեջ գործող դասախոս պիտի լիներ իմ պատասխանը: Եվ ինչպես ասել եմ, վարդապետ և վարժապետ իրարից մեկ տառով են տարբեր:

Մենք մեր Տիրոջ՝ Հիսոս Քրիստոսին վարդապետ ենք կոչում. «Ճարդապետ բարի, զի՞նչ արարից, զի ընդունիցիմ զեկանս յափտենական»: Նա, ով ճշմարտությունը կունենա իր մեջ, բայց իր մեջ չի կարող պահել՝ դա է իրականը, իսկ ինըն իր գերեզմանը կինի այն մարդը, որ ճշմարտությունը գիտենա, ուսումը ունենա և դա շրաշխի: Ինձ համար այդպիսի անձը չի կարող վավերական մտավորական լինել: Արև ասել, նշանակում է ճառագայթում հասկանալ, երեւ ճառագայթում չկա, արևը արև չէ: Եթե գիտության, հմտության էշորառության, սիրո բաշխում չկա, այդ ժամանակ մտավորական թյունը իմաստ չունի: Ես ձայն ունեմ երգելու, բայց չեմ երգում, նկարելու տաղանդ ունեմ և չեմ նկարում, հմտություն ունեմ և այդ բոլորը ինձ համար զարդ եմ անում, հապատառության առիթի եմ վերածում:

Այդ չէ Սատծո պահանջը, եթե տվել է տվել է, որ դու տաս և ոչ թե պահես: Ավելատարամի ամենախորունկ առավելքից մեկում ասվում է, որ մեկը մեկին տասը բանքար տվեց, մյուսին հինգ և երրորդին մեկ բանքար: Երբ տասը ստացողը ներկայացած տվողին, ասաց. «Ով տեր, դու ինձ տասն էիր տվել, ես գնացի, շահեցի և տասը ավելացրեցի, ահավասիկ բեզ բանն եմ վերադարձնում»: Լսվեց տիրոջ պատասխանը. «Ազնի ճառաց, բարի և հաստարին, որ ի փորուն հաստարիմ եղեք, ի վերայ բազմաց կացուցից զբեզք: Մո՛ւտ յուրախութիւն տեսոն քո», որովհետև արժեցրեց իրեն տրվածը: Երկրորդն ասաց, թե ինձ հինգ բանքար էիր տվել, աշխատեցրի, հինգը տասի վերածեցի և ահավասիկ, տասն եմ վերադարձնում: Նոյն խոսքը կրկնվեց նաև այս մեկի համար: Իսկ մեկ բանքար ստացողը երբ մոտեցավ, ասաց. «Ով տեր, ես գիտեի, որ դու խստ մարդ ես, քո տվածը վարչամակի մեջ փարարեցի և այժմ բեզ եմ վերադարձնում»:

Լսվեց տիրոջ զայրալից պատասխանը. «Ժառա անպիտան, չես կարող դու քո տիրոջ որպախությունը վայելեր»: Ապա ավելացրեց. «Նա, ով ունի, նրան ավելի պիտի տրվի, իսկ նա, որ չունի, ունեցածն անգամ նրանից պիտի առնվիլ»: Ունեցողը նա է, որ կարող է տալ: Տպու ժամանակ է հարստանում և բաշևելու մեջ՝ ճոխանում մարդու: Մեր մեծ գրագետներից Հակոբ Օշական երբ ուսուցի էր Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում, մի աշակերտ մոտենում էր նրա դռանը և բացված արանքից ներս էր նայում և չեր համարձակվում մեծ ուսուցին մոտենալ: Երբ նա նկատեց երեխային, որ բակում պահանում էր իրեն՝ ունենելու ակնկալույթամբ, իր մոտ կանչեց և հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»: «Պարոն, —ասաց, —չեմ ուզում ձեր ժամանակը լիլ, բայց շարադրություն եմ գրել, ուզում եմ, որ աչք նետեր»: «Եկո՞ւր, տղաս, ա՞ն ժամանակս, —ասաց, —դու, որ չառնես ժամանակս, ապա այն ինչո՞վ պիտի համեմանա»: Խորունկ ճշմարտություն է սա: Վավերական մտավորականը, ճշմարիտ գիտենականը նա է, որ փղոսկրաց աշվերական մեջ չի փակվում և ինըն իր պատասխունքը չէ, որ պիտի ունենալու մեջ չի փակվում և ինըն իր պատասխունքը չէ, որ պիտի ունենալու, իր տիտղոսներով, վկայարաններով, շքանշաններով չէ, որ պիտի գոնա,

հանա, այլ որ բաշխվում և հոսում է աղբյուրի նման և որիշի մեջ կենդանություն դառնում: Այդ պատճառով ես ոգեցի այցելել ձեզ, բանզի ես մի հիմնական երկույթ եմ նկատել արտասահմանում և ողում եմ այդ երկույթին անդրադառնայ նաև Հայաստանում: Ներկայումս, երբ կարդաք աշխարհի ընդհանուր մարդկության երկրորդ հազարամյակի այս վերջին տասնամյակի և բացվելիք երրորդ հազարամյակի սեմին գրված ուսումնասիրական մեծ զրբեր, կուսներ այսուեկ, որ աշխարհի ամենամեծ փորձաներներից մեկը դարձել է գիտության չափազանցյալ տեխնիկական երկույթ դառնուու հանգամանքը: Ամեն ինչ մերենայցգում է, ամեն ինչ դառնում է մակերևսային՝ խորացումը, մարդկային հոգեկան արվեստի ճախրանքը, մարդու իրական, վավերական նկարագիրը արժեցնելու իմաստով տկարանում է:

Դա մեծ գոտանք է: Որքան շատանում է մերենական, նյութական առատցումը մեր կյանքում, այնքան տկարանում է հոգեկանը, իմացականը, գեղարվեստականը: Այսօր Սրբաւորք այս փորձանքի մեջ է գտնվում: Ես ինչպես չխոնարհվեմ, իբրև մտավորական մարդ, այնպիսի դեմքերի առաջ, ինչպիսիք եղել են Աթոն, Ս. ճառյանը, Մանանյանը, Մալխասյանը, Արեգյանը, Հովսեփյանը, Կոմիտասը և որիշներ: Տիտաններ են, մտքի ճախրանքներ են, պրանք իրենց գրությունները մտաւոցում են իբրև հոգու ըլուս: Ես տեսել եմ, թե ինչպես Նիկոլ Աղքալյանի նման մեծ դեմքը, հոկա ուժականություն և հմտություն ունեցող մտավորականը, ինչպես եր ամպան խեղճ պայմանների տակ ապրում և մի ամտապային տեսակ անգամ չուներ: Չնում եր Լիքանանի լեռներից մեկի գլխին, աղբյուրի մոտ վրան եր խփում և ինքն իր ծեռքով կերպարություն էր եփում և նատում ու բանասերի հուշերն եր գրում և այլ գործեր եր ստեղծում:

Հիմա մակերեսայնության ետևից վագր կա: Երիտասարդների ընթացքը դյուրին, մակերեսային գիտությունների ետևից է: Մերենական աշխատանքն է զորանում և մեզ տկարացնում: Եղել եմ Սրբաւորքի գրեթե բոլոր երկրներում, դասավանել եմ համապարաններում, ասում եմ ձեզ. այդ փորձությանը չենթարկվեք: Մարդկային ճիգը անհատին ազնվացնում է, իսկ դրա պակասը մարդկության մեջ տեղատվություն է և նյութականի մակրնեացությունը: Ես չեմ ասում, որ բարեկեցիկ կյանքի պայմաններ չունենաք, ինձ սխալ չհասկանաք, բայց ասում եմ, որ դա չինչի ձեր նպատակը: Եթե բարեկեցիկ, հեշտ կյանքի պայմաններ և հաճոյապաշտական կյանքի երկույթներն եր փնտրում, մտավորականությունը միշտ պիտի նահանջի:

Վաճառականին ու ճարտարագետին, գործնական գիտնականին ես չեմ կարող մեղադրել, բայց հոգևորականին, և' մտավորականին, և' արվեստագետին ամեն իրավունք ունեմ մեղադրելու: Մենք պետք է գտնվենք հոգեկան այն բարձրության վրա, որ կարողանանք որիշներին բարձրացնել մեր աստիճանին, ոչ թե մեր սեփական աստիճանին, այլ մտքի բարձրագույն աստիճանին: Հետևաբար, իմ խրատը և ձեր հանդեպ հոգեկան սիրո արտահայտությունը այնպես ընունեցեք, որ մենք Ղարաբաղում այդքան փորձությանց միջով անցանք և տակավին անցնում ենք, մտքի ուժը շտկարացնենք մեր մեջ: Եղիշեն ասում ե: «Ճար է կոյր աչօք, բան կոյր մտօք», և որիշ մի տնդում ասում է «Հոգույ եւ մարմնոյ միտք են կառավար»: Մարդը մարմին չէ միայն, որպեսզի ինքը չափի իր արժեքը, իր մարմնի արժեքի չափով:

Այս պատճառով քիչ առաջ զինվորներին ասացի, որ թշնամու առաջ իրենց չարքաշ, արի կեցվածքով մեր Հայրենիքին և ժողովրդին


ապահովության և խաղաղության գգացումն են տալիս: Եթե հողի մշակը հողեն է՝ մշակում և կյանք հանում մեր ֆիզիկական գոյության համար, մենք՝ հոգեորականելուս, պարտավոր ենք հոգու մշակության գործը անելու և դուք, դասախոսներ, ուսանողներ համալսարանի, կոչված եք մտքի մշակության գործն անելու, որպեսզի միտք, հօգի և մարմին մարդու ամբողջությունը առողջ մնա: Առողջության սահմանումը ողջուրցունն է, ողջության իմաստը և մբողջությունն է: Եթե մեր կազմվածքը իր ամբողջության մեջ ներհաշնակ մնա, հիվանդությունը այնտեղ չի կարող մտնել և մեր մեջ մարդկությունը սպանել:

Մայր Արոռ Սուրբ Էջմիածնից եմ գալիս և նոր եմ սկսել իմ առաքելությանը: 181-րդ Գահակալն եմ այդ նվիրական Արոռոյի և իմ աշխատանքի մտավորական դասը յուրահասուուկ տեղ պիտի ունենա, որովհետև ես ել կյանքուն ջանացել եմ որքան հոգու, այնքան էլ մտքի սպասավոր լինել՝ այս երկուաը իրարից երբեք չբաժանելով: Ողջունում եմ ձեզ: Աղոթեցեք Մայր Արոռ Սուրբ Էջմիածնի համար և աշխատեցեք, որ համ վերստին դառնա հոգեկան ջրտորի աղբյուր, որպեսզի այնտեղ մշակութային կյանքը առանալ ևս ծաղկի և Էջմիածնից մինչև Գարաբաղ մի ծիածան կամարակապի և այդ ծիածանը լինի հոգու, մարմնի և մտքի միասնությունը:

Խոսք Փակում եմ այս պահանջով. ամբողջ ասածներս եթե մոռանաք,
այս մեկ տողը չմոռանաք. Հայություն և հուսահատություն իրաք հետ այնպես
են, ինչպես շուրջ և կրակը: Աստված օրինի և զորացնի ձեզ: Ամեն»:

Այցելության վերջում ԼՂՀ ընդունելությունների տանը Վեհափառ Հայրապետը ՀՀ փոխականագահ Գագիկ Հարությունյանի և ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ միասին մամլո ասուլու անցկացրեց Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու մյուս լրատվական գործակալությունների ներկայացուցիչների հետ, որում մասնավորապես քարձը գնահատվեց Վեհափառ Հայրապետի խրախուսիչ և ոգնորիչ այցելությունը հայ ժողովոի այս փոքրիկ հատվածին, որը այսօր կրված, բայց երբեք չխոնարհված իր առջև ծառացած զանազան թե՛ նյութական և թե՛ հոգեկան դժվարություններից քաղում է և դեռ պիտի քայլի դեպի Հայոց լուսավոր և պայծառ ապագան:

ՎԱԶԳԵՆ ՍՄԻՐՆԵՎԱԳ. ԳԱԼԱՑՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ԹԵՄ ԿԱՏԱՐԱԾ ՄԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՄԵՐ ԱՂՋԹՔՆ ԵՆՔ
ՎԵՐԱՌԱՅՐՈՒՄ ԱՌ ԱՍՏՈՒԾ ԵՒ ՀԱՅՑՈՒՄ

Բարեկար և բազումողորմ Աստուած, ի խորոց պրտի աղերսում եմ Քեզ, որ հայրախնամ սիրող ճառագայթները միշտ ափուն Արցախ աշխարհի և Արցախից ժողովրդի վրայ: Օրենքիր անմեռ լիշտառակը նրանց նախորդ սերունդների, որոնք դարեւ շարունակ իրենց կեանքն ապրեցին միշտ հաղորդ լինելով ընդ Քեզ՝ իրենց լեռների ու դաշտերի, իրենց եկեղեցիների ու վանքերի, իրենց կրթական յարկերի և դպրութեան օջախների մէջ:

Արդարութեան Արեգակի՝ Քո Միածին Որդուոյ և մեր Տիրոց Յիսուսի
Քրիստոսի լուսը արեան լուսին պէս թող մշտապահառ շողայ ապրողների
կեանքում: Տե՛ս, լեռներու ու ղաշտերը կանաչել են, Քո շնորհած կեանքի
արովին ունեղացել է, յոյսի շողը առատացել, հաւատքի գօրութիւնը աճել և
սէրն ամենուր սփռուել:

Θηνή ή αυτοί ημηνιαρή άψωτερωνδεξ. Ισηνη τηρηκεν αέρεν πι λιανηληπιθηκεν, και χαροπιθηκεν πι ρωποπιθηκεν:

Տոր Քո անսպաս զօրութիմը, որպէսզի կարողահամ ստեղծագործական ենայրով առատացնել Քո շնորհելոց ու ուսերենքը Առաջարկ:

Եկեղեցոյ սպասառորներին, պետական ու քաղաքային իշխանութիւններին, հասարակական, բարեսփրական և մշակութային կազմակերպութիւններին, յատկապէս մատղաջ դպրոցական երեխաներին, պարգևների Հռ ամենալինան իմաստութիւնն ու սէրը վասն փառացն քոց, վասն շինութեան Եկեղեցոյ և վասն բարեկարգ պահպանութեան եւ յառաջազնաց կենաց Արցակութեանին:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԾՆՈՐԾԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Տ. Նարեկ քին. Խշանյան (Բաղդադ)

Տ. Շահն քին. Ալթուինյան և ընտանիք (Ֆրեզնո)

Արի Թոփովյանյան—Ֆրանսահայ Ավետարանական Եկեղեցիների Միություն

Զոն Քերրի—ԱՄՆ-ի սենատոր (Վաշինգտոն)

Բարուշ Բեն-Ներյա—Խորայելի դեպան Թբիլիսիում

Թէրիանի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության զույգ Վարչովոյն

Փերիս Կրթասիրաց Միության Կենտրոնական Վարչովոյն (Սպահան)

Մերձավոր Արևելյան հաստատություն, ատենապետ Դավիթ Ս. Դոշ (Նյու Յորք)

Հայեափ բարեգործական միություն

Վարդգես Նալբանդյան, Ավետիս Թէրզյան—Եթովյանահայ Գաղութային ժողով (Ադիս Աբեբա)

ԱՄՆ-ի Արևելյան շրջանի «Համագային»-ի Ծրչանակին Վարչովոյն, Գուրգեն Ասատորյան, Արմինե Մինալյան

Կալկարտայի Ս. Նազարեթ հայ Եկեղեցու հոգարարձություն

Մեծ Եղեռնի և Հայոց ազատամարտի «Ոխտառուն» թանգարան-ինստիտուտի հայագահ Սասուն Գրիգորյան (Երևան)

Էլիզ Սալիբյան (Տորոստ)

Տեր և Տիկին Նուրբար Քյուփելյան (Նյու Յորք)

Ս. Խաչիկյան, Ս. Կողակով, Պ. Սարգսյան՝ հայ շարաբապահ գալուստ կանենք

Անի Թորիկյան և Դեղինյան ընտանիք (Բեյրութ)

Ֆիլիպ Հանդ, Աշխարհի տեսիլք միություն (Ավստրալիա)

Արշակ Գալստոն (Ավստրալիա)

Լիսե Ֆրիտրակը

Սեդա Թահին և որդիք (Փարիզ)

Հ. Հարությունյան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն

Գալուստ և Հերմինե Շանսրզյաններ և գալակներ (Բուհոս Ալեքս)

Ակոբ Մքորի (Ալյանսա, ԱՄՆ)

Հ. Միքայելյան, Մայրության ֆոնդի նախագահ (Լեռնային Պարարադի Հանրապետություն)

Գրիգոր և Արաքսի Պոյամյաններ (ԱՄՆ)

Ընթրիկ Պաշտա, Կիրակօթյա դպրոցի տեսչուն (ԱՄՆ) Կիլեքի բնտառիք (Եյտ Յորը)

Հայսպորտվարչություն, Ակեքասան Ավետիսյան (Երևան)

Ավտոյան (Բաղդադ)

Լուս և Մարի Մշմշյան

Մուլթիմայան՝ ՍԱՎ նախագծի դեկավար (ԱՄՆ)

Պերճ Ժամկոչյան (Քանտոն, ԱՄՆ)

A decorative square frame containing a stylized floral or geometric motif, likely a book cover or endpaper design.

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ
ՍՊՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

ԱՄԵԽԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ա. Օ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ն
Ա.ՊՈՒՆԻ 7-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 31-Ը ԸՆԴՈՒՆԵԼ Ե

07.04.—ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանին, որին ուղևորում էին պետականարարներ Ռ. Բագրյանը, Ա. Ղազարյանը, փոխվարչապետ Գ. Մարտիրոսյանը, կառավարության գործերի կառավարի Ս. Մանասերյանը, ՀՀ կառավարության պարհեցեր կրոնի վարչության ղեկավար Լ. Մոշյանը,

08.04.—Հռոմի Պապի պատվիրակ, Արքազան Քահանապապին Աերկայացուցիչ, հավատի և կրոնի գրասենյակի վարիչ կարդինալ Քայլիին, Մինակի և Քելոռոսի միտրոպոլիտ Ֆիլարետին,

10.04.—Իրանի Խալամական Հանրապետության պատվիրակությանը՝ Նիա Սուբանդիի գլխավորությամբ, Վարչական պատվիրակությանը՝ Նիա Վիրահայոց պատվիրակներին՝ թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Մերժադարձանի գլխավորությամբ,
Հնդկաստանի Ազգային Եկեղեցու Աերկայացուցիչ Ն. Ա. Բագիլիաս Մատումնային,

Վայտիների Պատրիարք Օքտավյանին,

11.04.—ՀՀ ԳՀ նախագահ Բ. Արարտյանին, Տ. Նալբան ծ. վրդ. Հովհաննեսյանին և Ռուբակինսկի պատվիրակներին,

12.04.—Ամերիկյան համաստանի Աերկայացուցիչներին՝ ՀԱՀ նախագահ, դոկտոր Միհրան Աղբարյանի գլխավորությամբ,
ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ռուսովին,

17.04.—ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին, մշակույթի նախարար Հակոբ Մովսեսյանին, Բնուուստառադիուպետվարչության նախագահ Տիգրան Հակոբյանին, Մատենադարանի տնօրին Անն Արևշատյանին,
Վեճենայի և Վիճենայի միաբանություններից Միիթարյան Հայրերին,

19.04.—ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Գիլմորին,
ՀՀ նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանին,

- 20.04.**—«Արաքս» գործակալության աշխատակիցներին,
ՀՀ-ում Ֆրանչիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանց դը Հարթին-
գին,
- 24.04.**—ՀՀ ԳԽ նախագահ Բարեկեն Արաքսցանին, ՈՒԴ Պետդոմայի փոխ-
խոսնակ Արթուր Չիլինգարովին, Պետդոմայի անդամ Զատուլինին,
- 25.04.**—ԱՄՆ եկեղեցական խորհրդի պատվիրակությանը՝ խորհրդի նախա-
գահ Մելվին Թալբերթի գլխավորությամբ,
- 26.04.**—Ռումինիայի արտգործնախարար Թեոդոր Մելշքանովին,
- 29.04.**—ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանին և «Հայաստան» Հա-
մահայկական Հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուչակ
Պետրոսյանին,
- 30.04.**—«Բրաբիոն»—խաղաղության ծաղիկ» փառատոնի մասնակիցներին,
- 02.05.**—Միջազգային կարմիր խաչի տնօրեն Էրվին Բյուեին,
- 09.05.**—ՀՀ-ում Գերմանիայի ժամանակավոր հավատարմատար Նորբերտ
Հայնցեին և Վիեննայում Գերմանիայի ԵԱՀԿ-ի գծով հավատարմա-
տար դոկ. Գյունտեր Թարցին,
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանին և Միջազ-
գային բանկի ներկայացուցիչներին,
- 11.05.**—Երքաղխորհրդի նախագահ Վահագն Խաչատրյանին և Երքաղ-
խորհրդի այլ աշխատակիցների,
- 16.05.**—Մեթոդիստական Եկեղեցու ներկայացուցիչ Զարլա Դևլիսին,
- 24.05.**—Գերմանիայի Էկոնոմիկայի նախարար Կառլ Դիտեր Շպրայնգերին,
- 26.05.**—Հայաստան-Միջուռք համակարգչային հետակամուրչի մասնակիցնե-
րին՝ հետակամուրչի կազմակերպիչ, «Առագաստ» ընկերության փոխ-
նախագահ Գարեգին Չուգասյանի ղեկավարությամբ:

ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԱՅԼԵԿԵՑ ԳԱՐԵԳԻՆ ԱԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երեկ, մայիսի 17-ին, Մայր Սրբու Ս. Էջմիածնում Գարեգին Ա Կաթողիկոս ընդունեց Սատրական Արևելյան Եկեղեցու պետի՝ Մարտինքա Պատրիարքի Աերկայացուցիչ, Իրաքի արքեպիսկոպոս Գալվարկիս Ալեքսանդր ընկերակցությամբ Մուկվայի աստրիների հոգևոր հոլիվ Տեր Խամիս Յուսէֆ Քամանայի և Հայտառանու աստրական համայնքի հախագահ Բավել Թամրազովի: Սրբազն Հայրը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Մատինքա Պատրիարքի եղբայրական ողջունները և շնորհավորածքները՝ Նորին Սրբության ընտրության և գամակալորժան առջևիվ:

Քննարկվեց երկու Եկեղեցիների միջև փոխարքակրության և գործակցության առավել սերտացման հարցը: Պատվիրակները իրենց հիացումը հայտնեցին մեր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռնարկումների և գործունեության մասին:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը և Սատրական Եկեղեցու Աերկայացուցիչը նվերներ փոխանակեցին:

ԿԱՆՍԴԱՅԻ ԹԱՆԳՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ՆԵՐԸ

Ս. ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 12-ից մեկշաբաթքա այցով հանրապետությունում էր գտնվում Կանադայի պատվիրակությունը, որի կազմում էին Քվերեկ նահանգի համալսարանի, թաճարանների, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանադայի գրասենյակի Աերկայացուցիչները: Պատվիրակության նպատակն էր՝ մոտիկից ծանոթանալ Հայտառանի, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թագարանայն նմուշներին, քանի որ մոտ պազարում ծրագրված է կազմակերպել մի ծավալուն ցուցանանդես, որտեղ կներկայացվեն հայ ազգային արվեստի թաճարանային բարձրարժեք գործեր: Կազմակերպական հարցերում հրանց գործուն աշակցություն կցուցաբերի Կանադանայ համայնքը:

Հետո ժամանման օրը հյուրեր եղան Մայր Աթոռում, հանդիպեցին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին: Այսուհետև նրանք այցելեցին Գանձատուն և Մայր տաճարի թաճարասեն: Գրիգոր Խանջյանն ու արվեստաբան Մանյա Ղազարյանը մասնամասն տեղեկություններ հաղորդեցին այնտեղ պահպան ցուցանությունների մասին:

Հաջորդ օրերին հյուրերը ծանոթացան հանրապետության ևս մի շարք թանգարանների: Կիրակի օրը Աերկա գտնվեցին Մայր տաճարում մատուցվող Ս. Պատարագին:

ԿԱՆՍԴԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ապօղեցին Խուսառանի Դաշնությունում Կանադայի դեսպանատան Աերկայացուցիչներ՝ նախարար-դեսպանություն Ֆերդ Նը Կերկով վաճ դեռ Վարեն և հյուպատոսական գործերի վարչի Լուիզ Կոտեն: Հյուրերին ընդունեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ծովը մեկ ժամ տևած գրուցի ընթացքում շոշափվեցին հայ-կանաչական լուսանոր հարաբերություններին, միջեկաղեցական համագործակցությանն առնչվող հարցեր: Մասնավորապես ընդգծեց հայ ժողովրդի նոգանք կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ունեցած կարևորագույն դերը:

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Երեկ, մայիսի 18-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ա. Օ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինացու Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Հրաչ Միլվանցահին: Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեցին Ուկրաինայի նախագահ Լեռնի Կոչմայի և Համայն Ռուսիայի-Ուկրաինայի Պատրիարք Վոլոդիմիրի շնորհավորագործը Նորին Սրբության գահակալության առջիվ:

Զրուցի ընթացքում շոշափվեցին Ուկրաինայի հայ համայնքի հետ համագործակցության և կապերի սերտացման, ինչպես նաև այդ խնդրության առնելու ազգային Սուպերէլեկան Սուրբ Եկեղեցու գերակատարության առնելով հարցեր: Պարուն Հրաչ Միլվանցանը ներկայացրեց Ուկրաինայի հայ համայնքի հոգությունները, որ փորձում են հայթահարել համատեղ շահերերով: Մեր ժողովուրդը Ուկրաինացուն իր կառուցղական գործունեության շնորհիվ հարգանքը է վայելում, ասաց ՀՀ գործերի հավատարմատարը:

Զրուցի վերջում Վեհափառ Հայրապետը հաջողությունները մաղթեց նեկրաինայի հայ համայնքին՝ վերատին շեշտելով, որ Մայր Աթոռը գորավիճ կանգնեցի ազգանպաստ ձեռնարկերին: Մենք ժողովրդի հետ ենք լինելու և ոչ ժողովրդից հեռու, ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանական ներսեւ արքեպի. Պողապալքանը:

* * *

Մայիսի 23-ին Ն. Ա. Օ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Մուկվայի «Խմբերիար» Ֆիրմայի և Ռուս-Հայկական հախանունությունների Կենտրոնի հախազահ Արկադի Վարդանյանին: Պրա. Վարդանյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, ինչպես նաև իրենց պատրաստականությունը հայտնեց հայ-ռուսական հարաբերությունների սերտացմանը նպաստելու գործին: Կենտրոնի միջոցներով հանրապետության սոցիալային ահազանով 400 ուսանողների, այդ թվում նաև Արցախից, տրինում Է Կրթառոշակ: Կենտրոնը գորավիճ է կանգնում նաև այն օդաչուների ընտանիքներին, որոնք զբնվել են Արցախում: Մերս կառ կա նաև Արցախի թեմի հետ: Կենտրոնը օգնում է Մուկվայության ժամանակավորապես բնակվող մեր հայրենակիցներին: Կազմակերպվում են դպրոցներ, իրականացվում է վիրավոր ազգատանրատիկների բուժում: Կենտրոնի միջոցներով է տպագրվում «Արմյանսկի վեստնիկ» թերթը:

Վեհափառ Հայրապետը գևահատանքի խոր աճաց ուսու-հայկական նախաձեռնությունների կենսարժնի գործունեության վերաբերապ և շնորհակալություն հայտնեց հյուրերին ազգանպաստ ձեռնարկումների համար:

— Այս պետությունը դարձած է հայ ժողովրդի կայքը արտահայտող պետություն,—ասաց նա: — Ոչ որ մեզ արժեք չի տա, եթե մենք մեզ չար-մորենք: Այս տունը մեր տունն է և հայկական բորբաքանչուր կազմակերպություն պետք է հապատի մեր հայրենիքի և պիտույքան գորացմանը:

Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր տպավորությունները Արցախ կատարած այցելությունից՝ շեշտելով, որ պետք է քաջակերել հայերի վերադարձը հայրենիք, որի դեպքում մեր ձայնը առավել կզրուան: Զրուցի ընթացքում շոշափվեցին նաև տնտեսական համաձեռնություններին և Հայատանի Հանրապետության քաղաքացիությանը վերաբերող հարցեր: Նորին Սրբությունը հոյս հայտնեց, որ իր առաջին հայրապետական այցելությունը Հայատանից դրւու կլինի Մուսկվա:

Հանդիպմանը ներկա էին Մայր Արքոնի դիվանապետ Ներսես արքեպիս. Պոգապալյանը, «Խմբերիալ» ֆիրմայի տնօրին Ալեքսանդր Թութունջյանը, Հայության համագործակցության և վերածննդի միության փոխնախագահ Համլետ Հակոբանյանը, կորդիհանցին խորհրդի անդամ Մոշե Փաշանը, «Անարք» գործակալության գլխավոր խմբագիր Ռեմ Անանիկյանը: Վերջում Վեհափառ Հայրապետին ընծայվեց Ռուդոլֆ Խոսատրյանի արժեքավոր կտավներից մեկը, որը պատկերում էր Կոմիտաս վարդապետին:

* * *

Մայիսի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Արքու Ա. Էջմիածնու լնդրուեց մերեմաշխնարարների 8-րդ միջազգային խորհրդակցության մասնակիցներին՝ ՀՀ արդյունաբերության նախարար Աշոտ Մաֆարյանի գլխավորությամբ: Տարբեր երկրներից ժամանած պատվիրակությունների ներկայացուցիչները շերմորն ընորհավորեցին Հայոց նորընտիր Հայրապետին, գահակալության առթիվ, և մաղթեցին երկար և արդյունաշատ գործունեություն:

Այժմ նոգեոր և տնտեսական գործունեության համատրման ժամանակն է, պատսպան խորսում ասաց Վեհափառ Հայրապետը: Հայաստանը թեակոխներ է գարզացման նոր ճանապարհ, այլև մենք ենք, որ մեր կամքով պետք է դեկալիզանք մեր կյանքը: Գարեգին Ա. Կաթողիկոսը բարձր գնահատեց մերեմաշխնարարների համագործակցությունը տնտեսական խնդիրների լուծման ներկա փուլում: Մենք կարիք ունենք ոչ յէ խորսով, այլ գործով հաստատվող աշակեցության, ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը հոյս հայտնեց, որ իրականացվող տնտեսական բարեփոխումների շնորհիվ բարեկամ հանրապետությունները միմյանց մեջ սերտ համագործակցությամբ կհալթահարեն առաջացած սոցիալական դժվարությունները:

Զրուցն անցավ աշխույժ, բարեկամական մթնոլորտում: Վերջում խորհրդակցության մասնակիցները շնորհակալություն հայտնեցին շերմ ընդունելության համար՝ հավաստիացնելով, որ Ամենայն Հայոց Հովհաննեսի մատթանքները գորավիգ կդատնան իրենց տնտեսական գործունեության մեջ:

**ՀՈՒԽԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Մայիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունեց Ռուսաստանում և Հայաստանում Հոնքարիայի արտակարգ և լինգոր դեսպան պրն. Նանվակոն:

Զքոյցի ընթացքում շշափվեցին հայ-հունգարական հարաբերություններին վերաբերող հարցեր: Դեսպանը ցանկություն հայտնեց, որ հարմար տարիով Գարեգին Ա Կաթողիկոս այցելի Հոնքարիա, որով նոր փող կը կըսկի հայ և հունգար միջեկեղեցական հարաբերություններում:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԵՌԱԲՈՒԻՐ

Մայիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրավերով այցելեց Եղարքոր՝ մասնակցելու Արծվաշենի պաշտպանության ժամանակ զոհված հայ պատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի բացման արարությանը:

Վեհափառ Հայրապետը հոգեհանգաւոյան աղոթք կատարեց և օրինաց հայ նահատակների հիշատակը:

Այս օրը, ասաց Նորին Արբությունը, հայ արդի պատմության ամենից պայծառ պամերից մեկն է վերականգնում մեր հիշողության մեջ: 1918 թ. մայիսի 28-ին, 20-րդ դարում, առաջին անգամ հուչակեց Հայաստանի անկախութունը, երկար դարների ընդհատումից հետո: Սարդարապատի ճակատամարտը վճռական հշանակություն տեսավ հայոց պատմության մեջ:

Այսուեղ մենք միացնում ենք հիշատակը Սարդարապատի և ներկա Հայաստանի ու Արցախի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած քաջամարտիկների և աղոթք ենք ընծացում առ Աստված՝ վասն ապահովության և պաշտպանության հայրենաց մերոց:

Վեհափառ Հայրապետին ողեկցում էին Արցախի թեմի առաջնորդ Պարգև և ապահովության պատամարտիկներ, «Հշմիածին» համելեսի գիտավոր խթագիր Աստիկի եպիսկոպոս Արիստակեանը, Ս. Հշմիածին միաբանության այլ հոգևորականներ:



ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ 1995 Թ. ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ,
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՒԻ ԱՌԹԻՎ

«Յանուա Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ. Ամէն»:

«Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ»:

Սրբազն շարականագիրը պատրիա խորհրդի մասին հետևյալն է առու. «Մեծահրաշ այս խորհուրդը ավանդությամբ մեզ հասած»:

Ի՞նչ է պատրիա խորհուրդը, սիրելի հավատացյալներ: Այդ խորհուրդը Գրիգոր Լուսավորչի կյանքի հետ է կապված: Ինչպէս մեր պատմովունից դուք գիտեք, Գրիգոր Լուսավորիչը, որպէս մեղապարտ ընտանիքի Անակի որդին, որ Խոսրով Հայոց թագավորի սպանիչն էր, քրիստոնյա լինելու պատճառով Տրդատ Գ թագավորի կողմից տար պատուիաների ենթարկվեց, պատիմներ կրեց և այդ պատիմներին դիմանալուց հետո նետվեց Խոր Վիրապի գուրք, որտեղ միայն մամվան դատապարտվածներն էին մետվում: Խոր Վիրապի գուրք իմերի, թումանոյ ստղուների, կարիմների մի վայր էր: Այնուեւ բանտարկվածները երբեք չեն ազատվում, սակայն Սատծո նախախնամությամբ ամեն օր, ինչպէս Սգաթագեղոս պատմիչն է նկարագրում, մի պառավ կին երբում էր սրբակրոն բանտարկվածին մի նկան հաց և մի փարչ ջուր:

Սկսպէս նա տանչորս երկար տարիներ դիմացավ այդ բանտարկությանը, մինչև աստվածային հրաշքը տեղի ունենար: Այդ հրաշքը նրա գերեզմանից հարություն առնելով էր: Սուրբ Գրիգոր Լուսավորչի բանտարկության շրջանում այցելով այդ պառավ կինը Սատծո հրեշտակների ինը դասից չորրորդ դասին պատկանող մի հրեշտակ էր: Քրիստոսի նամբարձումից չորս օր հետո, երբ մեր Տերը Հիսուս Քրիստոս, բարձրացավ երկինք, այնանդ հրեշտակների փառաբանության արժանացավ: Եվ երբ Գրիգորը չորրորդ օրը այդ պառավի, որի կերպարանքով հրեշտակն էր երևում, այցելությունը չունեցավ, հարց տվեց նրան հաջորդ օրը, թե արդյոք երեկ ինչո՞ւ չացելեց: Հավանաբար նա շատ միայնակ էր գգում և գրուցակից էր փնտրում գոնե մեկ-երկու բար փոխանակելու համար: Եվ հրեշտակը իր դեմքը բացեց սրբի առջև ասկով. «Երեկ մեր հրեշտակների դասի տռնախմբության օրն էր, որովհետև համբարձյազ Հիսուսին հրեշտակների ինը դասերը մեկ առ մեկ ացցելում էին: Մեր խումբը՝ դասը, երեկ ացցելեց: Նշանակում էր, որ այդ հրեշտակը չորրորդ դասին էր պատկանում հրեշտակների՝ տերությանց դաս: Էր այն:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ մի փոքրիկ դրվագ. մեր պատմությունից քաղված, պատառ առ պատառ մեզ հասած, սակայն այդ փոքրիկ

դրվագի ետև ինչպիսի աստվածային, երկնային մի պատուհան է բացվում, որտեղից մենք՝ հավատացյալներս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի հետևողներս, այդ պատուհանից կարողանում ենք մի ակնարկ գտնել երկնայինների կյանքին, թե ինչ կա և ինչ է կատարվում այնտեղ, թե իրեշտակները ինչպիսի ցննությամբ և ուրախությամբ են դիմավորում երկնքում իրենց Տիրոջն ու Փրկչին:

Հրեշտակները հոգիներ են, մենք հավատում ենք նրանց գոյությանը, որովհետև հավատում ենք, որ մարմինն է հյութական և հոգին է ոգեղենն: Եթե մարմին և հոգի միասին կարող են ապրել, որեմն կարող է նաև գոյություն ունենալ հոգին առանձին, և մարմինը՝ առանձին: Մարմինը իր ցանկություններով մեզ դժոխը է տառում, իսկ հոգին՝ հավիտենականության, աստվածայինին, գեղեցիկին:

Այսօր, Համբարձման տոնին հաջորդող այս չորրորդ օրը, մեր եռամենակարգելու կողմից կոչվել է նաև Երկրորդ Ծաղկազարդ: Առաջին Ծաղկազարդին, յոթեներորդ կիրակիին ՄԵծ Պահոց, Հիսուս իր աշակերտներով կողմէ Երուսաղեմ մուտք գործեց՝ օվաննաներով, երգով ու փառքով: Ժողովուրդը իր գգեստները փոեց նրա ուրբերի առջև, նրան ձիտենիների և արմավեճիների ուստերով դիմավորեցին և գոչեցին. «Օխաննան, փառք Տիրոջ, փառք նրան, որ Տիրոջ անունով է գալիս»: Իսկ այս կիրակին Եկեղեցին կոչվել է Երկրորդ Ծաղկազարդ, որովհետև Համբարձումից հետո Հիսուս փառքով Վերին Երուսաղեմ մուտք գործեց, որ մարդկանց փոխարեն փրկված հոգիները՝ հրեշտակները, դիմավորեցին նրան, նրա փառքը վայելեցին, աստվածային նրա Էռության տեսությանը կարողացան արժանանալ:

Զարմանալի կերպով այս տոնախմբությունները գուգադիպում են մեր ազգային տոնախմբություններին: Երևակալեցեք, մայիս ամավա վերջը՝ 451 թվականի, հայ ժողովուրդը իր գոյության մեծագոյն պայքարը մղեց, պատերազմը մղեց Ավարայրում, որ փորձում էին և մեր հայրենիքը գրավել, և մեր հոգին դատարկել աստվածային նոր կրոնի Էռությունից: Ավետարանն ասում է. «Մի վախեցեք նրանցից, որ ձեր մարմինը կարող են սպանել, այլ վախեցեք նրանցից, որոնք կարող են ձեր հոգին, ձեր գիտությունը, ձեր հավատքը ձեզանից խլել և սպանել ձեզ»: 451 թվականը այսպիսի ճգնաժամային շրջան էր: Մայիսան այս օրերին Վարդան զորավարը իր արյունը թափեց, բայց կարողացավ իր սկզբունքները պահել և հայ ժողովուրդին պահել իր հավատքով, անսասան և ամոր՝ մինչև մեր օրը:

Զարմանալի Կերպով մայիսան այս օրերը գուգադիպում են նաև Երկրորդ մեր թշնամո՞ւ մեր հոգին սպանելող սպատնացող թուրքի հարձակումներին: Երբ նրանք ավելի քան 1,5 միլիոն հայի արյուն թափեցին՝ տնի ունեցած 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Այնուհետև թուրքերը շրջվեցին դեպի Արևելք, որպեսզի մնացյալին հայկական ցեղի, որ աստանդական ապաստանել էր այստեղ և հայ ժողովուրդին, որ ապրում էր Արևելյան Հայաստանում, առանց իշխանության և տերության, բնաշնչեն: Նրանք փորձեցին գալ 1918 թվականի մայիսի 22-ի օրերին՝ սպանելող համար այդ հոգին, որ Հոգին է Հայկի և Արամի, սակայն, փառք Աստծո, մեր ժողովուրդը ծառացավ նրանց դեմ, հայկական բանակներ կազմեցին, Հայ Եկեղեցին իր ճայնը բարձրացրեց, կոչնակները դղաբանչեցին, ովզ հայոց աշխարհից հավաքվեցին հայորդիները, որոնք միացան մեր գիտնութելին: Գյուղացիները և բարձրացիները, այր և կին, մեծ և փոքր գնացին դեպի

Խարդարապատ՝ այնունի դիմագրովելու համար թուրք հորդաներին և՝ Սարդարապատում, և՝ Բաշ-Ապարանում, և՝ Ղարաբղիլապում, ինչու չե՛նան Բաքվում։ Եվ զարմանալի հրաշք, ինչպես շարականագիրն է ասում. «Մեծանորաց այս խորհուրդ ասանութեամբ առ մեզ հասեալ»։

Գրիգոր Լուսավորչի ունեցած հայտնության համար, նույն ձևով միահրաշ խորհուրդ տեղի ունեցավ, որովհետև մեր ժողովուրդը կարողացավ, հակառակ իր թվաքանակի փորբուժյան, կոտորակվածության, դիմադրել թշնամուն և հայրենի սահմանները պահել։ 1918 թվականի մայիսի 28-ին Հայաստանը իրեն հոչակեց ազգու, անկախ Հայաստանի Հայրապետություն։ Թեև 20-ական թվականներին այդ հանրապետությունն ընկավ, որ իշխանությունները կազմավորվեցին, թեև հաղածանքներ եղան անցնող այդ 70 տարիների ընթացքում, սական հայ ժողովուրդը, հակառակ դրան, աճեց, մեծացավ, ենրազողեր տեղի ունեցան, կարողացավ երկիրը շենացնել։ բազմապատկել և 1991 թվականի հրաշքի ականատես վկան լինել։

1991 թվականի մայիսի 28-ին Առիջ Հայաստանի ազգայտ-անկախ Հայրապետությունը մարմին առավ, և այսօր մենք՝ ապրողներս, բախտավոր ականատես վկաններն ենք։ Մենք մեր հայրերի, մեր նախնիների երազների հրականացումը տեսնող վկաններն ենք պատության մեջ։

Այս անկախության տարիներին տեսանք, թե Աստված ինչպիսի հրաշքներ կարող է գործել։ Աստված երկնքի դռները բացում է Սուրբ Գրիգորի և հայ ժողովուրդի առջև։ Մեր հողերը, որոնք ժամանակի ընթացքում կորցրել ենք, կամաց-կամաց, այն՝ արցախան պայքարով մեր ժողովուրդին են վերադարձում։

Հայ ժողովուրդը ունի նաև իր անկատար երազները, որոնց իրագործման համար պետք է բազմանա, աճի և զարգանա, ուժեղանա և զորանա, որպեսզի ապագայում Աստծո օգնությամբ կարողանա իր իրավունքների տերը դառնավ։

Սիրելի հավատացալներ, քիչ հետո Հանրապետության մասթանք պիտի կառարենք պատեղ, աղոթենք մեր բոլոր անցալորդների, այն զորավայրների հոգու համար, որոնք Սաղարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաբղիլասայի ճակատներում մարտնչեցին։ Նազարենեկան, Սիլիկյան, Փիլումյան և ուրիշներ։ Չմոռանանք նաև հոգևորականներին՝ Զավեն և Գարեգին Արքաների մարտնչելու ու բազմաթիվ այլ վարդապետների, ովքեր ճակատ գնացին՝ մարտնչելու համար թշնամու դեմ։ Չմոռանանք նաև Գևորգ Ե երջանկահիշատակ Կաթողիկոս Սուրենյանցին, որ շշարժվեց Մայր Աթոռից, երբ ապահովության համար իրեն առաջարկեցին Անահի վանք գնավ՝ այնուել ապահով ապաստան գտնելու համար։ Նա շշարժվեց Մայր Աթոռից, որպեսզի հայրենիքի գիւղուները երբեք տեղի չտան, և հայրենի հողը ունակուի չդառնան թշնամուն։

Այսօր մենք հակառատ ենք, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռին արժանավոր գահակալ ունենք բազմանք հանձին Կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Թող Աստված Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Գևորգ Սուրենյանց Կաթողիկոսի տեսիլքները պարզեի Օրան, Օրան տա Ամարոնի գավազանը, որպեսզի ծաղկի այն, Մովսեսի առաջնորդող գավազանը, որպեսզի մեզ ստացնորդի առ և երջանիկ հավահանգստներ՝ ի փառ Հայաստանաց Եկեղեցը և ի պայծառություն ազգին Հայոց, այժմ և հավիտյան հայությանցից։ ամեն։



Ն. ՄՈՒՏՍՈՊՈՒԼՈՍ, Կ. ԴԻՄԻԹՐՈՎԱԼԻՆԻ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷԶ¹

(Հայոց Դարձի 1700-ամեակի առթիւ)

Սուրբ Գրիգոր Լուսատրչի պաշտամունքը մեծ տարածում ունի Հայաստանին դրւու, որովհետև ան սրբացուած է նաև Օթոոտոքս եկեղեցին կողմէ և ճանշցուած՝ իբրև Սուրբ Գրիգոր Մեծն Հայքի: Սուրբ Գրիգոր Լուսատրիչի վարքը, որուն հաւաքողը եղած է Ազգաթանգեղոս, յունարենէ թարգմանուած Ը. դարուն, արագ կերպով ընդգրկուեցաւ յունական Յայսաւորքին մէջ, Սեպտեմբերի 30-ին: Նոյն օրը կը տօնուին նաև Հոփսիմեանց Կրյսերը:

«Նկարչութեան Արուեստի Զեռնարկ» գիրքին մէջ, գրուած վանական և նկարիչ Դիոնիսոս Ֆորենայի կողմէ: 18-րդ դարու սկիզբը, ինչպէս նաև երկու այլ գրութիւններ 17-րդ դարէն, կը նկարագրէն անոր սրբանկարին սուանձնայատկութիւնները, «Ճերունի, կարճ և մօրուքը կար» բառերով:

Ընդհանրապէս, Սուրբ Գրիգորի սրբանկարները ուսումնասիրուած են արդէն քանի տարի առաջ, Սիրարիի Տէր Ներսիսեանի կողմէ, որուն ծանօթ են Յունաստանէն միայն Խաղկիտնի (Chalkéon), որ կը նշանակէ «կաթուայագործերու», Կոյսի եկեղեցին որմնանկարը և Փոսիդէ (Phocide) Սուրբ Դուկասի խանանկարը²:

Անկէ ի վեր, Սուրբին և անոր համատակութեան բազմաթիւ Ակարներ լայտնուեցան Յունաստանի մէջ, կենագրութիւններ՝ ձեռագիրներուն մէջ, բայց մանաւանդ երևացաւ, որ Յունաստանի բազմաթիւ շրջաններու մէջ,

¹ Սոյն յօդուածը ներկայացուած է իբրև դասախոսութիւն 11—17 Սեպտեմբեր, 1985-ին Երևանի մէջ կայցած միջազգային գիտաժողովին, նոյմրուած Հայ արուեստի:

² S. Der Nersessian, «Les Portraits de Grégoire l'Illuminateur, dans l'Art Byzantin», *Byzantium*, vol. XXXVI (1909), p. 390.

պահպանուած են անոր մասունքները պարունակող սրբատուփեր՝ յետ-Քիզանդական արուեստի գործեր: Անոր պաշտամոնքին տարածումը Քիզանդին և Քիզանդական Ցունատանի մէջ 10-րդ, 11-րդ և 12-րդ դարերուն, արդէն իսկ հանգամանօրէն ուսումնասիրուած են Սիրարփի Տէր Ներսիսեանի Կողմէ: Հայ հայ մեծ քիզանդագէտին, Հայատանի առաքեալին Աերկացոյթինը Կ. Պոլիս, Ս. Սոֆիայի խճանկարներուն մէջ, որոնք 9-րդ դարուն պատրաստուեցան և անոնց ըրած նախընտրութիւնը բաղդատմամբ աւելի յարգուած և ծանօթ Սուրբերու, անտարակոյս, որ կապ ունին Բարսեղ Ա. կայսեր արտաշէտան ծագութ ունենալու առապելներուն հետ: Կեղծ ցեղաբանութեան մէջ, որ որոշ հեղինակներու կողմէ կը վերագրոի Փոս պատրիարքին, Կ'ըսուի թէ Բարսեղ սերած է Հայոց Տըրդաւ մեծ թագաւորէն, որ կ'ապրէր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ: Աւելի ուշ շրջանին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի պաշտամունքը կը թոյի հետևանքը ըլլալ հայերու տեղափոխութեան դէպի Ցունատան, փախչելու թրքական բարբարութիւններէն: Կրտսէի մէջ, որ փաստաթութերէ ծանօթ է հայերու բնակութիւնը, Հոփիսիմէ իգական անոնը ծանօթ է իբրև Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին ընկերացող համատակին անոնը: Հոփիսիմէ անոնը, յունարէն Ռիփիսիմէ կամ Ռիփիսիմեան և սխալմամբ՝ Ռէփիսիմեա, վերածուած է այսօր Ռէմի-ի և հելլենացած՝ Ռէւա, նոյնանալով հին չաստուածուիի անոնին հետ:

Ցունատանի մէջ, մինչև մեր օրերը, Սուրբին ծանօթ դիմանկարները անոնք էին, որոնք կը գտնուին Խալկեոն, այսինքն՝ կաթայագործերու Կոյսի եկեղեցին՝ Սալոնիկի մէջ, որուն որմնանկարներու թուականը նշանակուած է արձանագրութեան մէջ՝ 1028, Փոսիսի Սուրբ Ղուկաս Վաճքին մէջ որուն խճանկարները կը պատկանեն 11-րդ դարուն, Սալոնիկի՝ Սուրբ Նիկողոս Օրիանոսի եկեղեցին, որուն որմնանկարները կը վերագրուին պրոֆ. տիկին Տիգուրիատոսի կողմէ՝ 14-րդ դարուն: Միասրայի որմնանկարը, անկասկած՝ գեղեցկագոյնը, մի քանի անգամներ հրատարակուած է: Հայ պրոֆ. Charles Delvoye-ի, այդ դիմանկարը «կը լայտնէ գյոներու նրբաճաշակ զգացականութիւն մը, զոր ունին Հոդիդիտրիայի (Hodigitria) նկարիչները: Սքանչելի է տեսնել, թէ անոնք ինչպիսի յանդառութեամբ գործածած են վարդագոյնը արևելեան եկեղեցիի մեծ վարդապետի քահանայական գգեատները նկարելու»:

Այս պահուս, Կրնանք աւելցնել Սուրբին ինը առանձին նկարներ, կիսանդրի, կէս հասակով կամ ամրող հասակով, և անոր մարտիրոսութեան երեք նկարները բոլորն ալ նորագիտ: Սուրբին նկարները կը գտնուին.

1) Հրեշտակապետներու եկեղեցին, Մեծն Մեսսայի (Messa) Բուլարձի (Boularzj) գիտին մէջ, հարաւային Պելոպոնես (Péloponèse), որուն խճանկարները, ըստ ոճի, կը վերագրուին 12-րդ դարուն:

2) Սուրբ Աթանասի եկեղեցին մէջ, Լակոնիայի (Laconie) Աերակի (Gherakî) գիտին եկեղեցին մէջ, որուն որմնանկարները, Moutzorauios-ի և Démétrio-Kallis -ի կողմէ թուականագրուած են 1250-ի շուրջ: Սուրբին դիմանկարը՝ դիմացէն և կիսամարմին, կը գտնուի բեմին հարաւային պատին վրայ. մէկ ձեռքին ան բռնած է փակ Աւետարան, իսկ միւս ձեռքով ան Կօրինել:

3) Մակեդոնիոյ վերայի Ս. Պարասկևիի (Paraskévè) եկեղեցին մէջ, 14-րդ դար:

4) Կիպրոսի Աղյամատիի (Agiasmati) Ս. Խաչ եկեղեցին մէջ, որուն խճանկարները, Փիլիպ Կուլի գործ, արձանագրութեան մէջ կը լիշտ 1494 և 1505 թուականները: Սուրբին դիմանկարը, շրջանակի մէջ առնուած կիսանդրի, կը գտնուի Կարողիկէի ճակատին վրայ:

5) Սալամին կղզիի Ֆանիոնմանի (Phanionomene) Կոյսի կաթողիկէին մէջ, որուն արձանագրութեան մէջ լիշտակուած թուականը է 1735, Գևորգ Մարկոսի և անոր գործատեղի գործ: Սուրբին նկարը, ոտքի, երեք քառորդով, ունի երկարածիգ չափեր:

6) Մակեդոնիոյ, Էրատերա Սէլլոցայի (Ερατύρα Σαλλίσα) ճրճ ջունն Սուրբ Աստուածածնի եկեղեցին մէջ, որուն խճանկարները Յովհաննես անունով նկարիչի գործ են, արձանագրութեան մէջ լիշտած՝ 1763 թուականը:

7) Աստուածաբան Սուրբ Յովհաննես փոքրիկ մատուին մէջ, որը մատուուն է Արկոլիի (Αργολίδε) Աղումթոս (Αγηουμτός) վանքի գեղեկմանատան մէջ, ծանօթ արդէն իսկ հրատարակուած արձանագրութեամբ մը, մատուին խճանկարները Թէովիլիսոս վանականին 1766-ի գործերն են, նկարները ժողովրդական ոնով են կատարուած, զորիկ՝ արուեստի որմէ որակէ:

8) Թէսաղոնիկէի Աղմերոսի Անավոյայի (Αναντρά d'Αιμυρός) մէջ գտնուող Սուրբ Պարակիսի (Παρασκένε) եկեղեցին մէջ կը գտնուի Սուրբին կիսանդրի նկարը՝ օրինող ձեռքով (1710):

9) Լատիսայի Ս. Գևորգ եկեղեցին մէջ:

Բոլոր խճանկարներուն մէջ, Հայաստանի աւետարանիչը ներկայացնած է եսիսկոպոսական զգեստով, մէկ ձեռքով բոնած Աւետարաններու գիրը և միտապ' ողղափառ ձևով օրինող, ըստ եսիսկոպոսներու նկարներուն յատուկ ընդգծուած տիպարով: Ընդհանրապէս, Սուրբը զգեստարուած է շորջառով, ծածկուած մէն խաչերու եմիթիորոնով մը, բացի նմանուն Սուրբ Աստուածածնի եկեղեցին, Երիթրիա, որ շորջառին տեղ կայ Salmatique: Այս եկեղեցիի նկարին մէջ, Սուրբը կը կրէ նաև բագ մը՝ խորհրդանիշ արքայական իր ծագումին: Խնչակու յայտնի է, Սուրբը արտաշէսեան սերունդէն էր, որդին Անակ իշխանին: Բոլոր այս պատկերները կը փաստեն հայ հայրապէտի սրբանկարներու երկար աւանդութիւն մը մեր երկրին մէջ:

Սրբապատկերներու երկար այս աւանդութիւնը ընդհատուած է երկու անգամներ: Թէսաղոնիկէի պղճագործներու Սուրբ Կոյս եկեղեցին մէջ, Փուերի Սուրբ Պուկաս և Ղերակի Սուրբ Աթանաս եկեղեցին մէջ, դէմք երկարան է, մօրութ' կարճ և սրածայր, մինչ են ճակատին հջնող մազեր գանգուր են, գրեթէ նման Պետրոս Սուոքեակի տիպարին: 14-րդ դարուն, Սուրբերու դիմագիծները տակալին վերջնականացած չէին, մինչդեռ յետ-բիզանդական շրջանին, Սուրբը նկարուած է իբրև ճաղատ ծերունի մը, —բացի Էրատիթրայի եկեղեցիի պարագայէն, —կարճ և սրածայր մօրութով: Ինչ որ գորուած է Ֆուրնայի Դրոնեսէռոսի գիրքու մէջ՝ «Զեռնարկ Նկարչութեան Արտևստի», ծերունի, կարճ և լայն մօրութով, չի համաձայներ մեզի ծանօթ Սուրբի նկարներով պատկերացուածին:

Յունաստանի մէջ, ծանօթ են մեզի նաև Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի ճամատակութեան նկարները, երեք ալ չիրատարակուած: Լակոնիայ Գոմի և Դամեանոսի, այսինքն Անարգյուս-Զեռու վանքի կաթողիկէին մէջ, Սուրբին շարչարանքները նկարուած են հարաւային պատին վրայ: Նկար-

თამ აერაუნაფრიდებან მღ շპორჩი, იფ ჩრათარაկიად է, ფქსენგ թქ კოცარდასწმინ խճალკარნებიც ჩრაფორბოად ხან ზამთრები კაკაվასი პასურუ, 1621-ქა:

17 տարիներ էութ, 1638-ին, Արգատիոյ Գիհորեայի (Cynurie) Կարիայի (Կացա) Սուրբ Նիկողոս վանքի կաթողիկեց մէջ, Գևորգ Մոսկու Եկարիչը, Ցողոսկու Եկարած է Սուրբին շարշարանքները: Հայ Բայրապետը, Անքայացուած է եախսկոպոս զգեստներով, ի յառաջադրութ, Խոր Վիրասի մը մէջ և կը թուի բարեկամարար խօսիլ ատիճճերու հետ: Փոսին վերև կին մը կը թուի լավ, մինչ ձախ ձեռքը կտոր մը հաց Կերկարէ Սուրբի³:

Աղյուսակի Պանուելիք (Pentelicus) լեռան ննջումն Ս. Աստուածածիկի վաճրի կաթողիկէի արևմտեան պատիճ վրայ, չարշարանքներու պատկերացումը մի թիշ տարրեր է: Եպիսկոպոսը, որ կը թոփ ծնկաշոր ըլլալ, դադաս է դէպի աջ և հայուածքը ուղղած է կնոջ, որ կը գտնուի փոսին վերև, հացի կտոր մը երկարած սուրբին: Սուրբին շուրջ կան երեք փիշապներ, որոնց գլուխները և փիզերը կ'երևին. ասոնք վարքագրութեան թունաւոր օձերն են: Հիրատարակուած և անձանօթ թուականով խմանկարը, կը թոփ ըլլալ 17-րդ դարու գործ:

Բոլոր այս պատկերացումներուն մէջ, Սուրբը յիշուած է իրեն հ-եօթաւաց. տիտղոս մը, զոր կը գտնենք նոյնակա անոր մէկ վարքագրութեան մէջ՝ 11-րդ դարու ձեռագիր, Պրոպոնոսուի Խալքէ Կողի Կոյսի վանքի գրադարանին մէջ և 11-րդ դարու Վերջին և 12-րդ դարու տեղուոց ուժագիրական մէջ, Քրիստոնական թանգարան։ Նահատակութեան բոլոր պատկերացումները Ակարն են չարչարանքի մը, զոր սուրբը կրած է Տըրդառ թագաւորի հրամանով։ Իրականութեան մէջ, անոնք նահատակութիւն չեն իրապէս, որպինուն պարտադրուած մաս չեն։ Այսուու անհրաժեշտ է յիշել, որ սուրբի գլխատումի տեսարանը, տեղուոց -ին մէջ, սիստմամբ նկարուած է։ Սոյն տեսարանը չի համապատասխաներ ոչ Մետարիա թ-ի պատմութեան և ո՞չ միւս վարքերուն, քանզի Սուրբ Գրիգոր մահացած է առանձնութեան մէջ, իր ճգնաւումի վայրը։

Սուրբի Համբատակութեաց երեք պատկերացումները 17-րդ դարու կէ-
տերուն, արդինք են թէրևս նոր վարքի մը տարածումին, որուն խմբա-
գրութենէն օրինակ մը կը գտնուի Թիսաղոննեկէի Զակորա գիլապետա-
րանի գրադարանին մէջ: Բայց ասկէ, 15-րդ դարու բիզանտացի գրող Մի-
քայէլ Ապուռողիս, գրած է մենագրութիւն մը՝ նույրուած Սուրբ Գրիգոր Լու-
սառորդիչի շարչաբաններուն:

Յունատանի մէջ կը գտնուին արձաթապատ, բրոնզէ կամ փայտէ մի քանի սրբատուփեր, որոնց մէջ կը պահուին Սուրբ Գրիգոր Լուսատորիչի Նշխարները, բղորն ալ չիրատարակուած: Մեզի ծառօթ սրբատուփերը կը գտնուին.

1) Միտելեանիոյ կղզիի մայրաքաղաքի եպիսկոպոսական դղեակի գանձառան մէջ:

³ Տ. Խորստուրին պապմանք կը թշատակէ Ս. Կոյսը, Փոսին վերէ: Ա՛ն Խորստին հովհանն, Տրդատ բազառորի բրհանձնեաց բորբ և կամ, այլ աղրիբներու Բամաձայն, այրի մը, որ Հըրեշտակի հրամանով, ճաշ կը բերէր Ս. Գրիգորի: Փոսին մէջ չկան ատիմներ, այլ հրեշտական օձեր: Ըստ Բայլեական աւանդութեան, փոսը գոյութին ունի Խորստին պապայի մը մէջ:

4) Կիպրոսի Սոլիասմատիի (Agia Smati) Ս. Խաչ եկեղեցին մէջ, որուն խճանկարները, Փիլիպ Կովի գործ, արձանագրութեան մէջ կը լիշեն 1494 և 1505 թուականները: Սուրբին դիմանկարը, շրջանակի մէջ առնաւած կիսանդրի, կը գտնուի Կաթոլիկէի ճակատին վրայ:

5) Սալամին կղզիի Ֆանիրումանի (Ρημέσιοπότερο) կոյսի կաթողիկէին մէջ, որուն արձանագրութեան մէջ լիշտակուած թուականն է 1735, Գևորգ Մարկոս և անոր գործատեղի գործ: Սուրբին նկարը, ոտքի, երեք քառորդով, ունի երկարաձիգ չափեր:

6) Մակեդոնիոյ, Էրատերա Աէլեացայի (Ερατύρα Σαλίσα) ճըն-ջումն Սուրբ Աստուածածնի եկեղեցին մէջ, որուն խճանկարները Յովհաննէս անունով նկարիչի գործ են, արձանագրութեան մէջ լիշուած՝ 1763 թուականը:

7) Աստուածաբան Սուրբ Յովհաննէս փոքրիկ մատուին մէջ, որը մատուն է Արկոլիոյ (Αργολίδε) Ալունթոս (Αγκουοντος) վանքի գերեզմանատան մէջ, ծանօթ արդէն իսկ նրատարակուած արձանագրութեամբ մը, մատուին խճանկարները Թէովկիտոս վանականն 1766-ի գործերն են, նկարները ժողովրդական ոնով են կատարուած, զորկ' արուեստի որևէ որակէ:

8) Թեսաղոնիկէի Աղմերոսի Անապրայի (Αναντρά d'Almyros) մէջ գտնուող Սուրբ Պարասկեվիի (Παρασκένε) եկեղեցին մէջ կը գտնոյի Սուրբն կիսանդրի նկարը՝ օրինող ձեռորով (1710):

9) Լատիխասի Ս. Գևորգ եկեղեցին մէջ:

Բոլոր խճանկարներուն մէջ, Հայաստանի աւետարանիչը Երկայացուած է եայիսկոպոսական զգեստով, մէկ ձեռորով բոնած Աւետարաններու գիրը և միտով՝ ուղղափառ ձևով օրինող, ըստ եպիսկոպոսներու նկարներուն յատուկ ընդգծուած տիպարով: Ընդհանրապէս, Սուրբը զգեստատրուած է շորջառով, ծածկուած մէծ խաչերու եմիֆորնով մը, բացի ճնշումն Սուրբ Աստուածածնի եկեղեցին, Երիթրիա, որ շորջառին տեղ կայ Salmatique: Այս եկեղեցի նկարին մէջ, Սուրբը կը կրէ նաև թագ մը՝ խորիրդանիշ արքայական իր ծագումին: Ինչպէս յայտնի է, Սուրբ արտաշէւեան սերունդէն էր, որդին Անակ իշխանն: Բոլոր այս պատկերները կը փաստեն հայ հայրապէտի սրբանկարներու երկար աւանդութիւն մը մեր երկրին մէջ:

Սրբապատկերներու երկար այս աւանդութիւնը ընդհատուած է երկու անգամներ: Թեսաղոնիկէի պղնձագործներու Սուրբ Կոյս եկեղեցին մէջ, Փուերի Սուրբ Ղուկաս և Ղերակի Սուրբ Արքանաս եկեղեցին մէջ, ումըք երկարածն է, մօրուք՝ կարճ և սրածայր, մինչ անդ ճակատին իշնող մազերը գանգուր են, գրեթէ նման՝ Պետրոս Առաքեալի տիպարին: 14-րդ դարուն, Սուրբերու դիմագիծերը տակալին վերջնականացած չէին, մինչդեռ յևս-բիզանդական շրջանին, Սուրբը նկարուած է իբրև ճաղատ ծերունի մը,—բացի Էրատիրայի եկեղեցիի պարագայէն,—կարճ և սրածայր մօրուք: Ինչ որ գրուած է Ֆուրենայի Դրոնեսէոսի գիրքու մէջ՝ «Զենարկ Նկարչութեան Արլեւատի», ծերունի, կարճ և լայն մօրուքով, չի՛ համաձայներ մեզի ծանօթ Սուրբի նկարներով պատկերացուածին:

Յունատանի մէջ, ծանօթ են մեզի նաև Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի համատակութեան նկարները, երեքն ալ չիրատարակուած: Լակոնեաց Գոմի և Դամեանոսի, այսինքն Առացցես-Եւրու վանքի կաթողիկէին մէջ, Սուրբն շարչարանքները նկարուած են հարաւային պատին վրայ: Նկար-

ուստի արձանագրութեան մը շնորհի, որ հրատարակուած է, գիտենք թէ լուշարանին խճանկարները իրագործուած են Դեմետրէոս Կակավասի ձեռով, 1621-ին:

17 տարիներ ետք, 1638-ին, Արգատիոյ Գիտորեայի (Cynurie) Կարիայի (Caria) Սուրբ Նիկողոս վանքի կաթողիկէին մէջ, Գևորգ Մուխոս նկարիչը, նոյնական նկարած է Սուրբին չարչարանքները: Հայ հայրապետոր, ներկայացուած է եպիսկոպոսի զգաւոններով, ի յառաջագութէ, Խոր Վիրապի մը մէջ և կը թոփի բարձրակամարք խօսիլ առիծներու հետ: Փոսին վերև կին մը կը թոփի լալ, մինչ ձախ ձեռքը կտոր մը հաց Կերկարէ Սուրբին:³

Աղդիկայի Պատուելիք (Pentelique) լեռան նաչումն Ս. Աստուածածնի վանքի կաթողիկէի արևմտեան պատին վրայ, չարչարանքներու պատկերացումը մի քիչ տարբեր է: Եպիսկոպոսը, որ կը թոփի ծնկաչոր ըլլա, դայձած է դեպի աջ և նայուածքը ուղղած է կնոջ, որ կը գտնուի փոսին վերև, հացի կտոր մը երկարած սուրբին: Սուրբին շորջ կան երեք վիշապներ, որոնց գլուխները և վիզերը կ'երևին: Ասոնք վարքագրութեան թունաւոր օձերն են: Զիրատարակուած և անծանօթ թուականով խճանկարը, կը թոփի ըլլալ 17-րդ դարու գործ:

Բոլոր այս պատկերացումներուն մէջ, Սուրբը լիշուած է իրին ի՞ցուալուց. տիտղոս մը, զոր կը գտնենք նոյնական անոր մէկ վարքագրութեան մէջ՝ 11-րդ դարու ձեռագիր, Պրոպենտոսի Խալքէ կղզիի կոյսի վանքի գրադարանին մէջ և 11-րդ դարու վերջին և 12-րդ դարու տեղուոց մէջացիւութիւնում՝ մէջ, Քրիստոնական թանգարան: Նահատակութեան բոլոր պատկերացումները նկարն են չարչարանքի մը, զոր սուրբը կրած է Տըրդաստ թագաւորի նրանանով: Խրականութեան մէջ, անոնք նահատակութիւն չե՞ն իրապէս, որովհետև պարտադրուած մաս չե՞ն: Այսուղ անհրաժեշտ է լիշել, որ սուրբի գիտառումի տեսարանը, տեղուոց -էն մէջ, սխալմամբ նկարուած է: Մոյն տեսարանը չի համապատասխաներ ոչ Աւետիք թե -ի պատմութեան և ո՛չ միևն վարքերուն, քանզի Սուրբ Գրիգոր մահացած է առանձնութեան մէջ, իր ճգնումի վայրը:

Սուրբ նահատակութեան երեք պատկերացումները 17-րդ դարու կետերուն, արդինք են թերևս նոր վարքի մը տարածումին, որուն խմբագրութեան օրինակ մը կը գտնուի Թիսաղոննեկէի Զակորա գիշապետարանի գրադարանին մէջ: Բացի ասկէ, 15-րդ դարու բիզանդացի գրող Միքայէլ Ապուտոլիս, գրած է մենագրութիւն մը՝ նույրուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքներուն:

Յունատանի մէջ կը գտնուին արծաթապատ, բրոնզէ կամ փայտէ մի քանի սրբատուիեր, որոնց մէջ կը պահուին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Նշանաները, բոլորն ալ չիրատարակուած: Մեզի ծանօթ սրբատուիերը կը գտնուին.

1) Միտելենիոյ կղզիի մայրաքաղաքի եպիսկոպոսական դեկանի գանձառուած մէջ:

³ Տ. Խրիստոպոլս միավմամբ կը լիշասակէ Ս. Կայսր, փոսին վերև: Ա.Յ. Խուրովինի դուռիստն, Տրդատ քաջարարի քրիստոնեան բոլոր և կամ, ալ աղքարներու համաձայն, արի մը, որ Հերետիկի նրանանով, առ կը թերեք Ս. Գրիգորի: Փոսին մէջ չկան առիծներ, ալ նրեւանաման օձեր: Բայց նայեական աւանդութեան, փոսը գրութիւն տմի Խոր Վիրապի մը մէջ:

2) Մակեղոնիոյ Սերբէսի Ս. Յովհաննէս Մկրտիչ Վանքին մէջ: Արքատուիք կը կրէ 1845 թուականը:

3) Խպերեայ Վանքին Ս. Նիկողայոս մատուիթ մէջ: Վանքը հիմնաւ է 10-րդ դարուն, Գրացիներու կողմէ: Ըստ աւանդութեան, մատութեար Յուիրուած են բիզանտական կայսրութեան կողմէ:

4) Այժու լերան Խերապոտամի Վանքին մէջ: Յետ-բիզանտական շըրշանի արծաթեայ մասնասրատուիք կը պարունակէ Սուրբի գիտի փոքր կոտր մը և ունի երկու յունարէն արձանագրութիւններ, մէկ հայերէն արձանագրութիւն և Ս. Գրիգոր Լուսաւորիչի դիմանկարը, դէմքը և կիսանդրին, ձեռքին բունած Աւետարաններու գիրքը և միա ձեռքը՝ օրիններու շարժումով: Դիմագծին վրայի առաջին արձանագրութիւնը կը գրէ. «Ավան փիլութեան հոգոյ Եփրապոտամի Վանքի Գրիգոր Վանահօր»: Երկրորդ յունարէն արձանագրութիւնը կը գրէ. «Մեծ Հայոց Սուրբ Գրիգոր»: Գլխու աջ կողմը հայերէն արձանագրութիւնը կը գրէ. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի դէմքն է»: Ըստ աւանդութեան, մասնատուիք նույն եկած է բիզանտացի կայսրէն:

5) Այժու լերան Գրիգոր Վանքին մէջ կը գտնուի Նշանական տուիք մը գլուխի ձևով, որ կը պարունակէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի գլուխին փոքր Աշխար մը: Մասնատուիք կը կրէ 1845 թուականը⁴:

6) Այժու լերան մնձ «Ղարայ»-ին մէջ կան երկու արծաթեայ մասնատուիք: Սուաշինը՝ թերուած Մողլաւայէն 1848-ին (կամ 1856-ին) Բենեամէն վարդապետի ձեռքով, կը պարունակէ Սուրբ Գրիգորի Սուրբ Գլուխը և կը կրէ 1702 թուականը: Երկրորդը՝ կը պարունակէ Սուրբին ձեռքը և կը կրէ յունարէն արձանագրութիւն. «Մեծ Հայոց Սուրբ Գրիգորի, 1780»: Ըստ Վանական աւանդութեան, Սուրբ Գրիգորի Ս. Գլուխը փոխադրած է Մողլաւայէն աթուական հիերուուու Բենեամին վաղդապետը: Գլած է զայն թոքը փայտաշէ մը, երբ Վանահայրն էր անապատին: Թերևս 1702 թուականի արծաթապատ Սուրբ Գլուխի մասնատուիք Կ. Պոլսոյ եկեղեցիներէն մէկ մը թերուած է:

Բոլոր մասներները կը թուին գալ Կ. Պոլսէն: Խնչպէս գրած է Սիրարիի Տէր Ներսիսեան, Կ. Պոլսոյ մէջ կար, թերևս, 5-րդ դարու Վերջաւորութեան և 6-րդ դարու Ակիզը Եկեղեցի մը, որ հայ համայնքը կը յարգեր գերեզմանը ազգային իր առաքեալին, որուն Աշխարները փոխադրուած էին կայսերական մայրաքաղաք, Զենոն կայսեր ձեռքով:

Նոյն հեղինակը կ'աւելցնէ առասպել մը, քաղուած հայկական աղբիրներէ, Սուրբ Գրիգորի, Հոփիսիմեանց և Գայանեանց կոյսներու Աշխարներու յայտնութեան մասին, Դափնէի Ս. Երրորդութեան պալատին մէջ: Միքայէլ Գ.-ի, Թէոդորա թագաւորի և Փուտ պատրիարքի ներկայութեանը յայտնուած պիտի ըստ մասներները և այդ լուրը հաղորդուած պիտի Շլայ աւելի ոչ Աշոտ թագաւորին Բարսեղ կայսեր կողմէ:

Վերջապէս կը յիշենք, թէ ըստ Նովգորոդի Անոնց եախսկոպոսի, որ Կ. Պոլսոյ ացեղած է 1200-ին, Ս. Սոֆիայի աւանդատան մէջ կը գտնուէր Ս. Գրիգոր Լուսաւորիչի գերեզմանը, սակայն յոյն գիտնական Եկեղեցին Անթոնիադոսը կը կարծէ թէ Անտոնի Ակարագրութիւն ըստ Կ'ուզէ պար-

⁴ Յունարէն երկու արձանագրութիւնները. Ο AGIOS GRIGORIS TIS ARMENIAS EKOSMITHI PARA GERMANOU ΚΕ BENEDIKTOU TON ΜΕΡΕΞΟΝ DIA XIROS IOANOU 1845 KIMISXANA.


զայլս, թէ այստեղ կային Սուրբին մասունքները⁵: Ինչ կը վերաբերի եկեղեցներուն և մատուներուն Յուիրուած Սուրբ Գրիգոր Լուսատրիչի անոնին, ամոնց ամենէն հիմներէն մին, որքան գիտենք, կը գտնոի Յովհաննէս Դմշկիկի հիմնած գիտանցի Ճոյոն-ին մէջ, մեծ Լադայի վաճքը, որ կը գտնոի Արծու Լեռան Մանդրակի (Mandraki) կոչուած փոքր ճաւանիանին մէջ:

Այսօր, այսքան գիտենք Հայոց առաքեալի Յունաստանի մէջ տարածուած պաշտամունքի մասին: Սակայն ուսումնասիրութիւնը պիտի շարունակուի:

Ֆրանսերնեն: թարգմանեց ՇԱՀԵ ԱՐՔ. ԱԾԵՄԵԱՆԱԾ

⁵ Ս. Եղոնհայտն Կ'անելցնէ, թէ խաչակիրները գողցած հետ մասունքները Ս. Սօֆիայի առանձատունէն, եթք գրաւեցին բաղարը:





Հաւատամք եւ ի ՄԻ միայն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ եւ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, (ՍՈՒՐԲ) Եկեղեցի

«Ի հնգետասամերորդի ամի տերութեան Տիբերևայ կայսեր, ի դատաւարութեան Հրեասամի Պիղատոսի Պոնտացոյ և ի չորրորդապետութեան Գայիշացոց Հերովի, և Փիլիպպոսի եղրօր նորա չորրորդապետութեան ի Տորացոց և ի Տրարոնացոց աշխարհին, և ի չորրորդապետութեան Լիսանեայ Արթէնցոյ, և ի քահանայապետութեան Անասի և Կայիշափայ եղել բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդույ Զաքարիայ յանապատին» (Ղոկաս Գ: 1—2):

Վերոյիշեալ ստոյգ եւ հաւատի պատմական համակարգի մէջ է, որ Աւետարանիչը տեղադրում է Քրիստոսի առաքելութեան սլիքը: Քրիստութիւնը որպէս կրօն, արդինք է Աստուածային միջամտութեանը՝ մարդկային պատմութեան ոլորտից հերս, Յիսուսի մարդեղութեամբ: Քրիստոնէական կրօնը պատմականօրէն հիմնաւորելոյ ցայտուն փաստարկներից մէկը Հաւատոյ Հանգանակի մէջ տեղադրած՝ «Եւ խաչեցաւ վասն մեր առ Պոնտացով Պիղատոսի»¹ արտապայտութիւնն է: Ինչո՞ւ գաւառական անհշան մի պաշտօնեայի անոնքը յիշատակում է «Հաւատոյ Հանգանակի» կարճ, բայց եւ Քրիստոնէական հաւատի ամենապերճախօս յարտարարութեան մէջ, եթէ ոչ ընթերցողին ու լսողին լիշեցնելոյ Յիսուսի պատմական անձնաւորութիւն լինելը, իբրև մի մարդ, ծնունդով հրեայ, որ չարչարուեց և խաչուեց Հռոմէական իշխանութեան լի տակ, եւ որին ժամանակակից մարդիկ մտել, լույլ և նոյնիսկ ձեռք էին տուել. «Որ Էրն ի սկզբանէ զորմէ լուարճ՝ որում ականատեսն իսկ եղեաք. ըստ որ հանցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց» (Ա. Յովհ. Ա. 1):

Քրիստոսի առաքելութեան պատմականութիւնը դրսեւորում է նաև այն առաքելութեամբ, որ նոր հետեւորդները ի գործ դրիմ Աւետարանի պատգամը տարածելու Յունա-Հռոմէական աշխարհում: Երբ Յիսուսը պատրաստում էր թողին իր աշակերտներին և վերադառնալ Հօր մօտ՝ յաւտարենց. «Ի հասանել հոգուն սրբյ ի վերայ ձեր, եւ եղիշիք ինձ վկայք յերտաղէմ և յամենայն Հրեատուանի եւ ի Սամարիա, մինչեւ ի ծագս երկի» (Գործք. Ա. 8):

Աւետարանի հարուստ իրադարձութիւններից ամենակարեւորիմ՝ յարութեանը հաւատիութիւն հատորդեկու համար անհրաժեշտ էր ականատեսների անսուս վկայութեան. «Պետրոս և Յակովոս, Յովհաննես և Անդրեաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթողմէոս և Մատթէոս, Յակովոս Ալ-

փեան և Ծմատվա Աախանձայոց և Յուդա Յակովեան: Սորս ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամք և Մարեմաւ մարքն Յիսուսի և եղբարքը նորա» (Գործ. Ա. 13—14): Տասնմէկը, Յիսուսի պագակիցներից մի քանիսի աշակցորդեամբ Աւետարանի պատգամների առաջին տարածողները եղան: Դողորթայի ողբերգորդեանը յաջորդած յարութեան և Տիրոջ խոստացած «երկնից արքայորթեամ» ականչաղորդ ժամանակակիցները շարունակում էին հարցնել. «Տէր՝ եթէ ի ժամանակի ասո յայսմիկ հասուցնելոց իցես զարքայորթին Խորացէլ» (Գործ. Ա. 6):

Աշակերտները օր-օրի հետանել էին Ռուոցին, որպէսզի հետագայում, նոր մենակ մնացին կարողանալին Յիսուսի գործը շարունակել: Մատաթիայի ընտրութեան կապակցորդեամբ պարզուեց. «Պարտ է յարանց յազցան նկերոց ընդ մեզ յանենայն ժամանակի, յորում մոտ և եղ առ մեզ Տէր Յիսուս սկսեալ ի մկրտորթնեն: Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վերացան ի մէջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միտմ ի տցան:» (Գործ. Ա. 21—22): Աշակերտները, որ պատրաստ էին հանդէս գալ որպէս ականատես վը-կաներ Յիսուսի յարութեան, դեռևս ամրող խորութեամբ չէին գիտակցում իրենց վստահուած առաքելութեան տիեզերական հշանակութիւնը: Միայն այն ժամանակ, եթիւ Յիսուսի խոստացած վերադարձը իրականացա՛ նրա համախոհները քաջորթին ունեցան ազդարարելու մարդկութեան Յիսուսի աստուածորթիւնը: Ա. Հոգին իջաւ իրաքանչիրից վրայ և նրանք «սկսան խօսել բայեալ լեզու որպէս և հոգին տայց բարբառն նոցա» (Գործ. Բ. 4): Այս դէպքից լուսոյ Պետրոս առաքեալը համաձակուեց յայտարարել. «Արդ ճշնարտի գիտացէ ամենայն տոնն Խորացէլի, զի և տէր զնա և օծեալ Սաստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուք խաչեցէք» (Գործ. Բ. 36):

Նոր ովանի համանքը կազմադրման համար վճռորշ հշանակութիւն ունեցաւ ականատեսների վկայորթիւնը՝ Յիսուսի յարութեան և Ա. Հոգու բաշխման իրադարձութիւնները, որոնց շնորհիւ նոր-նոր կազմադրուող եկեղեցու գործունեութիւնը ոչ միայն անհետքելի գաներականութիւն ասացու, այլև արդինաւու եղաւ. «Ես յանեան յանոր յայնմիկ ոգիր իրեւ երեք հազարը» (Գործ. Բ. 41):

Եկեղեցիին գոյորթիւնը սերտօրէն պյանանատուած է Ա. Հոգու բաշխման և Առաքեալների, որպէս ականատեսի քարոզութեան, որից և քում է քրիստոնէական եկեղեցու թէ Սորը և թէ Առաքելական լինելը: Խնչակէն պէտք է հասկանալ եկեղեցու տրուած «սորը» և «առաքելական» բնորոշումները:

Ա. Հոգին ոչինչ նոր չի առեցնում այն առաքելութեանը, որ Յիսուս արդէն կատարել էր և ասան թողել, որովհետու՝ «Զի ի նմա Սաստուն հաճեցան ամենայն լուսնի աստուածութեան բնակել» (Կող. Ա. 19): Ա. Հոգին է «որ վկայէ, զի հոգին իսկ է ճշմարտութիւն (Ա. Յովի. Ե 6), «նա զիս փառարեցէ» ասում է Յիսուս, «զի լիմետ անտի առնոցու և պատմեսի ձեզ» (Յովի. Ժ 14): Որով Ա. Հոգու զայը ոչ թէ հուազեցնում կամ մեղինակազմուն է: Առաքեալների վկայորթիւնները, այլ հաստառում, լրացնում:

Բաստար հիմք կայ եգրակացնելու, որ Ա. Հոգու վկայորթիւնը վճռական հշանակութիւն ունեցաւ Նոր Կոտակարանի Կանոնի կազմութեան հանայի: Պէտք է եկատել, որ Չորս Աւետարանների, Գործը Առաքելոցի, Պողոսի Թղթերի, և Յայտնութեան գրքերի վկայորթիւնների հայտակն է լրացուցիչ տեղեկութիւններ հանդրդեկ Յիսուսի կեանքի առաքելութեան, մասնա-

յարար յարութեան մասին: Քննելով վերը թուարկուած երկերը տեսանու ենք առաքեալների գործունեութեան շրջանակը: Հետևողինը արդէն գալիս է հյոթենին, գրաւոր երկերի հնոյինակները, իրենք իսկ առաքելութեան ուներշնչանը Աստուածային և մարդկային համատեղ գործունեութեան ուղին են մատնանշում: Ուշագրաւ է, որ աւանդութիւնը առաքելական ծագում և ճանաչում է վերագրում նաև Մարկոսի և Ղուկասի Աւետարաններին, թէեւ վերշիններու բուն առաքեալների փաղանցին չեխ պատկանում և Յիսուսին անգամ չէին տեսնէլ: Այս զոյգ Աւետարաններին վաներականութիւն հաղորդելու համար աւանդութիւնը դիմում է Պետրոս և Պողոս առաքեալների վկարութեան, քանի որ սոյն երկու գործերը պարունակում են լիշեալ առաքեալների գործունեութեան անդրադարձը: Այլ երկերի հաւատսիրութիւն հաղորդելու այս ձեւը հետագայում եւս օգտագործուեց Նոր Կոտակարանի Կանոնի մէջ ներառնել ալլ գործեր (Մուղայ առ Եբրայեցին, Յալունութիւն Յովհաննու), որոնց հեղինակային պատկանելութեան շորջ ամենավայր շրջանից կասկածներ են եղել, որը շարունակում է մինչեւ հիմա: Այս կապակցութեամբ, առաքեալների իրեն սկանատես վկայումների Կ'արժէքագրկուք՝ առանց Հոգեգալաւտեան հրաշքի, երբ Ս. Հոգին իշաւ ոչ միայն առաքեալների վրայ այլ նաև ամրող եկեղեցու: Հետեւարաք եկեղեցին հիմնաւորուեց ոչ միայն առաքեալների գործունեութեամբ, ալլեւ շնորհին, երանց վրայ իշած Ս. Հոգու ներշնչումով: Հիմունակալով այլ մահերամասնութիւնների մէջ, կարող ենք ասել, որ եկեղեցու կազմաւորման օրերին, ոչ մէկի մտքով շանցաւ Նոր Կոտակարանի Կանոնի մէջ ներառնել գրեթե, որոնք առաքեական ծագում չունեին: Ս. Հոգու ազեղեցութիւնն է բնորոշում որեւէ գրի վաւերականութիւնը: Ուղղափառ գաղափարների ու վկայութիւնների հիմնական ակնութերը սրանք են:

Կարող ենք համոզուած ասել, որ եկեղեցու սկզբնական շրջանի պատմութիւնը ներկայացուած է Գործ Առաքելոցի էջերում, շարադրուած Ղուկաս Աւետարանչի ձեռով, որը հեղինակն է նաև երրորդ Աւետարանի: Գիրքը բաժանում է երկու անհասար մասերի, առաջին մասը Գլխ. Ս.—ԺԱ. Վերաբերում է Երուաղեմի եկեղեցու ձեւաւորման, հոգեգալաւտեան դեպքի ըրկարագրութեան, ներքին կազմակերպութեան, և ականաւոր դեկապլա անձերի գործունեութեան ըկարագրութեանը: Երկրորդ մասը, որ ընդգրկում է գրի մնացած գույնները, յատկացուած է հեթանոսաց առաքեալի գործունեութեան, որին Ղուկաս անուանում է Պողոս (Գործ. ԺԳ 9), թէեւ սկզբնական գլուխներում երան կոչում է Սատող:

Երուաղեմի համացար դեկապլատում էր 12 առաքեալների կողմից. Պետրոս առաքեալը, որ եռանդուն, ընդգրուած անհասականութիւն էր, հանդէն է զալիս միասների անունից: Ուստի տեղին կը լինի ճշել, որ Յիսուսի համարական խօսքերը. «զի դու ես վէմ, եւ ի վերայ առեր վիմի շինեցից գեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ, 18)² արտասանուած Կեսարիա տանող ճանապարհին, ցուցանիշներից մէկն է վեր ակնարկուած դերի, որ Պետրոսը ունիր Երուաղեմու:

Երուաղեմի եկեղեցին բազմաթիւ եկեղեցիներից ոչ թէ մէկն էր, այլ նէց ինը բուն ԵԿԵՂԵՑԻՆ էր, միակ եկեղեցին՝ «մնացորդացը» Հին Կոտակի, որի մասին մարգարեները գուշակել էին, և որը որդեգրել էր դրկուած Փրկչին: Հեթանուաց եկեղեցին, որի խախտոն շատագովն ու կազմակերպութըն էր Պողոս առաքեալը, որի համար արմանանում է «ձիթենիդ վայրենի» (Հոռվ. ԺԱ 17) պատուասուած արմատին բնորագրմանը: Առաջնորդ

ուելով 12 առաքեալների կողմից, սկզբնական հրեալ-քրիստոնեայ նորադարձներից կազմուած գաղութը ակնկալում էր ստեղծումը երկնային երուսաղէմի որպէս սուրբ քաղաք, որ պիտի իջնէր երկներից, ըստ Յայտնութեան գրի գուշակութեան. «Եւ պարիսպ քաղաքին ուներ հիմուն երկուտասան, և ի նուս երկուտասան անուան երկուտասան առաքելոց գաղին» (Յալտ. ԽԱ 14): Պատմութիւնը եւ վախճանաբանութիւնը այնքան սկրոօրէն և՛ն միահիտուած Գործը Սուպերեոցի սկզբնական գլուխներում, որ դժուար է մեկը միասից բաժանել: Պետրոս իր հոգեգալաւտեան ճանի մէջ, Ս. Հոգու գալուատը ընկալում էր ճակատագրական սրբութեամբ, որպէս իրականացումը Յովել մարգարի վախճանաբանական գուշակութեան. «Ճ էին միաբան ամեներեան ի սրահին Սողովմոնի: Եւ այլոց անուի ոչ ոք իշխնէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնոսա ժողովուրդն» (Գործը. Զ 12—13):

Գործը Սուպերեոցի 12-րդ գլուխը եկեղեցու առ սկզբնական շրջանի պատմութիւնը բերում հասցնում է աւարտին: 12 առաքեալներից կազմուած դեկափար մարմինը դադարում է որպէս աղպիսին գործելոց: Հերովդէս «սպան զՅակովը գեղարցն Յովիանու սրով» (Գործը. ԺԲ 2) և ըստ որոշ տուեալների ոչ մի ճիգ չարտեց նրա տեղ ընարել մէկ ուրիշի, ինչպէս արուեց Յուղայի բացակայութեան դէպրու: Պետրոս իր ձերբակալութիւնից եւ փախուստից յետոյ՝ «Ել գնաց յայլ տեղի» (Գործը. ԺԲ 17): Թէեւ Պետրոսը պահում է իր հեղինակութիւնը և հնայրը, որպէս առաքեալներից առաջինը բայց այդ հեղինակութիւնը բացարձակ չէր, քանի որ Պողոս ճակատակառու է նրան և ճիղաւորման սերմեր ցանում (Գաղ. Բ): Երուսաղէմում առաջինութիւնը աստիճանաբար անցնում է Յակովը առաքեալին (Գործը. ԺԵ), որը չէր պատկանում 12-ի խմբին: Պետրոս առաքեալի ունեցած դերը և բողած ժառանգութիւնը եկեղեցու կազմակերպութեան բնագաւառում բարձր է զնահանում, յատկապէս եպիսկոպոսի պաշտօնի հաստատման առևտութեամբ, և յիշում ու մեծարում է որպէս «յառաքելութիւն թվիատութեան» (Գաղ. Բ 7—8), որ հեռանկար չունեցաւ, քանի որ հրեաները մերժեցան Փրկչին, իսկ այն «մնացորդացը» որ ընդունեց Յիսուսի ինչպէս գիտենք Յ. Ք. Կօթանատնական յուականներին լրի կործանուեց:

Այս փովերից յետոյ ասպարեզ է մտնում հեթանոսաց առաքեալը Պօղոս, որին է լաւուացուած Գործը Սուպերեոցի ԺԳ—ԽԸ. գլուխները: Գործէ մի ամբողջ յիսնամետակ իշխելով, ևս քարոզչական շրջագայութիւնների մի չոցով ողջ միջերկրականի շրջակայ քաղաքներում հաստատում է նոր համայնքներ: Աստծոյ բոլոր եկեղեցները Երուսաղէմի եկեղեցու նման, արծանի են ստանալու Սէւտարանի լոյսը և Ս. Հոգու շնորհները: Հակառակ բոլոր վիճաբանութիւններին, Պօղոս միշտ օօրավիժ կանգնեց Պահեստինի փոքրիկ համայնքին և յարգեց այդ այսոոի հախագամութիւնը որպէս աղբիր և պաշտպան հաւատի, նոյնիսկ, եթե 12-ի խումբը վերջնականապէս թողել էր Երուսաղէմը: Պօղոս առաքեալը, կրօնա-ուսուցողական ծրագրերի գործադարսութեան համար, Երուսաղէմի երեցների հովանատութիւնը երաշխաւորնց, իսկ իր շրջագայութիւնների ընթացքուն, եթե հանգանակութիւններ երանում միշտ յիշում էր Հրէաստանի եղբայրների կարիքները:

Տայց և Պօղոսը բազում անգամներ հաստատում է իր կեցուածքը, որ ամէն եկեղեցի հաւասար է Աստծոյ առշել և չկայ խորականութիւն Հրեայի և Յոյնի միջեւ: Նրա գաղափարները շատ լատուկ են. ևս ցանկանում է, որ բոլոր քրիստոնեաները, որ ապրու են մէկ համայնքուն, պատկանեն մէկ եկեղեցու, սակայն այս առողջ սկզբունքը, ողը ըստ Եոթեան յանգում է հա-

սարակաց օգտակարութեան, տուեալ դէպքում Առրաստեղծ համայնքներին նպաստելու գործին, դառնում է պատճառ թնաղատութեան և մասնաւրուած բախտունների հիեայ և յոյն գաղութների միջեւ: Նման բարդ և սրուած դրութիւն է տիրում Կորնթոսի հահանգում, որտեղ երկու խմբեր անջատուել են և ծրագրում էին ստեղծել առանձին համայնքներ: «Խրաքանչիւր ոք ի ձեզ ասէ, Ես Պաղոսեան եմ, եթէ Ես Ապողոսեան, եթէ Ես Կեփայեան, եթէ Ես Քրիստոսեան. իսկ այդ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս» (Ա. Կորնթ. Ա. 12—13): Այդ ընդհարութեարը շազդեցին Պողոսի և Պետրոսի շերմ փոխարքերութեան վրայ, ըստ աւանդութեան, երկու առաքեալներն էլ տեղափոխուեցին Հոռու և արճան մարտիրոսութեամբ վկայակոչեցին Քրիստոսի առաքելութեան տիեզերական ոգին:

Ակզրնաղբիւններում Քրիստոսի անձին ականատեսների շարքում յիշատակում է նաև Յովհաննեսը՝ Ձերենիայի որդին, որին կոչում էին «սիրեցեալ աշակերտ»: Նա էլ, Պետրոսի և Պողոսի նման, հեղինակն է համարում Նոր Կոտակարանի որոշ գործերի և ամենից անելի առնչում է Եփեսուսի համայնքի հետ: Յովհաննես ասուրեական խմբակի ամենապայծառ և Պետրոս առաքեալի մտերիմ գործակիցներից մէկն էր, և հենց այդ պատճառով չափազանց հաշմակալից դէր կատարեց Երրուաղէմի եկեղեցական կեանքում: Յիսուսի հետ ունեցած մտերմութիւնը հրան տուեց ակնյալու հեղինակութիւն: Ցայօք հրա անոնք միացն մէկ անգամ է յիշում իր թղթերում; որտեղ Յովհաննեսի, Յակովոսի և Պետրոսի հետ միասին համարում է Երրուաղէմի եկեղեցու «սիրենից» մէկը (Գաղ. Բ 9): Համաձայն աւանդութեան իր կեանքի վերջին օրերը անցկացրեց Եփեսոսում, որի հիմնադրումը վերագրում է Պողոսին (Գործ. ԺԹ 8—9): Իր թուղթը, վերջինը, որ ընդգրկուեց Նոր Կոտակարանի Կանոնի մէջ, առանձնանում է իր ընյօթով, առանձապէս հեղինակի Սեւարանի պատգամի խոհական և յայտնութեան պատկերացումով, որի համար էլ բիզանտական եկեղեցին հրան անուանում է «Սառուածարան» աւետարանիշ: Յովհաննես շեշտում է Աւետարանի պատգամի ծխական հշանակութիւնը:

Ժամանակակից փաստագրական առաւ ու արժեքաւոր սկզբնաղբիւններում յատուկ ուշադրութիւն է տրում սկզբնական եկեղեցու ծխական կեանքին: Այս աշխատութիւնների մէջ լայն տեղ է յատկացուել մկրտութեան և Ս. Պատարագին, որը հախմական եկեղեցու քարոզչութեան մեծարժէք տարրերից մէկն էր համարում: Ըստ որում, ձեռք բերուած առաւ ու արժեքաւոր փաստագրական տուեալների շնորհի, հաստատել են հրեւականութեան ազդեցութիւնը Նոր Կոտակարանի ծխականարութեան վրայ: Նախանական եկեղեցին Ս. Պատարագի խորհրդը կատարում էր ճիշտ այնպէս ինչպէս վերնատան մէջ Յիսուսի կողմից կատարուած վերջին ընթրիքը: Գործը Առաքելոցի պատշին 12-րդ գլուխներում պահպանուած տեղնկրտիւնից պարզ տեսնում ենք, որ Պետրոս առաքեալը, որը գիշաւորում էր առաքեական դասը, հախագանում էր այդ ընթրիքներին: Պետրոսի այս պաշտօնը ըստ երեսուի հմաստարում էր Յիսուսի խօսքը «Դու ես վեմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկունցի իմ» (Մատթ. ԺԶ 18), «դու յոթամ դարձիս և հաստատեցիս զեղբարս ըն» (Առև. ԻԲ 32), «արածան զգաղին իմ» (Յովհ. ԻԱ. 15—17): Յիսուս հենց ինքն էր այդ «վեմ»-ը, և «հովիս»-ը. «զի իմն այլ ոք ոչ կարէ դնել բան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս»: Բայց իր աշակերտներից մէկին տուեց իշխանութիւն՝ կատարելու այս ծառայութիւնը Ե-

բուսադեմք նրեայ, քրիստոնեայ համայնքի մէջ, որը և հետագայում ծառացեց որպէս պատմենք ապագայ Քրիստոնեական ապօպամունքնենի.

Ինչպէս արդէն հշել ենք, որոշ ժամանակից յևոյ Պետրոսը հեռանում է Երուսաղէմից (Գործ. ԺԲ 17) և նրան փոխարինում է Յակովոս առաքեալը, որը դարձաւ գլուխ Երուսաղէմի եկեղեցու Յակովոսի մահից յևոյ (Գործ. ԺԲ 2) մնացած 11 առաքեալները, Պետրոսի գլխաւորութեամբ, սկսում են ստաբեկան գործունեութեան առաւել հետաքրքիր շրջափուլերից վերջինը՝ համայնքների ստեղծումը, նորաստեղծ համայնքների դեկապութեան հոգուերը և ծեսերի կատարումը որիշների վայսահելով։ Պօրու ստաբեալը այս նոր դրութիւնը յարգելով, մկրտութեան արարողութիւններ է կատարում միայն շատ բացատիկ դեպքերում, ինչպէս ինքը է խոստվանում. «զի ոչ ստաբեաց զիս Քրիստոս մկրտել՝ այլ աւետարանել» (Ա. Կորնթ. Ա. 17): Վարդապետութիւն ԺԲ Սուպերելոց երկու վկարութիւն կայ.

«Ամէն առաքեալ եքք ացեղութեան է գալիս, թող ընդունոի ինչպէս տէքք, բայց թող հիւրընկալոյի միայն մէկ օր կամ երկու եթէ անհրաժեշտ լինի, եթէ երեք օր մնայ՝ նա կերծ մարգարէ է» (ԺԱ:4—5):

Գործը Սուպերլոցից և Պօղոս առաքեալի թղթերից այն ընդհանոր պատկերացումն ենք ստանում, որ սկզբնական շրջանում համայնքեթերը կատավարում էին հասարական իշխանութեամբ, բաղկացած երեք նորիա-պետական կարգերից. Եափսկոպոս (վերատեսոչ), պրեսբիտերոն (երեց) և պրոփատամեանոն (համագումար): Սակայն թիզ յետով, առաջին դարի արարտին, բոլոր համայնքեթերի վրաց հայնագահում էր միայն մեկ եափսկոպոս: Ի՞նչը պատճառ դարձաւ հման կազմակերպական վերակազմադրման: Աչ մի վկայութիւն չկայ, որ սկզբնական շրջանում որեւէ հակոսակութիւն կար եալիսկոպոսի ինքնիշխանութեան դեմ և այդ պաշտօնի աստիճանական զարգացումը շատ բնական ընթացք ունեցաւ և այն սկզ կապ ուներ պաշտամունքային միջամայրի և ծիսական փոյսարարերութիւնների հետ: Անհրաժեշտ է եափսկոպոսի աստիճանի պատմական գնահատութիւնը տալու համար դիտել այն սկզբնական եկեղեցու պաշտամունքի եվլուցիայի հետ, որը պահանջում էր մեկ պաշտօնեալ, որի առաջին պարտականութիւնն էր՝ հայնագումար սրբազնութեան: Սորդիթերի հաղորդած վկայութիւններից տեսնում ենք, որ սկզբնական համայնքեթերի կեալքում անհամեմատ պաշտամարդ տեղ ուներ Ս. Պատրիարքի խորհուրդը: Ս. Պատրիարքի ծիսականութեանը հայսագագակի էր մի անձ, Քրիստոսի համարութեամբ, Քրիստութիւնը ներկայացնող: Այս պարտականութիւնը Երուսաղեմի եկեղեցու վաստանուած էր: Պետրոս առաքեալին և բանի որ, բոլոր հայնական հայամբեթերը անկանուած ենեւնում էին Երուսաղեմի օրինակին, միանգամայն ընկած է, որ հյանը պէտք է որդեգրեին Երուսաղեմեան հօնեցումը: Սա հաստատում է որոշակի, երբ ուշադիր կարդում ենք Գործը Սուպերլոցի առաջին 12 գլուխները, որտեղ կան Ակարագրութիւններ հայնական հայամբեթերի և մասնաւորաւար ի միտ հեր ունենում Պետրոս առաքեալի առողջիութիւն և այլ հեթանուսների մկրտութեան ատիշով կատարած բայսա-առորդիւնը՝ «եկեղեցին տողին տորբ ի վերայ նոցա, որպէս և ի վերայ մեր ի մկրտան» (Գործ. ԺԱ. 15, հիմն. Ժ 44, 47, ԺԱ. 17):

Սովորական պատճենի մասին առաջին հայության ժամանակաշրջանում առաջարկվել է առաջարկիկ (monarchic) կայսերականութեան (100 թ 3. թ.) որպէս հասատի սկզբանքիրի՝ որոց գաղափար է տալիս Զմիւնիայում ձեւադրուող համայնքի: Այսուեղ եկեղեցին ուներ մեկ եպիսկոպոս—Աստծոյ պատկերը (իկոն), որին օգնու

է երեցներից բաղկացած մի խմբակ, որը պատճեն ասած, արտացոլում է առաքելական դասը, որ տնօրինում էր Երուսաղեմի եկեղեցին.

«Ես խնդրում եմ ձեզնից, ունեցեք ոգին ամէն ինչ տնօրինելու աստուածային համերաշխորթեամբ, եպիսկոպոսի համագահութեան տակ, որը վերցնում է Աստծոյ տեղը, և երեցները, որոնք բռնում են Առաքեալների տեղը, և սարկաւագները, որ շատ մօտ են մեր սրտին և որոնց է վատահուած Աստծուն սպասարուելու պաշտօնը... բոլոր պէտք է յարգենք սարկաւագներին, ինչպէս յարգեց նրանց Յիսոս Քրիստոս, նոյնպէս և եպիսկոպոսին, որը Աստծո պատկերն է և երեցները, որ ներկայացնում են առաքելավորի դասը»:

Սա կարեւոր նկատառում է, քանի որ, Խգնատիոս հայրապետի եկեղեցարանական մտածողութիւնը բացայացում է այն միտքը, որ տնական եկեղեցին ոչ թէ մէկ մասնիկն է տիեզերական եկեղեցու, այլ մէնց տիեզերական եկեղեցին Ե՛ գլուխ ունենալով մեր Տէրը Յիսուսին և առաքեալներին: Ս. Խգնատիոս հայրապետի համար առաքեալների յաջորդականութիւնը ներկայ է և կապուած երեցների նուիրապետական կարգի հետ: Եպիսկոպոսի պաշտօնն է ներկայացնել Հօրը, լինել աղբիր և բացարձակ կենորոն եկեղեցու միութեան, ինչպէս Հայրը աղբիրն է Աստուածութեան:

Հայ Էոթեան եպիսկոպոսի պաշտօնը իր պարտականութեան ընույագում կարող էր միայն լանձն առնել մէկ անձնաւորութիւն և հարկ չկայ ապացուցելու, թէ այդ պաշտօնը, սկզբանական եկեղեցին դիսում էր որպէս շարժնակականութիւնը իրաքանչիր եկեղեցու այն առաքելութեան, որ Պետրոս առաքեալը կատարել էր Երուսաղեմում: Ելեւով ընդունուած այս պատկերացումից՝ պէտք է մէկնել Յիսուսի խօսքերը ուղղուած Պետրոսին. «Հոյ ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ 18): Այս մտածեկալերափի ամենայայտնի պաշտպաններից էր Կարդիֆինալի առաջնորդ Սուրբ Կիպրիանոս հայրապետը (249—258): Հայ Կիպրիանոսի, ողջ եպիսկոպութիւնը մէկ է շնորհի այն քանի, որ «մէկ է համատըր»—Պետրոսի համատըր. Եպիսկոպոսները եկեղեցիներում բազմում են «մէկ և մի- և նոյն» աթոռի վրայ եթէ խոստուանում են նոյն համատըր»⁴:


Կիրակօնեայ սուրբ պատարագը, այն ընթրիքը, որի միջոցով առաքելապէս շօշափում և ակնկալում ենք գալիք երկնից արքայութեան ընթրիքը, այն պահն է երբ եկեղեցին դարձաւ իսկապէս ԵԿԵՂԵՅԻ, որովհետու այդ պահին էր, որ բոլորը հաղորդակցուեցին Տիրոջ մետ, երբ մկրտութիւններ կատարուեցին, համատի վերաբերեալ մանրամասներ ուսուցանուեցին, և եպիսկոպոսներ ու երեցներ ընտրուեցին: Հենց այս առիթով էր, որ հարեւան համայնքներից եպիսկոպոսներ այցելութեան էին գալիս և մասնակցում նոր եպիսկոպոսների ձեռնադրութեան արարութեան որուել և առիթը օգտագործելով, ժողովներ էին գումարում, դաւանական-եկեղեցական հարցեր քննելու, որոշումներ կայացնելու համար: Նոյնիսկ հալածանքները չկարողացան խանգարել կամ ընդհատել Քրիստոնեաների մասնակցութիւնը Կիրակօնեայ Պատարագների: Հակառակ բոլոր դժուարութիւնների Քրիստոնեաները շարունակեցին այս սպառութիւններ, որը համարում էին իրենց համատի բուն Էոթիւնը, ինչպէս Գործք Սուրբեղոցը հրահանգում էր. «Ես էին հանապացորդակալ Վարդապետութեան առաքեցն, և հաղորդութեան՝ և բ-


կանելոյ Բացին, եւ աղօթից» (Բ 42): Նրանք չեն կարող հրամարուել այս իրական փորձից՝ առանց սրբապղծելու Նոր Ուխտի պատուիրանը:

**ԴՈԿՏ. Տ. ՆԵՐՍԵՍ ԱԽԱԳ ՔՀՆՅ. ՆԵՐՍԵՍԵԱՆ
Լոնդոն**

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Սրբազն Պատարագամատուց Հայոց... Բաներձ քննորեամբ՝ Հ. Յ. Վ. Գալթընեան. Վիեննա: Միհեարեան Տպ., 1897, էջ 536:
2. V. Kesich, „The problem of Peter's Primacy in the New Testament and the early Christian Exegesis“, St. Vladimir's Seminary Quarterly IV, 2-8 (1960), 2-25; The Primacy of Peter in the Orthodox Church. The Faith Press, 1973.
3. O. Culmann, Early Christian Worship. London: SCM, 1953.
4. St. Cyprian, The Lapsed. The Unity of the Catholic Church, translated and annotated by Maurice Bevenot. London: 1957 (Ancient Christian Writers).





ՍԻՐՈ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԻՆ ԿՏԱԿՄԱՐՄՆՈՒՄ

Աստվածաշնչի մեր հայ թարգմանիշները «սէր» են թարգմանել երրաբեցերեն ահաօն բառը, որի բայական ձևն է՝ *ahab'* «սիրել»: Ավելի նվազ հանախականությամբ «սէր» բառով է արտահայտված հան հարս-ը, որը նշանակում է «սէր»՝ «հաճոյք ստանալու», «դրու գալու» իմաստով (Սաղմ. ԾԱ. 6) (ավելորդ չեն նշել, որ այստեղից է ծագում հայերեն խոսակցական լեզվի «հավեսր»): «Սիրել» է թարգմանված հան րահամ-ը, որն ավելի ճիշտ նշանակում է «ջերմորեն սիրել». այն ավելի սահմանափակ իմաստային ծիր ունի (Աստծոն ստորոգվելիս ձեռք է բերում «գթալու» իմաստ՝ Ելք ԼԳ. 19, և մեծ մասամբ օգտագործվում է՝ նշելու համար մարդու սերն առ Ասպլած՝ Սաղմ. ԺԷ. 2): *Ahab* բառով երրաբեցին կարող է արտահայտել որպ սերն իր զավակի նկատմամբ (Ծննդ. ԻԲ. 2), ամուսիների սերը միմյանց հանդեպ (ԻՒ. 67). այն կարող է արտահայտել հան բարեկամություն (Ա. Թագ. ԺԸ. 1, 3), ծառաների կապվածությունն իրենց տիրոջ (Ելք ԽԱ. 5) կամ նոյնիկ սեռական ցանկություն (Բ. Թագ. ԺԳ. 1, 4, 15): Սակայն կարող է նշանակել հան սեր ընկերոջ (Ղևս. ԺԹ. 19) կամ օտարական պանդիստի (ԺԹ. 34) և ամեն ինչից վեր՝ Սատծո նկատմամբ: Այն կարող է օգտագործվել հան նշելու համար այն գգացմունքը, որ Աստված տածում է մարդկանց, հատկապես Խրապելի ժողովրդի նկատմամբ (Բ. Օր. Դ. 36):

Աստվածաշնչում «սէր» կամ «սիրել» բառով արտահայտված գգացմունքային շերտերն իրենց ամբողջության մեջ համախանու համար անհրաժեշտ է դիմել հան վերջինիս հունարեն «Յոթանասնից» թարգմանությամբ: Այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ ահա բառի երանգավորումներն արտահայտելու Յոթանասնից թարգմանությունը միայն մեկ կամ երկու անգամ է կիրառում երօն կամ *erasthai* բառերը, թեև սրանք դասական ու հեղեղիստական հունարենում ամենահաճախակի օգտագործված տերմիններն են: Բազվադեպ են հան *philia* և *philein* տարրերակները: Մինչ ագաρես կամ ագար բառերի կիրառությունը գրեթե համընդհանուր է. այս առումով ան-

հրամեշտ է նշել, որ այս վերջին բառերը ավելի թիշ են լիցքավորված գզացմունքայնությամբ, քան նախորդները: Աստվածաշնչից դուրս օգտագործվելիս նրանք նշանակում են սիրո մի ողջափոք ձև՝ որևէ անձի կամ իրի բարձր արժեք հաղորդելու կամ նրանց հարգանքով ընդունելու իմաստով: Սուրբ Գրքում, սակայն, նրանք ձեռք են թերում մի կրտսեական բոլիանդակություն, որը շատ առումներով նոր է: Մորա վառ վկայությունը գոյացական ացար բառի ներմուծումն է, որի նախասատվածաշնչան օգտագործման մասին ոչինչ հայտնի չէ: և հավանական է, որ այս բառը կերտավել է հենց Աստվածաշնչի բարգմանության ընթացքում: Սա պատրահականություն չի կարող լինել, ոչ եւ բարգմանչի բնահանություն, այլ անհրաժեշտություն, որովհետո բարգմանչն իր առջև ունեցել է ավելի շատ աստվածաբանական, քան զուտ բարգմանական խնդիր: Այս իրողությունը անհրամեշտ է հաշվի առել եղողովի աստվածաբանական մեկնաբանության դնդացքում, քանզի լեզվաբանության պատմության մեջ այս փաստի հջումը արժեքավոր է գրինակորակներ նրանով, որ ցուց է տախի, թե սիրո աստվածաշնչական վարդապետությունը ինչպես է էականորեն տարբերվում այդ հյութի մասին հեթանոսական գաղափարներից:

Ս. Գրքում սիրո ներթակայական կամ առարկայական դրսնորումները ի հայոտ են գալիս մի քանի երեսներով: Ուստի նախ և առաջ անհրամեշտ է ծանրանալ այդ երեսների քննարկման վրա:

Աստվածաշնչական միտքն ի սկզբանե սովորակենություն, կարելի է ասել «աստվածապետական», կողմնորոշում ունի, ուստի կենտրոնական հյութը Արարիշ և Տեր Աստծո գաղափարն է, որը առև մարդկության փըրկիշն ու դատավորն է: Այս պատճառով առաջին հերթին անհրամեշտ է խոսել այն սիրո մասին, որն ստորոգվում է ողդակի Աստծուն:

1. Աստծո սերը մարդկանց հանենեափ: Մարդկանց նկատմամբ աստվածային սիրո դրսնորումները վկայված են Աստվածաշնչի նույնիսկ ամենավաղ հատվածներում: Թեև այն հազվադեպ է բառացի արտահանություն, այնուամենայնիվ անողնակի կերպով, սակայն հատկորեն պատկերված է այն բազմաթիվ պատմությունների մեջ, որոնք վերաբերում են մարդկային կյանքում նր ունեցած միջամտություններին:

Նախ և առաջ արարչագործությունն ինքը համարվում է Աստծո բարության և սիրո պատուը (Ծննդ. Ա. 4, 10, 31, տես նաև Սաղմ. ԸՆԵ 1—9. Սիրաք ԺԶ 26—30): Սակայն սիրո և բարության գլուխգործոցը մարդու արարումն է, ում Աստված ստեղծում է իր «պատկերով և նմանութեամբ» (Ծննդ. Ա. 26, Թ 6, Խմաստ. Բ 23), օժուում է աստվածային պարզներու և բնակեցնում երանության պարտեզում (Ծննդ. Բ 7):

Նույնիսկ երբ մարդն իր անմտության պատճառով կորցնում է դրախտն ու դառնում մի պարզ մեղավոր, Աստված բացարձակ կերպով չի մերժում նրան, այլ խոստանում է փրկել ապագայում (Ծննդ. Գ 14): Այս պատճառով է, որ ընդհանրական ապականության մեջ նոյն «շնորհ է գտնում ենուվայի առջև» (Զ 8) և իր սերնդի նետ արժանի է համարվում օրինության ուխտին՝ շրմենդից հետո (Թ 1—17):

Հետագայում Աստված Իր պաշտպանության տակ է վերցնում Արքահամեն և ովան կմուտ նրա մետ, որը հիմնաված էր փոխադարձ հավատարմության վրա (ԺԵ 6): Այդ ովանը վերանորոգվում է հաջորդ համապետերի մետ (Խամակի մետ՝ Ծննդ. ԻԶ 3—6, և Հակոբի մետ՝ ԽԵ 13, ԼԵ 11):

Այն հայրական սերը, որ Եհովան տածում է Խրացելի՝ Իր «անդրամբիկի» նկատմամբ (Ելք Դ 22), հոյակապ և սրանչելի կերպով բացահայտվում է եգիպտական ստրկությունից նրաշալի փրկության պատության մեջ (Բ Օրին. Ա 30): Եվ հայրական սիրո այս դրսնորումը Խրացելի մոտ մըշտառական վերակոչվում է կամ որպես երջանիկ գոհության նյոթ (Ելք Փե 1—18), կամ որպես հիմք՝ հորդորների համար (Բ Օրին. Դ 32—38, ԼԲ 1—47, Հետո ԻԴ 2—13): Նոյն ձևով Սիմակի ովտաք, որով Եհովան Խրացելին ընտրում է որպես «Իր սեպհական ժողովուրդը», որպես «քահանացից բագավորություն» և «սուրբ ազգ», Իր գոհության, բարության և սիրո դըրսորումն է (Ելք ԺԹ 4, ԼԴ 9, Բ Օրին. Դ 21, Է 7—8):

Այնուամենապեսիվ, Աստծո սիրո ողդակի արտահպտությունը նոյնապես Հնագամատյանից չի բացակայում: Այսպես, Սրկրորդումն Օրինաց գրքում կարդում ենք, որ բոլոր մեծահրաշ գործերը Խրացելի մեջ Աստված կատարում է «վասն սիրելոյ» (Դ 36, Է 8, Ժ 15): Մյուս կողմից մարդկանց նկատմամբ Աստծո սիրառատ վերաբերմունքը հաճախ արտահպտվում է հաև ազգակից տերմիններով, ինչպես «շնորհ գտնել» (Ծննդ. Զ 8, ԺԹ 19, Ելք ԼԳ 19), «ողորմել» (Ծննդ. ԼԳ 5, 11, ԽԳ 29, Ելք ԼԳ 19), «ողորմություն գտնել» (Ծննդ. ԺԹ 19, Ելք Ի 6, Բ Օրին. Ե 10, Է 9, 12), «ներել» (Թվոց ԺԴ 19), «գթալ» (Ելք ԼԳ 19, Բ Օրին. ԺԷ 18, Լ 3) և այլն, որոնք նոյնապես անողդակի կերպով հավաստում են աստվածային սիրո մասին:

Քանի որ Եհովան միևնույն ժամանակ ովտաի «հավատարին» կամ «վատահելի» Աստվածն է (Բ Օրին. ԼԲ 4), Նրա տիրապետությունը բնութագրվում է որպես «արդարութիւն ու ճշմարտութիւն» (Ծննդ. ԻԴ 27, տես հաև ԻԴ 12), որն աստիճանաբար անսպամանավոր ու ամվերապահ բանաձի ուժ է ստանում (Բ Թագ. Բ 6, Սալմ. ԻԴ 10, ԼԹ 11 ևն, Միք. Է 20, Տովբիթ Գ 2 ևն): Հին Խրացելի մոտ Աստծո գաղափարի համար տիրապետ է հետևյալ ասույթը. «Տէր Աստուած գթած և ողորմած, երկայնամիտ, բազումորմ և ճշմարիտ, որ պահէ զարդարութիւն և առնէ զոլորմութիւն ի հազար ազգ, բառնայ զանօրիենթիւն և զանիրատութիւն և զմեկո, և ոչ անպարտ առնէ զպարտարին» (Ելք ԼԴ 6—7, տես հաև Սալմ. ԶԶ 15, ԺԳ 8, ԺԺԱ 4 ևն):

Այսպես, Հին Կոտակարանի վաղ հատվածները կարծես թէ հանաչում են Աստծո գթացող ու ներող սերը և դրա արձագանքները տեսնում են անգամ այն տառապանքների մեջ, որոնք ողարկված են որպես պատիծ, բանգի Աստծո նպատակը որիշ բան չէ, եթէ ոչ՝ մարդկանց իրենց ամբարիշն անապարհներից վերջնականապես հետ դարձնելը (Ղետ. ԻԶ 40—45, Թվոց ԺԴ 20—25, Բ Օրին. Դ 25—31, Լ 1—10):

Աստծո սերն իր բնությամբ անմիջական է ու ազատ (Ելք ԼԳ 19), սակայն այդ սիրո պատուը հանդիսացող Ոխատի համաձայն Աստված ակնկալում և պահանջում է, որ մարդը հարաւուի Իր կամքի մեջ, պահի Իր պատվիրանները և փոխադարձարար սիրի Իրեն: Սա իր արտահպտությունն է գտնում Աստծո սիրո մասին հայտարարող ամենավաղ հատվածում. «Ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձու, որ հատուցանեմ զմեկո հարանց որդուց յերիս և ի չորս ազգս ատելեաց իմոց. և առնեմ զոլորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոյք պահեն զիրամանս իմ» (Ելք Ի 5—6): «Նախանձը» կամ «նախանձությունը» այսուղ օգտագործված են պարզապես Աստծո սիրո անպայմանական բնույթին ու խորքերը նշելու հիմնական նպատակադրումով: Սակայն այսուղ բնորոշ կողմը մեկ անգամ ևս սերու

կապն է Աստծո պատճիշ արդարության ո ողորմած բարության միջև: Ամեն դեպքում այն ենթադրում է փոխադարձ սեր մարդու կողմից, որն իրականաւում է ոչ այլ կերպ, քան պատվիրանների պահպանությամբ:

Պատմության ընթացքում Ենովան հաստատում կերպով ցույց է տալիս իր սիրո թարմ օրինակները՝ ընտրության, շնորհի և գրության շերտերով, ընդհանրապես խրայնացիների և հատկապես Դավթի ո իր տաճ հանդեպ, որը մշտապես ապահովվում է այն իրողությամբ, որ նրանք իրենց հերթին հավատարիմ մնան ովտախ և չպաշտեն օտար աստվածների (Ա. Թագ. Բ 1—10, Ներ. Ա. 5—11 ևն): Սակայն հիմնականում մարդարեների մոտ է, որ Աստծո սերը երևան է զայիս ամենայն հատկությամբ, և որը նրանց կողմից բարողիում է մեծագույն տժով ու համոզվածությամբ:

Ի հակադրություն «մեղյալ կուրքերի» (Երեմ. ԺԱ. 12), որոնք «գարշելի են» (Եսայի Բ 8), միայն Ենովան կարող է օգնություն ու փրկություն շնորհել (Եսայի ԼՀ. 6, Երեմ. ԺԶ. 9, Ովսէ Ա. 7, Եզեկ. ԺԳ. 21): Քանզի իր բարությունը «յախտեան» է (Երեմ. ԼԳ. 11), անգամ եթե այն մշտապես համակցված է արդարությամբ (Ժ 24): Մյուս կողմից, սակայն, այս սերը հաճախ ուղեկցվում է կարենցաների գաղափարի հետ (Ովսէ Բ 21, Եսայի ԾԴ 8, Զար. Ա. 16), որն առան է ներուժով (Եսայի ԾԵ 7, տես նաև Միք. Է 19), թեև միայն այն դեպքում, եթե մեղյավորը զղացել ու ապաշխարել է (Ովսէ Ա. 6, Երեմ. ԽԱ. 4—7, Եզեկ. ԺԸ 27):

Այսպես է, որ Ամբակումը կարող է իրականում Աստծո ցասումը միացնել Նրա կարենցաների հետ (Գ 2, տես նաև Նավում Ա. 2—3): «Զի Աստուած եմ ես՝ և ոչ մարդ» (Ովսէ ԺԱ. 9, Եզեկ. ԼԶ. 22, 32) սա է իր անընդունելի ողորմության գլխավոր հիմքն ու շարժադիրը: Սրա մեջ մենք կարող ենք հշմարել աստվածային բնության հայտնության քողարկված ակնարկը: Աստծո սերը մարդկանց հանդեպ սուկ արարչ սեր չէ իր ստեղծագործության նկատմամբ (Եսայի ԽԳ 1—7, 21), այլ այն հիմնավորապես ու գիտավորապես հայրական սեր է (Ովսէ ԺԱ. 1—4, հմմտ. Եսայի Ա. 4, Երեմ. Գ 19), անշուշտ այն նոյնինկ ավելին է, քան մոր սերն իր զավակի նկատմամբ (Եսայի ԽԹ 15, հմմտ. ԿԶ 13, Մաղ. Ա. 6): Բավական հաճախակի մարդարեները «սիրել» բառ օգտագործում են այս շերմ մտերմության գիճն արտահայտելու համար (Ովսէ Թ 15, Մաղ. Ա. 2): «Միրելու» ու «ողորմելու» սերու կապը, որպես այս որակական էլույթան արտահայտություն, մասնավորապես հատակ է Աստծո կողմից խրայնին հասցեագրված Երեմ. ԼԱ. 3-ի խորքերից: «Մեր յախտեանական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գրութիւն»: Եսայի ԿԳ 9-ի պատգամը նման է սրան: «Վասն սիրելոյ զնոսա և խնայելոյ ի նոսա հնքնին փրկեաց զնոսա, և վերացոյ զնոսա և բարձրացոյ զամենայն աւորս յախտենից»:

Այս վերոհիշյալ հատվածներում փրկչարանական հիմնական մտքերն ընդգծված են, որը նաև կապված է Աստծո պատվերի հետ որպես «Խարայթի հովիվ» (Ովսէ Դ 16, Միք. Բ 12), «քժիշկ» (Եսայի Լ. 26, Երեմ. Գ 22, Ովսէ Զ 1) կամ «փրկիչ» (Եսայի ԽԳ 3, Ովսէ ԺԱ. 3 ևն), սակայն գիտավորապես որպես ամուսին, որը ձգտում է հետ բերել իր ամենավատարին կնոշը, քանզի վերջինս հարաբերության մեջ է մտել որիշ աստվածների հետ՝ որպես «սիրեկանների» (հատկապես Երեմ. Բ, Ովսէ Բ 4—15, Գ 1—5, Եզեկ. ԺԶ 23): Եթե նա խոստվանի իր հանցանքը և անկենորեն վերադառնա իր տիրոջ մոտ, ամուսինը նրան գթասրտորեն կընդունի (Երեմ. Գ 12, Եզեկ. ԺԶ 53—63, Ովսէ Բ 16—25, Եսայի ԾԴ 5—8): Պատկերների

այս խումբը, որը հավանաբար կապված է հիմ Մերձավոր Արևելքում տիրող աստվածների ամուսնության կամ «սրբազն ամուսնությունների» գաղափարների հետ, ծառայում է Ենովայի ու Խորայելի ոլխող որպես սիրո Կենդանի միություն ընուժագրելուն:

Հիմ Կոտակարանում աստվածային սիրո ամենալիակատար հայտնությունն անվիճելիորեն ներկայանում է տառապող Մեսիայի՝ «Տիրոց Ծառայի» կերպարի մեջ, որն իրեն տպիս է որպես քաղլության զոհ անհավատ ժողովրդի համար (Եսայի ԽԲ 1—9, Ծ, ԾԳ): Այստեղ փրկության պատության դիմամիզմը, որը Աերհատով է սիրո Հիմնակարանան գաղափարին, լիովին ի հայու է զայսի: Քանզի Տիրոց Ծառայի ինքնազո՞նությունը հաստատված «նոր» կամ «յախտենական» ոլխոր (Եսայի ԾԴ 8—10, Երես. ԼԱ. 31—37, ԼԳ. 19—26) բոլոր ժողովորդներին միավորելու համար է (Եսայի Բ. 2—5, Երես. Գ. 17, Միք. Դ 1—7, Սոփ. Գ. 9, Զաք. Թ 10, Մաղ. Ա. 11):

Աստծո գաղափարը Սայմոսներում ու Խմաստության գրքերում նոյնպես իր էական գծերի մեջ ներշնչված է Ենովայի անսասան քարության և իր ժողովրդի Ակատմամբ ոլխուի հավատարմության գիտակցությամբ (Սաղմ. ԶԹ 4, ԾԳ 17, Խմասն. ԺԲ 19—22, Սիրաք Ծ 19—24): Մինենուն ժամանակ սի թարմ շունչ է հաղորդվում անհան մարդու հանդեպ Ենովայի սիրո շեշտադրումը (Սաղմ. Դ 1, ԽԵ 6, ԾԺԹ 76, ԾԽԳ 12, ԾԽԶ 8): Վերջիններս իրենց վատահորեն ենթարկում են իր խնամքին, և այդ պատճառով Կազմում են Աստծո «որդիներ» (Սաղմ. ԽԹ 1, Խմասն. Ե 5, ԺԶ 26) ու «սիրելիներ» (Սաղմ. Կ 7, ԾԸ 6, ԾԽՀ 2, Խմասն. Է 27): Սակայն Նրա «յախտենական» ողորմությունը (Սաղմ. Ծ 5, ԾԸԶ) տարածվում է ոչ միայն մարդկության, այլև բոլոր արարածների վրա (ԶԶ 5, ԾԽԵ 9, 16, Խմասն. ԺԱ. 24—26): Իր աերեկանելի արդարությունը մշտապես ուղեկցվում է քարությամբ, որով նրա օգնում է մարդկանց, երկայնամտությամբ, որով նրա շնորհներ է բաշխում հրանց, և, ինարկե, իր համբերությամբ ու Աերելու իր պատրաստակամությամբ (Սաղմ. ԼԶ 7, ԾԽԵ 7—21, Խմասն. ԺԲ 8—18, Սիրաք ԺԸ 1—14):

Խմաստության գրքերում աստվածային սերք հայտնվում է ոչ այն տեսքով, ինչպես մարդարեների մոտ, որտեղ այն շնորհվում է ազատ, անմիջական ու անպայմանական կերպով, այլ ավելի շոտ որպես Աստծո պատասխան մարդու հնագան խոնարհությամբ և նրա օրենքների նկատմամբ հավատարմությանը (Առակ. Հ. 17, 21, ԺԵ 9, Խմասն. Դ 10, Սիրաք Դ 1—14):

2. Մարդկանց սերք առ Խստված: Հիմ Կոտակարանում այս սերքը, որ Սատված հեղում է մարդկանց և ամենից վեր ընտրյալ ժողովրդի վրա, հիմնականում հասկացվում է որպես հավատարմություն Ուխտի նկատմամբ: Այս տեսանկյունից զարմանալի չէ, որ մարդկանց փոխադարձ սերք հնանասկե հնակացիում է որպես ուխտության պատվիրան՝ պատվիրան իր քացարձակ հիմնական խմասությունը, որը սերտորեն հնավագած է Աստծո պաշտամունքի (Աերտաղակ ծեսը) և Ուխտի Օրենքի մնացալ հողվածների պահպանության հետ (ուստի Ելք Խ 6, Բ. Օրին. Զ 2—9, Հետու ԽԳ. 6—16): Ուստի Աստծո սերքը գրեթե անուծելի կերպով միախառնված է Աստծո երկրորդի հետ (Բ. Օրին. Ժ 12, ԾԳ 4), և այն արտահայտվում է ինչպես միակ ճշմարիտ Աստծո դավանակամությամբ, այնպես էլ կուպաշտության ցանկացած տեսակի քացարձակ մերժմամբ (Ելք Խ 2—6, Բ. Օրին. Դ 19):

Սա ամենով, սակայն, մարդու սերն առ Աստված հեռու է բացարձակ օրենտրականոթյամբ կամ ծեսի արտաքին պահպանմամբ արտահայտվելոց. ընդհակառակը, այն ներտնում է՝ ամբողջական մարդուն իր բոլոր գորորդություններով. այն պետք է բխի «յամենայն սրտէ իրմէ» (Բ Օրին. Դ 29) և պետք է առաջնորդի Սաստուն «յարելու» (Բ Օրին. Ժ 20, Հետու ԻԲ 5, Դ Թագ. ԺԸ 6). այն պետք է լինի կենդանի ու շարժուն: Սաստօն նկատմամբ գոհությունն (Բ Օրին. Ը 1—10, Հետու ԻԲ 4) ու վատահությունը (Ծննդ. ԺԸ 6, Բ Օրին. Ժ 12, Ա Թագ. ԺԴ 6) այդպիսի ներքին սիրո էական հատկություններն են:

Մարդարեները հնարավոր մեծագույն շեշտը դնում են այս ավելի խոր ազդակների վրա և պարզորոշ կերպով բացահայտում դրանք: Նրանք դատապարտում են պաշտամունքի գոհաբերական ձևերի ու թվացյալ բարեպաշտոթյան արտաքուստությունը (Էքստենզալիզմ) (Եսայի Ա 10—15, Երեմ. Է 21—28, Եզեկ. ԼԳ 10—20, Ուկտ Զ 6, Միք. Զ 6) և հարկ եղած դեպքում ամենդ բարեպաշտություն են պահանջում (Ուկտ Դ 1, Զ 4—6): Ուստի նըրանք կրկին ու կրկին վերակոչում են սրտի ճշմարիտ դարձը (Եսայի Ա 16—20, Երեմ. Գ 12, Եզեկ. ԺԸ 30, Ամովս Ե 14, Հովիլ Բ 12, Հովհանն Դ 2): Սյս ամենի մեջ սերն առ Աստված շարունակում է քան էության նշանակելի հավատարմություն Եմովայի ուսուին, որն իրական պետք է դառնա պատվիրանների պահպանությամբ (Երեմ. Բ 2, Եսայի ԾԶ 6):

Մտածողոթյան այս գիծն ավելի հեռու է գտնում Սահմուներում, որոնք, համաձայն իրենց գրական բնույթին, որպէս աղոթք-օրիներգործություններ, նըրապատականդիմական արտահայտելու սերն առ Աստված՝ գոհության ու վատահության երանգավորումով (Ե 12, Ա 24, ՂԷ 10 ևն): Այս սիրո ներքին խորքերը շեշտվում են հատկապես ԺԸ 1-ում և ՂԱ 14-ում. և Սաստօն մոտիկ ու տեսանելի լինելու ընդհանրական պահանջը մասնավորապես գերակշռում է այս օրիներգործություններում (ԻԷ 8, ԽԲ 2, ՀԳ 23—28):

Իմաստոթյան գրքեշում նոյնպես հանդիպում ենք «խորիրդական» (միատիկ) մոտեցման. «Յուսացեալք ի նա իմասցին զճշմարտոթին, եւ հաւատարիմք՝ սիրով ակն կալցին նամ. զի շնորիք եւ ողորմութին ի վերաց սրբոց նորա, եւ այցելութին ի վերաց բնորդեց նորա» (Իմաստ. Գ 9): Իմաստոթյան սերը, որը, վերշին հաշվով, էականորեն սեր է Արարշի նկատմամբ (Սիրաք Է 30, ԽԷ 8), առաջնորդում է «մոտիկության» (Իմաստ. Զ 19) և «քարեկամոթյան Սաստօն հետո» (Է 14), ինչպես նաև Նրա մեռ «ապրելու» (Ը 3, տես նաև Սիրաք Բ 3՝ «միանալ Նրա մեռու»). բայց միևնույն ժամանակ այն բաղկացած է պարզապես պատվիրանների պահպանությունից (Իմաստ. Զ 18): Իհարկե, սերն ինքնին օրենքի պահպանություն է, որը ջնշում է մեղքի պարուք (Առակ ԺԶ 6) և պարզ է խոստանում (Սիրաք Բ 8): Առ Աստված սիրո ծիսական բնագավառն հայտնվում է Սիրաք Դ 14-ում, որտեղ այն նույնացված է «Սուրբի ծառայության» մետ։ Այսպիսով երբացեցիների հետզերության շրջանի բարեպաշտոթյան մեջ Տիրոջ երկրուն ու փառանոթյունը միավորված են Նրա անսասան հայրական սիրո մետ (Առակ Գ 5—7, Սիրաք Բ 7—18, Է 30):

3. Մարդկանց սերը միմյանց նկատմամբ հնանապես սկզբունքորեն հիմնավորվում է Ուխտի գաղափարներով։ Սակայն այս սիրոյն արժանի են համարվում առաջին ներքին և ստավելապես բարեկամ իրավելացիները,

ովքեր հավասարապես ուխտ են կմբել Եհովայի հետ: Ուստի փոխադրձ «հաստատում սիրո ո հավատարմության» սկզբունքը (Ծննդ. ԻԴ 49, Հետու Բ 14 և այլ) վերաբերում է նաև մարդկահն այս հարաբերություններին: Խորոշում համեմարտության ոմեն զգացումն է, որը հատկապես զարգացել է հասարակության համայնքական համակարգում: Միևնույն համահորից սերված լինելու փասորը մարդու ստիպում է իր ժողովրդի ներկայացուցիչներին ընդունելու որպես «եղբայրների» և ակնհայտորեն իրեն կապված զգալ նրանց հետ՝ բնական ո ընտանեկան կապերով (Ղև. Ժ 6, Հետու Բ 12, Ա. Թագ. 1, 23, Տովբիթ Ս. 3, Մադ. Բ 10): Ուստի անգամ Հին Կոտակարանում մերձավորի հկատմամբ սերը չի սահմանափակվում սիրելու ասոր օրինական ձևի մեջ, այլ ընդունում է անկեղծ եղբայրական զգացման բնոյթ (Ղև. ԺԹ 17, Մադ. ԾՂ 1, Սիրաք ԺԳ 16, Ա. Մակ. ԺԲ 17):

Ի տարրերությունն սրա, Էկկան կրթնական բնագավառը մասնավորացնու ոմեն է հանդես գալիս այն փաստով, որ այն վավերացվում է Եհովայի հեղինակությամբ (Ղև. ԺԹ 10), ուստի և բարձրանում է «Աստծո ծառայության» կարգավիճակի անշուշտ միացած լինելով առ Աստված սիրոյն (Բ. Օրին. Ժ 17, Խաչի ԾԸ 6, Միք. Զ 8, Զաք. Է 9, Տովբիթ ԺԹ 11): Այս պատճենով մերձավորի հկատմամբ ունեցած անկեղծ սերը երբեք չի կարող մնալ սոսկ զգացմունքային ազդակի աստիճանի վրա, այլ պետք է իրականանա գործով: Ավելին, հատկանշական է, որ այն նեղ իմաստով չի սահմանափակված բարեկամ իրավելացիներով, այլ, ընդհակառակը, ասուվածյին թելադրանքով այն տարածվում է նաև օտարների վրա (Ելք ԻԳ 9, Ղև. ԺԹ 33, Բ. Օրին. Ժ 19): Անգամ թշնամիները չպետք է անտեսվեն (Ելք ԻԳ 4, Առակ ԻԴ 17). Ա ընդհանրապես համբերությունն ու մերկու պատրաստակամությունը փոխարինում են կործանիչ առելությանը (Ղև. ԺԹ 17, Առակ ԺԶ 7, Սիրաք ԽԷ 30—ԽԸ 7): Սակայն սրան հակառակ «ակն ընդ ականը» դեռ մնում է ոմի մեջ որպես ընդհանուր սկզբունք (Ղև. ԻԴ 17—21), և սերը պարփակվում է ազգային սահմաններում:

Մինչև հետզերության շրջան ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում, և միայն հետո է, որ այն նեղոք է բերում փիլիստիկական ո համամարդկային (կրոմպղիս) ուղղվածություն (Խմաս. ԺԲ 20, Սիրաք ԺԳ 19): Հավանաբար հելլենիստական կամ ամենի ճիշտ ստոյիկյան էթիկական ուսմունքի ազդեցությամբ:

4. Եզրակացություն: Դժվար է համարմերորեն ժամանակակից լեզվով արտահայտել այն, ինչը Հին Կոտակարանում արտահայտված է ահա կամ ագարա բառերի ու նրանց ածանցյալների օգտագործումով, ուստի վերջինս հաճախ յուրացվել է որպես փոխառություն: Հայերեն «սէր» բառը շատ առումներով բավական անորոշ է և չափից ամենի է ծանրաթենված, քանի այն համարժեք է համարվում բոլոր դեպքերի համար և չի կարող հավելություններ ու բացարական ծանոթագրություններ ենթադրել: Գրեթե բոլոր արտահայտությունները չափազանց նեղ ու միակողմանի են բվում, որովհետև Աստվածաշնչում հկատի առնված սերը սոսկ բնազդային կամ պարզապես զգացմունքային ազդակ չէ: Այն ամենի շուրջ պետք է հասկացվի որպես ողջ երթևան շարժում, որը բխում է «ողջ սրտից» և որի մեջ մերգաբավական մարդու բոլոր զորությունները, ներառյալ մասնավորապես իմացական բնագավառները: Ուստի «սէրը» սերտորեն կապված է ոչ միայն սեղական

(ՆՅԱՆ. Դ 1), այլև հոգևոր ու կրտսական ոլորտի մետ (Բ. Օրին. Դ 35—40, մետ նաև Եւք ԼԳ 12, Եսայի ԽՍ 8, Երես. Ժ. 21, Ովկն Զ 3, Սաղմ. ՂԸ 2):

Խսկապես, Հին Կոտակարանում ներկայացված սերը հիմնականում բը-
նութագրվում է ընտրության ազատությամբ, սակայն ավելի հազվադեպ
համապատվությամբ ու տեսակավորումով, քանզի այն ընդհանուր առմանը
կախում չունի հափորդող մասնավոր չափերից կամ սահմաններից: Ընդհա-
կառակը, այս անմիջականորեն հեղվում, տարածվում է որիշների վրա մեծ
առատաձենությամբ, առաս է ներելու մեջ, իրեն գործուն է ցուց տալիս
որիշներին, անգամ թշնամիներին օգնելու գործում, և եթե անհրաժեշտ է,
պատրաստ է իր կյանքը գոհարենքնու: Ընորին ու ողորմությունը դրա էա-
կան տարրերն են, հատկապես երբ այն ստորդվում է Աստծոն: Մարդու
տեսանկյունից դիտված, այն բաղկացած է հատկապես պաշտամունքից ու
«ես»ի նվիրված հնագանդությունից և կապված է երջանիկ գոհորչյամ վկ-
րաբերմունքի մետ: Թեև այն երեսն կարող է խստորեն կաշկանդվել օրի-
նական ու ծիսական չափանիշներով, սակայն բացարձակ հշմարիտ է մը-
նում այն, որ Ռիստի կողմերը պարտավորություններ ունեն միմյանց նկատ-
մամբ, որովհետո այս հավատարմությունը պետք է ապացուցվի պատվիրան-
ների կատարմամբ ու Աստծո ծառապությամբ:


Ուրեմն թվում է, թե նիդր Հիմնակարարանյան ըմբռումն արդեն պարու-
նակում է շատ ռան ան գծերից, որուն առաջին անգամ հայտնվում են Նոր
Կոտակարանի ագար-ի գաղափարի մեջ: Այս առումով մենք լիովին իրավա-
ցի ենք, երբ ասում ենք, որ Նոր Կոտակարանում սիրո մասին հայտնված ու-
ժունքը համապատրաստված է Հին Կոտակարանում: Մինչդեռ եթե մենք մեզ
սահմանափակենք Հին Կոտակարանի մեջ, շատ հարցեր մեզ համար կմը-
նան անլուծելի, օրինակ՝ թե ինչ հարաբերության մեջ են օրենքն ու շնորհը
կամ ընտրությունն ու ազատությունը, և հատկապես այն արմատական հիմ-
նահարցը, թե ինչպես կարող է մարդը փրկություն ձեռք բերել և ըստ այդ
մաս ունենալ աստվածային սիրոց, երբ օրենքը ոչ մի իրական փրկություն
չի կարող առաջարկել:


Մինենք ժամանակ չի կարելի ասել (թեև այսօր շատերը փրկություն են),
թե Հին Կոտակարանի կողնը ցայտուն հակադրության մեջ է Նոր Կոտակա-
րանի մետ, որովհետև, ի տարրերություն վերջինի, այն ներշնչված է ոչ թե
սիրով, այլ բացարձակապես երկրորդով: Անկասկած, սերն այնքան գերա-
կշիռ դեր չի խաղում Հին Կոտակարանյան գործերում, ինչպես օրինակ կամ-
քի, գորության ու արդարության գաղափարը, որն ավելի համատեղելի է սեմական մտածողության մետ: Սակայն անգամ այսուղեղ սիրո գաղափարը
հսկում է այս գաղափարների վրա, և այն այնքան էլ թույլ չէ, որ տեսանելի
չլինի:

Այսպես, վաղ Խորակելու Աստծո գաղափարը հիմնականում ընուժա-
գրվում էր Ենովայի բացարձակ անդրանցական անսահմանությամբ ու ա-
մեն ինչ ընդգրկող գորությամբ, որը հայտնվում է իր հոյակապ փառքի մեջ՝
իր արդարության մետ: Աստծո արդարությունը անսահմելի է, քանզի ամե-
նազոր է, որը սակայն երեսն իր մերժին բարության, անգամ կարեկցանքի
երանգ է ստանում (Սաղմ. ՀԱ 2, 15—19, 24, ԹԵ 11): Բայց ամեն ինչից
վեր ամենքի համար ապահովված ու նրանց վերջնական ճակատագիրը հայս-
որոշող Ենովայի հայրական սերն է, որ սահմանում է Աստծո բնության ճըշ-

մարիտ հայտնությունը, որին մարդն իր եերթին պետք է պատասխաճի Նրան գոհությամբ ու հնազանդությամբ սիրելով, ինչպես նաև միմյանց Աշկատմամբ փոխադարձ օգնության ու գթության սիրո ցուցադրումով։ Հին Կոտակարանում աստվածային սիրո և նրա խորքերի հիմնական գաղափարը կարող ենք գտնել Սիրաքի որդի Հետուի խոսքի մեջ։ «Զի որպէս մեծութիւն նորա, նունակւ եւ ողորմութիւն նորա» (Սիրաք Բ 18):

ՄԻՔԱՅԵԼ Շ. ՎՈԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆ





ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում «Կաթողիկոսական դիվանի» 237 Ա. թղթապահակի 112 փակերագիրը վերաբերում է մեծ հայագետ Գարեգին Հովսեփյանի մատենադարանապետովյան տարիներին: 1897 թվականից մինչև 1906 թվականը Գ. Հովսեփյանը զբաղեցրել է Մայր Աթոռի մատենադարանի պետի պաշտոնը: 1897 թ. դեկտեմբերի 14-ին Յախիկին մատենադարանապետ Սահմակ Ամաստունոց ստանալով թվով 3338 ձեռագիր, Գ. Հովսեփյանը ընդգծված համարներով նշում է այն բոլոր 13 պահան ձեռագրերը, որոնք այս կամ այն պատճառով բացակայում են (վերը նշված թվաբանակը ներկայացնող ձեռագրական) հավաքածուից:

Վավերագիրը Գ. Հովսեփյանի հայտարարությունն է՝ ուղղված Մկրտիչ Կաթողիկոսին։ Կարևորելով Մատենադարանի ներք, որպես միակ կենտրոն «հայագիտական մատենակց», Գ. Հովսեփյանը Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրում է Մատենադարանի՝ մասնավորապես տպագիր գրականության բաժնի վրա։ Առաջ քաշելով լիակատար հայագիտական գրադարան ունենալու անհրաժեշտության հարցը, խնդրում է Կաթողիկոսից վաճական ծախսերի նախահաշվում նշանակել «գումար մի 300—350 ր», որը հնարավոր կլարձնի «ընթացք քանի մի ամաց լրացուցանել զպակատրու կարևոր մատենակցի ի հայ լեզու և աշխատոթեանց եւրոպական գիտնականաց զիայցիսութենէ»։

Որպես պատասխան, «ի հետևան խնդրոյ», 1901 թվականի հունվարի 22-ի դիմանքի թիվ 83 գրությամբ, դիմանապետ Կորյուն Վարդապետը հայտնում է Գ. Հովսեփյանին, որ Կաթողիկոսը հրամայել է «ի պէտո ծախուց մատենադարանի» նշանակել 200 ռ. գումար: Այդ ժամանակից սկսած վանական կողավարությունը, հետագայում էլ Մատենադարանի տնօրինությունը, իրենց ֆինանսական հատկացումներից որոշ գումար և՛ն առանձնացրել գրքեր գնելու համար, որով հարստանում է Մատենադարանը, դառնում է Հայոցիտական կենտրոն և նպաստում հայագիտության զարգացմանը:

Նորին Վեհափառութեան Հոգևոր Տեառն և Կաթոլիկոսի
Ամենայն Հայոց S. S. Մկրտիչ Ս.

Ամենախոնարհ Յայտարարութիւն

Սպաքէն ոչինչ զանխով է ի Զենջ, Հոգևոր Տէր, եթէ որպէս Կարևոր է ի Կեդրոնի լուսաւորութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, ոնիլ մատենադարան ճոխ, եթէ ոչ ամենայն գիտութեանց, գէթ գիտութեանց այնոցիկ զորս մարթ է ի մի բան հայագիտութիւն կոչել: Չիք այլուր հաստատութիւն այնպիսի համազգային, որ հնախոյզք անցից անցելոց և հոգևոր կենաց նախնաց մերոց կարող լիցին գտանել զկարևոր մատենան, ամսաթերթն, օրաթերթն, առ յուսումնասիրութիւն ազգային և եկեղեցական պատմութեանց և մատենագրութեանց նախնաց և ներկայ սերնդոց Հայոց: Արժան է ընդ հովանեա Հայրապետական արոռոյդ առ ընթեր ճոխ գրադարանին ձեռագրաց՝ տեսանել և զբարգաւաճումն այդպիսի կարևոր հաստատութեան:

Հոգևոր Տէր, յօրէ վանահայրութեան Զերոյ ի Վարագ ցուցեալ էք զանձն Զեր որպէս պաշտպան ազգային մատենագրութեան, որպէս առիթ և քաջալերիչ ծողովման և ուսումնասիրութեան հայրենի հնութեանց, ուստի և այժմ որպէս նուսան պաշտօնեայ մատենադարանի Զերդ Հայրապետական Սթոռոյ, համարձակիմ ամենախոնարհարար հայցել զհայրապետական բարձր ոչադրութիւն ի վերայ հաստատութեան այսորիկ: Եթէ Հոգևոր Տէրութիւնն Զեր հաճնացի հրամայել, զի մուծցի ի նախահաշչի տարեկան ծախոց Մայր Սթոռոյ գումար մի 300—500 ր., մարթ է լընթացս քանի մի ամաց լրացուցանել զպակասորդս կարևոր մատենից ի հայ լեզու և աշխատութեանց և բորպական գիտնականաց զհայրագիտութեանէ: Այսու Մատենադարանն Մայր Սթոռոյ հոչակեսցի ի սիհուս Հայութեան որպէս միակ կեդրոն հայագիտական մատենից, մանաւանդ զի մասամբ ճոխանակ և նուիրակ բարեպաշտ անձանց և ժառանգութեամբ մատենից միաբանից հանգուցելոց:

Ամենախոնարհարար յայտարարելով զայսմանէ Զերդ Հոգևոր Տէրութեան իմ և մնամ խոնարի ծառայ և որդի Գարեգին վարդապետ Յովսէփեան Մատենադարանապետ Մ. Աթոռոյ:

Ուղիղ է ընդ իսկականի

Գ. Վ. Յովսէփեան (ստորագր.)

Ի 20-ը նոյեմբ. 1900 ամի

ի Ս. Էջմիածին

* *

Ի 14 դեկտեմբերի 1897 ամի հրամանաւ Վեհափառ հայրապետի ի ներկայութեան շնորհ. Ներսէս սարկաւագ Տ. Միքայէլեանի և Պողոս սարկաւագ Զորարի անցի ստացայ մատենադարանապետ Արժ. Տէր Սահակ վարդապետից Մատենադարանի երեք հազար երեք հարիւր երեսուն և ուղ ձեռագիրները, որոնցից պակաս էին հետևելավերը.

Ա. Առ. Առ. 276 աւետարան, 341 աւետարան, 1701 և 1702 ժամանակագրութիւն Սամ. Անեցոյ, 1776 պատմ. Թիլախթի և Սոդրլոնի. 746 օրինակ կոնդակաց Արքահամ և Ղազար կաթողիկոսաց, 238 պաշտպանորիւն ուղափառութեան Հայսատ. Եկեղեցոյ, որոց մասին Արծ. Սահակ վարդապետը ձեռագիրների ընդհանուր ցուցակի հետ 1892 թ. օգոստ. 28-ին Սիմոնին մատուցած յայտարարութեամբ յայտնում է, թէ Վերոյիշեալ ձեռագիրները չգտնուեցան մատենադարանում հաշուետեսութեան ժամանակ:

Բ. Առ. 445 կանոնագիրք, որ Սիմոնի 1896 թ. Առ. Առ. 1089 և 1715 հրամանների համաձայն յայտարարութեամբ յանձնել է Սիմոնին և ստացել է նոյն թոփին լուն. 27-ին Սիմոնի ծառայող Պ. Լուս Ավանեսանը:

Գ. Առ. Առ. 1540 Արմատ հաւատոյ, Յովհաննու Մայրավանեցոյ 126 ճառ, Յաղագ Նինուկացոց, 641 պատմ. Վարոր Եպիփանու Կիպրացոյ և 637 Պատմ. Արքոյ Կուտին Մարիամո, որոնք Վեհափառ Հայրապետի հրամանաւ, ըստ վկայութեան Հ. Սահակի յանձնուած էին շնորհ դպիր Գալուստ S. Մկրտչեանցին, որ և ստացած էր իր ստորագրութեամբ:

Դ. Առ. Առ. 2074 Տօնացոյ և 396 բառգիրք, որոնք նոյնպէս Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ յանձնուած էր Բաձր. Կարապետ Վարդապետ S. Մկրտչեանցին որից բազմաթիւ ձեռագիրների հետ, որ ստացած էր իր ստորագրութեամբ Գարեգին արեղայ Յովկէփեան:

Ողիղ է

Սահակ վարդապետ Ամատունի





ԴԵՊԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

(Մեծ եղենի 80-ամյակի առթիվ)

«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն»:

Գրիգոր Աբբասամյանի ընտանիքը խիստ իրարանցման մեջ էր: Տունը, որ երկարկանի էր և ուներ իր համեստ կամավորումն ու մի փորիիկ այգի, խառնափնտոր վիճակում էր: Սենյակների և տան բոլոր մասերում թափված էին ամեն ինչ. անկողին, հագուստեղեն, աթոռներ... Բացի ընտանիքի տղամարդոց՝ Գրիգորից, որն աշխատում էր Վանի Օրիորդաց վարժարանում որպես վերակացու, բոլոր տանն էին. Սաթենիկը՝ Գրիգորի կինը, և երեք երեխաները՝ յոթ տարեկան Վազգենը, հինգ տարեկան Քարմիրն ու երեք տարեկան Վարագդատը: Նրանք հագնված էին և կարծես պատրաստվում էին հյուր գնալու: Սակայն դիտողի աշքից չեր վիտիի, որ այս ընտանիքին արտակարգ և արտասովոր անակնկալ է սպասալու:

Հովհան ամիսն էր, օրը՝ պարզ և չոգ: Կեսօր էր: Սաթենիկն անհանգիստ դուրս ու ներս էր անում: Զգացվում էր, որ նա սպասողական դրույշան մեջ է: Հանկարծ դուռը ուժեղությամբ բացվեց և ներս մտավ Գրիգորը՝ այլալիք և չափազանց անհանգիստ հոգեվիճակում:

— Տղամարդուն ամուսնուն դիմեց Սաթենիկը, — ի՞նչ ի կասեն:

— Ինչ ի կասեն ո՞րն ի, — վրա բերեց Գրիգորը, — Վանի իշխանավորներ ծածով են պատես վերևից էկած գաղթի հրաման, որպեսզի ժամանակ ունենան ուրան ունեցվածք ծախտեն և նետո միայն այդ մասին հայտնեն և խեղճ ծողովրդին: Եթե ժամանակին հայտնեին էտ մասին, մենք մկավալո՞ւց հեռացիր էինք բյաղըն:

— Քյաղըի մեծ մասն արդեն հեռացիր են, — ասաց կինը, — մնացիր ենք մենք և մի բյանի տուն:

— Խորքը արդեն թիշ ի մնացե, որ մոտենա քյաղըին: Վաճ պիտի տատարկի մինչև իրիկուն: Լաճեր պատրաստ են:

— Խա, — պատասխանեց Սաթենիկը:

—Ամապարեք տուս կյանք: Լուսամուտներ պինդ փակի՞ր ես,—շուրջ նայելով վրա ըերեց Գրիգորը:— Վերցրու ամենից անհրաժեշտ պաներ: Մնացածներ մեզ պեսք չեն: Կասեն շուտով ես կուլյանք: Բայց խելքս պահ չի կարե: Ես խմոր շատ ճոր կառնի:

Գրիգոր Աբրահամյանի ընտանիքը ո՞չ էի ուներ, ո՞չ լծկան եղ, ո՞չ
սայլ, որ ունեցվածքը բարձեին: Նրանք ունեին մի կթան կով, որի վրա էլ
բարձեցին իրենց համար խիստ անհրաժեշտ իրերը, հազուստեղենը, սննի-
դը և այլ պարագաներ:

Կեսօրից բավականին անցել էր արդեմ, եթե Օրանք, ավարտած համարելով իրենց պատրաստությունները, դուրս եկան տաճից, փակեցին դուրս, բանալին դրեցին իրենց համար հայտնի և սովորական տեղում ու միացան գաղթականների անվերջանալի շարանին հույսով լի առկայն, որ շատ շուտով Օրանք կրկին կվերադառնան իրենց հարազատ օջախ:

Φηρήκ Φωτιάδηαν παραπομπήν παραβατείν οχάμα.
Φηρήκ Φωτιάδηαν παραπομπήν παραβατείν οχάμα.

Նրանք բավականին հետացել էին բաղաքից, եթե շուկան լավեցին, թե թուրքը շատ մոտ է: Պեսր էր շուպակը:

— Սարեւ, — մերթ ընդ մերթ ճանապարհին լացակումած տռնով մորն էր դիմում Վազգենը, — ո՞ւր ի Կիթանք:

Ծփոթված մայրը չէր կարող անում պատասխան գտնել:

— Ծուսով են կոլյանք մեր տոն, լուս,—իսկաքաշական տոնով և գոյխոր շուկով հանգստացնում էր մայրը, —մի լս:

Վանի գաղթակաների անձյարածիր շարասյունը, ո՞րը Փայտոնով, ո՞րը սայսով, ո՞րը ձիով, ո՞րը Էշով կամ կթան կովով, ո՞րը ոտքով, քայլում էին օրերով դեպի փրկության ափ, դեպի Արևելյան Հայաստան, դեպի Վանարշապատ՝ Ս. Էջմիածին, սակայն իրենց սիրտն ու հոգին թռղնելով իրենց հայրենի հարազատ օշխում:

Ծովակերը հաստատվեցին: Թուրքը արդեն մոտ էր հայ գաղթական-
երի շարայսնը: Բոլորն անհանգիստ էին: Մի՞թե պէտք է ընկան ար-
դունախում թուրքի երախը, մի՞թե չեն փրկվելու: Բայց և այնպէս ծողովորի
այդ անհանգաւորությունը մի փոքր մեղմանում էր, եռ գրանք տեսնում էին,
որ իրենց շրջապատել են և ուղեկցում են և զինված հայ կամավորներ, և
ուստի ու կազակ զինվորներ, որոնք ամեն վայրկյան պատրաստ են իրենց
կամքը գոմելու՝ հանուն գաղթականների փրկության:

Գաղթականների շարադաշն միշից երբեմն-երբեմն լսվում էր սրտա-
ըռմիկ մի երգ՝ «Դեւ յաման»:

Վերջապես հայտնվեց թուրքը, ինչպես ժամկետը սրած գազան։ Բայց Արանք առայժմ չէին համարձակվում հարձակվել գաղղականների արախայն վրա՝ նկատելով նրանց ողեկցող սպառազինված խմբերին։ Ի՞նչն ծամանակ առ ծամանակ թերթևակի կերպով «անհանգուացնում» էին իրենց հատ ու կենու կրակոցներով։ Բայց, այսումնայնիվ, այսպես էրկար շշարտեակիւեց։ Նրանք սկսեցին թաքստոցներից, բլուրների ետևից, իրենց համար նպաստավոր դիրքերից պարբերաբար հրաձգային մերժեր առեղավ հայերի գլխին։ Այդ պահին գաղղականների շարքերում սկսվում էր վայեասուն, խուճապ... Բայց պաշտպանական ջոկատները կանխում էին Վերահսա արհավիրը, անձնազոհարար Շետվում դեպի գիշատիչները և Վերահսա արհավիրը, անձնազոհարար Շետվում դեպի գիշատիչները և

ների շարքերում լինում էին կորուստներ, զոհվում ու նահատակվում էին ծերեր, երեխաններ, պարմաններ ու պարմանութիններ, որոնք դեռևս չեն հասցըել մտնել կյանքի լիարյուն հորդանուու: Հարազատները չեն կարողանուս թաղել իրենց զոհվածներին չկարողանալով ժամանակ գտնել և ապահովություն այդ ցավալի ու խիստ դառն աշխատանքի համար, և միաժամանակ շտապում էին չկորցվելու համար ընդհանուր շղթայից և այդ շղթայի հետ էլ քայլ առաջ, քայլ դեպի փրկություն...

Գաղթականների շարայունն աշքի էր ընկնում իր մասնատված, բայց ոչ անշատված, հավաքականություններով, գերդաստան առ գերդաստան: Յուրաքանչյուր գերդաստան իր մեջ ներառնում էր մի քանի ընտանիքներ: Այդպէս ավելի հարմար էր, որովհետև որևէ անակնկալի դեպքում միմյանց զորավիր լինելը հետո էր:

Անցնում էին օրեր, շաբաթներ... Բայց փրկությունը դեռևս հեռո՞ւ էր ու հեռու: Թուրքերը շարունակում էին պարբերաբար գինված հարձակումները գաղթականների շարայան վրա՝ պատճառելով նրանց մնածաքանակ կորուստներ:

Գաղթականների մոտ աստիճանաբար սպառվում էր սնունդը: Մեծերը, ճիշտ է, մի կերպ դիմանում էին, սակայն անհոսալի էր վիճակը փոքրերի մոտ: Զգացվում էր, որ վրա է հասնում սովը: Դրան գալիս էր լրացնելու ան շոգը, նոգնածությունը, տառապալից անքուն գիշերները...

— Մարե, — նվազած ձայնով հաճախ մորն էր դիմում Վազգենը, — սոված եմ, խաց կուգեմ:

Մայրը խնայողաբար մի-մի փոքրիկ կտոր հաց էր տալիս երեխաններն, որպեսզի կտրի նրանց նվազոցը և կանչի նրանց նվազումը:

Գաղթականների ականջներին ամեն լուսաբացի լսելի էր լինում մի ծեր քահանայի ձայն, որ երգում էր «Գթա, Տէր» շարականը:

Օրեցօր շոգը սաստիկանում էր: Դրան հակառակ՝ գիշերներն ել ցուրտ էր անում: Մարդիկ սկսում էին հիվանդանալ: Եվ քանի որ սնունդն ել վերշանալու վրա էր, կամ շատերի մոտ արդեն վերշացել էր, գաղթականների շարքերում հաճախակի էին դառնում մահացությունները, ավելի հաճախ՝ երեխանների մոտ:

Ժամանակ առ ժամանակ շարայան առջևից և ետևից լավում էին նրամաններ.

— Արա՞գ, արա՞գ... շտապե՞ք...

Եվ այդ ձայնից թիշ անց հետևում էին թուրքերի կրակոցները: Նորից իրարացցում, վայնատու... Եվ շարայունը քանի գնում, նորանում էր...

Վերջին օրերը Գրիգորը և Սարենիկը դարձել էին խիստ լուկյաց ու մտագրադ, ավելի հաճախ՝ շղագրգիո: Նրանց չափազանց անհանգատացնում էր երեխանների վիճակը:

— Ախշի՛, — կնոջն էր դիմում Գրիգորը, — Ես, ինչ որ ես ի կտիսնամ, եսոր վերջ չկա: Ես կվախենամ, որ մեր երեխեք մեր ծեռից էթան:

Երկու փորդիկները շատ հաճախ էին նվազում: Նրանց վիճակը շատ լուրջ էր: Իսկ Վազգենն էլ հաճախ էր կրկնում.

— Ես մեր տուն կուգեմ, ես մեր բախչեն կուգեմ...

Գրիգորի եղբայրը՝ Վարդանը, որի ընտանիքը նոյնպէս նրանց հետ գնում, տեսնելով եղբոր ընտանիքի վիճակը, հաճախ մոտենում էր նրանց և մուսադրող ու հանգստացնող խոսքեր ասում.

— Փրկություն հետո չի, թիշ մնաց, կիասնենք...

Բայց այդ փրկությունը շատ ու շատ հեռու էր:

Փոքրիկ Վարազդատը, որին ճնողները Վարեր էին կոչում, չդիմացավ այս տառապանքին, սովոր ու շոգին: Ծնողները ոչինչ անել չկարողացան փրկելու նրա կյանքը: Նա իր կարձատու անմեղ կյանքում կրեց համատակության պատճեն: Ծնողները մի կերպ մի, այսպես կոչված, փոս փորեցին և փոքրիկ Վարազդատի դին ամփոփեցին նրա մեջ:

Դրիգորը և Սարենիկը շատ ծանր տարան այս բանը: Բայց ինչ արած, պետք էր փախչել, պետք էր փախչել՝ փրկելու համար ողջ մնացած մյուս նրեխաներին:

Որոշ տարածություն գաղթականների շարապյունն անցավ առանց որևէ արտակարգ միջադեպի: Բոլորը կամաց-կամաց սկսում էին խաղաղվել: Նրանց արդեն թվում էր, թե ամեն արհավիրք վերջացել է, և իրենք հասել են փրկության ափ:

Բայց այս բոլորը խարուսիկ անդորր էր: Շուտով կրկիճ սև ամպեր կուտակվեցին գաղթականների շարապյան գլխին: Երեք կողմերից, բացի փախուստի ճանապարհը, հրացանային համազարկերով թուրքը սկսեց կրակն կարկուտ տեղալ հոգնած, հիվանդ ու մուսահատ գաղթականների վրա: Անսաելի, ահավոր ու չտեսնաված իրարանցում սկսվեց գաղթականների շարքերում: Մեր ու մասնուկ կորցրել էին իրար: Մարդիկ փախչում էին ով որ կողմէ կարող էր: Ոժասպանները և ծանր հիվանդներն ընկնում էին գետին՝ կրկիճ վեր կենալու հոսանքն ճգներ թափելով: Բայց ապարդյուն... Սպանվածների դիակներն արդեն ամսաշիվ էին:

Ցավով պետք է ասել, որ այս աղետալի պահին Գրիգորենց լծկան կովը, որի վրա էր բարձված ընտանիքի փրկության հովար, առաջին խնկ կրակոցներից ուժգին ծառս եղավ, պոկվեց տեղից և վազեց դեպի մոտակա գետն ու ընկումնեց նրա ջրերում: Բարեբախտաբար ծառս լինելու պահին փոքրիկ Վազգենն ընկավ գետին, եթե ոչ՝ նրա կորուստն անդառանալի կլիւնք:

— Սաման, բալե՞ս,—իրեն կորցրած նվազած ձայնով աղաղակեց Սարենիկը:

Այդ տեսնելով Գրիգորն ասես գերբնական ուժ ստացավ, ոստոնց ու մի ակնօթաթում երեխային իր գիրկն առավ: Բարեբախտաբար երեխան ոչ մի վնասվածք չէր ստացել:

Այս միջադեպին ականատես էր եղել մի ոռու գինվոր, որը մոտեցավ նրանց և, հանգստացնելով, ասաց.

— Դանե բացոց ցին յ ոռեսւ, ո բեսպոկօնտէս, յ ո բօնին աս.

Երբ Գրիգորը ոռու գինվորի խոսքերը հայտնեց կնոջը, վերջինս կը բականապես հրաժարվեց:

— Իմ բալեն պիտի մնա իմ խեն:

— Ախսի, — կնոջը համոզում էր Գրիգորը, — մեր լաճու փրկության համար ի կասի:

Ոռու գինվորի և Գրիգորի երկար նորդորներից հետո, վերջապես, Սարենիկը տեղի տվեց: Ոռու գինվորը փոքրիկ Վազգենին գրկեց, որեց ձիու գավակիճ և ասաց.

— Հե բեսպոկօնտէս, յ աս հանձ.

Ինչպես կովը միանգամից և ընդմիշտ անենտացավ ջրի հորձանուսում ինը նետ տանելով դեպի փրկություն տանող նրանց ընտանիքի բոլոր նոյնից ինը նետ տանելով դեպի փրկություն տանող նրանց ընտանիքի բոլոր նոյնից

սերը, այնպես էլ Վազգենը ձիու վրա, ոու զինվորի մետ միասին, մի ակրնօրդում անհետացավ նրանց տեսադաշտից:

... Պաշտպանական շոկատները ստիպեցին թուրքին լոելու: Այնուհետև սկզբեց մի փոքր դադարի շրջան: Առիթից օգտվելով, գաղթականների խոսքը նորից շարժվեց դեպի առաջ: Փոքրիկ Քարմիների կրկին իր շալակա առավ Գրիգորը, և տանջահար պատուինները միացան փախտականների շարանին: Նրանք այլևս ոչինչ չունեին իրենց մոտ՝ ո՞չ սնունդ, ո՞չ վերմակ, ո՞չ տաք ծածկոց և կամ այլ պարագաներ: Կովն այդ բոլորն անդառնալիորեն տարել էր իր հետ:

Անցնում էին օրերը, բայց փոքրիկ Վազգենից ոչ մի լոր:

Թուրքը համարյա չէր անհանգստացնում գաղթականների շարայանը: Սակայն մի ահավորությանը եկել էր փոխարինելու մի այլ, առավել ահավոր աղետ: Ակավել էր համաճարակ: Խնչակն եկելեցում, աշտանակի վրա, հպատորեն շղշղողացող անհամար մոմերն ի վերջո հասնում են իրենց վերջին առկայությին և վերջաղովսին, ճիշտ այդպես էլ գաղթականների շարայտնն օրեցօր և աստիճանաբար նուրանում էր ու նուրանում: Մարդիկ սկզբում ծանր էին տանում դիմեների եերկայությունը, սակայն վերջին օրերը նրանք արդեւ համարյա անտարեր էին դրանց հանդեպ: Գաղթականների անձայրածիր շարայտնից մնացել էր միայն մի փոքր խումբ:

Ծանապարհին այդ անհամար զոհ-հահատակներին գնաց միանալու նաև անմեղ փոքրիկ Քարմիներ: Ծնողները խիստ հուսահատ վիճակում էին, երկու երեխաները գնացին անդառնակի, երրորդի ճակատագիրն էլ անհայտ է: Գրիգորն ու Սաթենիկն ամբողջ ճանապարհին համարյա չէին խոսում: Միայն Սաթենիկը երբեմն-երբեմն երկու ձեռքերը խփում էր ծընկներին և հառաչում.

— Վախ, վախ...

Այս հուսահատ վիճակում նրանք իրենց վերջին ճիգերն էին թափում որտեղ և ինչ պայմաններում էլ լինի գունել իրենց կորած որդուն: Մի՞թև ոու զինվորը վերջնականապես շնչեց կյանքի հետ կապող նրանց վերջին հոյսը...

Գաղթականների շարքերում տարածվել էր նաև մորացկանությունը: Համարյա դատարկված գուղերի մոտով անցնելիս անգամ նրանք ոչինչ հայրայթել չէին կարողանում:

Սով էր ու համաճարակ...

Վերջապես, օրեր անց, կրկին հնչեց ծեր քահանայի ճայնը.

— Ի սէր և ի փրկութիւն ազգիս հայոց՝ զՏէր աղաչեսցոր...

Գրիգորի գուլկատեղին մնացել էր մի քանի թուրքական ոսկեդրամ: Այն էլ խնայողաբար պահում էր ավելի նույն օրվա համար:

Հոգով և մարմնով տառապյալ պատուինները ինքնամոռաց ու համրաբայլ բնագդորեն գնում էին ուժասպառ գաղթականների խմբի հետ: Հանկարծ վագրով, անսպասելի, նրանց է մոտենում մի փոքրիկ երեխա՝ ցեխոտված ու կեղտի մեջ կորած հագուստների մեջ: Գլխին դրված էր զինվորական մի գլխարկ, որն այնքան մեծ էր, որ ծածկել էր նրա դիմքը: Փոքրիկը բռնում է Սաթենիկի փեշերից և այդպես կախված մնում:

— Հեյ-վախ,—տեսնելով երեխայի խղճակի վիճակը, սրտի խորքից շշուկով արտաքերեց Սաթենիկը:

— Տղա՛, ի՞նչ կուզես,—փաղաքանքով թափառական երեխային դիմք Գրիգորը:

Ոչ մի ձայն:

— Տղա՛, տու հա՞մր ես,—բռնելով երեխայի թնը ասաց Գրիգորը:
Նորից ոչ մի ձայն:

— Մի կտոր խաց տուր էտա լաճուն: Չե՞ս տիսնա, անտեր երեխա ի,
— խղճահարությամբ ամուսնուն դիմեց Սաթենիկը:

Տղան կպել էր Սաթենիկի փեշերին և պոկ չէր գալիս:

— Առ էտա խաց, կեր,—հացի մի կտոր մեկնելով երեխային դիմեց
Գրիգորը:

Բայց տղան համառորեն լուս էր:

Գրիգորի համբերությունը վերջապես սպասվեց: Նա ստիպված եղավ
բարձրացնելու երեխայի գլխարկը, որպեսզի մրա դեմքը տեսնի: Երբ
բարձրացրեց այն, նույն ակնթարթին ակամայից չորեց և գրկեց երեխային:

Իսկ փոքրիկի աշքերից առատորեն հոսում էին արցոնքները:

Երբ փոքրիկը մի փոքր ուշքի եկավ, հազիվ լսելի ձայնով արտաքիրեց.

— Մարե՛, հայրի՛կ... ես մեր տուն կուգեմ, ես մեր բախչեն կուգեմ...
ես իմ քուր Քարմիլ կուգեմ, ես իմ ախատեր Վարեր կուգեմ:

Սաթենիկն ուշակորովս ընկած էր գետնին:

Գաղթականների փոքրաթիվ խումբը համարյա մոտ էր Վաղարշապա-
տին՝ Սուրբ Էջմիածնին:

• • •

Դեպքերը տեղի են ունեցել 1915 թվականի հուլիս-օգոստոս ամիսնե-
րին: Պատումի փոքրիկ Վազգենը հայրս է: Փրկությունից հետո, 1918 և
1925 թվականներին, Աբրահամյանների ընտանիքում լուս աշխարհ են
գալիս անմեղ նախատակներ Քարմիլեր և Վարազդատի անվանակիցները,
որոնցից առաջինը ապրում է Երևանում, իսկ երկրորդը զոհվել է Երկրորդ
համաշխարհային պատերազմում, 1944 թվականին:

Տարիներ անց հայրս պատմեց գաղթի մասին և շեշտեց, որ ուս զին-
վորը իրեն ոչ թե հանձնել է ճակատագրի քմահանուքին և հեռացել, այլ
խստագոյնս պատվիրել՝ նաև ճանապարհի եղողին, որտեղից անցնում էր
գաղթականների շարայունը, և սպասել մինչև ծնողների հայտնվելը: Ուստի
զինվորը ստիպված է եղել այդպես վարվել և փոքրիկ Վազենը թողնել այդ
քիչ թե շատ ապահով տեղում, քանի որ ինքը մարտի է բռնվել թուրքերի
դեմ պաշտպանական կոիվներին: Հորս փրկիչ այդ բարեհոգի զինվորի հե-
տագա ճակատագրի մասին այլևս ոչինչ հայտնի չէ:

ՎՈԼՈԴՅԱ. ԱԲՐԱՀԱՄՑՅԱՆ



ԳԻՐՔ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՎ ՄՏԱՇՈՂԻ ՄԱՍԻՆ

Թումանյանը գրում էր, թե արվեստը պետք է լինի աչքի նման պարզ և աչքի նման բարդ: Այդպիսին է և մեծ բանաստեղծի գրական ժառանից գործությունը: Ըշթերցելիս այնքան պարզ և արծեորելիս ու իմաստափորելիս՝ այնքան բարդ: Այս պարզ աշխարհի բարդ խորհութեղին է նվիրայած բանաստեղծի գիտական պատրիոտիզմների դոկտոր-պրոֆեսոր Հրանտ Թամրազյանի նոր մենագրությունը*: Բազմավատակ գիտական նախաբանում մարդկայնութեան խոսողականում է այդ աշխարհը մտնելիս իրեն պատաճ ներքին այն անվատահությունն ու երկրողը, որ մարդ ունենում է «խոր անդամնութիւն կամ ձյունապատ երկնալաց բարձունքին նայելիս» և հաղթահարելով այն, ընթերցողին տանում է Թումանյանի բանաստեղծական աշխարհի երկնալաց բարձունքները:

Ուստինասիրության առաջին մասում, որը խորագրված է «Նախարարի փոխարքեա», մոտքը է Թումանյանի ստեղծագործական աշխարհ: Բանաստեղծ ներկայացվում է ժամանակի քննադատության հունականում, և թե անցնելիք ուղղութեական որոնումներում ինչպես է հայացքը հառում նայ բանաստեղծության անցած ճանապարհին:

Նրբին մի քննության են ենթարկված Նարեկացի, Արովյան և Թումանյան ստեղծագործական ու հոգեկոր ընդհանրությունները: Կորնորվում է հաստկապես այն հանգամանքը, որ Նարեկացին «բացել էր գեղարվեստական մտածողության մի նոր դարաշրջան, որը ինչ-որ կարևորագույն և հավերժական բան էր փոխանցել նաև գալիք հազարամյակներին, հասել մինչև Թումանյան»: Այս կերպ մի նոր դարաշրջան էր բացել և Թումանյանը՝ գեղարվեստական հավերժական արժեքները փոխանցելով գալիքին, կամքջքեղող հայ բանաստեղծության դարերը: Նարեկացի-Թումանյան զուգահեռում նաև ցուց է տրվում Նարեկի ծալքերում պահիվ ազգայինը և Թումանյանի ազգային ցավի համարդկապին էությունը, թե ինչպես է համարդկայինում արտացոլվում ազգայինը և ազգայինն էլ՝ վերածվում համարդկայինի:

Այս գիրքն ունի յուրահատուկ մի կառուցվածք, ոտ մեղինակը կարողացել է բաժին առ բաժին ներկայացվող Թումանյանի պոեզիայի ժամանակամթագությունը գոգակցել երա կյանքի փովերին՝ կենագրականի փոխարեն որոնելով կենական այն ապրումները, որոնք իրենց լիցքերն են հաղորդել ծնվող գործերին: Հրանտ Թամրազյանի այս ուսումնասիրությունը նվիրված է ոչ թե Թումանյանի կամքին ու բանաստեղծությանը, այլ բանաստեղծական կյանքին, Էպիկական շնչով լեցուն երիտասարդ գլուհի վիպերգության քննությունից մինչև կյանքի մայրամտաին ծնված

* Հրանտ Թամրազյան, Բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1995 թ.: Հրատարակություն ՀԲԸՄ Սկեք Մանուկյան մշակութային հիմնադրամի:

բաղյակները, և ամեն անգամ վերլուծությանը նախորդում է տվելալ գործի ստեղծագործական պատմությունը: Տարբերակների համատական քննությամբ վերլուծվում է, թե բանասունչի ստեղծագործական վարպետության շարժնակական վերլուծից բացի ել ինչ նախադրյալներով և ազդակներով են պայմանավորված տարբերակից տարբերակ կատարված փոփոխությունները: Նամակների, հոդվածների, գրառումների և ժամանակակիցների հուշերի վկարակումնամբ ընթերցողին հաղորդակից է դարձնում Թումանյանի ներաշխարհի այն ալեկոնումներին, որոնցից ծնվել են այդ գործերը:

«Վիշերգություն» խորագրված երկրորդ և ամենածավալուն մասն է սկսվում է «Սննման դարաշրջանի ողբերգության» քննությամբ, որը սուս ժամանակային անցում չեր, այլ նաև կացութաճների, հոգեբանության ու մտածողության հեղաքնելում: Անդրադառնախով գրականագիտության մեջ հաճախ հճախ այն կարծիքներին, թե Թումանյանը բնության և նահապետական անցյալի երգի է, գրում է, որ բանաստեղծը «գեղարվեստական բազում հայտնագործությունների շնորհիվ ժողովրդականից բարձրացել է դեպի ժողովրդայինը՝ մշտապես մնալով որպես նոր դարի և ժամանակի արվեստագետ»:

Գրքի պումներին նվիրված այս բաժինը բացվում է «Մարդով», որով «Թումանյանի պոեզիայում սկավում է մարմնավորվել հալածական մարդու թևաման», շարունակվելով այնուհետև և «Ճողովի Սաքրյով» ու արտացոլվելով ազգային ցալին նվիրված «Ալեքրի» և «Մեհրի» գործերում: Թե ինչու վերջին երկուսը, չնայած գուած լավ բնություններ, բանաստեղծը երկրորդ անգամ չիրատարակեց, բացառում է Թումանյանի ստեղծագործական հետագա ողու զարգացման տրամաբանությամբ, երբ ճակատային բնեուացված մերունքի փոխարեն նրան ճգում է տառապուր մարդը, իսկ հայ վրիժառուն կամ ներուսուին բնականաբար հոգեբանական որեւէ դրամա չեր կարող ապրել թշնամոց իր արդար վրեժը լուծելու համապարհին:

Ինչպես Թումանյանը ողջ կանորում առանձնակի մի գորգուրանը էր տածում «Անուշի» հանդեպ, նոյն կերպ էլ շերմ և նորին մի սիրով է: Թամրազյանը վերլուծում պոեմը՝ մեծ տեղ հատկացնելով դեպքերի զարգացման ընթացքը հոգեբանական հիմնավորվածությանը, միաժամանակ ներկացնելով, թե այդ խնդիրը ինչպես էր կարևորում՝ և Թումանյանը: Գրականագիտությունը մեջ ամենա տարակարծությունների տեղիք տված համերգանքի մասին գրում է. «Արտեղ շատ բանեկադին ժողովրդական մտածողության մշտաշը նորորեն խառնվում է գալիք գործողությանը, որպես ողբերգական հախազգացողություն»: Մերժելով ողբերգական այս հախազգացողությունը ֆասովիզմի հանգեցնելու փորձերը և Թումանյանին Թումանյանով բացատրելով, շարունակում է հոգեբանական նորին վերլուծուների ընթացքը՝ ցուց տալով, թե կանխազգացումը ինչ տեղ է գրավել գրյուղի ներաշխարհում, վկայալուշելով նրա հնական տղերը. «Զեմ սիալիքի, եթե ասեմ՝ իմ կանքը որ որեւէ դեպք չի պատահել, որ հախազգացած կամ նախատեսած չլինեմ: Նախազգացած ու նախատեսած որ ասում եմ, ասում եմ ոչ ոչ միայն արթուն ժամանակ, այլև քնած ժամանակ, երազուն, այլարանորեն, պատկերներով, խորիրանշաններով. ... Ես էնքան շրել ու թանը երազներ եմ տեսել, որ ամեն մինչը ինձ համար մի գեղեցիկ կանք արժի»: Գրականագիտուի վարպետությունն է՝ ցուց տալ, թե այս երազները ինչպես են միախառնվել «Անուշի» ընդհանուր հյուսվածքին, որն այս ուսումնասիրության մեջ կատարվել է բավականին գեղեցիկ և ինքնատիպ

ձնով, Թումանյանի ողջ ստեղծագործության ներքին մեծ գգացողությամբ:

Բանահյուսական ակտուր ունեցող գործերին է նվիրված «Ժողովրդական գանձերը Բանանարի լուսի տուկ և մանրային փոխանցումներ» բաժինը, որում ապլում է, թե այդ ստեղծագործությունները սույ բանահյուսական նյութի գեղարվեստական մշակումներ չեն, այլ ունեն գրության նոգերանական պատճառաբանվածություն և կապվում են ազգային նակատագրին՝ արձագանքելով նաև ժամանակի խնդիրներին: Այս առումով Բանահյուսական է «Որրը»: Որքան փոքր և տարրողունակ է ան, այնքան էլ խորունկ և տարրողունակ է թամրացանական վերլուծությունը: Բերենկով գրության համար աղջոյուր ծառապած Գարեգին Սրբաձնացանցի գրառումը, բացադրում է, թե ինչով են պայմանավորված մշակման ընթացքում կատարված բոլանդակային-սյուժեային փոփոխությունները:

Գրականության համապարփակ խմացության և գրականագիտական նորին վերլուծության զգագացմամբ ներկայացվում է դարասզքի հայ բանաստեղծության մեջ որքի ընկալումը, և թե ինչպես Թումանյանը «հայ ժողովրդական պատճեռության շրջանակը լայնացնելով, որբությանը տալիս է բաղադրական շեշտ»:

Սրբակ... Սրբակ... գիշերն ի բոն
Կանչում է Որքն աղեկուոր,
Աշխարքն այնինչ մըտած խոր քոն,
Ինքը մենակ ո շորշը լոտ:

Այս տողերի վրայից ես է տանում ժամանակի վարագույքը, մեզ փոխադրում դարասկիգր՝ Որքի նման անպաշտպան մնացած Հայկական հարցի ալլաբանական արձագանքը գտնելով վերը ներված հատվածում: «Ամեն գիշեր հնչում է որքի տխոր, աղեկուոր ձաւնը, իսկ աշխարքն ամվազոյ մտել է խոր քոն, իսկ շորշը հավերժական լուրջուն է: Այս է որքի ճակատագիրը՝ ողքի և որքի հայրենիքում»:

Նոյն կերպ բացելով և մյուս բազադների ու լեգենդների թաքուն ծալքերը, կատարում է հետևյալ ընհանուրացումը: «Թումանյանի երկերում ապրում ու արձագանքում են դարավոր ալանիները, հազարամյա խոներն ու բարյական ըմբունությունը: Բայց նա մի զարմանակի հմտությամբ անցալի, ժողովրդականի, դարավոր հատվածքների հայտնագործումների ժամանակ շիկացնում, ընդգծում է նաև նորագույն դարի խնդիրները՝ առանց փոքր-ինչ մոդեռնացնելով կյուրը»:

Գրքի վերջին բաժինը նվիրված է Թումանյանի քնարերգությանը, որում ահճանական ու անանդականը, ազգայինը և համամարդկայինը արտացոլում են առավել նորին, անորսավի շեշտերով: Թումանյանի բանաստեղծությունները ևս ընկալում են համաշխարհային պոեզիայի, միջնադարի եկող ազգային ավանդների և անցյալ դարավերջի ու այս դարասկիցի հայ բանաստեղծության հատման հոգևոր խաչողիներում: Օրինակ՝ Թումանյանի քնարերգության մեջ խաթարված իրավանության և մարդու բարոյական կերպարի գեղարվեստական հարաբերակցության վերլուծությունը սկսում է Հին Արևելիքի պոեզիայում այս նարջի առաջին քնարական բարախումներից մեկի, երկուսուկես հազար տարի առաջ գրված «Հիապահի վածի վեճը իր հոգու հետ» պոեմից, անցնում Նարեկին, ապա Ծերսպիրին:

Շնորհիվ նման մոտեցման, որը պահանջում է ոչ միայն գրականագիտական, այլև նոգերանական քննության ուղերչական աշխատանք, արդեն Շեքսպիրից, Գյորեից, Բարոնից, Պուշկինից ու Լերմոնտվից կրած անմիջական գրական ազդեցություններից բացի, որը բազմից շեշտվել է մեր գրականագիտության մեջ, ընդգծվում է մեկ այլ կարևոր խնդիր. որուն մոտիվ, որն առավել ցայտում է դրսուրիվել հիշյալ գրողներից լորաբանացությունուն, դիտել ոչ թե անմիջական ազդեցություն բանաստեղծի վրա, այլ համաշխարհային գրականության մեջ նրանց կողմից արձարձիված և որպես այս շղայի մեկ օղակ ժումանյանից փոխանցված:

Նաև տարբեր բանաստեղծությունների զարգացման ընթացքը տող առ տող վերլուծելով ցույց է տալիս մարդկային հոգու ապրումն ու ազգային ցալիք և ոլքերգությունը ինչպես են զրչի տիրուկան ուժով դառնում բանատեղծական պատկեր ու փիլիսոփայություն, որոնք «իդեանց մեջ թաքցընում են ծովի շաքման հզորությունը»: Այս հզորության ուժեղ խոսցումներից մեկն է «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:


Թաքրազյանը թումանյանական գրառումներով և համանակակիցների հուշերով հույսած ճանապարհով ընթերցողին նախ տանում է գեհենի վերածված արևմտահայ աշխարհ, ապա գալորականության ալիքի մեւ բերում է շմիրածնի պարհապնդերի տակ, որ բաց երկնքի մերքը թափված ժողովրդի վրա ծանրացող գիշերային խալարում բանաստեղծի հոգում տառապանքի ցավից ճառագող լուսից ծնվում է «Հոգեհանգիստը», որում դառնության խոսքերը գրականագետի դիպուկ բնորոշմամբ «դարձել են փիլիսոփայական խորուն բանաձև մարդու ահմարդկային բնույթի մասին»:

Սգգալին այս մեծ ոլքերգությանը միահյուսված ցավից ծնվում են գրողի կյանքի վերջին շրջանի բանաստեղծական մարգարիտները՝ բառակենքը, տառապող բանաստեղծի երազը «մանկան արդար քնի» և «հաշու ու խաղաղ մարդկության»:

Այս գրքի լորահանուկ արժանիքներից մեկն էլ այն է, որ նեղինակը շարադրանքի լեզուն և ոճն էլ ասես բիեցենում է վերպուծվող նորութից, և բայց անկերի վերլուծությունում մեկ անգամ ևս մեզ է փոխանցվում թումանյանական կայտուր, անցած օրենքի բանաստեղծական վերմուշը. «Գարունքա ծաղկուտ օրերի պես այդ հուշերը նյուր են գալիս արդեն խոնարիստող աշնան մեջ գտնվող բանաստեղծ անհատին, որն արդեն բռնված է խորհրդավոր սինհաւութ տագնասալերով և կանգնած է անխոսափելիի առջև»:

Գրականագետը բանաստեղծի մեւ բննում է աշխարհի չարն ու բարին, խորապես վերապրում «հայոց փիլիստը»: Անդրադառնապով բառակեց բարոյակ փոխանցվող «երջանիկ ակունքների» թումանյանական երազին, գրում է. «Համանրդկային այս երազները թերևս առավելագույն չափով արտահայտում են հայ ժողովրդի հոգեկան մկրագիքը, բայց որ երազներն ամենից ավելի հարազատ են գրկվածներին և ծաղկում են տառապող ու մարտող, գալիքի հմգվար ճամփերի համար մարտեր մղող ժողովրդի հոգում»:

Համանման խոսցումները գումարվելով թումանյանական խոհականությամբ շնչող ողջ շարադրանքին, Հրանտ Թամրազյանի «Հոմինանես Թումանյան» բանաստեղծը և մտածողը գիրքը վերածում են գրականագիտական ասքի, մի ասքի՝ նվիրված Ամենայն Հայոց Բանաստեղծին և նրան ծնած ժողովրդին:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 7-ին, կիրակի.— Կարմիք Կիրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրայր քնն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 14-ին, կիրակի.— Տօն Երկան Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել ծ. Վրդ. Աշապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մայիսի 21-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Վաղգեն արդ. Միթքախյանը:

* * *

Մայիսի 25-ին, հինգշաբթի.— Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել ծ. Վրդ. Աշապահյանը:


Հավարտ և պատարագի կատարվեց Հայրապետական մալթանք, որից հետո հավոր պատշաճի քարոզ խոսեց պատարագի Հայր Մուրը:

* * *

Մայիսի 28-ին, կիրակի.— Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Ներսէս արքեպո. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАЙ 1995г.)

- Патриаршее слово благодарности и оценки, 26 мая 1995 г. (стр. 3—5).
 - Проповедь Католикоса всех армян Гарегина I в церкви св. Саркиса в г. Ереване, 23 апреля 1995 г. (стр. 6—10).
 - Поздравительная телеграмма Католикоса всех армян Гарегина I Жак Шираку по случаю избрания президентом Республики Франции, 10 мая 1995 г. (стр. 11).
 - АРХИЕРЕЙСКОЕ ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В ШИРАКСКУЮ ЕПАРХИЮ, 5—8 мая 1995 г. (стр. 13—83).
 - Проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе св. Эчмиадзина на праздник Явления Святого Креста, 14 мая 1995 г. (стр. 84—88).
 - КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН I—В завершении Нашего Архиерейского посещения Ширакской епархии, молитву воссылаем к Всевышнему Господу Богу из первопрестольного Эчмиадзина место поломничества всех армян, 10 мая 1995 г. (стр. 89).
 - АРХИЕРЕЙСКОЕ ПОСЕЩЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В АРЦАХСКУЮ ЕПАРХИЮ, 19—22 мая 1995 г. (стр. 91—129).
 - КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН I—Завершив Наше Архиерейское посещение в Арцахскую епархию, молитву воссылаем к Всевышнему Господу Богу и испрашиваем, 31 мая 1995 г. (стр. 130).
 - Поздравления по случаю избрания Католикоса всех армян Гарегина I (стр. 131—132).
 - Приемы в первопрестольном Эчмиадзине, 7 апреля—28 мая 1995 г. (стр. 133—138).

РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНАЯ

11. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна, произнесенная 28 мая 1995 г. по случаю праздника Второго Вербного Воскресенья (стр. 139—141).
 12. Н. МУТСОПУЛОС, К. ДИМИТРОКАЛЛИС—Почитание Святого Григория Просветителя в Греции (сня статья представлена как лекция на международном научном семинаре в г. Ереване 11—17 сентября 1985 г., посвященный армянскому искусству)—(стр. 142—147).
 13. ПРОТОИЕРЕЙ НЕРСЕС НЕРСЕСЯН, ДОКТОР БОГОСЛОВИИ—Верую и только в всеобщую и апостольскую святую церковь (исследование)—(стр. 148—155).
 14. БЕРХОВНЫЙ АРХИМАНДРИТ МИКАЭЛ АЧАПАГЯН—Идея любви в Ветхом Завете (исследование)—(стр. 156—164).

15. ГОАР КАЗАРЯН—Одн исторический документ (из неизданных писем Гагарина Овсепяна, 20 ноября 1900 г. (стр. 165—167).

ЛИТЕРАТУРНЫЙ

16. ВОЛЛОДЯ АБРАМЯН—К спасению (по случаю 80-ти летия Геноцида армян в Османской империи)—(стр. 168—173).

РЕЦЕНЗИЯ

17. ВАРДАН ДЕВРИКЯН—Книга о писателе и мыслителе (стр. 174—177).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ

18. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за май месяц (стр. 178).



ETCHMIADZIN
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(MAY 1995)

1. Pontifical address of thanks and appreciation, 26-th May 1995 (p. 3—5).
 2. The sermon of His Holiness given in the Saint Sarkis church of Yerevan, 23rd April 1995 (pp. 6—10).
 3. Cable of congratulation of His Holiness to Mr. Jacques Chirac on the occasion of his election as President of the Republic of France, 10-th May 1995 (p. 11).

4. THE PASTORAL VISIT OF HIS HOLINESS GAREGUIN I TO THE DIOCESE OF SHIRAK, 5—8th May 1995 (pp. 13—83).

5. The sermon of His Holiness in the Holy Cathedral during the feast of the Apparition of the Holy Cross, 14-th May 1995 (pp. 84—88).

6. GAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS—At the end of Our pastoral visit given to the diocese of Shirak, from the sanctuary of Holy Etchmiadzin I send prayer to the most High God, 10th May 1995 (p. 89).

7. THE PASTORAL VISIT OF HIS HOLINESS GAREGUIN I TO THE DIOCESE OF ARTZAKH, 19—22nd May 1995 (pp. 91—129).

8. GAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS—After giving Our Pontifical visit to the diocese of Artzakh We send Our prayer to God and implore, 31st May 1995 (p. 130).

9. Congratulations on the occasion of the election of Catholicos Gareguin I (pp. 131—132).

10. Receptions in the Mother See of Holy Etchmiadzin, April 7—May 28 1995 (pp. 133—138).

RELIGIOUS WRITINGS

11. The sermon of Archbishop Nerses Bozabalian given in the 28-th May 1995, on the occasion of the feast of Second Palm-Sunday (pp. 139—141).
 12. N. MYTSOPOOLOS, K. DIMITROKHALLIS—The worship of Saint Gregory the Illuminator in Greece (this article has been represented as lecture 11—17th September 1995 in Yerevan, during the international symposium devoted to the armenian art)—(pp. 142—147).
 13. VERY REV. DOCTOR FATHER NERSES NERSESSIAN—Creed and only universal and apostolic Holy Church (study)—(pp. 148—155).
 14. VERY REV. FATHER MIKAYEL ADJABAIAIN—The idea of love in the Old Testament (study)—(pp. 156—164).
 15. GOHAR GHAZARIAN—A historical document (from the inedited letters of Gareguin Hovsepian), 20-th November 1900)—(pp. 165—167).

LITERARY

16. VOLODYA ABRAHAMIAN—Towards salvation (on the occasion of the 80th anniversary of the Great Genocide)—(pp. 168—173).

BIBLIOGRAPHY

17. VARDAN DEVRIKIAN—Book about poet and thinker (pp. 174—177).

HOLY SEE

18. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of May 1995 (p. 178).



„ETCHMIADZINE“

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (AVRIL 1995)

1. Adresse pontifical de remerciment et d'appréciation, (26 Mai 1995)—(pp. 3—5).
2. Homélie de Sa Sainteté prononcée dans l'église de Saint Sarkis d'Erévan, le 23 Avril 1995 (pp. 6—10).
3. Télégramme de félicitation à Mr. Jacques Chirac à l'occasion de sa élection comme Président de la République de France (10 Mai 1995)—(p. 11).
4. VISITE PASTORALE DE SA SAINTETE GAREGUINF I AU DIOCESE DE CHIRAC (5—8 Mai 1995)—(pp. 13—83).
5. Homélie de Sa Sainteté dans la cathédrale de Saint Etchmiadzine pendant la fête de l'Apparition de la Sainte Croix (14 Mai 1995)—(pp. 84—88).
6. GAREGUINE I CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS—A la fin de Notre visite du diocèse de Chirac, du sanctuaire de Saint Etchmiadzine J'envoie ma prière au Très Haut Dieu (10 Mai 1995)—(p. 89).
7. VISITE PASTORALE DE SA SAINTETE GAREGUINE I AU DIOCESE D'ARTZAKH (19—22 Mai 1995)—(pp. 91—129).
8. GAREGUINE I CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS—Après la visite pontificale donnée au diocèse d'Artzakh Nous envoyons Notre prière an Dieu et imploré (31 Mai 1995)—(p. 130).
9. Félicitations à l'occasion de l'élection du Catholicos Garéguine I (pp. 131—132).
10. Réceptions au Saint-Siège du Saint Etchmiadzine (Avril 7—Mai 28 1995)—(pp. 133—138).

ECRITS RELIGIEUX

11. Sermon d'Archevêque Nerses Bozabalian donnée le 28 Mai 1995, à l'occasion de la fête du Dimanche des Ramaux (pp. 139—141).
12. N. MOTSOPoulos, K. DIMITHOKALLIS—Le culte de Saint Grégoire l'Illuminisateur en Grèce (cet article est représenté comme discours à Erévan, au symposium dédié à l'art arménien (11—17 Septembre 1985)—(pp. 142—147).
13. REV. PERE DOCTEUR NERSES NERSESSIAN—Le credo et seul Saint Eglise universelle et apostolique (étude)—(pp. 148—155).
14. REV. PERE MIKAEL ATCHABAHIAN—L'idée d'amour dans l'Ancien Testiment (étude)—(pp. 156—164).

15. GOHAR GHAZARIAN—Un document historique (des lettres du Garéguine Hoysepian) 20 Novembre 1900 (pp. 165—167).

LITTÉRAIRE

16. VOLODIA ABRAHAMIAN—Envers le salut (à l'occasion de 80-ième anniversaire du Grand Génocide)—(pp. 168—173).

BIBLIOGRAPHIE

17. VARTAN DEVRIKIAN—Livre à propos du poète et du penseur (pp. 174—177).

DU SAINT-SIEGE

18. Brèves informations concernant les célébrations des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine au cours du mois de Mai 1995 (p. 178).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական խօսք շնորհակալութեան և գմանատանքի
վեհափառ Հայրապետի բարոզը՝ խոսված Երևանի Սուրբ Խարջիս եկեղեցում . . .
Վեհափառ Հայրապետի շնորհավորական նեազիրը ժակ Շիրակին՝ Ֆրանսիայի
Հայրապետության նախագահ ընտրվելու առիթվ 3

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎ-
ՎԱՄԵՏՍԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԾԻՐԱԿԻ ԹԵՄ 13

Վեհափառ Հայրապետի բարոզը Մայր տաճարում Երևան Սուրբ Խաչի տոնին 84

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԽԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՅԹ–Շիրակյա թեմին Մեր Հովուա-
պետական անդրանիկ այցելութեան աւարտին, Սուրբ Էջմիածնի ոլոսավայրի
օջախից աղօթք եմ վերառաքում առ Բարձրեալն Աստուած 89

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՄԵՏՍԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆԻ ԹԵՄ
ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԽԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՅԹ–Արցախի թեմ կատարած Մեր
Հայրապետական այցելութիւնից յետոյ Մեր աղօթքն ենք վերառաքում առ
Աստուած և հայցում 130

Շնորհավորականներ Գարեգին Ա. Կարողիկյանի ընտրության առիթվ 131
Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 133

ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալանի բարոզը՝ խոսված 1995 թ.
մայիսի 28-ին, Երկրորդ Ծաղկազարդի տոնի առիթվ 139

Ն. ՄՈՒՏՍՈՊՈՒԼՈՍ. Կ. ԳԻՄԻՏՐՈՎԱԿԱԼԻԿԻՆ–Սուրբ Գրիգոր Լուսաւորչի պաշտա-
մունքը Յունատանի մէջ 142

Դուկա, Տ. ՆԵՐՍԻՆ Ա.Ի.ԱԳ ՔՀՆՅ. ՆԵՐՍԻԿՍԵԽՆ–Հայատամք և մի միայն ընդ-
հանրական և առաքեական, (սուրբ) եկեղեցի 148

ՄԻՔԱՅՈՒ. Ծ. ՎՐԴ. Ա.ԶԱՊԱՀՅԱՆ–Սիրո գաղափարը Հին Կոտակարանում 156

ԳՈՀԱՄ. Ղ. ԶԱՐԱՐՅԱՆ–Պատմական մի վայերագիր (Գարեգին Հովսեփյանի անտիա
նամակներից) 165

ԳՐԱԿԱՆ

ՎՈՂՈՒՅ. ԱԲՐԱՀԱՄՑԱՆ–Դեպի փրկություն 168

ՄԱՅԻՍԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական թմ. լուրի	178
«Էշմիածն» официальный журнал Эчмиадзинского Католикосата	179
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	181
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	183

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԽԶՄԻԱՄՐՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.

Հանձնված է արտադրության 03.07.1995 թ.: Ստորագրված է տպագրության 12.09.1995 թ.:
Տպագրական 11,6 մամուլ +20 Աերդիր, բույս 70×10^{1/6}, պատվեր 164:

ISSN 0134—5249